



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material









~~1778~~
Auftrag zur Ausführung

U. U. 335

498

57

U. U. 7.

1900 wasser 28

1900 wasser 29
Dichter Baum
Kampfen

No. 30



U.S.P.

1860
The following is a list of the names of the persons who have been appointed to the various offices of the U.S.P. for the year 1860.

2771 4926

Հ Ա Մ Թ Ռ Օ Տ

Ա Շ Խ Ա Ր Հ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Գ Պ Ր Ա Տ Ա Ն Տ Ղ Ո Յ Հ Ա Մ Ա Ր

Շ Ա Ր Ա Դ Ր Ա Յ

Հ Ս Տ Ե Փ Ա Ն Ո Ս Վ Ե Ա Զ Ը Ճ Ե Ա Ն

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Յ

Ե Ր Ր Ո Ր Դ Տ Պ Ա Ր Ո Ի Թ Ի Ն



434

Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Յ Տ Պ Ա Ր Ա Ն Ը



1771

1771

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

PHYSICS

PHYSICS

PHYSICS



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text appears to be organized into several paragraphs or sections, but the characters are too light to transcribe accurately.

ՅԱՌԱԶԱԲԱՆ

ԱՍ համարում աշխարհագրութեան երրորդ աղ-
պագրութեանն այսպէս շուտով ձեռք զարնելնիս
յայտնի նշան է աս ամենահարկաւոր ու գեղեցիկ
ուսման մեր ազգին մէջ ալ ծաղկիլ սկսելուն :
Միանգամայն իրաւունք ունինք նաև աս հողմանէ
ուրախանալու որ բռնած ոճերնիս յարմար եկեր
է մեր գիտած վախճանին , ինչպէս որ կը յու-
սայինք , և փոքր աշխատութիւննիս հաճոյ անցեր
է վարժապետաց և աշակերտաց , որ մեծ քաջա-
լերութիւն է մեզի :

Ասոնք մտածելով հարկ համարեցանք նորէն
աչքէ անցընել առաջինը , և որչափ որ աս դրբու-
կիս մեծութեանը՝ ոճին ու վախճանին ձեռք կու-
տար նէ միատարեւադործ եցինք :

Կարելի ալ չէր առանց կարևոր փոփոխու-
թեանց նորէն տապաքրել այսպիսի ուսման մը դա-
սասեալ, որ ուրիշ ամէն ուսմունքներէն աւելի
փոփոխութեան տակ է շատ բանի կողմանէ: Ուս-
տի բաց 'ի Բնական մասէն, որ քիչ փոփոխու-
թիւն ունեցաւ, մէկալ երկու մասին մէջ ալ ե-
րևելի փոփոխութիւններ ըրինք. մանաւանդ Քա-
ղաքական մասին մէջ, և բնակչաց թիւը ըստ նորա-
գոյն աշխարհահամարներուն ճշդեցինք. Ուսում-
նական մասին մէջ ալ նոր դանուած մտորակները
և քանի մը հարկաւոր տեղեկութիւններ աւելցու-
ցինք:

Հիմա որ արդէն ընդարձակ դրաքառ Աշխար-
հագրութիւնն ալ տպուած է, աս համարօտութեանս
պակաս երեցած մասերն անով կը լրանան:



ՀԱՄԱՌՕՏ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ



1

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ուսմունքը կը սորվեցընէ աշխարհիս դիրքը, երկրիս բնական կազմութիւնը, ու բնական և քաղաքական բաժանմունքը :

2

Երեք մաս կը բաժնուի աշխարհագրութիւնը .
Ուսումնական, Բնական և Քաղաքական :

1

Faint header text at the top of the page.

First main block of faint text.

Second main block of faint text.

Third main block of faint text.

Fourth main block of faint text.

Fifth main block of faint text.

Sixth main block of faint text.

Seventh main block of faint text.

Eighth main block of faint text.

Faint text at the bottom of the page.

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՒՆ

3

Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք

ՔԱՂԱՔԱԿԱՆ աշխարհագրութիւնը կը սորվեցընէ երկրիս քաղաքական բաժանմունքը, և վրայի այլևայլ տեղերուն գիրքն ու անունը :

Երկրիս այլևայլ տեղերուն իրարու վերքերական գիրքն որոշելու համար չորս կէտ կը մտածուին, որ կ'ըսուին կողմնոք աշխարհի . և են արեւելք, արեւմուտք, հիւսիս, հարաւ :

Արեւելքն է այն կէտը ուստի արեւը կը ծագէ . արեւմուտքն է այն կէտը ուր արեւը կը մտնէ, և է հակառակ արեւելից . հիւսիսն է այն կէտը որ երբ երեսնիս արեւելք դարձընենք ձախակողմը կ'ըլնայ, իսկ անոր հակառակ կէտն ալ է հարաւ :

Աշխարհացոյց տախտակներուն վրայ արեւելքն է աջահողմը, արեւմուտքն է ձախահողմը, հիւսիսը վերն ու հարաւը վարը:

Բոլոր երկրիս տարածութիւնն է 148,522,000 քառակուսի աշխարհադրական մղոն * . այսչափ տարածութեան չորսին մէկը ցամաք ու երեքն է ծով:

Երկրիս ցամաքը հինգ մաս կը բաժնուի . Եւրոպա, Ասիա, Աֆրիկէ, Ամերիկա, և Ովկիանիա:

Երկրիս ջուրն ալ, որ ովկիանոս կամ ծով կ'ըսուի, չորս գլխաւոր մաս կը բաժնուի . Ատլանտեան ովկիանոս՝ որ կը թրջէ Եւրոպա, Աֆրիկէ և Ամերիկա . Մեծ ովկիանոս՝ որ կը թրջէ Ամերիկա, Աֆրիկէ, Ասիա և Ովկիանիա . Հիւսիսային Սառուցեալ ովկիանոս, որ կը թրջէ Եւրոպայի, Ասիոյ և Ամերիկոյ հիւսահողմը . հարաւային Սառուցեալ ովկիանոս:

Բոլոր երկրիս բնակիչներուն հաւանական թիւն է 1,000,000,000:

* Մէկ աշխարհադրական մղոնը՝ տաճկի մեծ մղոնէն քիչ մը աւելի է . այնչափ որ 10 աշխարհադրական մղոնը տաճկի մղոնով 11 մղոն կ'ընէ: Քառակուսի մղոն կ'ըսուի ան միջոցը, որուն թէ երկայնքը թէ լայնքը՝ մէկ մղոն է:

ԵՐՐՈՊՍ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

4

ՍԱՀՄԱՆ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆ

ԵՐՐՈՊԱՅԻՆ օահմանն հիւսիսէն՝ Սառուցեալ ովկիանոսն է, արևելքէն՝ Ուրալ և Վոլիա լեռներն ու Սև ծովը, հարաւէն՝ Միջերկրական ծովը, արևմուտքէն՝ Ատլանտեան ովկիանոսը:

Եւրոպայի մեծութիւնը 2,793,000 քառակուսի մղոն է: Թէպէտ աշխարհիս մէկալ մասերէն պղտիկ է, բայց ամենէն ալ աւելի քաղաքակիրթ ու համեմատութեամբ աւելի բազմամարդ է:

5

ԲԱԺԱՆՈՒՄՆ

Եւրոպայի մէջ գլխաւոր տասնըվեց աշխարհք հայ, չորսը հիւսիսային հողմը, եօթը մէջտեղուանքը, չինգը հարաւային հողմը:

Հիւսիսայիններն են՝ Բրիտանիա, Տանիմարգա, Հուկա, և Ռուսաստան:

Եւրոպային մէջտեղուանքն ասոնք են . Գաղղիա , Պելճիա , Հոլանտա , Զուիցերի , Աւստրիա , Բրուսիա , և Գերմանական դաշնակցութիւն :

Հարաւային կողմիններն ասոնք են . Բորդուգալ , Սպանիա , Իտալիա , Եւրոպայի Տաճկաստան , և Յունաստան :

6

Ծ Ո Վ

Եւրոպայի ծովերն ասոնք են .

Սառուցեալ ովկիանոս , Սպիտակ ծով , Պալդիի ծով , Հիւսիսային ծով .

Ատլանտեան ովկիանոս , Մանիգա , Իռլանտայի ծով .

Միջերկրական ծով , Ադրիական ծով , Յոնիական

ծով , Արշիպելագոս , Մարմարա , Սև ծով ,

Ազախու ծով :

7

Ն Ե Ղ Ո Ի Յ

Ներսէս կամ Կերճ և կամ Ղրանցի կ'ըսուին ծովուն այն նեղ տեղուանքը՝ որոնց մէջէն երկու ծով իրարու հեռ կը խառնուին :

Եւրոպայի գլխաւոր նեղուցներն են .

Վայկացի նեղուցը՝ Ռուսաստանի հիւսիսային դին .

Սքահերրաք , Բաղդեկադ , Սունա , սղտի Պելդ ,

մեծ Պելդ՝ Պալդիի ծովուն և Հիւսիսային ծովուն մէջտեղը .

Գալէի նեղուցը կամ Ղրանցքը՝ Գաղղիոյ և Անդրիոյ մէջտեղը .

Սեպտեի կամ Ճիպիւղէրբայի նեղուցը՝ Սպանիոյ
ու Ափրիկէի մէջտեղը .

Մեսինայի նեղուցը՝ Իտալիոյ հարաւային ծայրը .
Չանադգալէսիի նեղուցը՝ Արշիպեղադոսիին ու Մար-
մարայի մէջտեղը .

Վոսիորոս կամ Կոստանդնուպոլսի նեղուցը՝ Սև
ծովուն ու Մարմարայի մէջտեղը .

Ենիգալէի նեղուցը՝ Ազախու ծովուն ու Սև ծովուն
մէջտեղը :

8

Ծ Ո Յ

Ծոյ կ'ըսուի ծովուն այն կտորը որ ցամաքին մէջը
մտած է . ասոր մեծերը ծով ալ կ'ըսուին :

Եւրոպայի ծովերուն երևելի ծոցերն ասոնք են .
Պոթնեան ծոց , Ֆինլանտեան ծոց , Րիկայի ծոց՝
Պալդիկ ծովուն մէջ :

Զուխաէրդէ՝ հիւսիսային ծովուն մէջ .

Կասպոնեան ծոց՝ Ատլանտեան ովկիանոսին մէջ .

Լիոնի , Ճենովայի , Աենեակոյ ծոց՝ Միջերկրահան
ծովուն մէջ .

Սէլանիկի ծոց՝ Արշիպեղադոսին մէջ :

9

Կ Ղ Ձ Ի

Կղզի կ'ըսուի որ և իցէ ցամաք երկիր որուն
չորս դին ջուրը պատած է :

Խո-ճէ կղզեաց կ'ըսուի երբ շատ կղզիներ իրարու
մտ ըլլան :

- Եւրոպայի գլխաւոր կղզիներն են .
Սառուցեալ ծովուն մէջ՝ Սբիցպերկ, Նոր Չեմլեա ,
Քալիույեւ ու Լոֆֆոտէն :
Պալդիկ ծովուն մէջ՝ Ալանա , Տակոյ , ԷօզէԼ ,
Կողլանա , Օլանա , Պունհօլմ , Բուկէն , Փալա-
դէր , Լալանա , Չէլանա , և Ֆիոնիա :
Իռլանտայի ծովուն մէջ՝ Մէն , և Էնկլըսի :
Առլանտեան ովկիանոսին մէջ՝ Իռլանտա , Իռլան-
տա , Անգղիա , Ֆէրէօր կղզիները , Շէդլընա
կղզիները , Որկադեան ու Հեբրիդեան կղզի-
ները :
Միջերկրական ծովուն մէջ՝ Գորսիդա , Սարաենիա ,
Սիկիլիա , Մայորդա , Մինորդա , Իլլիցա , ԷԼ-
պա , Մալդա , և Լիալարեան կղզիները :
Յոնիական ծովուն մէջ՝ Գորֆու , Փաքչա , Սանդա
Մաւրա , Թէաքի , Չանդա , և Չեֆալոնիա :
Աս կղզիները աղաա հասարակապետութիւն
են Անգղիացւոց պաշտպանութեան տակը :
Արշակղաղոսին մէջ՝ Լեմնոս , Էյրիպօղ , Չէրիկոյ ,
Նաքչա , Շիրա և ուրիշ մանր կղզիներ :

10

ԹԵՐԱԿՂԶԻ

Թերակղզի կ'ըսուի այն ցամաք երկիրը , ու-
րուն բոլորակքը ջուրը սլատած ըլլալով , միայն մէկ
կողմով ուրիշ ցամաքի հետ կապած է :

Եւրոպայի մէջ վեց թերակղզի կայ .

Շուեա , Սպանիա , Իտալիա՝ որ խիստ մեծերն են .

Եուզլանա՝ Տանիմարդայի մէջ .

Մորա՝ Յունաստանի մէջ .

Խրիմ՝ Ռուսաստանի մէջ :

ՊԱՐԱՆՈՅ

Պարանոց կ'ըսուի թերակողիկն այն կտոր ցամաքը, որով երկրին հեռ կալած է:

Եւրոպայի մէջ գլխաւոր երկու պարանոց կայ՝ Կորնթոսի պարանոցը՝ որ Մոսան ցամաքին հեռ կը կապէ, և Բէրէքոբի պարանոցը՝ որ Խրիմը Ռուսաստանի հեռ կը կապէ:

ՀՐՈՒԱՆԴԱՆ

Հրուանդան կամ գլուխ կ'ըսուի թերակողոց մը ճոթին բարձր մասը, կամ ցամաքին դէպ 'ի ծով երկրնցած բարձր մասը:

Եւրոպայի գլխաւոր հրուանդաններն են՝
Նորա-Քին՝ Շուեաի հիւսիսային ծայրը •
Միդէն՝ Իսլանդայի արեւմտեան կողմը •
Լէնասէնա՝ Բրիտանիոց արեւմտեան դին •
Ֆինիադէրրա՝ Սպանիոց արեւմտեան դին •
Սուրբ Ալինչենցիոս՝ Բորդուգալի արեւմտեան կողմը •

Սբարդիվէնդոյ՝ Իտալիոց հարաւային դին •
Մադաբան՝ Մորայի հարաւային ծայրը:

Լ Ե Ռ

Երկրիս վրայի բնական բարձր կոնաձև տեղուանքը լեռ կ'ըսուին, այս լեռներն ալ իրարու կպած ըլլան նէ, լեռներու գօտի կամ շղթայ:

Եւրոպայի մէջ ինը հաս մեծամեծ լեռներու գօտիներ կան.

Քէօլէն՝ Շուեաի ու Նորվեկիոյ մէջտեղը.

Ուրալ՝ Ասիոյ ու Եւրոպայի մէջտեղը.

Կովկաս՝ Կասպից ու Սև ծովուն միջոցը.

Պալքան՝ Եւրոպայի Տաճկաստանին մէջ.

Կարպաթ՝ Մաճառաստանի մէջ.

Ալպեան լեռները՝ որ Իտալիա Գաղղիայէն ու

Չուիցերիէն կը բաժնեն.

Ապենինեան լեռները՝ Իտալիոյ մէջ.

Պիրենեան լեռները՝ Գաղղիոյ ու Սպանիոյ մէջտեղը.

Իբերեան լեռները՝ Սպանիոյ մէջ:

Տ Ր Ա Բ Ո Ւ Խ

Տրաքուսի կ'ըսուին այն լեռներն որ կրակ, ծուխ և հալած նիւթեր դուրս կը ցատկեցընեն, ու բերաննին ալ բաժակ կ'ըսուի:

Եւրոպայի մէջ իրեք մեծ Տրաքուսի կայ.

Հեղլա՝ Իտալիոյ մէջ.

Վեսուվ՝ Նաբոլի քաղքին քովը.

Եանա՝ Սիկիլիոյ մէջ:

Լ Ի Ժ

Լ Ի Ժ կ'ըսուի մեկ տեղ մը ժողուած ջուրը, որուն չորս դին ցամաքով պատած է :

Եւրոպայի գլխաւոր լճերը ասոնք են .

Վէնէր, Վէդէր, Մէլար՝ Շուեաի մէջ .

Սայմա, Լատուկա, Օնեկա, Իլմեն, Պելոյ, Բէյբուս՝ Ռուսաստանի մէջ .

Նէօշադէլի, Ճինեւրայի, Լուչեանայի, Յուրիկի լճերը՝ Չուիցերիի մէջ .

Մաճորէ լիճը, և Գոմոյի, Կարաայի, Բերուճիայի, Պոլսենայի լճերը՝ Իտալիոյ մէջ .

Նայզիսէլ, Պալադոն՝ Աւստրիոյ տէրութեան մէջ :

Գ Ե Տ

Գ Ե Տ կ'ըսուին լեռներու վրայէն վաղած ջրերը, որ դարձար իջնելով մինչև ծով կը թափին :

Եւրոպայի խիստ մեծ գետերն ասոնք են .

Տիինա, որ կը թափի Սպիտակ ծովը .

Դոնէա, Նեւա, Տունա, Նիլմեն, Ախադուլա, Օտէր՝ Պալդիկ ծովը .

Էլպա, Վէդէր, Հոենոս, Դամիդ, Սենա, Լուա, Շէնրն, Սիլերն, Կարոն, Մինհոյ, Տուրոյ, Դակոյ, Կուաաիանա, Կուաաալքիլեր՝ Ատլանտեան ովկիանոսը .

Բոյ, Աաիճէ՝ Ադրիատիան ծոցը .

Կողբոյ, Հառգանա, Անոյ, Տերերիս՝ Միջերկրա-
կան ծովը .

Դանուբ, Տներեր, Տնեսդեր՝ Սև ծովը .

Տոն՝ Ազախու ծովը .

Վրչիա, Ուրալ՝ Կասպից ծովը :

ՕՂ, ՀՈՂ, ԲԵՐՔ

Եւրոպայի օղը բարեխառն է, միայն Հիւսի-
սային կողմերը սաստիկ ցուրտ :

Հողն ընդհանրապէս խիստ բարեբեր է, վասն
զի մշակութիւնն ալ շատ ծաղկած է,

Գլխաւոր բերքն է՝ երկաթ, կտաւար, պը-
ղինձ, անագ, հանքածուխ, աղ, անդիկ : Բոյսե-
րուն մէջ՝ ցորեն, բրինձ, եղիպտացորեն, գետնի
խնձոր, կանեփ, ձէթ, լեմոն, և ամէն տեսակ պը-
տուղիներ : Վեճգանիներէն՝ օգտակարներուն ամէն
տեսակը շատցած են Եւրոպա, ու մնասակարները
պակած :

ԲԵԱԿԻՉ, ԼԵՉՈՒ, ԿՐՕՆՔ,

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Եւրոպայի բնակիչներուն թիւն է դրեթէ
270,000,000 այլեայլ աղգէ :

Եւրոպայի մէջ 53 լեզու կը համբնեն, բայց մայր
լեզուները ութէն աւելի չեն :

Եւրոպայի մէջ հիսա դործածական լեզուներն
ստոնք են՝ գաղղիարէն, իտալերէն, գերմանե-

րէն, անգղիարէն, ռուսերէն, տաճկերէն, հուն-
մերէն, լատիներէն :

Իրեք գլխաւոր կրօնք կայ Եւրոպայի մէջ .
քրիստոնէութիւն, մահմէտականութիւն, հրէու-
թիւն : Քրիստոնէութիւնն ալ իրեք երևելի ճիւղ
կը բաժնուի . կաթողիկէ, յունադաւան, և նորա-
ղանդ :

Քաղաքականութեան ու արուեստի կողմա-
նէ Եւրոպա այնչափ ծաղկած է որ հարկաւո-
րէն զամ' զարդի ու գեղեսութեան բաներուն ալ
չափը չկայ : Աւճառականութիւնը բոլոր աշխարհք
տարածուած է . իսկ գիտութիւնները այնչափ
պայծառացած են որ աշխարհիս մէջ ատեն մը կամ
տեղ մը ասոր նմանը չէ եղած :

19

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Եւրոպայի մէջ ընդհանրապէս երեք տեսակ
կառավարութիւն կայ . ազատ միապետութիւն,
չափաւորած միապետութիւն ու հասարակապե-
տութիւն :

Ազատ միապետութիւն կ'ըսուի այն կառա-
վարութիւնը, որուն թագաւորը ինչ օրէնք ուղէ'
կը դնէ :

Չափաւորած միապետութիւն կ'ըսուի' եր-
բոր թագաւորն առանց իշխաններուն խորհրդին
չիրնար օրէնք մը դնել, կամ պատերազմ բանալ :

Հասարակապետութիւն կ'ըսուի' երբոր կա-
ռավարութիւնը կամ ազգին գլխաւորներուն կամ
բոլոր ազգին ձեռքն է :

ԲՐԻՏԱՆԻԱ

20

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲՐԻՏԱՆԻԱ կամ ընդհանուր անուամբ Աֆրիկան Ռադեֆուսիան ըսուած երկրին անկողնէն հասնող Վերջին 78 թուականին • բայց 448ին թողուցին : Բրիտանացիք Սկոտլանդացիք ձեռքէն նեղութիւն քաշելով , Անկլո-սաքսոն ըսուած ազգէն օգնութիւն ուղեցին • անոնք ալ եկան բոլոր երկրին անկողնէն , ու անոնք իրենց գլխաւորին անուանովը Աֆրիկա գրին : Ետքէն 1066ին Նորմանախոյ Գուլիէլմոս դուքսը անկողնէն Բրիտանիոյ , և հոն Նորմանախոյէն բնակիչներ խաւրեց • անկէ ետքը Անգլիան քանի դնաց մեծցաւ , Սկոտլանդի , Իռլանտան և ուրիշ շատ երկիրներ աշխարհիս ամէն կողմը ու կողմներ ալ իր հետք միացընելով ըսուեցաւ Բրիտանիան կայսերութիւն կամ Միացեալ Ռադեֆուսիան Ռեժիմ Բրիտանիոյ և Իռլանդիոյ :

21

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Բրիտանիան Եւրոպայի արեւմտեան կողմը կ'ընայ , և չորս դին պատած է Ատլանտեան ովկիանոսը :

Բրիտանիան չորս գլխաւոր մաս կը բաժնուի .
Անգլիա , Սկոտլանտ , Իռլանտ , և ասոնց քովի Մանր
Իլէնէրը :

Տարածութիւնն է 110,846 քառակուսի մղոն :
Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է , մանաւանդ
Սկոտլանտ ու Վալլէսի գաւառը :

Գլխաւոր գետերն են՝ Դէմզ կամ Դամիզ , Սի-
վերն , Էէնըն , Ուզ ու Դրէնզ :

Շատ տեսակ հանք ունի . գլխաւորներն են՝
երկաթ , կապար , անագ , պղինձ ու հանքածուխ :
Վենդանիներուն մէջ անուանի է ձիւն , ոչխարնե-
րուն բուրգն ալ շատ ազնիւ է :

Օդը ցուրտ ու թաց ըլլալուն համար՝ երկիրը
խաղող չհասցըներ , բայց առատ ցորեն ու խոտ
կուտայ :

Բնակիչն է 29,000,000 , ասոնց լեզուն է անգ-
լիարէն , որ հին Վելտաց լեզուէն առաջ եկած է :

Արուեստներն ու վաճառականութիւնը խիստ
ծաղկած են , ինչպէս նաև երկրագործութիւնը . ձե-
ռագործները վերջի կատարելութեան հասած . շէն-
քերն աղուոր , սպարաէղները գեղեցիկ , ուսումնա-
կան տեղուանքը խիստ անուանի , և բոլոր աշխար-
հիս քաղաքականութեանը առաջին կեդրոններէն
մէկն է : Միայն վաճառականութեան նաւերը քսան
հազարէն աւելի են , որոնց մէջ հարիւր յիսուն
հազար նաւաստի կայ որ աշխարհիս ամէն ծովերը
կը սպարտին , և անոր համար ամէն ազգաց հետ
առուտուր կ'ընեն . երկրին մէջ ալ բազմաթիւ
ջրանցքներ ու երկաթուղիներ ունի :

Վրոնքը՝ Անգլիայ և Սկոտլանտ մէջ նորազանդ
է , իսկ Իռլանտայի մէջ կաթուղիկէ :

Տէրութեան կառավարութիւնն է սահմանա-
դրական միապետութիւն, և թէ՛ արական և թէ՛
կրօնական ճիւղի մէջ թագը կը ժառանգուի :

Զօրքն է 230,000 հոգի • նաւատորմիդը 626
կասր նաւ, մեծ ու պզտիկ, որոնց մէջ կան 55,000
հոգի :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

22

Ա Ն Ք Ղ Ի Ա

ԼՂՆՏՐՅ կամ ԼՂՆՏՈՆ (2,880,000 բնակիչ ու-
նի) • տէրութեան մայրաքաղաքը, Եւրոպայի մէջ
ամենէն բազմամարդ, և բոլոր աշխարհիս մէջ ամե-
նէն վաճառաշահ քաղաքն է, Գամիղ դեափն վրայ •
իր նաւահանգստին մէջ միշտ երկու հազար նաւէն
աւելի կը դառնի : Մէջի գլխաւոր շէնքերն են՝
Սուրբ Պօղոս, որ բոլոր աշխարհիս վրայ նորա-
դանդներուն ամենէն մեծ եկեղեցին է • Ուեստմինս-
տըրի եկեղեցւոյն մէջ ալ թագաւորներու և մեծ
մարդկանց դերեզմաններ կան, Ժողովարանի պա-
լատը, կամուրջները, դեաափուները, և մանաւանդ
Գամիղ դեափն տակի մեծագործ ճամբան՝ որ 1300
ոտք երկայնութիւն, 200 ոտք լայնութիւն ունի : —
Աս քաղքիս մէջ ծնան՝ Պաքոն, Միլտոն, Բոր •
Կեւտոնն ալ Ուեստմինստըրի եկեղեցին թաղուած է :

ՄԷՆԶԸՍԴԸՐ (364,000) վաճառականութիւնը
խիստ ծաղկած, բամբակեղէն ու մետաքսեղէն
դործուածքներն անուանի :

ՊԸՐՄԻՆՎԷՄ (233,000) Երկաթեղէնի կողմանէ բոլոր աշխարհիս առաջին գործարանն է, ուստի վաճառականութիւնն ալ խիստ մեծ :

ԼԻՎԸՐՔՈՒԼ (376,000) Լոնտրայէն ետև աշխարհիս երկրորդ ծովային վաճառաշահ քաղաքն է. 30 նաւարան ունի ուր կը շինուին նաւեր ու շոգենաւեր :

ՊՐԻՍԴԸԼ (137,000)

ՓԼԻՄԸՏԶ (80,000)

ԲՈՐՏՍԸՏԶ (63,000)

ՀԸԼԼ (42,000)

ԵՄՐՄԸՏԶ (25,000)

ՏՈՒՎՐ (9000)

ՖՈԼԲՍԴՈՆ (4,000)

} ասոնք խիստ բանուկ նաւահանգիստներ են :

ԼԻՏՍ (172,000) շատ գործարաններ ունի, մանաւանդ բրդէ գործարաններու :

ՀԷԼԻՖԷԻՍ (110,000) շատ գործարաններ ունի բամբակի, չուխայի և ասուեղինաց :

ՇԷՖՅԻԼՏ (135,000) շատ գործարաններ ունի դանակեղինաց :

ՆԻՐՅԱՍԼ (57,000) ասոր քոյն է Բրիտանիոյ ամենէն մեծ ամխահանքը :

ԿՐԻՆԻՉ (44,000) ասուեղաբաշխութեան Երևելի դիտարան ունի :

ՊԱՏԶ (38,000) անուանի է հանքային ջրերուն համար :

ՄԸՐՏԶԸՐ-ԴԻՏՈՒԻԼ (35,000) մեծ երկաթահանք ունի :

ԵՕՈՒՐ (26,000) շատ հին քաղաք է. Անգլիոյ երկու արքեպիսկոպոսներէն մէկն հոս կը նստի և մայր եկեղեցին մեծագործ է :

434



ՕՐՍՖԸՐՏ (24,000) } ասոնց համալսարաննե-
 ՔԵՄՊՐԻՃ (25,000) } ըր խիստ անուանի են :
 ՍԸՆՏԸՐԼԷՆՏ (17,000) բանուկ նաւահանգիստ
 ունի , ուր հանքածխոյ մեծ վաճառականութիւն
 կ'ըլլայ :

ԳԷՆԴԸՐՊԸՐԻ (14,000) հոս կը նստի Անգղիոյ
 նախագահ արքեպիսկոպոսը :

ՍԴՐԷԴՖԸՐՏ (3,800) հոս ծնաւ ու մեռաւ Շէյ-
 քըսթիւր անուանի բանաստեղծը :

Մէկալ երևելի քաղաքներն ասոնք են . Պրէտ-
 Ֆրրա , Պոլղըն , Նոբիլէ , Ռոչտալ , Կլոսդըր , Ֆէլ-
 մրահ , Նոդինկէմ , Ուինտզը , Վոլքսբըրգը , Լէն-
 քէսդը :

23

Ս Կ Ո Վ Տ Ի Ա

ԷՏԻՄՊՈՒՐԿ (187,000) անուանի համալսա-
 րան ու խիստ բանուկ նաւահանգիստ ունի :

ԿԼԷՍԿՈՅ (285,000) համալսարանն անուա-
 նի է , վաճառականութիւնն ալ խիստ բանուկ ,
 բրդեղէն գործուածքի ու շոգեշարժ մեքենաներու
 կողմանէ երևելի :

ՏԸՆՏԻ (63,000) վաճառականութեանն ու կտա-
 ւեղէն գործուածքին համար անուանի :

24

Ի Ռ Լ Ա Ն Տ Ա

ՏԸՊԼԻՆ (300,000) Լոնարայէն ետքը աերու-
 թեան առաջին մեծ քաղաքն է , ու խիստ հին հա-
 մալսարան մը ունի :

ԳՈՐՔ (197,000) վաճառաչահ քաղաք է, նա-
ւահանգիստը շատ գեղեցիկ :

| | |
|---------------------|---|
| ԼԻՄԵՐՒՔ (197,000) | } ասոնք բանուկ նա- ւահանգիստներ են : |
| ՊԵԼՖԱՍԴ (100,300) | |
| ՈՒՈԴԸՐՖԸՐՏ (59,000) | |

ԱՐՄԱ (9,000) հոս կը նստի Իսլանտիոյ նա-
խագահ արքեպիսկոպոսը :

25

ՄԱՆԻ ԿՂԶԻՆԵՐ

Ատլանտեան ովկիանոսին մէջ՝ Շէգլընա, և
Որկադեան ու Հեբրիդեան կղզիները :

Իսլանտայի ծովուն մէջ՝ Մէն և Էնկլաի :

Հիւսիսային ծովուն մէջ՝ Հէլիոլանա :

Մանիգայի մէջ՝ Ուայթ, Կրոնդի և Ճըռզի :

Միջերկրական ծովուն մէջ՝ Մալդա :

Յոնիական ծովուն մէջ՝ Գորֆու, Փաբլա,
Սանդա Մաւրա, Թէաքի, Չեֆալոնիա, Զանդա :

Արշիպելագոսին մէջ՝ Չերիկոյ :

26

ԵՒՐՈՊԱՅԻՆ ԴՈՒՐՍ
ԱՆԴՂԻԱՅԻՈՅ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Ասիոյ մէջ՝ Հնդկաստանի մէկ մեծ կտորը, Սէյ-
լան կղզին, Պիրմանի երկրին քանի մը գաւառ-
ները, Մալագա, Սինկաբուր կղզին, Հոնկ-
քոնկ՝ Չինուամաչինի մէջ, և Ատէն՝ Արաբիոյ մէջ
(100,000,000 բն.) :

Ափրիկէի մէջ՝ Կամպուային մէկ մասը , Սիերրա
Լիոնէ , Բարեյուսոյ գլուխը , Սուրբ Հեղինէ , Աե-
րափօխման կղզիները , Գաղղիոյ կղզին , և ուրիշ
շատ մանր կղզիներ (310,000 բն.) :

Ամերիկայի մէջ՝ Կրէնլանտիայի հիւսիսային
կողմը , Նոր Բրիտանիա , Եուգադանի մէկ կտորը ,
Կույանայի մէկ կտորը , Պաֆֆինոյ ծովուն կղզի-
ները , Սուրբ Լաւրենտիոսի ծոցին մէջ եղած կղզ-
ղիները , Պերմուտեան կղզիները , Լուգայեան կղզ-
ղինիները , Եամայիգա կղզին , փոքր Անգլիեան
կղզիներուն մեծ մասը (2,700,000 բն.) :

Ովկիանիայի մէջ՝ Նոր Հոլանտա , և Այն Տե-
մէն (800,000 բն.) :

Անգղիացւոյ ձեռքն է նաև Ճիպիլդէրրա քա-
ղաքը՝ (17,000) Սպանիոյ արևմտեան ծայրը :

Տ Ա Ն Ի Մ Ա Ր Գ Ա

27

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Տ Ա Ն Ի Մ Ա Ր Գ Ա Ն հին ատեն Վիսրայացւոց հայրենիքն էր, որ Քրիստոսէ 100 տարի առաջ բոլոր Եւրոպան կոխեցին ու աւրըշարկեցին • անոր համար Վիսրեան Քերսոնիսն ալ կ'ըսուէր : Տանիմարդացիք կամ Դանիք 1017ին Անգղիոյ վրայ վազեցին ու 28 տարի հոն տիրեցին : Հիմա Տանիմարդան ինքնազուտ միապետութիւն է :

28

Ը Ն Ի Հ Ա Ն Ո Ւ Ր Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Տանիմարդացի սահմանը՝ հիւսիսէն Քաղդէկազի ծոցն է, արևելքէն Պալդիկ ծովը, հարաւէն Գերմանական դաշնակցութիւնը, արևմուտքէն Հիւսիսային ծովը :

Հինգ գլխաւոր մաս կը բաժնուի • Բուն Տանիմարդա կամ Արշիպեղաֆոս Դանէայ, Եոսլանդ, Շվեդիի Դոստիանը, և հոլլանդացի ու Լանկաուրիի Դոստիանները : Իսլանդա կղզին ալ աս տէրութեան ձեռք է :

Տարածութիւնն է 16,500 քառակուսի մղոն :
Երկիրը դաշտային ու անբեր է, մանաւանդ
հիւսիսային կողմերը :

Գլխաւոր գետերն են՝ Էլպա, Էյտէր, Դրա-
ւէ, Կուտէն :

Օդը ցուրտ, խոնաւ ու փոփոխական է :

Իսլանտայի մէջ շատ հրաբուխներ ու հան-
քային տաք ջրեր կան, օդը շատ ցուրտ է :

Բերքերուն մէջ անուանի է սինկա ձուկը, որ
մարտ ամսուն մէջ խիստ շատ կ'ելլէ . հռչակա-
ւոր է նաև ձիւն, և մանաւանդ ծովային թռչուններ
րուն փեռուրները՝ որ թէ Տանիմարդայի և թէ
Իսլանտայի մեծ վաճառքներէն մէկն է :

Բնակիչը 2,500,000, լեզուներն գերմաներէնին
մէկ տեսակն է :

Կրօնքն է ընդհանրապէս նորադանդ :

Տէրութեան կառավարութիւնը՝ սահմանադրա-
կան միապետութիւն է, և թագն իգական ճիւղի
մէջ ալ ժառանգական է :

Զօրքը 30,800, և նաւատորմիցը 25 կտոր նաւ :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՔՈՐԷՆԶԱԿ կամ ՔԵՕՊԷՆԶԱՆ (144,000) Ձէ-
լանա ու Ամակէր կղզիներուն մէջ մայրաքա-
ղաքն է, որ փառաւոր նաւահանգիստ ունի Սունա
նեղուցին վրայ . վաճառականութիւնը խիստ քա-
նուկ է . արուեստի, ճարտարութեան ու դիտու-
թեանց կողմանէ Եւրոպայի երևելի քաղաքներէն
մէկն է :

ԱՂՏՈՆԱ (32,000) Էլզա գետին բերանը աղուոր նաւահանգիստ ունի . Քորէնհակէն ետքը աս է ամենէն մեծ և ամենէն ծաղկած քաղաքը :

ՀԷՆՍՏՆՎՈՐ (8,000) Սուեաին նեղ տեղը ամուր ու վաճառաշահ քաղաք : Ամէն աղգի վաճառական նաւերն հոս ամուրք մը կը հատուցանեն :

ՖԷՆՍՊՈՐՎ (16,000) Պալդիկ ծովուն վրայ , և ԴՈՆՆԻՆՎԷՆ (4,000) հիւսիսային ծովուն վրայ , երկաթուղեաւ մէկմէկու հետ միացած են :

ԱԵԼՊՈՐՎ (8,000), ԱԵՐՈՒՍ (8,000) Եռդլանդ թերակղզիին վրայ նաւահանգիստներ են , ինչպէս նաև ՇԼԷՉՎԻՎ (12,000), ՔԻԼ (15,000) և ՌԷՆՏՍՊՈՒՐՎ (11,000) բանուկ նաւահանգիստներ են :

30

Կ Ղ Ջ Ի Ն Ե Ր Ը

Պալդիկ ծովուն մէջ՝ Զէլանա , Ֆիէն կամ Ֆիոնիա , Լալանա , Փալսդէր , Պունհոլմ :

Ատլանտեան ովկիանոսին մէջ՝ Իսլանտա ու Ֆերէօր կղզիները :

31

ԵՒՐՈՊԱՅԷՆ ԴՈՒՐՍ

ՏԱՆԻՍԱՐԳԱՅԻ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Ամերիկայի մէջ՝ Կրէնլանտ , Սուրբ Թովմաս , Սուրբ Յովհաննէս , և Սուրբ Խաչ կղզիները , Կուսանայ կղզիներէն՝ Փոքր-Անգլիկանց խումբը (83,000 բն.) :

ՇՈՒԵՏ ԵՒ ՆՈՐՎԵԿԻԱ

32

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՇՈՒԵՏԻ Երկրին հին ատենը Ֆինք կամ Ֆինլանդացիք տիրեր էին, որոնց ցեղը մինչև հիմա ալ կայ, և կը բնակին Շուեաի ու Ռուսաստանի հիւսիսային ծայրը • Ետքը Գոթացիք առին • Իսկ Նորվեկիան ատենով Տանխմարդայի կառն էր, 1814ին Շուեաի տէրութեանը հետ միացաւ :

33

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Շուեաի սահմանը հիւսիսէն Սառուցեալ ծովն է, արևելքէն Ռուսաստանը, հարաւէն Պալդիկ ծովը, արևմուտքէն Աալանտեան ովկիանոսը :

Շուեաի տէրութիւնը իրեք գլխաւոր մաս կը բաժնուի • Թագաաորութեան Էսթլանդ, Թագաաորութեան Նորվեկիոյ, և Կղզիները :

Տարածութիւնն է 220,000 քառակուսի մղոն :

Նրկիրը դաշտային է, շատ լճեր ունի, բնակիչը քիչ : Նորվեկիան լեռնոտ ու քարոտ է :

Գլխաւոր գեաւերն են՝ Գոռնեա, Լաւլեա, Աւ-
մեա, Բիդէա, Ալամէն, Գամիա :

Օղբ ցուրտ է, հողը բարեբեր չէ, բայց եր-
կաթի, սղինձի, արծաթի հանք ունի . փայտը
խիստ չատ է . կենդանիներէն ալ անուանի է հիւ-
սիասլին եղնիկը, և ուրիշ բրդոտ վայրի կենդա-
նիներ :

Բնակիչն է գրեթէ 4,973,000, լեզուներն գեր-
մաներէնին մէկ տեսակն է :

Արօնքը նորաղանդ է, և ուրիշ դաւանանք ունե-
ցողները քաղաքական իրաւունքներէ զրկուած են :

Կառավարութիւնը չափաւորած միապետու-
թիւն է, և ժառանգութիւնը միայն արական դժի
մէջ է :

Զօրքը 144,000, և նաւատորմիդը 240 կտոր
նաւ :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

34

Շ Ո Ւ Ե Տ

ՍԴՈՔՈԼՄ կամ ՍԴՈՔԶՈԼՄ (101,500) Մէ-
լառ լճին մէջ քանի մը մանր ու խոշոր կղզի-
ներու և երկու թերակղզիի վրայ գեղեցիկ կեր-
պով շինած՝ տէրութեան մայրաքաղաքն է . աղէկ
ձեռագործներ և ուսումնական տեղեր ու բանուկ
վաճառականութիւն ունի :

ԿՈԹԷՆՊՈՒՐԿ կամ ԿՈԹԷՊՈՐԿ (30,600) Քաղ-
դեկադին վրայ բանուկ նաւահանգիստ ունի . ա-
րուեստի ու վաճառականութեան կողմանէ Սդո-
քովէն ետքը երեւելի քաղաքն առ է :

ԳՆՐԱՍԳՐՈՆԱ (14,600) տերութեան պատե-
րազմական նաւահանգիստն է :

ՈՒՐՍԱԼԱ (7,000) ասոր համալսարանը խիստ
անուանի է . Ղիննէսս բնախօսը հոս վարպետ
եղած է . աս քաղքիս քովը մեծ ու անուանի եր-
կաթահանք կայ :

ՆՈՐՎԵԿԻԱ

ՔՐԻՍՏԻԱՆԻԱ (40,000) մեծ վաճառականու-
թիւն ունի տախտակի և երկաթի : Համալսարանն
անուանի է :

ՊԵՐԿԻՆ (25,000) վաճառաշահ քաղաք է :

ՐԷՕՐՈՍ . պղնձի հանք ունի մեծ . ցուրտը խիստ
սասախի է :

ՎԱՐՏՀՈՒՍ . Եւրոպային ամենէն հիւսիսային
քաղաքն է :

ՏՐՈՆԴՆԱՅՄ (16,000) ատենով Նորվեկիոյ թա-
գաւորներն հոս կը նստէին . պղնձի վաճառակա-
նութիւն ունի :

ՖՐԻՏԷՐԻՔՎԱ (5,600) , նաւահանգիստ է .
հոս սպաննուեցաւ Կարոլոս ԺԲ Էոսեապ թա-
գաւորը յամին 1718 , քաղքին պաշարմանն ա-
տենը :

ԿՂԶԻՆԵՐԸ

Պաղտիկ ծովուն մէջ՝ Կողզանա , Օլանա ու
Լոֆֆոտէն կղզիները . ասոնց քովերն է Մալէս .

դրում՝ ըստեւած սոսկալի յորձանքը, որ շատ ան-
գամ նաւեր կ'ընկղմէ, որուն ձայնը մղոններով
հեռուէն կը լսուի :

Շուեալը Եւրոպայէն դուրս ունի միայն Սուրբ
Բարձուղիմէոս կղզին յարեւմտեան Հնդիկս որ
փոքր Անդիլեան կղզիներուն մէկն է (16,000
բնակիչ) :

ՌՌՒՍՍՍՍՆ

37

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՌՌՒՍՍՍՍ թագաւորութիւնն սկսած է 900ին ատենները . բայց մէջերնին քաղաքականութիւն ծաղկեցրնուին եղաւ մեծն Պետրոս 1700ին սկիզբները , որ տէրութիւնն ալ ընդարձակեց : Ետքը Ղէհաստանի մէկ կտորը և ուրիշ երկիրներ ալ առնելով՝ առ տէրութիւնը շատ մեծցաւ : Հին ատեն Ռուսաստանի բնակիչներն էին Սկիւթացիք , Սլաւեանք , Սարմատացիք ու Ֆինլանտացիք : Հիւսիսային կողմերը կը գտնուին Լաբոն ու Սարմոյեա ըստած կարճահասակ ազգերը , հարաւային կողմերն ալ շատ ժողովուրդներ՝ գրեթէ ամէն ազգէ :

38

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Ռուսաստանին սահմանը հիւսիսէն Սառուցեալ ծովն է , արևելքէն Ասիայի Ռուսաստանը , հարաւէն Սև ծովն ու Աւստրիան , արևմուտքէն Բրուսիան , Պալդիկ ծովն ու Շուեաք :

Հինգ գլխաւոր մաս կը բաժնուի աշխարհա-
գրօրէն . Հիւսիսային Ռուսաստան, Միջին Ռու-
սաստան, Հարաւային Ռուսաստան, Վեհաստան,
և Կղզիները . իսկ ըստ քաղաքական կառավարու-
թեան 53 կոսսակալութիւն կը բաժնուի բոլոր կայ-
սերութիւնը, նաև քանի մը առանձին նահանգներ
ու գաւառներ :

Տարածութիւնն է 1,536,000 քառակուսի մղոն :

Երկիրն ընդհանրապէս դաշտային է . միայն
երկու լեռներու գօտի ունի . մէկն Ուրալ, մէկալը
Կովկաս :

Հիւսիսային կողմերուն հողն անբեր ու քիչ
մշակած է . իսկ միջին ու հարաւային կողմերը
խիստ պտղաբեր :

Գլխաւոր գետերն ասոնք են .

Տվինա՝ որ Սպիտակ ծովը կը թափի .

Նեւա ու Նիլեմէն՝ Պալդիկ ծովը .

Դանուբ, Տեբեր, Տեկագեր, Տոն, Կուսպան՝ Սև
ծովը .

Վոլգա, Ուրալ, Բուամա, Դերէք՝ Կասպից ծովը :

Գլխաւոր բերքն է՝ երկաթ, կապար, սղինձ,
արծաթ, բլադին, ոսկի, ամիանդ, որ Ուրալ լեռ-
ներէն ու Սիպերիայէն կ'ելլեն : Շատ անտառներ
ունի . ցորենն առատ ու ազնիւ է . մորթը, կա-
շին և մուշտակները խիստ ընտիր : Կենդանիներ
ունի մէջ նշանաւոր է ճերմակ արջը, որ հիւսի-
սային ծովեզերքը կը գանուի :

Բնակիչն է 71,500,000, ասոնց լեզուն առ-
սերէն է, որ Սլաւեան լեզուին մէկ ճիւղն է :

Արօհքը յունադաւան :

Տերութեան կառավարութիւնն է բացարձակ

ժիւղակաւորներ , և թաղաւորը կայսր և ինքնակալ ա-
ճեանի Ռուսաց և Չար կ'անուանուի :

Զօրքը 720,000, նաւատորմիդը 260 կտոր նաւ :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՀՒՒՍԻՍԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԲԵՐԲՈՒՐԿ (532,000) մեծն Պետրոս շինեց
աս մայրաքաղաքը Նեւա գետին բերանը յամին
1703, ուր որ իրեն սղնձէ ձիաւոր արձանն ալ
կայ՝ կրանիդ քարէ ժայռի մը վրայ անկած : Եւ-
րոպայի մայրաքաղաքներուն մէջ ամենէն աւելի
ասոր տեսքը փառաւոր է՝ փողոցներուն լայնու-
թեանը և շտկութեանը , հրապարակներուն ըն-
դարձակութեանը , գեղեցիկ կրանիդէ գետափան-
ցը , և պալատներուն ու հասարակաց և մասնաւո-
րաց շէնքերուն աղւորութեանը պատճառաւ :
Ուսումնական և արուեստական յառաջադիմու-
թեան կողմանէ ալ բոլոր աշխարհիս առաջին կար-
գի քաղաքներէն մէկն է : Լազարեան պարոնները
հոս հայոց համար գեղեցիկ եկեղեցի մը շինած են .
ատենով ալ մեր լեզուովը շատ մը դրքեր տպուած
են աս քաղաքիս մէջ :

ՐԻԿԱ (75,000) Բեդրսուրկէն ետքը առաջին
վաճառաշահ և խիստ ամուր քաղաքն է Տուլնա
գետոյն վրայ :

ՔՐՈՆՇԴԱՏ (53,200) Նեւա գետին բերանը՝
Ռուսաց ծովային զօրքին դիւաւոր նաւահան-

վիսան է . նաւարանն աշխարհիս խիստ աղուոր նաւարաններէն մէկն է :

ՆՈՎՎՈՐՈՏ (15,000) Իլմեն լճին վրայ՝ ատենով շատ ծաղկած քաղաք էր , հիմա այնչափ չէ : Տիւրիք հոս սկսաւ Ռուսաց թագաւորութիւնը 862ին :

ԱՐԽԱՆԿԷԼ (10,500) մորթի ու մուշտակի մեծ վաճառականութիւն ունի . նաւարանն անուանի ու նաւահանգիստը խիստ բանուկ :

ՏՈՐԲԱԴ (15,000) անուանի համալսարան ունի և դիտարան :

40

ՄԻՋԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՄՈՍԲՈՒՅ կամ ՄՈՍԿՈՎ (374,000) հին ատեն Ռուսաց աթոռանիսա քաղաքն էր , հիմա ալ երկրորդ մայրաքաղաքն է , և իրենց թագաւորները հոս թագ կը գնեն . 1812ին գրեթէ բոլորովին այրեցաւ , բայց ետքէն ալ փառաւոր շինեցին : Շէնքերուն մէջ երևելի է Քրեմլին՝ թագաւորական պալատը , և մայր եկեղեցին : Համալսարանն ու ընդհանրապէս գրականութիւնը և արուեստները շատ ծաղկած են սա քաղաքիս մէջ : Անուանի է Վաղարեան իշխաններուն հոս հիմնած հայկազեան վարժարանը : Մոսքուա երկաթուղեաւ միացած է Բեդրպուրկի հետ :

ԽՍՋԱՆ (56,000) Վոլկային մօտ՝ թաթարներուն մայրաքաղաքն էր . ունի համալսարան , և աստեղաբաշխութեան դիտարան . արուեստներն ու վաճառականութիւնը շատ բանուկ են , և Սիպերիոյ բերքերուն գլխաւոր վաճառանոցն է : 1842ին գրեթէ կէսն այրեցաւ :

ԿԻՓՆԻ-ՆՈՎՎՈՐՈՏ (30,000) քաղաք ամուր և վաճառաշահ Վոլկա գետին վրայ, անուանի տօնավաճառ ունի, ուր տարուէ տարի հարիւր հազարէն աւելի մարդ կուգայ առուտուրի համար:

ՕՐԷՆՊՈՒՐԿ (12,000) Թաթարաց, Պախարացուց և Չինաց՝ Եւրոպացուց հեա ըրած վաճառահանութեանը գլխաւոր տեղն է:

41

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՔԻԷՎ (62,500) Տնեբերի վրայ Մոսքուայէն առաջ Ռուսաց մայրաքաղաքն էր. հիմա ալ անուանի է նոր համալսարանը, մայր եկեղեցին, և ամուր բերդը:

ԱՃՏԵՐՈՒՆ (52,000) Վոլկա գետին բերանը կղզի մը վրայ շինած՝ հին Թաթարներուն մէկ ցեղին մայրաքաղաքն էր. հիմա ալ բնակիչներուն մէկ մասը հայ են: Կասպից ծովուն վրայ ամենէն բանուկ նաւահանգիստն է, ու բոլոր տէրութեան գլխաւոր վաճառաշահ քաղաքներէն մէկն է. գաւաի մորթին վաճառքն անուանի է:

ՍԵՐԱԴՈՎ (62,000) շատ դործարաններ, բժշկական պարակզ մը և մեծ տօնավաճառ ունի:

ՕՏԵՍՍԱ (107,000) Սև ծովուն եղերքը, բոլոր Ռուսաստանի խիստ գեղեցիկ ու ծաղկած քաղաքներէն մէկն է. և թէպէտ նոր շինուած է, բայց աղաա նաւահանգիստ ունինալովը խիստ շուտ առաջ գնաց վաճառահանութեամբ և հարստութեամբ. անուանի է Ռիչըլիէ՞ Վիկէոնը՝ որ համալսարանի աստիճան ունի:

ԽԱՐԲՈՎ (45,000) վաճառաչահ քաղաք է. հա-
մալարանն ունի :

ԹԱՅՂԱՆ կամ ԹԱԿԱՆՐՈՒՅ (14,600) Ազախու-
ծովուն վրայ ամուր ու բանուկ նաւահանգիստ է.
հոս մեռաւ Ռուսաց կայսրը Աղէքսանդր Ա 1825ին :

ՍԵՒԱՍՏՈՒՐՈՒ կամ ԱԳԵՆՈՒ (20,000) Սև ծովուն
վրայ շատ գեղեցիկ նաւահանգիստ է, ամուր բեր-
դերով պատած, նաւարանը խիստ բանուկ, և հոս
կը կենար Ռուսաց Սև ծովուն վրայի նաւատորմի-
ղը : Յամին 1855 երկար պաշարուէ ետև առին
զայն Գաղղիացիք և անոնց դաշնակիցները :

ԱԳՄԷՋԻՏ կամ ՍԻՄՖԵՐՈՒՐՈՒ (22,000) Խրիմի
գլխաւոր քաղաքն է :

ՊԱՂՁԻՍԱՐԱՅ (13,000) Խրիմի Թաթար խա-
ներուն մայրաքաղաքն էր :

ՔԷՖԷ կամ ԹԷՈՂՈՍԻՍ (8,000) Սև ծովուն
վրայ նաւահանգիստ է, ատենով անուանի՝ բայց
հիմա ընկած է :

ԿԵՐՉ (20,000) Ենիգալէի նեղուցին բերանը
ազատ ու բանուկ նաւահանգիստ է :

ԿԻՕՁԼԷՎԷ կամ ԵՒՊԱՏՈՐԻՍ (10,000) Խրի-
մի գլխաւոր նաւահանգիստներէն մէկն է :

ԽԱՐԱՍՈՒ (15,000) Խրիմի ծաղկած քաղաքնե-
րէն մէկն է. բնակիչներուն մեծ մասը Թաթար ու
հայ են :

ՆՈՐ ՆԱԽԷՋԵՒԱՆ (13,000) և ԳՐԻԳՈՐՈՒՊՈ-
ԼԻՍ. հայոց քաղաքներ են, որ շատ ազատու-
թիւններ ալ ունին :

ԲՈՒՐԱՆ (15,000) մեծն Պետրոս հոս անուա-
նի յաղթութիւն ըրաւ Շուեաի Կարոլոս ԺԲ Թա-
ղաւորին դէմ :

ՔԵՐՍՈՆ (30,000) ամուր ծովահայեաց քաղաք
է Տնեքեր գեաին բերանը , և պատերազմական
նաւահանգիստ :

ՆԻՔՈՒԱԵՒ (30,000) գեղեցիկ քաղաք , նաւա-
հանգիստ պատերազմի և աթոռ ծովահալի :

ՔԻՇՆԵՒ (63,000) Պեսարապիոյ գլխաւոր քա-
ղաքն է , ունի դպրոց ճեմական :

ԱՔԵՐՄԱՆ (26,000) Տնեսդեր գեաին բերանը
ամուր և վաճառաշահ քաղաք է :

ԼԵՏԱՍՏԱՆ

ՎԱՐՍԱԽԻԱ կամ ՎԱՐՇԱՒ (140,000) Վիսգու-
լա գեաին քովը՝ ասենով Լէհաստանի մայրաքա-
ղաքն էր , հարուստ ու փառաւոր . 1830ին եղած
պատերազմին ասենը շատ աւրուեցաւ , բայց հի-
մա ալ բոլոր տէրութեան քաղաքներուն մէջ եր-
րորդն է , ամուր , գեղեցիկ ու ամէն կողմանէ
ծաղկած :

ԿՂԶԻՆԵՐԸ

Սառուցեալ ծովուն մէջ՝ Սբիցսկերի , նոր Չեմ-
լեա , Վայկաց , Բալիույէվ :

Պալդիկ ծովուն մէջ՝ Ալանա , Տակոյ , Կոլեւ :

ԵՒՐՈՊԱՅԷՆ ԴՈՒՐՍ
Ռ Ո Ւ Ս Ա Յ Ե Ր Կ Ի Ր Ն Ե Ր Ը

Ասիոյ մէջ՝ Արաստան, Շիրուան, Իմերէթ,
Ապաղա, Չէրքէզ, Հայաստանին մէկ մասը, և
Սիպերիա (5,900,000 քմ.) :

Ամերիկայի մէջ՝ Ռուսի Ամերիկան՝ որ Հիւսի-
սային ծայրն է (50,000 քմ.) :

Գ Ա Ղ Ղ Ի Ա

45

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Գ Ա Ղ Ղ Ի Ա ատենով Հառվայեցւոց տակն էր . 400ին ատենները Գերմանիայէն Փռանք ըսուած ազգն եկաւ տիրեց հոն , ու իրենց անուեովը երկրին անունն ըսուեցաւ Փրանս կամ Փրանսա : Մէջերնէն առաջին թագաւորն եղաւ Փարամնտ , տէրութիւն ծաղկեցրնողն եղաւ մեծն Կարոլոս . 1792ին մեծ խռովութիւն մը հանելով թագաւորութիւննին փոխեցին՝ հասարակապետութիւն ըրին . 1804ին Պոնաբաուդէ Նաբոլէոնը կայսր եղաւ . և 1815ին երբոր ինքը քշուեցաւ , Գաղղիացիք առջինին պէս նորէն թագաւորութիւն ունեցան : 1830ին նոր խռովութենէ մը ետքը՝ սահմանադրական թագաւորութիւն հաստատեցին , բայց 1848ին նորէն հասարակապետութիւն հաստատեցին նախագահ ընտրելով Լուդովիկոս Նաբոլէոն՝ մեծ ինքնակալին եղբորորդին , որ երեք տարիէն ետև 1851ին վերջերը կայսր անուանուեցաւ :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Գաղղկոյ սահմանն է հիւսիսէն՝ Պելճիա, հո-
լանտա ու Բրուսիա • արևելքէն՝ Գերմանական
դաշնակցութիւնը, Չուիցերի ու Սարաենիա • հա-
րաւէն Միջերկրական ծովն ու Սպանիա • արև-
մուտքէն Ատլանտեան ովկիանոսը և Մանչ կամ
Մանիզա :

Տարածութիւնն է 150,000 քառակուսի մղոն :

Երկրին արևելեան ու հարաւային կողմերը լեռ-
նոտ են, իսկ հիւսիսային ու արևմտեան կողմերը
դաշտային :

Գլխաւոր գետերն ասոնք են •

Հառդանոս կամ Բոն՝ Միջերկրական ծովը կը
թափի •

Լուա, Կարոն, Շարանգ՝ Ատլանտեան ովկիա-
նոսը •

Սէն կամ Սենա, Օռն, Վիլ, Սոմ՝ Մանիզայի ծո-
ցը կը վազեն :

Օդը բարեխառն ու առողջ է • բայց հիւսիսային
կողմը ցուրտ :

Բերքն է երկաթ, պղինձ ու հանքային ածուխ •
հողը խիստ աղէկ բանեցուցած է • ձէթն ազնիւ,
գինին խիստ անուանի, մանաւանդ Պուրկոյն,
Շամփանեա ու Պորտոյ գաւառներուն գինիները •
կենդանիներն ալ ընտիր են, մանաւանդ Լոզերն
ու ոչխարները :

Բնակիչն է 36,206,000 • լեզուներն գաղղկարէն •

որ Եւրոպայի ամէն լեզուներէն աւելի տարածուած է :

Մշակութիւնը, արուեստներն ու ձեռագործները մեծ կատարելութեան մէջ են, թէպէտև Անգղիոյ չեն հասած • ուսմունքն ու գիտութիւնն ալ շատ ծաղկած են : Երկաթուղիներն ալ երկրին ամէն կողմերը տարածուած են :

Գաղղիան ատենով 33 նահանգ կամ գաւառ կը բաժնուէր • հիմա 86 բաժին կը համրուի, ան բաժիններն ալ 366 գաւառ, և այլն • 1860ին աւելցան նաև Սալոնիոյ ու Նիցցայի գաւառները՝ իրեք բաժին :

Արօնքն է ուղղափառութիւն :

Տէրութեան կառավարութիւնը՝ սահմանադրական կայսերութիւն :

Զօրքը 800,000, նաւատորմիդը 460 կապր նաւ :

47

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԲԱՐՒԶ (1,530,000) մայրաքաղաքը՝ Սէն Գեովնի վրայ • աշխարհիս մէջ առաջին ծաղկած քաղաքն է, թէ քաղաքականութեան, թէ արուեստից և թէ գիտութեանց կողմանէ • Լոնտրային շատ բանի մէջ հաւասար, շատ բանի մէջ ալ վեր է : Երկաթուղեօք միացած է Պելձիոյ, Բրուսիոյ և Գերմանիոյ հետ, ինչպէս նաև Գաղղիոյ այլ և այլ մասանց հետ : Հասարակաց շէնքերը, ճեմելիքները, պարտէզները, ուսումնական թանգարան-

ները, ամենն ալ շատ փառաւոր ու անուանի են :
Համալսարանը աշխարհիս մէջ մէկ հասիկ, թա-
գաւորական գրատունն ալ ամենէն հարուստն է :
Շատ երևելի շէնք է նաև մեծ պարիսպը որ նոր
շինուեցաւ՝ 16 բերդով : Աս քաղաքը մեռաւ Ռու-
բինեանց վերջի թագաւորը Լևոն 2, 1391ին . և
հոս հաստատուեցաւ մեր ազգային Մուրատեան
վարժարանը 1845ին :

ԼԻՈՆ (293,000) Բարիզէն ետքը ամենէն ծաղ-
կած քաղաքն աս է ամէն կողմանէ, շատ հին, ա-
մուր ու գեղեցիկ . դիպակէ դործուած քիւերուն հա-
մար եզական :

ՄԱՐՍԻԼԵ (250,000) Միջերկրական ծովուն
վրայ մեծ ու գեղեցիկ քաղաք, վաճառականու-
թեան գործունէութիւնը զարմանալի, և նաևա-
հանգիստը խիստ բանուկ . աս քաղաքը Քրիստոսէ
600 տարի առաջ շինուած է :

ՊՈՐՏՈՅ (150,000) բանուկ նաւահանգիստ ու-
նի, և գինիի ու քացախի մեծ վաճառականու-
թիւն :

ՌՈՒԱՆ (104,000) տէրութեան առաջինն ա-
նուանի քաղաքն է՝ բամբակեղէն գործուած քիւե-
րու կողմանէ :

ՆԱՆԴ (109,000) աղուոր նաւահանգիստ ունի
Լըւառ դեպին վրայ . թագաւորական նաւերը հոս
կը շինուին . վաճառականութիւնն ալ շատ բա-
նուկ է :

ԴՈՒԼՈՒՋ (103,000) Եւրոպայի խիստ վաճա-
ռաչահ քաղաքներէն մէկն է՝ ամուր և արուեստ-
ները ծաղկած :

ՍԴՐԱՍՊՈՒՐԿ (78,000) հոս գտաւ տաղադրու-

Թեան արուեստը Յովհաննէս Աուդդէնայերի
1436ին . խիստ ամուր ու ծաղկած քաղաք , և
մայր եկեղեցին շատ հոյակապ ու անուանի :

ՕՌԼԷԱՆ (47,000) հոս երկու անգամ անուանի
յաղթութիւն ըրած են Գաղղիացիք , մէյմը Ատ-
տիղասայ՝ մէյմրն ալ Անգղիացւոց դէմ . վաճառա-
շահ ու ճարտարարուեստ քաղաք :

ԱԻՆԻՈՆ (37,000) քիչ մը ատեն հոս նստան
հասկնայ սրբազան պատերը :

ՊԸԶԱՆՍՈՆ (43,000) ասոր քովերը անուանի է
Օսէլ այրը , որ խիստ մեծ է , ու շատ քարացած
նիւթեր կան մէջը :

ԳՅԼԷ (12,000) ամուր քաղաք , Գաղղիայէն
Անգղիա անցնելու սովորական ու կարճ ճամբան
աւ ըլլալով նաւահանգիստը խիստ բանուկ է :

ԴՈՒԼՈՆ (83,000) Գաղղիացւոց պատերազմա-
կան նաւերը հոս կը կենան . նաւարանն ու նաւա-
հանգիստը բոլոր Միջերկրականին վրայ եղական
են մեծութեան կողմանէ :

ԿՐԸՆՈՊԼ (32,000) ասոր ձեռագործներն ու
ամրութիւնը անուանի են :

ՄՈՆԲԷԼԻԷ (50,000) Եւրոսրայի մէջ շատ ա-
նուանի է ասոր բժշկական պարտէզը :

ՏԻԺՈՆ (83,000) գինիի ու քացախի վաճառք
ունի . հոս ծնած է մեծն Պասիւէ :

ՌԷՆՍ (51,000) Գաղղիոց Թագաւորներն ասոր
եկեղեցւոյն մէջ կ'օծուին :

ՆԱՆՍԻ (48,000) գեղեցիկ ու վաճառաշահ քա-
ղաք է :

ՄԻՒԼԸՈՂԷՆ (46,000) ասոր ամէն տեսակ գոր-
ծարանները շատ անուանի են :

ԱՄԻԷՆ (57,000) հին ու ամուր քաղաք է . մայր
եկեղեցին շատ փառաւոր :

ՊՈՒԼՈՆԵԸ (35,000) ամուր ու բանուկ նաւա-
հանգիստ ունի :

ԼԻԼ (79,000) Եւրոպային ամուր ու վաճառա-
շահ քաղաքներէն մէկն է . անուանի է փողերա-
նոցը :

ՆԻՅՅԱ կամ ՆԻՍ (37,000) ազատ ու բանուկ
նաւահանգիստ ունի . օգն առողջարար ու մեղմ
ըլլալուն համար՝ շատ օտարականք հոս կը ձմերեն :

ՎԱԼԱՆՍ (14,000) հոս մեռաւ Պիոս Զ սրբա-
զան սրայր :

ՍԷՆ-ՏԸՆԻ (18,000) Բարխղու մօտ , Գաղղիա-
ցւոց թագաւորներն ասոր եկեղեցւոյն մէջ կը թա-
ղուին :

Անուանի են նաև աս քաղաքներս . Նիմ (54,000) ,
Դրուա , Գամարէ , Գան , Վերսայլ , Բուաղիէ ,
Անկուլէմ , Գոլմար , Մէս , Սէն-Բանդէն , Տոն-
քէրք , Տուէ , Վալանսիէն , Լը հաւր , Ռէն ,
Պրէսպ , Սէնդ-Էդիէն , Լիմոժ , Մոնդոպան ,
Գլէրմոն , Շէրպուր . Շամպէրի և Աննըսի՝ Սա-
ւոյից մէջ :

Գորսիգա կղզին ալ Գաղղիացւոց ձեռքն է , և
ասոր մէջ անուանի է Այաչչիօ քաղաքը , ուր
ծնաւ Նաբոլէոն Ա . բնակիչն է 11,000 , և Պաս-
դիա (17,000) գլխաւոր քաղաքը .

ԵՒՐՈՊԱՅԷՆ ԴՈՒՐՍ

Գ Ա Ղ Ղ Ի Ա Յ Ի Ո Յ Ե Ր Կ Ի Ր Ն Ե Ր Ը

Ասիայի մէջ՝ Հնդկաստանի մէկ կտորը, որուն
դժնաւոր քաղաքն է Բոնդիշերի (228,000 բն․) :

Ափրիկէի մէջ՝ Ճէզայիր կամ Ալճերի, Սենե-
կալին մէկ կտորը, Կորէա և Պուրպոն կղզիները
(3,500,000 բն․) :

Ամերիկայի մէջ՝ Սուրբ Պետրոս, և Միքէլոն
կղզիները՝ Սուրբ Լաւրենտիոսի ծոցին մէջ. Կուա-
տալուրբա և Կուչանա գաղղխական (292,000 բն․) :

Ովկիանիայի մէջ՝ Մարբիզ կղզիները, Գայիզի և
Նոր Գալեատնիա (81,000) :

Պ Ե Լ Ճ Ի Ա.

49

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԵԼՃԻԱՆ Երկար ատեն Գերմանիոյ կայսերաց ձեռքն էր, ետքը Գաղղիացիք առին. 1815ին նոր թագաւորութիւն եղաւ, որ Հոլանտային հետ մէկտեղ Սպորին նահանգաց փէրու-ի-ն կ'ըսուէր : Բայց 1830ին Պելճիան Հոլանտայէն բաժնուեցաւ, ու զառ թագաւորութիւն եղաւ :

50

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Պելճիային սահմանը հիւսիսէն Հոլանտան է, արևելքէն Գերմանիան, հարաւէն Գաղղիան, և արևմուտքէն Հիւսիսային ծովը :

Տարածութիւնն է 8,200 քառակուսի մղոն :

Բերքն է երկաթ, հանքային ածուխ, փայտ, արմախք ու աղէկ ձեռագործներ. երկաթուղիներն ալ շատ առաջ գնացած են :

Բնակիչն է 4,623,000, լեզուներն գաղղիարէն և Գլաման՝ որ գերմաներէնին մէկ տեսակն է :

Կրօնքն ուղղափառութիւն :

Տէրութեան կառավարութիւնը սահմանադրա-
կան միապետութիւն :

Զօրքը 100,000 :

51

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՊՐԻՒՍԷԼ (252,000) մայրաքաղաքն է, ձեռա-
գործը և վաճառականութիւնը խիստ ծաղկած :
Ասոր մօտ է Վազէրլոյ գեղը, ուր յաղթուեցաւ
Նաբոլէօն 1815ին :

ԱՆՎԵՐՍԱ կամ ԱՆՏՈՒԵՐՊՐԱ (108,400) ամուր
ու վաճառաշահ քաղաք է • անուանի է մայր եկե-
ղեցին :

ԿԱՆՏ կամ ԿԵՆԴ (113,000) հոս ծնաւ Կարո-
ղոս Ե Գերմանիայի կայսրը • անուանի են կառաւի-
ու բամբակի գործարանները և ուսումնական տե-
ղուանքը :

ՊՐՈՒԺ (50,000) վաճառաշահ քաղաք է • շատ
գեղեցիկ ջրանցքներ ունի :

ԼԻԷԺ կամ ԼԻԴԴԴԻՍ (92,800) մեծ վաճառա-
կանութիւն ունի հանքային ածուխի՝ որ քովէն
կ'ելլէ :

ԼՈՒՎԷՆ կամ ԼՈՎԱՆՒՈՆ (30,000) հին ու ա-
նուանի համալսարան ունի :

ՆԱՄՐՈՒՐ կամ ՆԱՄԷՆ (24,000) հոս 1815ին
մեծ յաղթութիւն ըրաւ Նաբոլէօն Պրուշներուն
դէմ :

Երևելի են աս քաղաքներս ալ • Օսգէնսա ,
Մոնս կամ Պէրկէն , Մալին , Գուռնէ , Վէրվիէ ,
Գուրդրէ :

Հ Ո Ւ Ա Ն Տ Ա.

52

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Հ Ո Ւ Ա Ն Տ Ա Ց Ի Ք ատենով Սպանիացւոց տակն էին 1579ին անոնցմէ գլուխ քաշելով զատ հասարակապետութիւն եղան ճարտար ու հարուստ : Ետքը 1815ին Հոլանտան ու Պելճիան մէկտեղ զատ թագաւորութիւն մը ձեացաւ՝ Սպորթն նահանգաց փերսիան ըսուած , բայց 1830ին իրարմէ ալ զատուեցան :

53

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Հոլանտային սահմանը հիւսիսէն ու արեւմուտքէն հիւսիսային ծովն է , հարուէն Պելճիան , արևելքէն Գերմանիան :

Տարածութիւնն է 9,800 քառակուսի մղոն :

Երկիրը ծովէն ընդհանրապէս ցած ըլլալուն համար մեծամեծ թումբեր շիներ են ջուրը բռնելու :

Օդը խոնաւ , փոփոխական և անառողջ է :

Հողը ցած ու ջրոտ ըլլալուն՝ խիստ նրազաբեր չէ :

Բերքն է հանքածուխ , կտաւ , կաշի , կարմիր ներկ ու վարպետ ձեռագործներ : Խիստ ազնիւ են կովերն ու ոչխարները , և անոնց սպանիրը :

Բնակիչը 3,544,000 • լեզունին հին դերմանե-
րէնին մէկ տեսակն է :

Հատ ջրանցքներ և երկաթուղիներ ունենալուն
համար վաճառականութիւնը շատ ծաղկած է :

Կրօնքը նորադանդ :

Տէրութեան կառավարութիւնը՝ սահմանադրա-
կան միապետութիւն :

Զօրքը 59,000 , և նաւատորմիդը 100 կտոր նաւ :

54

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԱՄՍԴԵՐՏԱՄ (260,500) հողանաայի հին մայրա-
քաղաքը , Եւրոպայի ծաղկած ու հարուստ քա-
ղաքներէն մէկն է , և մեծ ու բանուկ նաւահան-
դիստ ունի : Ատենով ասոր մէջի հայու տպարանն
անուանի էր :

ՀԱՅՏԻՆ կամ ՀԱՍՆ (66,000) հիմակուան մայ-
րաքաղաքն է :

ՌՈՂԵՐՏԱՄ (104,000) Ամսդերտամէն ետքը
վաճառաշահ քաղաքն է :

ՈՒԴՐԷՆԻ (45,000) մետաքսեղէնի գործարան-
ներ ունի :

ԼԷՅՏԱ (39,000) մեծ համալսարան ունի , ուր
Պոէրհաւ անուանի բժիշկը դասատու էր :

ՄԱՍԹՐԻՔԱ (22,000) բոլոր Եւրոպայի խիստ
ամուր քաղաքներէն մէկն է :

Անուանի են նաև հարլէմ , Կրօնինկէն , Նիմէկ ,
Սարտամ , Լուքսենպուրկ :

ԵՒՐՈՊԱՅԻՆ ԴՈՒՐՍ
ՀՈԼԱՆՏԱՅԻՈՑ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Ափրիկէի մէջ՝ Սուրբ Գէորգ՝ Կուխնէային մէջ
(100,000 քն.) :

Ամերիկայի մէջ՝ Կուչանային մէկ կտորը, Սուրբ
Եւստաքէոս, և Քուրաստոյ կղզիները, որ փոքր
Անդիլէան կղզիներուն քովերն են (83,000 քն.) :

Ուկրանիայի մէջ՝ Սոււմարա կղզիին մէկ կտորը,
Պանգա ու Պիլլիգոն կղզիները՝ Սոււմարային
քովը, Ճաւա կղզիին մէկ կտորը, փոքր Մոլուքեան
կղզիները, և Ամսոյնա կղզին (16,400,000 քն.) :

ԶՈՒՅՇԵՐԻ

56

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԶՈՒՅՇԵՐԻՆ ասենով հելուեաիա կ'ըսուէր, ու համլմայեցւոյ ձեռքն էր • ետքը Գաղղիացւոյ անցաւ, անկէց ետքն ալ Գերմանիոյ հետ միացաւ • 1308ին Գերմանացւոցմէ գլուխ քաշեցին Զուիցերացիք ու զատ հասարակապետութիւն եղան : Աս հասարակապետութեան վրայ հարուէոն ալ մէկ քանի նահանգներ աւելցուց • հիմա 1815էն 'ի վեր բոլորը 22 նահանգ է՝ իրարու դաշնակից, բայց առանձին ազատ կառավարութեամբ :

57

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Զուիցերիին սահմանը հիւսիսէն Գերմանիան է, արևելքէն Աւստրիան, հարաւէն Իտալիան, արևմուտքէն Գաղղիան :

Տարածութիւնն է 11,200 քառակուսի մղոն :

Երկիրը Եւրոպայի խիստ լեռնոտ ու բարձր երկիրներէն մէկն է • մեծամեծ ժայռեր ու այրեր ունի, շատ ալ ծաղկած դաշտեր :

Օդը ընդհանրապէս ցուրտ է, բայց առողջ :

Հողը շատ բարեբեր ու աղէկ մշակած է : Շատ

հանքային ջրեր ունի . գետեր ալ կան որ աւազնին
ոսկիով խառն է :

Բերքն է կտաւ , արմտիք , մոմ , բայց ամենէն
ընտիր կով ու ոչխար :

Բնակիչը 2,392,000 , որոնց լեզուն՝ տեղ տեղ
գերմաներէն է , տեղ տեղ ալ գաղղիարէն :

Վրօնքը նորադանդ , և ուղղափառ :

Կառավարութիւնն է հասարակապետութիւն 22
նահանգի՝ որ իրարու դաշնակից են , ու զաս զատ
կառավարութիւն ունին : Քանի որ ընդհանուր
ժողով չըլլար , բոլոր հասարակապետութեան գըլ
խաւոր կառավարութիւնն երկու տարին մէյմը սս
իրեք քաղաքներէս մէկուն մէջը կ'ըլլայ , Յուրիք ,
Պէննա , Լուչեանա :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՃԻՆԵՒՐԱ (32,000) Զուլցերիին ամենէն երևելի
քաղաքն է . ձեռագործները , մանաւանդ ժամա-
ցոյցը և ուրիշ ոսկիէ և արծըթէ բանուածքները
չատ յարգի են :

ՊԱԶԻԼԵԱ կամ ՊԱԼ (28,000) Զուլցերիին ա-
մենէն վաճառաշահ քաղաքն է . կ'ըսեն թէ թուղթ
շինելու արուեստը հոս գտուած է :

ՊԵՌՆԱ (28,000) հոս ծնած է հալէր բնախօսը :

ԼՈՒՉԵՈՒՆ կամ ԼԻՒՑԻՈՒՆ (8,300) սս քաղքիս
քովերը ահագին առիւծ մը կայ լեռան մը կտորէ
փորած հին ատենէ 'ի վեր :

ՅՈՒՐԻՔ (17,000) հոս ծնած է Կեսնէր բանաս-

տեղծը . անուանի է բամբակեղէնի ու մետաքսեղէնի գործարաններուն համար :

ԼՈՁԱՆՆ (15,000) Ճինեւրայի լճին վրայ աղուոր քաղաք է :

ՇԱՖՖՈՒՋ (7,000) ասոր մօտ է հռենոսին Լոֆէն ըսուած երեւելի ջրվէժը :

ՆԷՕՇԱԴԻԼ կամ ՆԱՅԵՆՊՈՒՐԿ (6,400) Ժամացոյց շինելու գործարաններ ունի :

ԱԼԴՈՐՖ (4,000) աս քաղքէն էր Գուլիէլմոս Թէլ ըսուած կարիճը , որ իր հայրենիքը բռնաւորի մը ձեռքէ ազատեց :

ՍԻՈՆ կամ ՉԻԴԴԻՆ (2,600) լեռներու մէջ քաղաք մըն է . հոս տեսակ մը մարդիկ կան՝ որ խուլ , մունջ , անկար , ու գրեթէ անողջայ են , վզերնուն տակն ալ կախուած խոշոր խոյլ ունին :

Ուրիշ գլխաւոր քաղաքներն են Շուլց , Սանկալայ , Փրիպուրկ , Լուկանոյ , և հէրիսաւ :

Ս. Ի Ս Տ Ր Ի Ս.

59

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵՆՆ Վարդուա երբոր տիրեց աա երկրիս, իր տէրութեանը, այսինքն Գերմանիոյ և Գաղղիոյ արևելեան դին ըլլալուն համար՝ անունը Ասպրիտ կամ Էօսթերայի դրաւ, որ Արևելեան Թագաւորութիւն ըսել է: Ինչուն 1806 Աւստրիայի կայսերք բոլոր Գերմանիոյ կայսր կը սեպուէին. 1300ին առեմները իրենց տակն առին նաև Մաճառստանի ու Պոհեմիոյ Թագաւորութիւնները. 1772ին Լեհաստանին մէկ կտորն ալ՝ որ է Վալիցիան՝ իրենց բաժին ընկաւ. 1814ին իրենց եղաւ Լոմպարտիոյ և Վենետիկի տէրութիւնը, Լիւրիկէն, ու Տալմացիան. 1846ին ալ Գրաքովիոյ հասարակապետութեան երկիրը: Բայց 1859ին պատերազմաւ Լոմպարտիան անցաւ Սարտենիոյ:

ԸՆԴՏԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Աւսարիոյ սահմանը հիւսիսէն Բրուսիան ու
Լեհաստանն է, արեւելքէն Ռուսաստանն ու Մոլ-
տաւիան, հարաւէն Պոսնիան, Սերվիան, Ադրիա-
կան ծովն ու Հաովմայ աւերութիւնը • արեւմուտքէն
Սարաւենիան ու Պաւիերան :

Աւսարիոյ կայսերութիւնը տասնըհինգ կուսա-
կալութիւն կը բաժնուի՝ իրարու անհաւասար մե-
ծութեամբ • ասոնց ամենուն մեկէն գլխաւոր կը-
տորները ութն են • այսինքն Աւսարիոյ արշիդք-
սութիւն, Պոհեմիա, Մորաւիա և Սլեզիա, Վալի-
ցիա և Գրաքովիա, Մաճառստան, Լիւրիկէ, Տալ-
մացիա և Վենետիկ :

Տարածութիւնն է 200,000 քառակուսի մղոն :

Գլխաւոր գետերն ասոնք են •

Օտէր, Վիսդուլա, որ Պալցիկ ծովը կը թափին •
Դանուբ՝ Սև ծովը •

Բոյ, Աաիճէ, Պրէնդա, Պագգիլիոնէ՝ Ադրիական
ծովը :

Երկրին մեծ մասը լեռնոտ ու բարեբեր է :

Օդն ընդհանրապէս բարեխառն ու առողջ :

Բերքն է երկաթ, պղինձ, կապար, աղ • Մա-
ճառստանին մէջ ոսկիի հանք ունի, որուն նմանը
Եւրոպայի մէջ չկայ : Շատ արծաթ ու սնդիկ կ'ել-
լէ Իտրիայէն • անուանի է Գոքայի դինին, Պոհե-
միային ալ ապակին :

Բնակիչն է 37,340,000, որոնց լեզուն տեղ տեղ

գերմաներէն , իտալերէն , սլաւերէն ու մաճառե-
րէն է :

Քաղաքականութիւնը , ճարտարութիւնը և վա-
ճառականութիւնը աս վերջի տարիներուս մէջ շատ
առաջ գնացած են , ինչպէս նաև երկաթուղիները :

Կրօնքն է ուղղափառ , նորաղանդ , և յունադա-
ւան :

Տէրութեան կառավարութիւնն է միապետա-
կան կայսերութիւն :

Զօրքը 400,000 իսաղաղութեան ժամանակ , և
800,000 սպաներազմի ատեն , որ ինչուան մէկ մի-
լիոն կրնայ հասնիլ . նաևատորժիղը 140 կաոր նաւ :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

61

ԱՐՇԻԴՔՍՈՒԹԻՒՆ ԱՒՍՏՐԻՈՅ

ՎԵՆԵԱ (476,000) տէրութեան մայրաքաղաքը ,
թէ արուեստի և թէ գիտութեան ու ամէն տեսակ
քաղաքականութեան կողմանէ Եւրոպային առա-
ջին կարգի քաղաքներէն մէկը կը սեպուի . անուանի
է կայսերական գրատունը , զինարանները , թան-
գարանը , համալսարանը և ուրիշ ուսումնական
տեղուանքը . շէնքերուն մէջ ալ կայսերական սպա-
լանն ու սրբոյն Ստեփանոսի եկեղեցին : Հոս է
Միսիթարեանց հայոց վանքը , որ թրեստէն փո-
խադրուեցան 1811ին :

ԼԻՆՅ (26,000) ամուր ու վաճառաշահ քաղաք
է , կաշիի վաճառականութիւն ունի :

ՍԱՆՏՊՈՒՐԿ (14,000) մեծ օղի հանք ունի :

ՏՐԻԵՆՏՈՆ կամ ԳՐԵՆԴ (15,000) հոս եղան
1545ին վերջի ընդհանուր սուրբ ժողովը :

ԿՐԱՑ (46,000) Սգիրիա կամ Շգայերմարդ
գաւառին գլխաւոր քաղաքն է, և օրէ օր ծաղկելու
վրայ է :

Անուանի են նաև Իննսպրուք, Շգայեր, Մար-
պուրի • Մարիաձէլլ ալ երևելի ուխտատեղի է :

62

Պ Ո Տ Ե Մ Ի Ա

ԲՐԱԿԱ (143,000) անուանի է համալսարանը,
չառ ալ երևելի գործարաններ ունի :

ՌԱՅԻՆԵՆՊԵՐԿ (12,800) բոլոր Եւրոպայի խիստ
ճարտար քաղաքներէն մէկն է :

ՔՈՒԴԴԵՆՊԵՐԿ (10,000) արծրթի, սղնձի և
կապարի հանք ունի :

ԳԱՌԼՍՊԱՏ, ՄԱՐԻԵՆՊԱՏ, ԹԵՓԼԻՑ ասք ջրե-
րուն համար երևելի են :

Անուանի են նաև Պուտլէյս, Կկեր :

63

ՄՈՐԱՒԻԱ ԵՒ ՍԼԵՉԻԱ

ՊՐԻՒՆ (40,000) բրդեղէնի և ընդհանրապէս վա-
ճառահանութեան և արուեստից կողմանէ երևելի
քաղաք է :

ՕԼՄԻՒՑ (15,000) ամուր ու ծաղկած քաղաք է :

Անուանի են նաև Իկլաւ, Ղրոբբաւ, Բրոզնից :

Լ Ի Ի Բ Ի Կ Է

ԼՈՒՊՐԱՆՍ կամ ԼՆՅՊԱԽ (16,000) գեղեցիկ ու վաճառահաս քաղաք է :

ԳՐԻԵՍ (83,000) Ադրիական ծոցին վրայ աէրութեան գլխաւոր նաւահանգիստն է , վաճառահանութիւնը խիստ բանուկ :

Երևելի են նաև Գաբօախադրիա , Կորիցիա , Ագուիլէա՝ որ խիստ հին քաղաք է , Իարիա՝ որ անդիկի հանք ունի , Քլակէնֆուրդ , Բոլա և Ռովինեոյ :

ԿԱԼԻՅՈՒՆ ԵՒ ԳՐԱՔՈՎԻԱ

ԻԼՎՈՎ կամ ԼԷՄՊԵՐՎ (70,000) մեծ ու գեղեցիկ քաղաք է : Անուանի է հոս աեղի հայոց արքեպիսկոպոսարանը :

ԳՐԱՔՈՎԻԱ (38,000) որ աանն մը հասարակապեաութիւն էր • 1846ին Աւստրիացիք գրաւեցին :

ՊՐՈՏՏ (22,000) վաճառահանութիւնը խիստ բանուկ է :

ՎԻԼԻՉԻԱ (6,500) անուանի է ասոր քովի աղահանքը :

ՍԱՄՊՈՐ (10,300) վաճառահանութիւնն ու արուեստները ծաղկած քաղաք :

Ուրիշ երևելի քաղաքներն են Մեադին , Չեռնովց , Եարոսլաւ , Տրուսովիժ , Դաւնոբոլ , Սաւ-

չովա, Սղանիալաւ, Քուզի: Եւ սա ամէն քաղաք
ներսն մէջ շատ հայեր ալ կան:

Մ Ա Ճ Ա Ռ Ս Տ Ա Ն

ԲԷՇԹ (132,000) հիմա Մաճառաստանին ամենէն
մեծ ու գեղեցիկ քաղաքն սա է:

ՊՈՒՏԻՆ կամ ՊՈՒՏԱ կամ ՕՖԷՆ (53,000) Մա-
ճառաստանի հին մայրաքաղաքն է, որ երկար ատեն
Օսմանցւոց ձեռքն ալ մնաց:

Բէշթ ու Պուտա գիմացէ գիմաց են Դանուբի
երկու կողմը, և գեղեցիկ կամրջով մը իրարու հետ
կապուած են:

ԲՐԵՍՊՈՒՐԿ (42,000) Պուտինէն առաջ Մա-
ճառաստանին մայրաքաղաքն սա էր: Աւարիոց
կայսրը հոս Մաճառներուն թաղաւոր կը պա-
հուէր և աղգային ժողովը հոս կ'ըլլար:

ԲԵՐՈՎԱՐԱՏԻՆ (6,500) ամուր ու անուանի
բերդ ունի:

ՉԵՄԼԻՆ (10,400) վաճառաշահ քաղաք:

ՇԷՄՆԻՑ (8,400) յոսկիի, արծաթի ու կասկա-

ՔՐԷՄՆԻՑ (4,800) ըի հանքեր ունին, որ Եւրո-
պայի մէջ ամենէն մեծերն են:

ՔԼԱԻԶԷՆՊՈՒՐԿ կամ ՔՈԼՈՇՎԱՐ կամ ՔԼՈՒԹ
(25,000) Իրանսիլվանիոց գլխաւոր քաղաքն է:

ՍԻՊՈՆ կամ ՀԷՐՄԱՆՇԴԱՏ (18,000) վաճառա-
շահ քաղաք:

ՔՐՈՆՇԴԱՏ կամ ՊՐԱՇՈՎ (30,000) Իրանսիլ-
վանիոց ամենէն ծաղկած ու բազմամարդ քաղաքն է:

ԿՆՐԼԱ, ՃՈՒՐՃՈՎ, ու ԵՂԻՍԱԲԵԹՈՒՊՈԼԻՍ կամ

ՊԱՇԱՎԱՆՈՎ, աս իրեքը Հայոց քաղաքներ են Գրան-
սիլվանիոյ մէջ ու աղատ կառավարութիւն ունին :

ԳԵՄԸՇԱՅԻ (17,000) խիստ ամուր ու անուա-
նի քաղաք :

ԱԿՐԱՄ կամ ԶԱԿՐԱՊ (15,400) խրուադից եր-
կրին գլխաւոր քաղաքն է :

Անուանի են նաև Պելկրատ, Տեպրեցին, Սեկե-
տին, Մորոշ-Վաշարհէյ, Նայսոց, Էդուրվայսէն,
պուրկ կամ Պելկիրատ, Ֆիուսէ :

Տ Ա Լ Մ Ա Ց Ի Ա

ՃԱՐԱ կամ ԶԱՏՐԻԱ (6,400) չափաւորապէս
վաճառաշահ :

ՍԲՆԱԳՐՈՅ (8,000) ասոր մօտ է հին Սալոնա
քաղաքին աւերակը :

ԻՆՎՈՒԶԱ (12,000) ատենով մեծ հասարակա-
պետութիւն էր • Գաղարրոյ և Սեպենիոյ :

Վ Ե Ն Ե Տ Ի Կ

ՎԵՆԵՏԻԿ (120,000) Ադրիական ծոցին ծայրը
72 կղզիներու վրայ շինուած մեծադործ քաղաք
է, որուն շատ փողոցներուն մէջ նաւակներով կը
պարտին : Փառաւոր է սուրբ Մարկոսի եկեղեցին,
հրասպարակն ու դրատունը : Հոս բացուեցաւ
1836ին Ռաֆայէլեան վարժարանն Հայոց : — Վ. Է.

Նեակոյ քով եղած մանր կղզիներէն մէկն է Սուրբ
Ղազար Հայոց Մխիթարեանց մայրավանքը, որ
հիմնեց Մխիթար արքահայրը 1717ին: — Ահնեա-
կոյ մօտերն անուանի են Գիօճճիա, Գրէվիզ, և
Պասան:

ՎԵՐՈՆԱ (80,000) հին ու գեղեցիկ բերդաքա-
ղաք. հոս ծնած են Պլինիոս երէց բնախօսը, և
Վիտրովիոս ճարտարապետը:

ՄԱՆԴՈՒՆ (28,000) ամուր բերդ ունի. Վիր-
գիլիոս աս քաղքին քովերը ծնած է:

ԲԱՏՈՒՆ կամ ՊԱՏԱՒՈՆ (51,000) խիստ հին
քաղաք է. անուանի է համալսարանը. Տիտոս Լի-
ւիոս լատին սլաոմիչը հոս ծնած է:

ՎԻՉԵՆՑԱ (32,000) հոս ծնած է Պալլադիոս Ե-
րևելի ճարտարապետը:

ՈՒՏՈՆԷ (23,000) կառւի ու մեծաքսի ձեռա-
դործներ ունի:

ՊԵԼԼՈՒՆ (11,000) մեծ սղնձի հանք ունի:

ԲՐՈՒՄԻՍ,

69

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԹԵՒՏՈՆԵԱՆ ասպետները ժ.Գ. դարուն սկիզբները տիրեցին աս երկրիս արևելեան կողմին՝ բայց Բրուսիոյ մեծնալը 1700ին եղաւ, երբոր Երենց Փրեդերիկոս Թաղաւորը Ղեհաստանի մէկ կատրին ալ տիրեց :

70

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Բրուսիոյ սահմանը հիւսիսէն Պալդիկ ծովն է, արևելքէն Ղեհաստան, հարաւէն Աւստրիա, արևմուտքէն Գերմանիա :

Տարածութիւնն է 40,000 քառակուսի մղոն :

Երկիրն ընդհանրապէս դաշտային ու ջրոտ է, և հիւսիսային կողմը շատ լճեր կան :

Օդը խիստ ցուրտ է, անոր համար շատ պտուղ չկրնար հասցընել :

Բերքն է ամէն տեսակ հանք, կտաւ, աղէկ ձեռագործներ, յախճատակ, աղնիւ բուրդ, չուխայ, և ոչխար :

Բնակիչը 17,200,000 , որոնց լեզուն մաքուր գերմաներէն է :

Քաղաքականութիւնն ու արուեստները խիստ ծաղկած են , վաճառականութիւնն ալ աղէկ կը բանի , և երկաթուղիներն ալ շատ առաջ գնացեր են :

Կրօնքը նորադանդ , և ուղղափառ :

Կառավարութիւնը սահմանադրական միասլետութիւն :

Զօրքը 200,000 . նաւատորմիդը 36 կտոր նաւ :

71

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՊԵՌԼԻՆ (464,000) մայրաքաղաքը , Եւրոպայի աղուոր քաղաքներէն մէկն է . անուանի են համալսարանը , դիտարանը , թանգարանը . երկաթէ ու յախճապակէ բանուածքը խիստ աղնիւ :

ՊՐԵՍԼԱՒ (230,000) թէ արուեստի և թէ վաճառականութեան կողմանէ շատ ծաղկած քաղաք է :

ԳՈՒՈՆԻՍ (114,000) շատ հին քաղաք է , ու մեծ առուտուր ունի :

ՔԷՕՆԻԿՍՊԷՐԿ (80,000) Պալդիկ ծովուն վրայ հին ու փառաւոր քաղաք է :

ՏԱՆՑԻԿ կամ ՏԱՆՍԻ (61,000) տէրութեան խիստ ամուր քաղաքն է , վաճառաշահ . գլխաւոր վաճառքն է օղի :

ՄԱԿՏԻՊՈՒՐԿ (59,000) հոս ծնած է Ոթոն Կուէրրիք , որ շնչելոյց մեքենան հնարեց :

ԷՍ-ԼԱ-ՇԱԲԷԼ կամ ԱՔՈՒԻՍԿՐԱՆԱ (56,000) մեծն Կարոլոս և իր յաջորդները երկար ատեն հոս նստան . շատ հանքային ջրեր ունի :

ՍԴԵԴԴԻՆ (53,000) վաճառականութիւնը խիստ
ծաղկած է :

ԲՈԶԵՆ կամ ԲՈԶՆՅՆ (41,000) հին ատենը Ղե-
հաստանի մայրաքաղաքն էր, հիմա ալ ամբու-
թեանը համար անուանի է :

ԲՈՑՏԱՄ (33,000) երկրորդ քաղաք թաղաու-
րանիստ :

ԷԼՊԵՐՖԷԼՏ (40,000) Գերմանիոյ ճարտար,
վաճառաշահ ու ճոխ քաղաքներէն մէկն է :

ՊԱՌՄԷՆ (45,000) առ անուամբ կը կոչուին
հինգ աւաններ իրարու մօտ, շատ ծաղկած՝ բամ-
պակի, կերպասուց, կտաւուց, մետաքսեղինաց,
և ժապաւինաց գործարաններով :

ՀԱԼԼԷ (31,000) երևելի համալսարան, ուսում-
նական տեղուանք և աղահանք ունի :

ԾՈՒՆԲՅՈՌԴ (30,000) Օտէր գետին վրայ՝ ա-
մուր ու վաճառաշահ քաղաք :

ՍԴՐԱԼՍՈՐՆՏ (16,500) բանուկ նաւահանդիստ
ունի Պալդիկ ծովուն վրայ :

ԴՈՒԷՐ կամ ՏՐԵԻԻՐԻ (16,000) Գերմանիոյ
ամենէն հին քաղաքն է :

ԳՈՊԼԵՆՑ (16,000) ամուր քաղաք է :

ԹՈՐՆ (14,000) հոս ծնած է Կոստանիկոս առ-
տեղաբաշխը :

Անուանի են նաև Միւնսդէր, Դիլսիդ, Մէմել,
Կրոկաւ, Սոլինկէն, Քուսդրին, Լուցէն, Էրֆուրդ,
Տիւսէլտորֆ, Մարիէնպուրկ, Ռոզպախ :

Պրուշի ձեռքն է Բուկէն կղզին Պալդիկ ծովուն
մէջ (2,200 բն.) :

Գ Ե Ր Մ Ա Ն Ա Կ Ա Ն

Դ Ա Շ Ն Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

72

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ո Ց մէջ ատենով զանազան բարբա-
րոս ազգեր տիրած էին, ինչուան որ իններորդ
դարուն մեծն Կարողոս նուաճեց անոնք, և իր յա-
ջորդները Գերմանիոյ կայսր ըսուեցան. 1806ին
պէտք եղաւ որ Փրանչիսկոս Ա կայսրը հրաժարի
Գերմանիոյ կայսր ըսուելէն. 1814ին Ալեքնայի
ժողովին մէջ Եւրոպայի գլխաւոր թագաւորներն
որոշեցին, որ Գերմանիան քառասունի չափ տե-
րութիւններ բաժնուի՝ իրարու դաշնակից, և բո-
լորը մէկէն ըսուի Գերմանիան դաշնակցութիւն : Աս
դաշնակցութեան գլուխն է Աւստրիոյ կայսրը, ան-
կէց ետքը Պրուշի թագաւորը. ասոնցմէ ետև դաշ-
նակցութեան գլխաւոր տերութիւններն աս չորսն
են՝ որ թագաւորութիւն կ'ըսուին. Պաւլերա,
Սաքսոնիա, Աննովեր ու Վիւրդէմպերկ :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Գերմանական դաշնակցութեան սահմանը հիւսիսէն Պալդիկ ծովն ու Տանիմարդան է, արևելքէն Բրուսիա ու Վէհաստան, հարաւէն Աւստրիա ու Զուիցերի, արևմուտքէն Գաղղիա ու Հոլանտա:

Տարածութիւնն է 180,000 քառակուսի մղոն:

Հարաւային կողմի երկիրը լեռնոտ ու անտառներով լեցուն են, իսկ հիւսիսային կողմը դաշտային ու ջրոտ:

Բերքն է ամէն տեսակ մետաղ ու հանք, մանաւանդ արծաթ ու կապար, որ Սաքսոնիայէն կ'ելլին: Բոյսերուն մէջ անուանի են ցորենը, պտուղները, ծխախոտը, կանեփը և դեանախինձորը, կենդանիներուն մէջ ալ ձին:

Ճարտարութիւններն ու գիտութիւնները շատ առաջ դնացած են, և երկաթուղիներն ալ ամէն կողմն սարածուած:

Բնակիչը 44,000,000, որոնց լեզուն գերմաներէն է:

Հոս կը գնենք նախ բոլոր Գերմանական դաշնակցութեան տէրութիւնները, իրենց բնակիչներուն թիւը, և ամէն մէկուն գլխաւոր քաղաքը:

| ՏԷՐՈՒԹԻՒՆ | ԲՆԱԿԻԶ | ՄԱՅՐԱՅԱՂԱՔ |
|----------------------------------|------------|-----------------------|
| Աւտորիա . Գերմանա- կան դաւառք | 13,582,000 | Վեննա |
| Բրուսիա . Գերմանա- կան դաւառք | 13,143,000 | Պերլին |
| Պաւիերա | 4,542,000 | Մոնագոյ |
| Սաքսոնիա | 2,039,000 | Տրէզտա |
| Հանովր | 1,820,000 | Հանովր |
| Վիւրդէմպերկ | 1,753,000 | Շդուդկարդ |
| Պատէն | 1,557,000 | Գարլարուհէ |
| Հէս-Կայսրընտիր | 753,000 | Գասէլ |
| Հէս-Տարմշդատ | 854,000 | Տարմշդատ |
| Հոլշդայն և Լաւէն- պուրկ | 573,000 | Քիլ և Լաւէն- պուրկ |
| Լուքսեմպուրկ և Լիւք- պուրկ | 403,000 | Լուքսեմպուրկ |
| Սաքս-Վայմար | 264,000 | Վայմար |
| Սաքս-Ալդենպուրկ | 133,000 | Ալդենպուրկ |
| Սաքս-Մայնինկէն | 166,000 | Մայնինկէն |
| Սաքս-Գոպուրկ-Կոթա | 131,000 | Գոպուրկ |
| Մէքլէմպուրկ-Շվերին | 541,000 | Շվերին |
| Մէքլէմպուրկ-Սդրեւից | 100,000 | Սդրեւից |
| Պրունզուիք | 271,000 | Պրունզուիք |
| Կասաւ | 431,000 | Վիզպատէն |
| Անհալդ-Տէսաւ | 115,000 | Տէսաւ |
| Անհալդ-Պէռնպուրկ | 55,000 | Պէռնպուրկ |
| Շուարցպուրկ-Սոնտեր- հաւզէն | 61,000 | Սոնտերհաւզէն |
| Շուարցպուրկ-Ռուտտլ- շդատ | 69,000 | Ռուտտլշդատ |
| Հոլշդայն-Օլտենպուրկ | 265,000 | Օլտենպուրկ |
| Լիխտէնշդայն | 7,000 | Լիխտէնշդայն |

| ՏԵՐՈՒԹԻՒՆ | ԲՆԱԿԻՉ | ՄԱՅՐԱՔԱՂԱՅ |
|------------------|---------|------------|
| Վալաէք | 58,000 | Գորպախ |
| Ռայս-Կրայց | 35,000 | Կրայց |
| Ռայս-Շլայց | 80,000 | Շլայց |
| Լիբբէ-Տեղմուլտ | 103,000 | Տեղմուլտ |
| Լիբբէ-Շաւեմպուրկ | 30,000 | Պուքէպուրկ |
| Հէս-Հոմպուրկ | 23,000 | Հոմպուրկ |
| Ֆռանքֆոռդ | 75,000 | |
| Լիւպէք | 54,000 | |
| Պրեմա | 89,000 | |
| Համպուրկ | 220,000 | |

ԳԵՐՄԱՆԻՈՅ

ԳԼԽՍԻՈՐ ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԱՒԻԵՐԱ

Պաւլիերայի թագաւորութիւնը հաստատուեցաւ 1806ին • կառավարութիւնը սահմանադրական միապետութիւն է • թագաւորը և բնակիչներուն մեծ մասը ուղղափառ • զօրքը 200,000 :

Մ ՈՆԱԳՈՅ կամ ՄԻՒՆԻԲ (137,000) Գերմանիոյ աղուոր ու ծաղկած քաղաքներէն մէկն է • մեծաշէն է թագաւորական սլաւար, համալսարանն ալ անուանի :

ՆՈՒՐԷՄԳԵՐԿ (60,000) հոս շատ ծաղկած էն ձեռագործները, որով մեծ առուտուր կ'ըլլայ • ծոցի ժամացոյցը հոս դառւած է :

ԱԻԿՍՊՈՒՐԿ կամ ԱԻԿՈՒՍԴԱ (44,000) հաստ

րակայ ժողովարանը խիստ մեծաշէն է . անուանի է աս քաղաքիս լրագիրը :

ՌԱԳԻՍՊՈՆԱ կամ ՌԵԿԵՆՍՊՈՒՐԿ (28,000) անուանով Գերմանիոյ կայսրընախնէրը հոս ժողով կ'ընէին : հոս ծնած է Գէրլէր աստեղաբաշխը : Ասոր մօտ է Վալհալլա անուանովնոր շինուած հրաշակաւոր թանգարանը :

ՎԻՐՅՊՈՒՐԿ (36,000) անուանի է համալսարանն ու բերդը :

Անուանի են նաև Սբիր , Պամպերկ , Լանտաւ , Բասաւ , Պայրայթ , Անսպախ , Աշաֆէնպուրկ :

73

Ս Ա Ք Ս Ո Ն Ի Ա

Սաքսոնիոյ թագաւորութիւնը 1806ին հաստատուեցաւ . թագաւորն ուղղափառ է , բայց բնակիչներուն շատը նորադանդ . զօրքը 30,000 :

ՏՐԵԶՏԱ (118,000) էլպա գեախն վրայ , Գերմանիոյ գեղեցիկ ու ճարտար քաղաքներէն մէկն է . երևելի է գեախն վրայի կամուրջը , և մայր եկեղեցին , ուսման կողմանէ ալ Գերմանիոյ Աթէնքն ըսուած է :

ԼԻԲՍԻՍ կամ **ԼԱՅՔՏԻԿ** (74,000) անուանի է ասոր համալսարանը , և մեծ տօնավաճառը , և գրքեառուտուրը : Լայպնից փիլիսոփան ալ հոս ծնած է :

ՇԷՄՆԻՑ (41,000) աս քաղաքս ձեռագործներու կողմանէ խիստ ծաղկած է :

ՖՐԱՅՊԷՐԿ (13,000) անուանի են ասոր արծըթի հանքը , և արծըթէ բանուածները :

ՊԱՒՏԷՆ (12,000) քաղաք վաճառաշահ , ունի չուխայի , բամբակի և կտաւի գործարաններ :

Հ Ա Ն Ո Վ Ր

Հանուրի թագաւորութիւնը 1814ին հաստատուեցաւ, և բնակիչներուն շատը նորադանդ են. զօրքը 27,000 :

ՀԱՆՈՎՐ կամ ԱՆՆՈՎԷՐ (53,000) արքայանիստ քաղաք, հոս ծնած է Հերշէլ աստեղագիտը :

ԿՈՒԴԻՆՎԱ (14,000) անուանի համալսարան ունի :

Վ.ԼԱԻՇԹԱԼ (9,000) արծըթի ու կապարի հանք ունի :

Երևելի են նաև Օղնապրիւք, Հիլտէշայմ, Վիւնեպուրկ, Էմսէն :

Վ Ի Ի Ր Դ Է Մ Պ Է Ր Կ

Վիւրդէմպերկի թագաւորութիւնը հաստատուեցաւ 1806ին. բնակիչներուն շատը նորադանդ են. զօրքը 25,000 :

ՇՐՈՒԴՎԱՐՏ (52,000) աս է առաջին թագաւորանիստ քաղաքը. ուսմունքն ու արուեստները շատ ծաղկած :

ՈՒԼՄ (22,000) Գանուք դեաին վրայ Գերմանիոյ ամուր ու անուանի բերդաքաղաքներէն մէկն է :

ԼՈՒՏՎԻՎՍՊՈՒՐԿ (12,000) երկրորդ թագաւորանիստ քաղաքն աս է :

Երևելի են նաև Էպլինկէն, Հայլպրոն, Ռայդլինկէն :

ԳԵՐՄԱՆՈՅ ՈՒՐԻՇ ԳԼԽԱՒՈՐ
ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՀԱՄԳՈՒՐԿ (172,000) ազատ քաղաք, Գերմանիոյ առաջին վաճառաշահ քաղաքն է. անուանի են շաքարի գործարանները. 1842ին մէկ մեծ մասը այրեցաւ, բայց նորէն շինուեցաւ :

ՖՈՒՆԲՅՈՐԻ Մայն գետին վրայ (68,000) ազատ քաղաք, Գերմանական դաշնակցութեան ժողովե տեղն է. մեծագործ է հասարակաց ժողովարանը, ուր առենով Գերմանիոյ կայսերաց ընտրութիւնը կ'ըլլար, և սուրբ Բարթոլոմէոսի եկեղեցւոյն մէջ կայսր կ'օծուէին :

ՊՐԷՄԱ (60,000) ազատ քաղաք, Վէզեր գետին վրայ, վաճառականութիւնը խիստ բանուկ :

ՄԱԳՈՆՑԱ կամ ՄԱՅՆՅ և կամ ՄՈԳՈՒՆՏՒԱ (35,000) Գերմանիոյ խիստ ամուր քաղաքն է. հոս ծնած է Յովհաննէս Կուղղէնայերկ տպագրութեան գանողը :

ՊՐՈՒՆՍՎԻԲ կամ ՊՐԱՆԵՇՎԱՅԿ (37,000) մեծ ու փառաւոր քաղաք է :

ԼԻՒՊԷԲ (32,000) ազատ ու վաճառաշահ քաղաք, շաքարի գործարաններ ունի :

ԷԷՆԱ (6,000) համալսարանն անուանի է :

ՌՈՍԿՈԲ (20,000) բանուկ նաւահանգիստ ունի :

ԿՈՍՏԱՆԴԻԱ կամ ԳՈՍԴԱՆՑԱ (7,000) հոս եղաւ Կոստանդեան ժողովը 1414ին :

ԲՈՐԴՈՒԳՍԱԼ

79

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲՈՐԴՈՒԳՍԱԼԻ ԵՐԿԻՐՆԻ ՀՏԻՆ ԿԱՆԵՆՐ ԼՈՒՍԻՄԱՆ
 ՆԻՊԱ Կ'ՐԱՍՈՒՆԵՐ • ՈՒԹԵՐՈՐԳ ԳԱՐՈՒՆԻ ՄԵՂ ԱՐԱՔԱՆ
 ԳԼԻՔ ՎԻՐԵԿՆԻ ՀՈՆԻ , ԲԱՅԵ ԶՈՒՍՈՎ ՔՂՈՒԵԿԱՆ • ՀԱՐ
 ՐԽԵՐ ԿԱՐԻՒ ԶԱՒԻ ՎԼ ՍՈՒՆԻՊԱՆԵՐ ՎԻՐԵԿՆԻ , ԸՆԿ
 ԶՈՒՆԻ ՈՐ 1640ԻՆ ԲՈՐԳՈՒԳՆԵՐԸ ԳՂՈՒՍ ՔԱՂԵԿՆԻ
 ՎՆՈՆԵԿՄԵ , Ե ԻՐԵՆԵԿ ԹԱԳԱԼՈՐ ԳՐԻՆ ՅՈՎՀԱՆՆԻՔՈՒՆ :

80

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԲՈՐԳՈՒԳՎԱԼԻ ՍԱՀՄԱՆՐ ՀԻՄՆԱԿՆԻ ՈՒ ԱՐԵՆԵՂՔԻՆ
 ՍՈՒՆԻՊԱՆԻ Է , ՀԱՐԱՒԵՆ ՈՒ ԱՐԵՎՈՒԼՈՒՔԻՆ ԱՎՈՒՆ
 ՎՆԻՊԱՆ ՈՎԿԻՊԱՆՈՒՐ :

ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆԻ Է 30,000 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄՂՈՆ :

ԵՐԿԻՐԸ ԸՆՆՈՒՍ , ԶՐՈՍ , ԲԱՐԵՔԵՐ , ԲԱՅԵ ՔԻՃ
 ՔԱՆԵԿՈՒԵԿԱԾ Է :

ՕՂՐ ԲԱՐԵՍԻՍԱՆ ՈՒ ԱՌՈՂ :

ԲԵՐՔԻՆ Է ԱՄԿԻ ՎՆԵՍԱԿ ՀԱՆՐ ՈՒ ՄԵՍՈՒՂ , ՄԻՆՈՒՍ
 ԼԱՆԳ ՈՍԿԻ , ԱՐԾԱԹ , ԵՐԿԱԹ , ԱԳԼԻՆՃ , ԿԱՍՊԱՐ :

աղ, մարմարիոն, ստուղներէն՝ լեմոն, նարինջ,
խաղող • մետաքսն ալ ազնիւ է :

Բնակիչը 4,000,000, որոնց լեզուն Սպանիա-
յւոց լեզուին մէկ տեսակն է :

Կրօնքը ուղղափառ :

Կառավարութիւնը սահմանադրական միապե-
տութիւն է, և ժառանգութիւնը թէ՛ արական և
թէ՛ իգական գծով կը յառաջանայ :

Զօրքը 30,000, և նաւատորմիցը 52 կտոր նաւ :

81

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԼԻՍԳՈՆԱ (260,000) մայրաքաղաքը, Եւրոպայի
մեծ ու աղուոր նաւահանգիստներէն մէկն է • շէն-
քերուն մէջ երևելի է Սլգանդարայի ջրանցքը, որ
35 կամարի վրայ շինած է ճերմակ մարմարիոնէ,
1755ին երկրաշարժէ մը գրեթէ բոլորովին կոր-
ծանեցաւ :

ՕՐՈՐԴՈՅ (80,000) Լիսպոնայէն ետքը ամենէն
հարուստ ու վաճառաշահ քաղաքն է, ու գինին
խիստ անուանի : Երկրին անունն աս քաղաքիս ա-
նունովը Բորդուգալ ըսուեր է :

ԷԼՎԱՍ (18,000) Բորդուգալի ամենէն ամուր
քաղաքը • ունի զինուոց գործարաններ :

ԳՈՅԻՄԴՐԱ (16,000) տէրութեան մէջ միայն
աս քաղաքս համալսարան ունի :

ՊՐԱԿԱ (16,000) ամուր քաղաք է, ու զէնքի
գործարաններ ունի :

ՍԷՐՈՒՊԱԼ (15,000) աղի մեծ առուատուր ունի :

ԵՎՈՐԱ (12,000) ասոր մայր եկեղեցին խիստ
աղուոր է :

ՊՐԱԿԱՆՑԱ (4,000) մետաքսեղէնն անուանի է :
Աս քաղաքիս դքսերէն կ'իջնէ թագաւորին ընտա-
նիքը :

ԵՒՐՈՊԱՅԷՆ ԴՈՒՐՍ
ԲՈՐԴՈՒԳԱԼԻ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Ասիոյ մէջ Հնդկաստանի Տիու և Կոս քաղաք-
ները , Չինու մէջ Մաքաոյ կղզին (400,000 բն.) :

Ափրիկէի մէջ Ասորեան կղզիները , Մատերա
և Սուրբ Թովմաս կղզիները , Դալարի գլխոյ կղզի-
ները , Սենեկամպիային արևմտեան կողմը՝ Կէպա
քաղաքը , Քոնկոյի մէջ Անկոլա ու Պէնկալա ,
Մոզամպիք , և Մոնտնոդաբային մէջ Չանկէպա-
րին ծովեզերքը այլևայլ տեղուանք (1,058,000 բն.) :

Ովկիանիայի մէջ Դիմորի մէկ կտորը (918,000
բնակիչ) :

Ս Պ Ա Ն Ի Ա.

83

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՒՆ

Ս Պ Ա Ն Ի Ա Ն հին ատենը հռովմայեցւոյ ձեռքն էր . ութերորդ դարուն մէջ Արաբացիք արեցին , ինչուան որ 1492ին Ֆերդինանտոս թագաւորը հալածեց զանոնք : Քիչ ատենէն ետքը Ամերիկան ալ գտնուելով , Սպանիացիք խիստ մեծցան ու հարուստ թագաւորութիւն մը եղան :

84

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Սպանիոյ սահմանը հիւսիսէն Գաղղիան է , արեւելքէն ու հարաւէն Միջերկրական ծովը , արեւմուտքէն Բորդուգալը :

Տարածութիւնն է 130,000 քառակուսի մղան :

Նրկիրը լեռնոտ , ջրոտ ու բարեբեր :

Գլխաւոր գետերն ատնք են .

Մինչոյ , Տուէրոյ , Կուաաիանա . Կուաաալքիվիլի ,

որ կը թափին Ատլանտեան ովկիանոսը .

Էպրոյ , որ կը վազէ Միջերկրական ծովը :

Ծովեղերքին օդը տաք է, մէջտեղուանքը բարեխառն :

Հողը քիչ մշակած է :

Բերքերուն գլխաւորներն ասոնք են . երկաթ, անդիկ, կապար, պղինձ . ոսկեհանքը ատենով առատ էր, բայց հիմա երեսէ ձգուած է . արծաթի հանք ալ քիչ ունի : Գինին խիստ ազնիւ է . ունի նաև լեմոն, նարինջ, ձէթ, շաքար, բամբակ, մեղր, մետաքս : Աենդանիներուն մէջ անուանի է Անտաղուսիա դաւառին ձին, և Մերիսոս ըսուած ոչխարը որ խիստ բարակ բուրդ ունի :

Բնակիչն է 16,000,000 . լեզունին սպանեօլերէն, որ լատին լեզուին մէկ ճիւղը կը սեպուի :

Արուեստներն ու գիտութիւնները քիչ առաջ գնացած են :

Արօնքը ուղղափառ :

Կառավարութիւնը միապետութիւն սահմանադրական է, թէ՛ արական և թէ՛ իգական դժով :

Զօրքը 200,000, նաւատորմիդը 100 կառը նաւ :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՄԱՏՐԻՏ (476,000) մայրաքաղաքը, Եւրոպայի գեղեցիկ քաղաքներէն մէկն է . փառաւոր է թագաւորական նոր պալատը, անուանի է նաև համալսարանը :

ՊԱՐՉԷՆՆԱ (252,000) Սպանիոյ ամենէն ամուր քաղաքն է . նաւահանգիստը խիստ աղուոր :

ՄԵԻԼԻԱ (152,000) Մատրիսակն ետքը տէրութեան արուոր քաղաքն է :

ՎԱԼԵՆՑԻԱ (145,000) տէրութեան մեծ արքեպիսկոպոսարանը հոս է :

ՄՈՒՐՍԶԵԱ (109,000) անուանի է մետաքսի գործարանացն համար :

ԿՐԵՆՍՏԱ (101,000) Մաւրիտանացւոց ետքի մայրաքաղաքն էր . հաջակաւոր է Ալեքսանդրա քաղաքը որ անոնցմէ մնացած հոյակապ շէնք է :

ԳԱՏԻՉԷ (72,000) ամուր բերդաքաղաք է . նաւահանգիստը խիստ բանուէ :

ԳՈՐՏՈՎԱ կամ ԿՈՐԴՈՒԲԱ (57,000) Մաւրիտանացւոց առջի մայրաքաղաքն էր . հիմա ընկած է . մայր եկեղեցին շատ ընդարձակ ու մեծագործ է :

ՄԱԼԱԿԱ (113,000) վաճառաշահ քաղաք է . գինին խիստ անուանի :

ՍԱՐԱԿՈՍԶԱ (82,000) ատենով Արագոնայի թագաւորութեան մայրաքաղաքն էր . 1809ին Գաղղիացւոց պաշարմանը դէմ աղէկ դիմացաւ :

ԽՍԷՐԷՍ (34,000) լաւ գինի ունի :

ԳԱՐԴԱԳԻՆԷ կամ ԳԱՐԴԱԽԷՆԱ (38,000) հին Կարբեդոնացւոց շինած քաղաքն է . բանուէ նաւահանգիստ ունի Միջերկրական ծովուն վրայ :

ՍԱՆԻԲԱԿՈՅ ԿՈՄՊՈՍԵԷԼԵԱ (30,000) հաջակաւոր ուխտատեղի է . վասն զի հոս է սուրբ Յակոբոս առաքելոյն մարմինը , որ բոլոր տէրութեան պաշտպանն է :

ՍԼԻԳԱՆԴԷ (26,000) Միջերկրականին մօտ . համբաւաւոր է գինին :

ԳՈՐՈՒՆԵԱ (24,000) ամուր ու վաճառաշահ քաղաք է ովկիանոսի վրայ :

ՎԱԼԵՍՏՈՒՄՍ (25,000) հոս մեռալ Գոլումպոս
1506ին :

ԲՈՐԴ—ՄԱՀՈՆ (20,000) Կարքեդոնացւոցմէ
շինուած կը կարծուի :

ԳՈՒԷՏՈՅ (15,000) Մատրիտէն առաջ առ էր
Սպանիային մայրաքաղաքը :

ՍԱԼԱՄԱԿԱ (15,000) ասոր համալսարանն ա-
նուանի է :

ՖԷՐՈՒ (15,000) ամուր քաղաք, զինուորական
նաւարան ու նաւահանգիստ ունի :

ԲԱՄԲԵԼՈՆԱ (15,000) ունի կրկին ամուր բեր-
դեր :

ՎԷԼԷՉ ՄԱԼԱԿԱ (14,000) խիստ անուանի է
ասոր խաղողը :

ԴԱՐՐԱԿՈՆԱ (12,000) ատենով անուանի քա-
ղաք էր, բայց հիմա ընկած է :

ԱԼՄԱՏԷՆ (10,000) ճոխ սնդիկի հանք ունի :

ԲԱԼՈՍ (500) այս սղաթի նաւահանգստէս ճամ-
բայ ելաւ Քրիստափոր Գոլումպոս 1492ին Ամերի-
կան գտնելու համար :

ԵՒՐՈՊԱՅԷՆ ԴՈՒՐՍ

ՍՊԱՆԻԱՅԻՈՅ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Ափրիկէի մէջ՝ Սեւդա, Մելիլեա, Գանարեան
կղզիները, և Կուլինէայի ծոցին մէջ մէկ քանի մանր
կղզիներ (275,000 բն.) :

Ամերիկայի մէջ՝ Գուպա և Բորգոսիքոյ կղզիներ
ը (1,832,000 բն.) :

Ովկիանիայի մէջ՝ Փիլիպպեան և Մարիանեան
կղզիները (2,700,000 բն․) :

Սպանիոյ և Գաղղիոյ սահմանակից է ԱՆՏՈՐՐՈ
ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ 16,000 բնակչօք • ասոր
մայրաքաղաքն է Ափուրթա, որ 2,000 բնակիչ ունի :

Ի Տ Ա Լ Ի Ա.

87

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՒՆ

Քրիստոսէ 750 տարի առաջ Հռովմայեցեք մեծնալով՝ բոլոր Իտալիոյ տիրեցին • բայց հինգերորդ դարուն առե՛ններն իրենց իշխանութիւնը տկարացած ըլլալուն համար՝ Իտալիան Գոթացւոց ու Լոմպարտացւոց ձեռքն ընկաւ, ինչուան որ մեծն Վարոլոս յաղթեց անոնց ու ինքը տիրեց : Անոր մեռնելէն ետքը Իտալիան զանազան տէրութիւններ բաժնուեցաւ • շատ անգամ ալ մեծ մասը Գերմանացւոց, Գաղղիացւոց ու Սպանիացւոց ձեռքն անցաւ :

Ութնտասներորդ դարուն վերջերը Գաղղիացեք տիրեցին • բայց յամին 1814 մեծին Նաբոլէոնի իյնալէն ետքը Վեննայի ժողովին մէջ որոշուեցաւ որ Սալոցայի դքսութիւնը Սարտենիոյ թագաւորութիւն ըսուի՝ ճենովայի հասարակապետութիւնն ալ հետը միացընելով • Լոմպարտիան ու Վենետիկն Աւստրիոյ ըլլայ • Դոսգանան Աւստրիոյ արշիդուքսերէն մեկուն արուի • Բարման ու Բիա-

չենցան Նաբոլէոնին այրի կնոջը՝ քանի որ ողջ է ,
ու մեռնելէն ետքը իր երկիրն անցնի Ղուգղայի
դքսին , Ղուգղան ալ միանայ Գոսգանայի երկրին
հետ . մէկալ տէրութիւններն ալ իրենց առջի վի-
ճակն ունենան : Անցեալ տարուան Իտալիոյ սլա-
տերազմէն ետև Ղումպարաիան Սարտենիոյ թագա-
ւորութեան անցաւ . և Գոսգանա , Մոտենա ,
Բարմա և Եկեղեցւոյ վիճակի քանի մը դաւառ-
ներն ալ ապստամբելով միացան Սարտենիոյ հետ :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Իտալիոյ սահմանը հիւսիսէն Ալպեան լեռներն
են , արևելքէն Ադրիական ծոցը , հարաւէն ու ար-
ևմուտքէն Միջերկրական ծովը և Գաղղիան :

Տարածութիւնն է 71,000 քառակուսի մղոն :

Իտալիան հիմա եօթը գլխաւոր տէրութիւն կը
բաժնուի , որ ասոնք են . Սարտենիոյ թագաւո-
րութիւն , Ղումպարաիոյ և Ալենեակոյ թագաւորու-
թիւն , Գոսգանայի մեծ դքսութիւն , հռովմայ տէ-
րութիւն , Նաբոլիի թագաւորութիւն , Բարմայի
դքսութիւն ու Մոտենայի դքսութիւն :

Գլխաւոր լեռներն ասոնք են .

Մոնդէ Ռոզա , և Մոնդէ Պիանոզոյ կամ Սպիտակ
լեռան , որ Ալպեան լեռանց բարձր ծայրերն են :

Վեառով Նաբոլիի քով , Եանա՝ Սիկիլիոյ մէջ ,
Սգրումպոլի՝ Ղիպարեան կղզիներուն մէջ , որ
հրաբուխ լեռներ են :

Գլխաւոր գետերն ասոնք են .

Անոյ, Տիբերիս կամ Դէվէրէ, Աղղուանոյ, որ Միջերկրական ծովը կը թափին:

Բոյ, Ատիճէ, Օֆանոսոյ, որ Ազրիական ծոցը կը վազեն:

Խաալիան Եւրոպայի հարաւային կողմն ըլլալուն համար՝ օղը տաք ու ընդհանրապէս առողջ է:

Բերքերուն գլխաւորներն են աղնիւ քար, երկաթ, պղինձ, բամբուակ, շաքար, մեղր, ձէթ, նարինջ, լեմն, բրինձ. ձեռագործներուն մէջ անուանի է մետաքսէ բանուածքը, ապակին, յախճապակը:

Բնակիչն է 23,479,000. լեզուներն խաալերէն. աղէկը կը խօսուի Գոսգանայի Սիենա դաւառին մէջ:

Աճառականութիւնն ու արուեստներն ընդհանրապէս ետ մնացած են. միայն արձանագործութիւնը, պատկերահանութիւնը, ճարտարապետութիւնը և երաժշտութիւնը միշտ անուանի են:

Կրօնքը ուղղափառութիւն:

ԻՏԱԼԻԱՅ ՏԷՐ ՈՒԹԻԻՒՆ

ՍԱՐՏԵՆԻՒԱ

Սարտենիոյ թագաւորութիւնը Բիէմոնդի նահանգին մէջ կ'ըլնայ, 21,000 քառակուսի մղոն տեղ:

Բնակիչը 3,200,000 • զօրքը 150,000 • նաւը 60:

ԴՈՒՐԻՆ (180,000) Բոյ գեանն վրայ յաղուոր քաղաք է. անուանի են բաղմաթիւ տպարանները.

Համալսարանը, Ճեմարանը, մանուսկրի Եղիպատսի հնութեանց պահարանը :

ՃՆՆՈՎԱ (120,000) ամուր քաղաք է, նաև հանդիսար մեծ ու բանուկ : Ատենով ճենովացւոց հաշակաւոր հասարակապետութեան մայրաքաղաքն էր : Աս քաղքիս մօտերը ծնած է Քրիստափոր Գոլումպոս :

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՅ (39,000) Իտալիոյ ամուր քաղաքներէն մէկն է : Ասոր քովը Մարենիոյ դեղին մօտ հարողէոն մեծ պատերազմով յաղթեց Աւստրիացւոց :

ՄԻԼԱՆ (200,000) Իտալիոյ աղուոր քաղաքներէն մէկն է, և բրնձի ու մետաքսի մեծ առուտուր ունի : Ասոր մէջ Սուրբ Ամբրոսիոսի եկեղեցին, ու Սքալա ըսուած թէատրոնը խիստ մեծագործ են :

ԲԱՒՈՅ (24,000) երևելի համալսարան ունի :

Մէկալ երևելի քաղաքներն են Մոնցա, Գոմոյ, Պերկամոյ, Լոտի, Պրէշիա, Գրեմոնա :

Սարաենիա կղզին ալ աս տէրութեան տակն է, և գլխաւոր քաղաքն է Գալիարի (35,000), որ համալսարան ունի :

Սարաենիոյ թագաւորութեան երկրին մէջ է ՄՈՆՅԳՈՅ քաղաքը, որ ինքնապլուխ իշխանի ձեռք է, 1,200 բնակիչ ունի, և Սարաենիոյ թագաւորն ասոր պաշտպանն է :

Դ Ո Ս Գ Ա Ն Ա

Դոսգանայի մեծ դքսութեան տարածութիւնն է 6,440 քառակուսի մղոն, բնակիչը 1,806,940, զօրքը 20,000 :

ՖԻՈՐԵՆՏԱ (114,000) Իտալիոյ ծաղկած քաղաքներէն մէկն է. մեծագործ է մայր եկեղեցին՝ ուր եղաւ Փլորենտեան ժողովը. սուրբ Լաւրենտիոսի եկեղեցին, Մետիչի ըսուած հռչակաւոր ցեղին մատուոյր, և Բիզդի պալատը. անուանի է նաև հնութեանց և բնական պատմութեան պահարանը : Հոս ծնած են Տանդէ բանաստեղծը, և Ամերիկոս Վեսքուչչի :

ԼԻՎՈՐՆՈՅ ԿԻՄ ԱԼԻՎՈՒՌՆԱ (90,000) նաևահանդիսան ու վաճառականութիւնը շատ բանուկ է : Հոս հայոց եկեղեցի մը կայ՝ Անտոնեան կրօնաւորաց ձեռքը :

ՍԻԵՆԱ (30,000) ասոր համալսարանն ու մայր եկեղեցին անուանի են :

ԲԻՋԱ (25,000) ատենով հասարակապետութիւն էր. ասոր մայր եկեղեցւոյն զանգակատունը 15 ոտք քովքնաի ծած է. գերեզմաննոցը շատ երևելի է, ու հողը հրէաստանէն բերած են քաղաքացիք 50 նաւով : Հոս ծնած է Գալիլէոս փիլիսոփան :

Դոսգանայի մեծ դքսութեան անցաւ 1847ին նաև Վուզդայի դքսութիւնը, որ անկէ առաջ ինքնադուս էր : Աս երկրիս բնակիչն է 259,723 :

Գլխաւոր քաղաքն է ԼՈՒԳՊԱ (28,000) ասոր
գրատունը , դիւանը , մայր եկեղեցին , ու մօտ ե-
ղած ջերմուկները շատ անուանի են :

91

Հ Ռ Ո Մ

Հռոմայ տէրութիւնը Սրբազան Պապին ձեռքն
է . առ երկրին մեծ մասը 750ին ասենները Պա-
պերուն տուաւ Պեպինոս՝ մեծին Վարդուսի հայ-
րը , մնացածն ալ ետքի Պապերը կէս մը գնեցին՝
կէս մըն ալ կաահով ժառանգեցին : Հիմա բոլոր
երկրին տարածութիւնն է իբր 13,000 քառակու-
սի մղոն . բնակիչը 3,126,263 . զօրքը 15,000 :

Հ Ռ Ո Մ (180,000) հնութեանց ու գեղարուես-
տից կողմանէ աշխարհիս առաջին քաղաքն է . եղա-
կան շէնքեր են Սուրբ Պետրոսի տաճարը , և Վա-
տիկանի պալատն ու գրատունը , և Պապին աթո-
ւոը հոն ըլլալով՝ աշխարհիս մեծամեծ մայրաքաղաք-
ներուն մէկն է :

ՊՈԼՈՆԻԱ (75,000) Հռոմէն ետքը Իտալիոյ գե-
ղեցիկ ու հարուստ քաղաքներէն մէկն է . անուա-
նի է համալսարանը , գիտութեանց ճեմարանը և
գերեզմաննոցը :

ՄԵԳՈՆԻԱ (35,000) Ադրիական ծովուն վրայ վա-
ճառաշահ քաղաք է :

ԲԵՐՈՒՃԻԱ (30,000) ասոր քոյն է Տրասիմեն
լիճը , որուն մօտ Անիւրաղ Հռովմայեցւոց յաղ-
թեց :

ՖԱՅԷՆՑԱ (18,000) ասոր յախճապակը աղ-
նիւ է :

ԲԻՄԻՆԻ կամ ԱՐԻՄԻՆԻ (17,00) երևելի է հոս
Օգոստոս կայսեր յաղթական կամարը :

ՀՌԱԻՆՆԱ (24,000) Ոնորիս կայսրը երկան
ասեն հոս նստաւ :

ՖԻՐՐԱՐԱ (26,000) հոս է Արիսագոյ բանա-
սանդիին գերեզմանը :

ՉԻՎԻԴԱ ԱԷԳԳԻՆԱ (8,000) աղատ ու բանուկ
նստահանգիստ ունի :

ԳԻՎՈՒԻ (6,000) գիրքը խիստ աղուոր է . Ով
բատիստ բանասանդը հոս բնակեր է :

ՈՒՐԳԻՆՈՅ (12,000) հոս ծնած է Ռաֆայէլ ա-
նուանի սրասկերահանը :

ԼԱՐԻԵՏՈՆ (8,000) հաշակաւոր ուխտասեղի է
սուրբ Աստուածածնայ տանը համար :

ՍԻՆԻԿԱԼԻՆԱ (8,000) մեծ տօնավաճառ ունի :

Անուանի են նաև Գորլի , Չէղէնա , Ռիեզի ,
Փոլինեօ :

Հաւմայ ակրութեան պաշտպանութեանը տակն
է ՍԱՆ ՍԱՐԻՆՈՅԻ աղատ հասարակապետութիւնը ,
որ Եւրոպայի ամենէն հինը կը սեպուի : Տարածու-
թիւնն է 18 քառակուսի մղոն , և բնակիչն է 8,000 :

92

Ն Ա Բ Ո Ւ Ի

Նաբոլի երկրին երկար ասեն Լոմպարտացիք
ու Յոյնք ախրեցին . անոնցմէ ետքը Արաբացիք ,
ետքն ալ Նորմանտացիք , ասոնք երբեմն միայն Նա-

բողիկն կը տիրէին , երբեմն Սիկիլիային ալ . ասոր համար Նաբոլիի Թագաւորութիւնը Երկու Սիկիլեայոյ Բագաւորութիւնն ալ կ'ըսուի :

Տարածութիւնն է 32,530 քառակուսի մղոն :

Բնակիչը 9,117,050 . լեզուներն իտալերէն :

Զօրքը 153,000 . նաւատորմիդը 130 կտոր նաւ :

ՆԱԲՈՒԻ կամ ՆԵԱՊՈԼԻՍ (414,000) Իտալիոյ ամենէն մեծ քաղաքն է . աղուոր նաւահանգիստ ու փառաւոր շէնքեր ունի . հնութեանց պահարանն անուանի է . դիպակն աղնիւ . դիրքը , բարեբերութիւնը , օդը շատ զուարճալի : Ասոր քովերն են Պոմպէա ու Հերքուլանոն հին քաղաքները , որ Բրիտանոսէ 79 տարի ետքը Աւսուլ լեռան մոխրովն ու լաւայովը ծածկուեր էին , ու 100 տարիէն ի վեր ինչուան հիմա կը փորեն ու կը բանան :

ԳԱՍԴԻԼԼԱՄԵՐԻ (15,000) ասոր քովերն է հին Սքապէա քաղաքին աւերակը :

ՏԱՐԵՆՏՈՆ (19,000) } անուանի հին քաղաքներ
ԿԱՊՈՒԱ (8,000) } են :

ՍԱԼԵՐՆՈՅ (11,000) ասոր բժշկութեան դրսւրոցն անուանի է :

Երեկըն են նաև Ադուիլա , Գեդի , Ֆոճիա , Պարի , Լէջէ , Դրաբանի :

Սիկիլիա կղզւոյն մէջ (2,231,000 բն .) որ աստերութեան տակն է՝ գլխաւոր քաղաքներն ասանք են .

ԲԱԼԵՐՄՈՅ (200,000) Եւրոպայի գեղեցիկ քաղաքներէն մէկն է . անուանի է աստղաբաշխական դիտարանը :

ՄԵՍՄԵԱ (85,000) մեծ ու աղուոր նաւահանգիստ ունի :

ՍԻՐԱԿՈՒՍԱ (20,000) հին ու անուանի քաղաք է, բայց կէսէն շատն աւերակ • հոս ծնած է Արփիմեդէս երկրաչափը :

ԳԱԴԱՆԻԱ (52,000) աղուոր քաղաք է Եանա լեռան տակը՝ որ Եւրոպայի ամենէն մեծ ու հռչակաւոր հրաբուխն է :

ՃԻՐՃԻՆԴԻ (14,000) հին Ակրագանդ քաղաքին քովն է • անուանի է ասոր քովի ծծմբի հանքը :

93

Բ Ա Ր Մ Ա

Բարմայի դքսութեան բնակիչն է 499,835 :

Զօրքը 5,672 :

ԲԱՐՄԱ (41,000) ասոր թատրոնը Եւրոպայի թատրոններուն ամենէն ընդարձակն է • անուանի է նաև Պոսոնեան ըսուած տպարանը :

Մէկալ գլխաւոր քաղաքն է Բիաչենցա հանդերձ բնակչօք 32,000) :

94

Մ Ո Տ Ե Ն Ա

Մոսկնայի բնակիչն է 604,512 :

Զօրքը 14,656 :

ՄՈՏԵՆԱ (31,052) մեծաչէն է դքսին տալասը :

Անուանի են նաև Ռէճճիոյ (18,684), Միլանտա, Կուասպալա և Գարրարա՝ ուսկից խիստ աղնիւ մարմարիոն քար կ'երևէ :

Տ Ա Ճ Կ Ս Ս Տ Ա Ն



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Տ Ա Ճ Կ Ի կամ Օսմանցւոց տէրութիւնը 1300ին սկսաւ սուլդան Օսմանէն Քէօթահայի կողմերը ու քիչ ատենէն ետքը Պրուսան, Կախինէն ու Կոստանդնուպոլիսն առնելով տարածուեցաւ ինչուան Մաճառատան ու Գերմանիա : Անոր համար բոլորը երկու գլխաւոր մաս կը բաժնուի . Եւրոպայի Տաճկաստան՝ որ է Տուրքի, և Ասիայի Տաճկաստան՝ որ է Անատոլու :

Ը Ն Ի Հ Ա Ն Ո Ւ Բ Գ Ի Տ Ե Լ Ի Բ

Եւրոպայի Տաճկաստանին սահմանը հիւսիսէն Ռուսաստանն է, արևելքէն Սև ծովն ու Ասիա, հարաւէն Արշիպէղադոսն ու Յունաստան, արևմուտքէն Աւստրիա :

Բանի մը տարի առաջ Օսմանցւոց ձեռքն էին

Նաև Ուլաս, Պուղտան, և Սերվիան՝ որ հիմա գրե-
թէ ինքնագլուխ են իրենց ներքին կառավարու-
թեամբ, ինչպէս նաև Մոնգէնեկրոն՝ որ բոլոր-
վին անկախ է :

Տարածութիւնն է 112,500 քառակուսի մղոն :

Գլխաւոր լեռներն ասոնք են .

Պալքան, որուն գլխաւոր ճիւղերն են Տէսփոթ
տաղը, Չար տաղը, Տինարեան լեռները :

Պինգոս լեռը, Աղիմպոս կամ Լաքա, Պառնասոս,
և Քիմերեան լեռները :

Գլխաւոր դետերն ասոնք են .

Դանուբ, որ Սև ծովը կը մանէ .

Տրին, որ Ադրիական ծովը կը թափի .

Մէրիճ, որ Արշիպեղագոսը կը վազէ .

Մորաւա, Ալութա, Սէրէթ, որ Դանուբ դետը
կը մանեն :

Երկիրը խիստ լեռնոտ է, մանաւանդ հարաւային
կողմը . անոր համար ալ սաստիկ ցուրտ կ'ըլլայ :

Հողը բարեբեր է, բայց քիչ մշակած . շատ տե-
սակ հանք ունի, թէպէտև քիչ բանեցուցած :

Գլխաւոր բերքն է ցորեն, բրինձ, խաղող, նա-
րինջ, ձէթ, բամպակ, մետաքս, քրքում, և ծխա-
խոտ :

Արուեսան ու ճարտարութիւնը հիմա առաջ
երթալու վրայ են : Անուանի են մետաքսէ բա-
նուածքները, դիպակը, շալն ու կաշին :

Բնակիչն է 16,000,000 Եւրոպայի մասին մէջ .
Լեզունին թուրքերէն է առ հասարակ :

Կրօնքն ընդհանրապէս մահմետականն է :

Կառավարութիւնը աղաա միապետութիւնն է :

Չորքը 300,000 . նաւաստորմիղը 135 կաոր նաւ :

ԴԼԽԱՒՈՐ ՔԱՂԱԲՆԵՐԸ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ կամ ՍՏԱՄԳՈՒ, (750,000) քողոր Տաճկաստանի մայրաքաղաքն է՝ Մարմարային ու Սև ծովուն վրայ, դիրքը եղական, նաև ահանդիսառ շատ փառաւոր ու ընդարձակ, որ 1200 նաւէն աւելի կ'առնէ • վաճառականութիւնը խիստ բանուկ • շէնքերուն մէջ երևելի են մէկ քանի մզկիթները, մանաւանդ Այա Սոֆիան • անուանի է նաև փողերանոցը, թաղաւորին պալատները, նոր բացուած դործարանները, և այլն : Մեծն Կոստանդիանոս շինեց աս քաղաքը 320ին • խակ 1453ին Ֆէթիհ սուլթան Մէհմէմէան առաւ Յունաց ձեռքէն :

ՍԻԼԻՎՐԻ • բանուկ նաւահանդիսա ունի :

ԽՆԾԻՎԻԶ • հանքային ջրեր ունի, և շէնքերուն շատը ժայռի մէջ փորուած են :

ԱԴՐԻԱՆՈՒԳՈՒԼԻՍ կամ ԷՏԻՐՆԷ (130,000) անբութեան երկրորդ մայրաքաղաքն է • շէնքերուն մէջ անուանի է սուլթան Սէլիմի մզկիթը :

Քովերն են Չիրմէն, Տիսեղոզա, Գըրդ քիլիսէ քաղաքները :

ՖԻԼԻՊԷ (42,000) մեծ ու վաճառաշահ քաղաք է • մետաքսեղէն բանուածքն աղնիւ • շատ հնութիւններ ալ ունի :

ՈՒԶՈՒՆԾՈՎԱ } ասոնք երկուքն ալ մեծ տօնա-
 ԽՈՒԿՄԵԷ } վաճառ ունին :

ԿԷԼԻՊՈՒՈՒ (20,000) անուանի է սեկը :

Ուրիշ երևելի տեղուանքն են թաթար պաղա-
րը , Ախլէ , Պուրղաղ , Ռոստոգոյ , Միախա :

ԹԵՍԱՂՈՆԻԿԷ կամ ՍԷԼԱՆԻԿ (75,000) հին ա-
տենի Մակեդոնիա գաւառին գլխաւոր քաղաքն է .
մեծ ու բանուկ նաւահանգիստ ունի , շատ ալ
հնու-թիւններ :

ՍԻՐԷՁ (30,000) վաճառաշահ քաղաք է , բայց
ամառուան օդը վնասակար . քովերը արծաթի հանք
կայ :

ԻՒՍԿԻՒՊ (15,000) դերքը գեղեցիկ :

Անուանի են նաև Ենիճէ Արտար , Գարաֆէ-
րիէ , Քիւսդէնտիլ , Քասգորիա :

ԱՅՆՕՐՕՍ լեռը՝ ուր քանի մը տարի առաջ 22
հոռմի վանք կար , և 500 մատուռ :

ՏՐԱՄԱ . որուն քովերն են հին Փիլիպպէ քա-
ղաքին աւերակները :

ԼԱՐԻՍՍԱ կամ ԵՆԻՇԷՆԻՐ (30,000) կարմիր ներ-
կի անուանի գործարաններ ունի :

ԴՐԶԱԼԱ . ՉԱՂՈՐԱ . ՉԱԹԱԼՃԱ՝ որ հին ասեն
Փարսազիա կ'ըսուէր :

ԷՅՆԵԱ (40,000) Ալպանիա կամ Անուաւու-
լուգ գաւառին գլխաւոր քաղաքն է . ասկէց էր
Տէփէտէլէնի Ալի փաշան որ թագաւորէն ապրս-
տամբած ըլլալով 1822ին հոս պաշարուած մեռաւ :

ՇՔՈՏՐԱ կամ ԻՍՔԷՆՏԷՐԻԷ (20,000) ամուր
քաղաք :

ԳԱՐԱՏԱՂ կամ ՄՈՆԴԷՆԵԿՐՈՅ . որ դրեթէ ինք-
նազլուխ դաւառ մըն է . գլխաւոր քաղաքն է Չէդ-
ղինա :

Երևելի են նաև Բրեվիզա , Բարկա , Աւրնեա ,
Տիւրաճ , Իլպասան , Օխրի , Ագսէրայ կամ Քոչյա :

ՊՈՍՆԱ կամ ՊՈՍՆԱ ՍԱՐԱՅ (70,000) ամուր ու վաճառաչահ քաղաք է :

ՉՎՈՌՆԻՔ (14,000) կապարի հանք ունի :

ՊԱՆԵԱԼՈՒԳԱ (13,000) ամուր բերդ, ու հանքային ջրեր ունի :

Պսնա գաւառին մէկալ գլխաւոր տեղուանքն են՝ Իրաւնիք, Մոստար, Դուզլա, Պիհաչ :

ՍՈՖԵԱ (50,000) Պուլղարիա գաւառին մեծ ու վաճառաչահ քաղաքն է :

ՇՈՒՄՆԻ կամ ՇՈՒՄԼԱ (32,000) տէրութեան ամուր քաղաքներէն մէկն է :

ՌՈՒՍՃՈՒԳ (30,000) մեծ ու վաճառաչահ քաղաք է :

ՍԻԼԻՍՏՐԷ (20,000) ամուր ու վաճառահանու թիւնը բանուկ քաղաք :

ՎԻՏՆՆ (23,000) ամուր բերդաքաղաք :

Անուանի են նաւ Սիսոլ, Հըրշովա, Իսագճը, Նիկէպոլու :

ՈՒԼԱՏ-ՊՈՒՂՏԱՆ

ՊՈՒՔՐԷՇ (106,000) Ուլասի մայրաքաղաքն է, վաճառաչահ ու մեծ բայց գեղի նման :

ԵՅՇ (54,000) Պուլղտանի մայրաքաղաքն է Պուքրէշին նման :

ԻՊՐԱՅԻԼ (13,000) ամուր ու անուանի բերդ է :

Մէկալ երևելի տեղուանքն են Գոքչան, Պոլուչան, Թէրկովից, և Կալայ՝ որ բանուկ նաւահան գիսա ունի :

Ս Ե Ր Վ Ի Ա

ՊԵՂԿՐՅՏ (32,000) Եւրոպայի ամուր քաղաք-
ներէն մէկն է . Սերվիոյ իշխանը շատ անգամ հոս
նստեր է, և բոլոր երկրին գլխաւոր քաղաքն է :

ՍԵՄԵՆՏՐԷ (12,000) Սերվիոյ նախագահ արք-
եպիսկոպոսը հոս կը նստի :

ՔՐԱԿՈՒՅԵՎՅՏ (5,000) հիմա Սերվիոյ իշխանը
հոս կը նստի :

ՔԼԱՏՈՎԱ . ասոր քովն է Տրայիանոս կայսեր
շինած կամուրջը :

ԵՒՐՈՊԱՅԻ ՏԱՃԿԱՍՏԱՆԻՆ

Կ Ղ Ջ Ի Ն Ե Ր Ը

ԹԱՍՈՍ կամ ԹԱՀՈՋ . դեղեցիկ մարմարիոննե
ու գինին անուանի են :

ՍԱՄՈԹՐԱԿԷ կամ ՍԷՄԷՆՏՐԷՔ . հին ասենք
խիտ անուանի էր :

ԼԵՄՆՈՍ կամ ԼԻՄՆԻ . ասենով անուանի էր ա-
սոր լաբիւրինթոսը, և հռոմկաւ (Բինի Տախնոսմ)
ըսուած կաւը :

ՔԵՆՏՐԵ կամ ԿԻՐԻՏ կամ ԿՐԵՏԷ՝ մեծ կղզի է,
որ հին ասենք խիտ անուանի էր, բայց հիմա ըն-
կած է :

ՅՈՒՆԱՍՏԱՆ

101

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Հին ասուելը Յունաստանի մէջ այլևայլ հասարակապետութիւններ կային՝ իրարու հետ սովորաբար դաշնակից • արուեստներն ու դիտութիւնները ծաղկած էին Յունաց մէջ, պատերազմական քաջութեամբ ալ մեծ անուն ունէին : Հռովմայեցւոյ հասարակապետութեան մեծցած ասուելը՝ անոնց տակն ընկան • բայց երբոր Կոստանդիանոս իր աթոռը Կոստանդնուպոլիս փոխադրեց, կամաց կամաց Հռովմայեցւոյ կայսերութիւնը Յունաց ձեռքն անցաւ, ու սկսան հոռոճ ըսուիլ : Անկէց ետքը Արևելակեցւոյ Օսմանցւոյ ձեռքն անցաւ տէրութիւնն • ինչուան որ 1830ին Եւրոպայի թագաւորներուն պաշտպանութեամբը նոր թագաւորութիւն ունեցան միապետական, որ 1842ին սահմանադրական միապետութեան փոխեցին : Հիմակուան թագաւորը Պաւլիսայի թագաւորին որդին է :

ԸՆԴՏԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Յունաստանի սահմանը հիւսիսէն Եւրոպայի
Տաճկաստանն է, արևելքէն Արշիպէղագոսը, հա-
րաւէն Միջերկրական ծովը, արևմուտքէն Յոնիա-
կան ծովը :

Տարածութիւնն է 12,000 քառակուսի մղոն :

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ :

Օդը բարեխառն ու առողջ :

Գլխաւոր գետերն ասոնք են .

Օֆիէ կամ Տուֆիա, որ Արիադիոյ ծոցը կը թափի .
Իրին կամ Եւրոտաս, որ Մանեայի ծոցը կը վազէ .
Պամիսոս, որ Մեթոնի քովը կը թափի :

Հողը բարեբեր է, և ամէն տեսակ հանք ու մե-
տաղ ունի, բայց գրեթէ ինչուան հիմա երեսէ
ձգուած են :

Բնակիչն է 1,000,000 . լեզունին հոռմերէն, որ
հին յունարէնին ռամկականն է :

Քաղաքականութիւնն ու արուեստները առաջ
երթալու վրայ են :

Կրօնքը յունադաւանն է :

Կառավարութիւնը սահմանադրական միապե-
տութիւնն է :

Զօրքը 12,000 . նաւատորմիդը 30 կտոր նաւ :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԱԹԵՆՔ Կամ ԱԹԻՆԱ (50,800) Յունաստանի մայրաքաղաքը, հին ատենը խիստ ծաղկած էր՝ ամեն արուեստից ու գիտութեանց կողմանէ. հիմա ալ սկսած է զարգարուիլ նոր նոր շէնքերով, ուսումնական տեղերով, տպարաններով, և հին շէնքերը նորոգուելով: Աս քաղաքը ծնած են Սողոմոն, Միլաթիադէս, Թեմիստոկղէս, Արիստիդէս, Պերիկղէս, և ուրիշ շատ երևելի մարդիկ:

ՆԱՒԲԼԻՆ (12,000) ամուր բերդաքաղաք է:

ԹԻՒՅ. հին Թեբէ քաղաքին տեղը շինած պղտի քաղաք մըն է:

ՄԻՍԻԹՐԱ. ասոր քովերն է Սպարտային աւերակները:

ՄԻՍՈԼՈՒՆԿԻ. ասոր բերդին մէջ հռոմները շատ դիմացան Օսմանցւոց դէմ 1826ին:

ԿՈՐՆԹՈՍ Կամ ԳՈՐՏՈՍ. անուանի քաղաք է Մուսայի պարանոցին վրայ, դիրքն ալ աղուոր:

ԹՐԻՓՈԼԻՑԱ. Օսմանցւոց ատենը Մուսային գլխաւոր քաղաքն էր:

ՄԵԹՈՆ Կամ ՄՈՒԹՈՒՆ. ամուր բերդ է. Միսիթար արքան հոս հաստատեր էր իր վանքը՝ Վենետիկ երթալէն առաջ:

ՆԱՒԱՐԻՆ. անուանի է 1827ին ասոր նաւահան դասին մէջ եղած նաւական պատերազմը:

ՓԱԹՐԱՍ. Յունաստանի ամենէն վաճառաշահ քաղաքն է:

Աւրիշ շատ տեղուանք ալ կան որ թէպէտ հին
ատենն անուանի քաղաքներ էին, բայց հիմա որը
գեղ է՝ որը աւերակ :

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԿՂՁԻՆԵՐԸ

Յունաստանի գլխաւոր կղզիներն ասոնք են .

ՆԷՎՐՈՐՈՆԴԻ կամ ԷՅՐԻՊՈԶ . բանուկ նաւա-
հանգիստ ունի :

ՇՐԲ կամ ՍԻՐԲ (15,000) հռոմներուն ետքի
ապստամբութենէն ՚ի վեր խիստ բանուկ ու վա-
ճառաշահ է :

Ն.Վ.ՔԸՎ կամ Ն.Վ.ՔՍՈՍ . կիւկլադայք կամ Բոլոր
կղզիք ըսուած կղզիներուն մէջ ամենէն մեծն է :

ԻՏՐԱ կամ ՉԵՄԼԸՃՅ . ասոր քաղաքը շէն ու
բանուկ է :

Անուանի են նաև աս կղզիներս . Ծիա կամ
Մուրթատ աստար, Անարա, Թինէ կամ Իսթին-
տիլ, Դեղոս կամ Սաիլի, Մեղոս կամ Պիւյիւք
Տէյիրմէնլիք, և Պարոս՝ որուն մարմարիտնը խիստ
անուանի է :

Handwritten text at the top of the page, possibly a title or introductory paragraph.

Second section of handwritten text, appearing as a distinct paragraph.

Third section of handwritten text, continuing the narrative or list.

Fourth section of handwritten text, located in the lower half of the page.

Final section of handwritten text at the bottom of the page.

Ս Ս Ի Ս

ԸՆԳՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

105

ՍԱՀՄԱՆ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆ

ՍՄԻՑ սահմանը հիւսիսէն Սառուցեալ ծովն է . արևելքէն Խաղաղական ովկիանոսը . հարաւէն Հնդկաց ծովը . արևմուտքէն Ուրալ լեռները , Կասպից ծովը , Կովկասու լեռները , Միջերկրական ծովը , և Կարմիր ծովը :

Մեծութիւնն է 12,800,000 քառակուսի մղոն : Աշխարհիս մէկալ մասերուն մէջ ամենէն մեծն է , ու հին ատենէ 'ի վեր ամենէն ալ անուանի . որովհետև մարդկային ազգը սա մասին մէջ ստեղծուած ու ամէն կողմանէ ծաղկած է , թէպէտ և հիստարի ծաղկածութիւնն ու մեծութիւնը չէ մնացած :

ԲԱԺԱՆՈՒՄ

Ասիան գլխաւոր տասներմէկ աշխարհք կը բաժնուի . մէկը հիւսիսային կողմն է , հինգը մէջտեղը , հինգն ալ հարաւային կողմը :

Հիւսիսայինն է Ասիոյ Ռուսաստանը :

Մէջտեղուանքն ասոնք են . Տաճկաստան Ասիոյ , Հայաստան , Թուրքաստան կամ Թաթարստան , Չին , և Ճաբոն :

Հարաւայիններն ասոնք են . Արաբիա , Պարսկաստան , Աֆղանիստան , Պելուճիստան , և Հընդկաստան :

Ծ Ո Վ

Ասիոյ ծովերն ասոնք են .

Սառուցեալ ծով , Միջերկրական ծով , Հնդկաց ծով , և Խաղաղական ովկիանոս :

Կասպից ծով , Սև ծով , Մարմարա ծով , Արշխալուզադոս , Չինաց ծով , Դեղին ծով , Ճաբոնի ծով , Օխոդսքի ծով , Պէհրինկի ծով :

Ն Ե Ղ Ո Ի Յ

Ասիան իննը գլխաւոր նեղուց ունի .
Չանադ գալէսիի և Ստամպուլի նեղուցը՝ Եւրոպիոյ
Տաճկաստանին ու Ասիոյ Տաճկաստանին մէջ
տեղը .
Պապիւլմանաէա՝ Արաբիոյ և Ափրիկէի մէջտեղը .
Հիւրմիւզի նեղուցը՝ Արաբիոյ և Պարսկաստանի
մէջտեղը .
Սինկաբուրի նեղուցը՝ Հնդկաստանի հարաւային
դին .
Մալազգայի նեղուցը՝ Չինու հարաւային դին .
Քորէայի նեղուցը՝ Չինու և Ճարոնի մէջտեղը .
Անցք [Թաթարաց՝ Զոքա կղզւոյն և Չինու մէջ
տեղը :
Պէհրինկայ նեղուցը՝ Ասիոյ և Ամերիկայի մէջտեղը :

Ծ Ո Յ

Տասը մեծամեծ ծոցեր կան Ասիոյ մէջ .
Արաբիոյ ծոցը , որ է Վարսիւր ծովը .
Պարսկային ծոցը .
Իօմէնի ու Պէնկալայի ծոցը .
Սիամայ ու Դոնքինի ծոցը .
Բէչի ծոցը՝ Դեզին ծովուն մէջ .
Քամչեադքայի ծոցը .
Անաաիւր՝ Պէհրինկայ ծովուն մէջ .
Օպիի ծոցը՝ Սառուցեալ ովկիանոսին մէջ :

Կ Ղ Ձ Ի

Ասիոյ գլխաւոր կղզիներն ասոնք են .
Արշիպեղադոսի կղզիները . անոնցմէ զաս՝ Հաուդոս
և Կիպրոս , Միջերկրական ծովուն մէջ .
Պահրէյն կղզիները՝ Պարսկաստանի ծոցին մէջ .
Մալտիական կղզիները , Լադէտիական կղզիները ,
Պոմպէյ , Սէյլան , Նիդոպար , և Անտաման
կղզիները՝ Հնդկաց ծովուն մէջ .
Հայնան , Հոնկ-Քոնկ և Մագաոյ՝ Չինաց ծովուն
մէջ .
Փորմոզա կղզին , Լիեուքիեու , Ճաբոնի կղզիները ,
Ջոքա կամ Դարաքայի կղզին և Քուրիլեանք՝
Խաղաղական ովկիանոսին մէջ .
Նոր Սիպերիա կամ Լիաքով կղզիները՝ Հիւսիսային
Սառուցեալ ովկիանոսին մէջ :

ԹԵՐԱԿՂԶԻ

Ասիոյ մէջ ութը թերակղզի կայ , չորսը մեծ ու
չորսը սղտիկ :
Անատոլու՝ Տաճկաստանի մէջ , Արաբիա , միջին
Հնդկաստան , և Գանդեսի անդիի դին .
Կուլճրադ՝ Հնդկաստանի արևմտեան կողմը , Մալ
լագդա՝ դէպ ՚ի հարաւ Գանդեսէն անդին , Գո
րէա՝ Չինու արևելեան դին , և Քամչեադքա՝
Սիպերիոյ արևելեան դին :

Հ Ր Ո Ւ Ա Ն Դ Ա Ն

Ասիոյ գլխաւոր հրուանդաններն ասոնք են .
Պապա սրուհու՝ Տաճկաստանի արևմտեան կողմը .
Պապիւլւսնաթալ ու Ռասէլիադ՝ Արաբիոյ հարա-
ւային գին .
Գոմորին՝ Հնդկաստանի հարաւային գին .
Ռոմանիա՝ Մալազգայի հարաւային գին .
Գլուխ արևելեան՝ Սիպերիոյ արևելեան ծայրը .
Գլուխ հիւսիսային՝ կամ Սեւերուսիսոգոչնոյ՝ Սի-
պերիոյ հիւսիսային ծայրը :

Լ Ե Ռ

Ասիոյ գլխաւոր լեռներն ասոնք են .
Կովկաս՝ Սև ծովուն ու Կասպից ծովուն մէջ տեղը .
Արարատ ու Կորդուաց լեռները՝ Հայաստանի
մէջ .
Տորոս և Արբանան՝ Տաճկաստանի մէջ .
Ռարալ լեռները՝ Եւրոպայի Ռուսաստանի ու Սի-
պերիոյ մէջ տեղը .
Ալդայի՝ Սիպերիոյ ու Չինու տէրութեան մէջ
տեղը .
Պար լեռները՝ Թուրքաստանի և Չինու տէրու-
թեան մէջտեղը .

Յունկլինկ և Կաճար լեռները՝ Չինու տէրու-
թեան մէջ .

Հիմալայա՝ Չինու տէրութեան և Հնդկաստանի
մէջտեղը .

Էլէնա՝ Ասիոյ Տաճկաստանի ու Պարսկաստանի
մէջտեղը .

Էլարէա՝ Արաբիոյ մէջ .

Կադ՝ Հնդկաստանի մէջ :

114

ՀՐԱԲՈՒԽ

Ասիոյ հրաբուխներուն շատը հիմա մարած են .
իսկ բանուկ հրաբուխներուն մեծ մասը Քամչեադ-
քային, Քուրիլեան կղզիներուն ու Ճարոնի կղզ-
ղիներուն մէջն են :

115

Լ Ի Ճ

Ասիոյ գլխաւոր լճերն ասոնք են .

Վանայ ծովը, Որմեայ լիճը, Սեանայ լիճը՝ Հայաս-
տանի մէջ .

Չանի եւ Պայքալ՝ Սիպերիայի մէջ .

Մեռեալ ծովը՝ Հրէաստանի մէջ .

Արալ լիճը՝ Թաթարստանի մէջ .

Պալգաշի, Սայսան, Քուքուհուր, Բալգէ, Թուն-
կըթինկ՝ Չինու մէջ :

Չեռէհ՝ Աֆղանիստանի մէջ :

Գ Ե Տ

Ասիոյ գլխաւոր գետերն են .
Օպի , Ենիսէյ , Լենա՝ Սառուցեալ ծով կը թափին .
Ամուր՝ Օխոդսքի ծովը .
Վոլկա , Ուրալ՝ Կասպից ծովը .
Հոանկոյ , Քեանկ կամ Եանչէքեան՝ Դեղին ծովը .
Մէյքոնկ , Մէյնամ՝ Չինու ծովը .
Սալուեն , Իռաւատաի , Պրահմարուդրա , Գան-
գէս , Կոտայկերի , Քիսանա՝ Պէնկալայի ծոցը .
Ինդոս կամ Սինա՝ Էօմէնի ծոցը .
Տիգրիս ու Եփրատ՝ Պարսկային ծոցը .
Սեհոն ու Գեհոն՝ Արալ Լիճը :

ՕԴ , ՀՈՂ , ԲԵՐԻ

Ասիոյ օդն ընդհանրապէս հիւսիսային կողմերը խիստ ցուրտ , մէջտեղուանքը բարեխառն ու առողջ , հարաւային կողմերն ալ տաք է :

Երկրին մեծ մասը լեռնոտ ու բարեբեր է , մանաւանդ մէջտեղուանքն ու հարաւային կողմերը . իսկ հիւսիսային կողմը անբեր անապատ է :

Գլխաւոր բերքերն են ոսկի , արծաթ , երկաթ , փլազին , պղինձ , անագ , և հանքային ներկ , մանաւանդ ազամանդ , և ուրիշ աղնիւ բարեր . բայց բոլոր աս հանքերը գրեթէ երեսէ ձգուած են :

Բոյսերը խիստ առատ ու ստղաբեր են . ասոնց մէջ երևելիներն են խահուէ , չայ , շաքարի եղէգ , արմաւ , պանան , քոքոյ , լեղակ , կինամոն , պղղպէղ , զանազան խէժ ու խնկեղէններ , սլամպու , բամպակ , մետաքս , և ամէն տեսակ աղնիւ պտուղներ :

Վայրի կենդանիներուն մէջ գլխաւորներն են ձերմակ արջ , սև աղուէս , սպիտակ աղուէս , սամոյր և ուրիշ տեսակ տեսակ աղնիւ մորթ ունեցող կենդանիներ . եաք , այծեամն , բէշկ մշկոյ , վիղ , սնդեղջիւր , առիւծ , վագր , ընձառիւծ , չաղալ , կապիկ , կսկորգիղոս , ուղտ , և այլն : Արաբիոյ ու Պարսկաստանի ձիերն անուանի են իրենց գեղեցկութեամբն ու արագութեամբն : Ասիոյ քանի մը ծովափուները կը դառնի նաև ընաիր մարգրիտ :

118

ԲՆԱԿԻՉ , ԿՐՕՆ , ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ,
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Բնակիչն է գրեթէ 667,000,000 . և գլխաւոր ազգերն են տաճիկ , հայ , պարսիկ , հրեայ , արաբացի , հնդիկ , ջին ու թաթար :

Չորս գլխաւոր կրօնք կայ Ասիոյ մէջ . քրիստոնէութիւն , մահմետականութիւն , հրէութիւն , կուսաբաշտութիւն :

Քաղաքականութիւնը հին ատենը շատ աւելի ծաղկած էր քան թէ հիմա . ուսմունքը և դիտութիւնները թէպէտ Ասիոյ մէջ սկսած են , բայց

Տիմա դրեթէ բոլորովն դադրած են . արուեստնե-
րուն ալ շատը մտցուած կամ իրենց անկատարու-
թեան մէջ մնացած . բայց վաճառահանութիւնը
շատ բանուկ է :

Ասիոյ մէջ եղած տէրութիւններուն դրեթէ ա-
մէնն ալ ազատ միապետական կառավարութիւն
ունին :

ՌՌԻՍԱՍՏԱՆ ԱՍԻՈՅ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՍԻՈՅ Ռուսաստանը գլխաւոր երկու մաս կը բաժնուի • Սիպերիա, և Վոլկասու երկիրները: Սիպերիոյ բնակիչները հին ատեն շատ անգամ Եւրոպան ու Ասիան կոխեր էին • բայց իրենց երկիրը ինչուան 1500 թուականն անժամօթ էր Եւրոպացոյ • ան ատենները Ռուսներն սկսան տիրել աս երկրիս, և իրենց տէրութեան յանցաւորներուն մահապարտները հոն քշելով ան տեղուանքը շէնցուցին:

Վոլկասու երկիրներուն մէկ մասը ատենով Պարսից ձեռքն էր, մէկալը Օսմանցոյ, մէկքանի տեղուանք ալ ինքնազուխ էին • մօտ տարիներս Ռուսներն ասոնց ամենուն ալ տիրեցին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Ասիոյ Ռուսաստանին սահմանը հիւսիսէն Սաւուրցեալ ծովն է, արևելքէն Պէհրինկայ նեղուցը •

հարաւէն Տաճկաստան, Պարսկաստան, և Թուրքաստան • արևմուտքէն Ուրալ լեռները :

Տարածութիւնն է 4,000,000 քառակուսի մղոն :

Սիպերիան ամբողջ Եւրոպայէն մեծ է, բայց բնակիչը խիստ քիչ • օդը ցուրտ, երկրին մեծ մասը անասլատ ու քիչ մշակուած • բերքը արծաթ, երկաթ, մադնիս, պղինձ, և աղնիւ քարեր, և մանաւանդ աղնիւ մորթեր :

Վովկասու երկիրները լեռնոտ ու խիստ բարեբեր են • օդը առողջ, բերքն ամէն տեսակ պառուղ ու արմախք :

Բոլոր Ասիոյ Ռուսաստանին բնակիչն է գրեթէ 3,000,000 • ուռս, հայ, վրացի, մնկուէլ, ապաղա, չէրքէղ, թաթար, և այլն :

Վրոնքը՝ քրիստոնէութիւն, մահմէտականութիւն, և կաապաշաութիւն :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

121

Ս Ի Պ Ե Ր Ի Ա

ԴՈՊՈՂՍՔ (25,000) ամուր քաղաք է, վաճառականութիւնն ալ ծաղկած :

ԻՐՔՈՒԴՍՔ (25,000) Պայքալ լճին քովն ամուր ու վաճառաշահ քաղաք է • չուխայի գործարան ունի :

ԴՈՄՍՔ (9,000) Օպի գետին վրայ վաճառաշահ քաղաք է :

ԼՆԻՍԵՅՍԲ (6,000) անուանի ամուսնաձառու ունի :
ԼՆԲՈՒԳՍԲ (4,000) սամուրի վաճառք ունի :
ՆԵՐՉԻՆՍԲ (3,000) արծաթի ու կապարի հանք
ունի :

ՔԵՆՉԻՆ (2,000) երկու քաղաք է գիւմարէ գի-
մար . մէկը Ռուսաց ձեռքը, մէկալը Չինաց :

ՕՆՈՂՍԲ (2,000) համանուն ծովուն վրայ, ունի
փայտի մթերանոցներ նաւակազմութեան համար :

Անուանի են նաև Պառնաուլ, Բրանոյեարսք,
և Փեղրոբաւլսք՝ որ Բամիլեաղքայի գլխաւոր
քաղաքն է :

ԿՈՎԿԱՍՈՒ ԵՐԿԻՐՆԵՐԸ

ՏՓՂԻՍ կամ ԹԻՓՂԻՉ (50,000) Արաստանի ետքի
մայրաքաղաքն էր . նոր շինուած մասը խիստ գե-
ղեցիկ է . շատ հանքային ջրեր ունի . վաճառակա-
նութիւնն ալ խիստ ծաղկած :

ՄԾԻՍԻԹԱ (12,000) Արաստանի հին մայրաքա-
ղաքն է, մեծ մասը աւերակ . ասոր քովերը պաղ-
լեղի ու երկաթի հանքեր կան :

ՇԱՄԼՈՒ (6,300) հին ու անուանի քաղաք է :

ՊԱՔՈՒ (9,000) Կասպից ծովուն բանուկ նա-
ւահանգիստն է . ասոր քովերը նաւթի ջրհորներն
ու տղմային հրաբուխներ կան . կրակաատուն մըն
ալ կայ հին ատենէն մնացած, ուր ինչուան հիմա
կրակապաշտներ կան :

ԳԱՆՉԱԿ կամ ԵՆՍՍԱԿԹՅՈՒ (12,000) հին ա-
տենն Աղուանից թաղաւորութեան մայրաքաղաքն

էր, հիմա ընկած է. քովերը շատ աւերակներ կան :

ԱՆԼՅԻՍ (13,000) ամուր քաղաք է, աղէկ վաճառականութիւն ունի. անուանի է սուլդան Ահմէտի մզկիթը՝ Այասոֆեային ձևովը շինած :

ԽՈՒԹԱՏԻՍ (3,900) ատենով Իմերէթի թագաւորներուն մայրաքաղաքն էր, հիմա մեծ մասն աւերակ է :

ԿԻՒՄՐԻ կամ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՊՈԼԻՍ (12,000) Արմաշային վրայ նոր ու ամուր քաղաք է :

ՌԷՏՈՒԴԳԱԼԷ. ՍՈՒՈՒՄԳԱԼԷ. ԱՆՅԵՅ. բանուկ նաւահանդիստներ են Սև ծովուն վրայ :

Աս տեղուանքս և ներսերը Տաղստանին մէջ կը բնակին Ապաղա, Չէրքէզ, Աղկի, Մնկուէլ և ուրիշ Կովկասային աղգեր :

Տաղստանին ուրիշ երևելի տեղուանքն ասոնք են. Գարբանդ կամ Գուան Ճորայ, Մոլտոր, Աղար, Գարբու, և Սզաւրաբու :

Հայաստանին ալ մէկ մասը Ռուսաց ձեռքն է :

Տ Ա Ճ Կ Ա Ս Տ Ա Ն Ա Ս Ի Ո Յ

123

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Ա Ս Ի Ո Յ Տ ա ճ կ ա ս տ ա ն ի ն մ է ջ ա տ է ն ո վ ա յ լ և ա յ լ մ է ծ ա զ գ եր կ ը ա ի ր է յ ի ն . ի ն չ ա լ է ս Բ ա ք ե լ ա ց ի ք , Ա ս ր ե ս տ ա ն յ ի ք , Հ ա յ եր ն ու Հ ու ո մ ն էր ը : Ե օ թ ն էր որ դ դ ա ր ու ն մ է ջ Ա ր ա ք ա յ ի ք ղ օ ղ ա ց ա ն . 1300 ի ն ա լ Օ ս մ ա ն յ ի ք ս կ ս ա ն մ է ծ ն ա լ , որ կ ա մ ա ց կ ա մ ա ց Ա ս ի ո յ մ է ծ մ ա ս ի ն ա ի ր է յ ի ն :

124

Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ի Բ Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Ա ս ի ո յ Տ ա ճ կ ա ս տ ա ն ի ն ս ա հ մ ա ն ը հ իւ ս ի ս է ն Ս և ծ ո լ լ ու Կ ո լ կ ա ս ու եր կ ի ր ն էր ն է ն , ա ր և է լ ք է ն Ա ս ի ո յ Ռ ու ս ա ս տ ա ն ն ու Պ ա ր ս կ ա ս տ ա ն ը , հ ա ր աւ է ն Ա ր ա ք ի ա ն , ա ր և մ ու ս ք է ն Մ ի ջ եր կ ր ա հ ա ն ծ ո լ լ և Ա ր ջ ի պ ե ղ ա գ ո ս ը :

Տ ա ր ա ծ ու թ իւ ն է 556,000 ք ա ու ա կ ու ս ի մ ղ ս ն :

Ա ս ի ո յ Տ ա ճ կ ա ս տ ա ն ը ե օ թ ը զ լ կ ա աւ ո ղ մ ա ս կ ը ք ա ժ ն ու լ ի . Փ ո ղ ք ր Ա ս ի ա կ ա մ Ա ն ա ս ո ղ ու , Հ ա յ ա ս .

տանին մէկ կտորը * , Քիւրախատան , Միջագետք , Ասորիք , Իրագ Արապի , և Աղղիները :

Օղը բարեխառն ու շատ առողջ է , անանկ որ ամէն տեսակ արմախք ու պտուղ կը հասցընէ • բայց հողը քիչ մշակած :

Երկրին բերքն է ամէն տեսակ հանք , աղնիւ պտուղներ , մետաքս ու բամբակ :

Բնակիչը 15,600,000 • տաճիկ , հոռոմ , հայ , հրեայ , ասորի , քաղղէացի :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

125

ՓՈՒՔԻ ԱՍԻԱ

ԿՈՒՏԻՆՍ Կամ ՔԵՕԹԱՀԵՍ (70,000) դիրքը խիստ աղուոր է • քովերն ալ հանքային ջրեր ունի :

ԳԱՐԱՀԻՍՍԱՐ (50,000) ասոր քովերէն շատ ափսոն կ'ելէ :

ՊՐՈՒՍՍ (100,000) Ողիմպոս լեռան տակը , Օսմանցւոց առաջին մայրաքաղաքն էր ինչուան 1360 • շատ ջերմուկներ ունի , և մէկ քանի մեծագործ մզկիթներ :

ՆԻԿՈՄԻԴԻՍ Կամ ԻՋՆԻՄԻՏ } ատենով շատ ափսոնի քաղաքներ էին , հիմա ընկած են :

ՉՄԻՒՌՆԻՍ Կամ ԻՋՄԻՐ (130,000) Տաճկաստան

* Հայաստանին ան կտորն որ Օսմանցւոց ձեռքն է , տես երես 120 :

աանի ամենէն վաճառաշահ քաղաքն է . Եւրոպա-
ցիք հոս շատ աղատութիւններ ունին :

ՄԱԳՆԵՍԻԱ կամ ՄԱՂՆԻՍԱ (40,000) ասոր
քրքումը շատ աղիւ է :

ԱՅԱՍՈՒՂՈՒԳ . հին Եփեսոսի աւերակներուն
քովը պղտի գեղ մըն է :

ԿԻՒՋԻԼՏԻՍԱՐ (30,000) բամաղակն անուանի է :

ԻՎՈՆԻՈՆ կամ ԳՈՆԵՍ (30,000) ատենով ՍԵԼ-
Ճուգեանց մայրաքաղաքն էր . հիմա ալ վաճառա-
շահ քաղաք է :

Իկոնիոնի քովերն անուանի են Տարէնաէ , Ագ-
շէհիր , և Բուզլա՝ որ աղի լիճ է :

ԵՒԴՈՎԻԱ կամ ԹՈՒՐԱԴ (100,000) գեղեցիկ ու
վաճառաշահ քաղաք է , պղնձեղէնն անուանի .
ունի նաև բամաղակն ու մետաքսէ բանուածք և ա-
ղէկ կապերա :

ՍԵՐԱՍՏԻԱ կամ ՍԸՎԱԶ (25,000) հին ու ա-
նուանի քաղաք է . քովերը պղնձի հանք կայ : Հոս
ծնաւ Միսիթար աբբահայրը 1676ին :

ԱՄԱՍԻԱ (25,000) վաճառաշահ քաղաք է . հոս
ծնած է Սարաբոն յոյն աշխարհագիրը :

ԿԵՍԱՐԻԱ կամ ԳԱՅՍԷՐԻ (25,000) մեծ ու վա-
ճառաշահ քաղաք է . քովերը հին շէնքերու աւե-
րակներ կան :

ՏՐԱԳԻՉՈՆ (50,000) Սև ծովուն վայ վաճա-
ռաշահ ու անուանի քաղաք է . 200 տարիի չափ
Յունաց կայսերաց մէկ ճիւղը հոս կը թաղաւորէր
ինչուան Կոստանդնուպոլսին Օսմանցւոց ձեռքն
իյնալը :

ԿԻՒՄԻՒՇԵԱՆԷ . կաղարի , պղնձի ու արծաթի
հանք ունի :

ԱՆՎԻՐԵՅ Կամ ԷՆՎԻՐԵՒԻ (40,000) անուանի է ասոր շալին ու սոֆը, և այժերուն բուրդը՝ ող երկայն ու մետաքսի պէս բարակ է, նոյնպէս երկայն մաղերով են աս տեղի կատուներն ու ճագարները :

Փոքր Ասիոյ մէկալ երևելի տեղուանքն են Իւսկիւտար, Սինոպ, Պօլու, Մարսուան, Գասգէմունի, Բունար պաշը՝ որ հին Տրոյիոյ տեղը կը կարծուի, Ատանա, Սադաշա, Սելեկիա կամ Սէլէֆքէ, Բայաս :

ՏԱՐՍՈՆ Կամ ԳԱՐՍՈՒՍ (30,000) Կիլիկիոյ ամենէն մեծ քաղաքն էր, և աստե՛նով արուեստը, ուսմունքը և վաճառականութիւնը շատ ծաղկած :

ՍԻՍ - մեր Ռուբինեանց Թաղաւորութեան մայրաքաղաքն էր :

126

ԲԻՒՐՏԻՍՏԱՆ

Բիւրտիստանին գլխաւոր տեղուանքն են Բաղէշ կամ Պիթլիզ, Ճէզիրէ, Ամասիա, Ճուլամերի, և Գարաճուլան :

127

ՄԻՋԱԳԵՏԻ Կամ ԷԼՃԵՉԻՐԷ

ԷՒԵՍԻԱ կամ ՈՒՐԷՅ (50,000) մեր Աբգար Թաղաւորին շինած քաղաքն է, հիմա ալ ճարտար ու վաճառաշահ :

ՄԷՐՏԻՆ (20,000) լեռան վրայ շինած մեծ ու ամուր քաղաք է :

ՀՈՌԾԿԼՅՅ կամ ՐՈՒԾՂՅԼՅ • հոս է սուրբ Ներսէս Ընորհալուոյն գերեզմանը :

ՄԾԲԻՆ կամ ՆԻՍԻՊԻՆ • մեծ ուխտատեղի է հոս սուրբ Յակոբայ գերեզմանը :

ՄՈՒՍՈՒԼ (60,600) Տիգրիս գետին վրայ վաճառաչահ քաղաք է • անուանի են ասոր բամպակէ լաթերը :

ԿՈՒՆԻՍ • հին Նինուէ քաղաքին տեղը գեղ մըն է :

ԱԼՔՈՇ • անուանի լեռ մըն է՝ քովերը շատ գեղերով • մօտերն են Եզիատի ըսուած բարբարոս ու անկրօն մարդիկը :

ՄԱՏԻՆ • Օսմանցւոց տէրութեան ամենէն առատ սղինձի հանքն է :

128

Ա Ս Ո Ր Ի Ք

ԲԵՐԻՍ կամ ՀՅԼԷՊ (150,000) աս քաղաքը Կոստանդնուպոլսէն ու Եզիպատոսէն ետքը տերութեան մեծ , բազմամարդ ու հարուստ քաղաքներէն մէկն է :

ՀԱՄԱ (50,000) վաճառաչահ ու բարեբեր քաղաք է :

ԱՆՏԻՈՔ կամ ԱՆԻՅՔԻՍ (10,000) ատենով Սելևկիացւոց մայրաքաղաքն էր • հիմա անուանի են ջերմուկները :

ՏՐԱՊՈԼԻՍ կամ ԴԱՐՅՊԼՈՒՍ (16,000) Ասորւոց երկրին մէջ գեղեցիկ ու բանուկ քաղաք է :

ԱՔԵՍ (20,000) վաճառաչահ ու անուանի քա

ղաք է . մեծագործ է հասարակաց բաղնիքը : Ասոր մօտ է Կարմելոս լեռը :

ԴԱՄԱՍՍՈՍ կամ ԸՅԾ (140,000) աշխարհիս հին քաղաքներէն մէկն է , շատ բարեբեր , բաւական ճարտար ու վաճառաշահ :

ԼՄԵՍՍ կամ ՀԷԾՍ (20,000) ճարտար ու բարեբեր քաղաք է : Ասոր քովերն են Պալմիրա քաղաքին աւերակները :

Երևելի են նաև Իսքէնտերուն , Անթապ , Պաալպէք՝ որ հին Հեղիուպոլիս քաղաքին տեղն է . Պէրուժ , Լաւոդիկէ կամ Լադաքեա , Սուր ու Սէյտա՝ որ Տիւրոս ու Սիդոն քաղաքներուն տեղը պզտի գեղեր են : — Պէրուժին մօտ է Լիբանանու լեռը , ուր է մեր ազգէն Անտոնեան կրօնաւորներուն վանքը՝ որ հիմնեց Աբրահամ կաթողիկոսը 1730ին :

Պաղեստինու կամ հին Հրէաստանին մէջ ալ գլխաւոր տեղուանքն ասոնք են :

ԵՐՈՒՍՏՆԷՍ (30,000) աշխարհիս ամենէն հրօշակաւոր քաղաքը , և ամենայն քրիստոնէից մեծ ուխտատեղին է . հիմա բոլորովին ընկած է առջի մեծութենէն :

Երուսաղէմի քովերն են բոլոր Քրիստոսի անօրինական տեղերը , որ հին ատենը մէյմէկ քաղաք կամ գեղ էին , բայց հիմա կամ գեղ դարձեր են , կամ անուանին միայն մնացեր է . ասանկ են Բեթղէհէմ , Նապլուսա կամ Սիւքէմ , Երեքով , Յոպպէ կամ Եաֆա , Գալիլ , Գաղա , Կեսարիա Պաղեստինոյ , Սեբաստիա՝ հին Սամարիային տեղը , Սաֆէտ , Նազարէթ , Կանա , Տիրերիա , Կափառնաոււմ , Բեթանիա , Թաբոր լեռը , Չիթենեաց լեռը , և այլն :

129

ԻՐԱԳ ԱՐԱՊԻ

ՊԱՂՏԱՏ (100,000) Տիգրիս գետին վրայ ամուր
ու վաճառաչահ քաղաք է : Ասոր քովերն են հին
ատենի հաշակաւոր քաղաքներուն աւերակները ,
ինչպէս Բաբելոն , Սելևկիա , Տիգրան , և հին Պաղ-
տատ :

ՊԱՍՐԱ (60,000) ամուր ու վաճառաչահ քա-
ղաք է : Քովերն անուանի են նաև հիլէ , և Մէշ-
հէա հիւսէյին :

130

Կ Ղ Ջ Ի Ն Ե Ր Ը

ԿԻՊՐՈՍ կամ ԳՐՊՐԸՁ . Միջերկրական ծովին
մեծ կղզիներէն մէկն է . անուանի է գինին , բամ-
պակը , և ուրիշ բերքերը : Մէջն գլխաւոր քաղաքն
է Նիկոսիա կամ Լէֆքոշեա (16,000) :

ՀՌՈՂՈՍ կամ ՌՈՏՈՍ (25,000) հին ատենը շատ
անուանի էր :

ՄԱՐՄԱՐԱ . ասոր մարմարիոնն աւատ է :

ԼԵՍԲՈՍ կամ ՄԻՏԻԼԼԻ (50,000) գլխաւոր քա-
ղաքն է Գասդրոյ (8,000) :

ՔԻՈՍ կամ ՍԱԳԸՁ (15,000) ինչուան 1822 ա-
ղէկ ծաղկած , բազմամարդ ու բարեբեր էր . ան-
կէց ետքը շատ ինկած է :

ՍԱՄՈՍ կամ ՍՈՒՍԱՄ ԱՏԱՍԸ , շատ բարեբեր է :

Հ Ա Յ Ս Ս Տ Ա Ն

131

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ք Ր Հ Ե Ղ Ե Ղ Ե Ն Ե աքքը աշխարհիս ամենէն ծաղկած մասը Հայաստանն էր՝ Նոյի տապանը հոն Մասիս լեռան վրայ իջնուլուն համար: Հայաստանի առաջին տիրողը Հայկ նահապետն եղաւ, որ Նոյի թոռան թոռն էր. իր անունովը մեր ազգն ալ Հայ ըսուեցաւ, և իր ցեղին թագաւորութիւնը որ Հայկազանց իշխանութիւն կ'ըսուէր՝ քչեց 1779 տարի: Բրիտանուէ 149 տարի առաջ սկսաւ Աբախանեայ ցեղին փառաւոր թագաւորութիւնը, որ քչեց 580 տարի. 885ին ելաւ Բագրատունեայ թագաւորութիւնը, որ 1079ին վերցուեցաւ. անկէց ետքը Հայաստանի մեծ մասը օտար տէրութեանց ձեռքն ընկաւ. միայն Արշակիոյ կողմը Ռաբիսեանց թագաւորութիւնը մնացեր էր, բայց 1375ին ան ալ վերցուեցաւ, ազգերնիս ալ օտար ազգաց բռնութիւններէն ցիր ու ցան եղաւ: Իսկ հիմա Հայաստանի մէկ մասը Օսմանցւոց ձեռքն է, մէկը Ռուսաց, մէկալն ալ Պարսից:

Մեր ազգը իր ցրուած վիճակին մէջ ալ միշտ

անուանի եղած է արթուն ու հաւատարիմ վա-
ճառականութեանը համար . անանկ որ Գաղղիա-
ցիք , Իտալացիք և Ռուսները իրենց երկրին վա-
ճառականութիւնը ծաղկեցրնելու համար՝ ասե-
նով մեծամեծ ազատութիւններ տուեր են Հայոց
ու իրենց մայրաքաղաքները կանչեր են :

Ուսումնասիրութեան կողմանէ ինչպէս հին ա-
տենը , ասանկ ալ հիմա , արևելեան ազգերուն
գլխաւորներէն մէկն է մեր ազգը : Ասոր մեծ նշանն
ալ բարեկարգ դպրոցներու և տպարաններու շատ-
նալն է :

Հիմակուան դպրոցներուն մեծերն են՝ Տաճկաս-
տանի մէջ Պոլսոյ Իզմիրի դպրոցները . Իտալիոյ
մէջ՝ Ռաֆայէլեան վարժարանը . Գաղղիոյ մէջ,
այսինքն Բարիզ՝ Մուրատեան վարժարանը . Ռու-
սաստանի մէջ՝ Լազարեանց ճեմարանը . Հնդկաս-
տանի մէջ՝ Կալկադայի դպրոցը , և այլն :

Բանուկ տպարաններուն մէջ անուանի են Աե-
նեակոյ և Աեննայի Մխիթարեանց տպարանները .
Տաճկաստանի մէջ Իզմիրի , Պոլսի տպարանները .
Ռուսաստանի մէջ Բեդրալուրիի , Մոսքուայի , Աժ-
տերխանու , Էջմիածնայ , Թիֆլիզու և Շուշիի
տպարանները . Հնդկաստանի մէջ ալ Կալկադայի
տպարանը :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Հայաստանի սահմանը հիւսիսէն Սև ծովն ու
Արաստանն է , արևելքէն Կասպից ծովն ու Պարս-
կաստան , հարաւէն Միջագետք , արևմուտքէն
փոքր Ասիա ու Միջերկրական ծովը :

Տարածութիւնն է 120,000 քառակուսի մղոն :
Երկիրն ընդհանրապէս լեռնոտ ու բարեբեր է :
Գլխաւոր գետերն ասոնք են .

Եփրատ ու Տիգրիս , որ Պարսից ծոցը կը թափին .
Երասխ ու Կուր՝ Կասպից ծովը .

Ճորոխ , Ալիս , Եջիլ ըրմադ՝ Սև ծովը :

Գլխաւոր լեռներն են . Մասիս կամ Արարատ ,
Պինկէօլ , Տորոս , Կորդուայ լեռներն ու Գրգուռ
լեռները :

Գլխաւոր լճերն են . Վանայ ծովը , Սևանայ ծո-
վը , Որմեայ ծովակը :

Բերքն է ամէն տեսակ հանք՝ որ երեսէ ձգած
են , և տեսակ տեսակ աղնիւ սպտուղներ ու արմը-
տիք . անուանի է ձին ու գաղպէն՝ որ մանանայի
պէս ծառերուն վրայ կ'իջնայ :

Օդը բարեխառն ու առողջարար է :

Բնակիչը գրեթէ 5,000,000, և ըստ ոմանց՝ շատ
աւելի . որոնց մէկ մասն ալ քիւրա , թիւրքմէն ու
տաճիկ են :

Հիմա Հայաստանի մէջ միայն ապրուստի հար-
կաւոր արուեստները մնացած են , բայց երկրա-
գործութիւնը շատ ծաղկած է :

Հին ատենը 15 նահանգ կը բաժնուէր . իսկ հի-
մա իրէք տիրող տէրութիւնները իրենց ուղածին
պէս այլևայլ գաւառներ բաժներ են :

ԳԻՒԽԱԻՈՐ ԲԱՂԱԲՆԵՐԸ

133

ՕՍԾԱՆՅՒՈՅ ՄԱՍԻՆ ՄԷՁ

ԿԱՐԻՆ կամ ԷՐԶՒՐԻՒՄ (100,000) Ասիոյ վաճառաշահ քաղաքներէն մէկն է . շատ հնուածիւններ ալ ունի : Ասոր մօտ է Բիւրակն կամ Պինկէօլ լեռը , ուսկից կը բխին Եփրատ ու Տիգրիս գետերը . և անանկ ծաղկաւէտ ու բարեբեր է , որ օտարազգի ճամբորդներ ալ կը մկայեն թէ Ադամայ դրախտին տեղը հոս եղած պիտի ըլլայ :

ՀԱՍԱՆ ՂՅԼԱ . ամուր քաղաք : ասոր քովն է Գրիգոր Մագիսարոսին շինած վանքը , ուր իրեն գերեզմանն ալ կայ : Մօտերն է Զօղան +էօ՛րի-սի-րսուած կամուրջը՝ Երասխին վրայ եօթը կամարով , և հին Աղարշաւան քաղաքին աւերակները :

ԵՐԶՆԿԱ . հոս չարչարուեցաւ մեր սուրբ Գրիգոր Լուսաւորիչը :

ԽԱՐԲԵՐԴ . ամուր քաղաք , ասկէց օրուան մը ճամբով հեռու երկաթի ու արծաթի հանք կայ :

ԱԿԼ գեղին մէջ եկեղեցի մը կայ մէկ քարէ փորուած :

ՍԱՍՈՒՆ գաւառը լեռներու մէջ ինքնազուխ երկիր մըն է :

ԲԱՂԷՇ կամ ՊԻԹԼԻՁ (30,000) ոսկիի ու արծաթի հանք ունի : Քովն է Գրգուռ լեռը , որ Նեբրովկայ լեռ ալ կ'ըսուի՝ Նեբրովկին հոս թաղուած ըլլալուն համար :

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ կամ ՏԻԱՐՊԵՔԻՐ (60,000) լայն
ու ամուր պարիսպ ունի 72 աշտարակով, և շատ
հնու թիւններ :

ԱՐՃԷՇ (7,000) ասոր քովն է Մեծուխայ
վանքը :

Ս՝ՈՒՇ (40,000) ամուր բերդով մեծ քաղաք է .
ասոր քովի վանքերէն մէկուն մէջ Թարդամանչայ
շատին գերեզմանները կան : Մօտ է նաև Սուրբ
Կարապետի վանքը՝ որ մեր ազգին մեծ ուխտատե-
ղին է . նաև Եփրատ գետին վեց գրկաչափ լայն
սահանքը :

Մշու քովերն է Ծակքար, որ քարաժայռը ծա-
կած՝ կէս ժամուան ճամբայ է :

ՎԱՆ կամ ՇԱՄԻՐԱՄԱԿԵՐՏ (60,000) ասոր քովն
է Շամիրամին շինած բերդը՝ որուն վրայ խիստ հին
գրուածքներ կան : Վանայ ծովուն մէջ չորս կղզի
կայ . Աղթամար, Աւտէր, Կաուլց, Լխմ : Աղթա-
մարայ մէջն է Գազիկ թագաւորին շինած փառա-
ւոր եկեղեցին :

ՈՍՏԱՆ գեղին մէջ է սրբոյն Եղիշէի վանքն ու
գերեզմանը :

ԿԱՆՁՈՒԱՆ (30,000) պարսպապատ քաղաք է,
մեծ մասն աւերակ :

ՄԱՏԷՆ . պղնձի հանք ունի :

ՊԱՅՆՁԻՏ (15,000) ամուր ու վաճառաշահ քա-
ղաք է :

ՂԱՐՍ . բարձրժայռի վրայ բերդ մը ունի :

ԱՆԻ . Բագրատունեաց մայրաքաղաքը, և աշ-
խարհիա բազմամարդ քաղաքներէն մէկն էր,
հիմա բոլորովին աւերակ է . բայց ուրիշ երևելի
շինուածքներու մնացորդներէն զատ՝ Թագաւորայ

պալատին սրատերն ալ դեռ կեցած է քաղքին մէկ
ծայրը :

ԽՈՇԱՎԱՆՔ • մեծագործ վանք մըն է , ուր կան
մեր Թագաւորներուն գերեզմանները :

ՏԻՅՏԻՆ • սղաթի քաղաք մըն է , որուն քովն է
Ծաղկէոյ լեռը՝ ուր նահատակեցան Ռսկեանք • և
ասկէ կրային ջուր մը կը բխի որ ետքը կը քարա-
նայ :

ԹՈՓՐԱԳԳԱԼԷ • հին Վաղարշապատին աւերակ-
ներուն քովը՝ ամուր բերդով քաղաք մըն է :

ՌՈՒՍԱՅ ՄԱՍԻՆ ՄԷՁ

ԵՐԵՒԱՆ (12,000) ամուր բերդ ունի , և շատ
հնու թիւններ : Երևանին մօտ է Էջմիածնայ վան-
քը , ուր կը նստի Հայոց Վաթուղիկոսը , ու Հռիփ-
սիմեանց և Գայիանեանց եկեղեցիները :

ՕՇԱԿԱՆ գեղին մէջ է սուրբ Մեսրոպայ գե-
րեզմանը :

ՊԱՐՍԻՅ ՄԱՍԻՆ ՄԷՁ

ԴՆԱՎՐԷԺ կամ ԹԷՊՐԻՁ (100,000) Ասիոյ ամե-
նէն ծաղկած ու վաճառաշահ քաղաքներէն մէկն
է • անուանի է մետաքսը և կտաւը :

ԱՐՏԱԻՒԼ. հոս է Շահսէֆի ու Շահաբաս Պար-
սից Թաղաւորներուն գերեզմանները :

ԽՈՅ (20,000) ամուր ու վաճառաշահ քաղաք է :

ՍԱԼՄԱՍ (20,000) Որմեայ լճին քովը մեծ քա-
ղաք է. մօտերը հանքային ջրեր կան :

ՄԱՐԱԶԱ (15,000) ասոր քովերը գետնափոր
տեղուանք կան ժայռի մէջ փորուած :

Ա Ր Ա Բ Ի Ա

136

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐԻՈՅ մէջ հին ատենը այլևայլ բնակիչներ կային վրանաբնակ • Եօթներորդ դարուն մէջ Մէհմէտ ասոնց մեծ մասը միացուց, որ զօրաւոր տէրութիւն մը ձևացան ու քիչ ատենի մէջ տարածուեցան իրենց երկրէն ինչուան Սպանիոյ ծայրը • Բայց Օսմանցիք բոլորովին վերուցին ասոնց տէրութիւնը : Հիմա Արաբիոյ բնակիչներէն ոմանք Ֆէլսահ կ'ըսուին, որ երկրագործութիւն կ'ընեն • ոմանք ալ Պէփէլի, որ վրանաբնակ ու հովիւ են :

137

ԸՆԴՀԱՆՈՒՐ Գ ԻՏԵԼԻՔ

Արաբիոյ սահմանը հիւսիսէն Ասիոյ Տաճկաստանն է, արևելքէն Պարսից ծոցը, հարաւէն Հնդկաց ովկիանոսը, արևմուտքէն Կարմիր ծովը : Տարածութիւնն է 800,000 քառակուսի մղոն :

Երկիրն ընդհանրապէս դաշտային ու աւազուտ է : Արաբիոյ մէջ են երկու անուանի լեռները՝ Սինա ու Քորեք :

Օդը չոր ու խիստ տաք է , մանաւանդ հիւսիսային կողմը . ուր շատ խորշակ ալ կ'ըլլայ , ու անձրև խիստ քիչ կուգայ :

Հողն անբեր է . բայց Եմէն գաւառը սաստիկ պտղաբեր ըլլալուն՝ Երջանի Արաբիա կ'ըսուի :

Գլխաւոր բերքն է խնկեղէն , ձէթ , շաքարի եղէգ , բամբակ , աղնիւ խահուէ , արմաւ , թուղ , բալասան : Անդանիներէն ալ շատ անուանի է ձին , ունի նաև ուղտ , ջայլամ , կապիկ . Վարմիր ծովուն մէջէն աղէկ բուստ (Ռէրճան) կ'ելլէ , Պարսից ծոցէն ալ մարգրիտ :

Բնակիչն է 12,000,000 :

Վրօնքը մահմետական :

Երկիրն մեծ մասը Օսմանեաց ձեռքն է . մէկալ տեղուանքը այլևայլ շէխերու և իմամներու ձեռքով կը կառավարուին :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՄԵՔՔԵ (34,000) Մէհմետին ծնած քաղաքն է . Տաճկաց հաճիները հոս կուգան Քեապէն տեսնելու :

ՄԵՏԻՆԵ (6,000) հոս մեռած է Մէհէմետ , որ Մէքքէէն հոս քաշուեր էր 622ին . անոր համար հիճրէն ըսուած թուականը ան տարիէն կըսկսի :

ՄԱՇԿԱԴ (60,000) Էօմէնի ծոցին վրայ Արա-

բիոյ ամենէն վաճառաշահ քաղաքն է . ասոր քովերը կապարի հանք կայ :

ՃԻՏՏԷ (15,000) Կարմիր ծովուն վրայ Մէքքէի նաւահանգիստը կը սեպուի , և կեդրոն վաճառահանութեան Եգիպտոսի , Հնդկաց և Արաբիոյ :

ՄՈՔԱ (5,000) Կարմիր ծովուն վրայ բանուկ նաւահանգիստ է , ու Եմէնի խահուէն ասոր անունովը Մոքայի խահուէ ալ կ'ըսուի :

ԱՏԷՆ . համանուն գաւառի մը գլխաւոր քաղաքն է Եմէնի մէջ . Արաբիոյ վաճառաշահ նաւահանգիստներէն մէկն է Հնդկաց ծովուն վրայ : Անդրիացիք հոս հաստատուեցան 1838ին :

Կարմիր ծովուն քովերն է Սինա լեռը , որուն վրայ Հոռմի վանք մը կայ՝ սուրբ Կատարինէ ըսուած՝ բերդի նման :

Արաբիոյ ներսի կողմը 60,000 հրեայ կայ վրանաբնակ՝ Ուրտի + Ռե + Բայ ըսուած :

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ



139

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆն ատենով աշխարհիս ամենէն մեծ թագաւորութիւններէն մէկն էր • եօթներորդ դարուն մէջ Արաբացիք առին , ու իրենց հաւատքը Պարսից սորվեցուցին : Քիչ ատենէն Պարսիկները զօրանալով իրենց երկրին մէկ մասը նորէն ձեռք ձգեցին • իսկ 1747ին բոլոր երկիրը երկու տէրութիւն բաժնուեցաւ • այսինքն Իրան կամ բուն Պարսկաստան , և Աֆղանիստան , որուն մէջն է Խորասան ու Պէլուճիստան :

140

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Պարսկաստանի սահմանը հիւսիսէն Ասիոյ Ռուսաստանը , Կասպից ծովն ու Թուրքաստանն է • արևելքէն Աֆղանիստան , Խորասան ու Պէլուճիստան • հարաւէն Իօմէն ու Պարսից ծոցը • արևմուտքէն Ասիոյ Տաճկաստան :

Տարածութիւնն է 340,000 քառակուսի մղոն :
Երկիրը լեռնոտ ու բարեբեր է :
Օդը հիւսիսային կողմը բարեխառն է , հարաւային կողմը տաք :

Գլխաւոր բերքերն են երկաթ , սղինձ , կապար , մարմարիտն , նաւթ , ցորեն , բրինձ , դինի , աղնիւ պտուղներ , կտաւ , կանեփ , մետաքս , բամպակ , բուրդ , ծխախոտ , մեկոն , և մարդարիտ : Ձին ալ անուանի է , ինչպէս նաև ուղտը , ոչխարներն ու ուրիշ կենդանիք :

Բնակիչն է 10,000,000 , մեծ մասը պարսիկ , մնացածը տաճիկ , քիւրա , թիւրքմէն , հրեայ , հայ :

Կրօնքն է մահմետականութիւն՝ Ալլիին աղանդը :
Տէրութեան կառավարութիւնն է ազաա միապետական :

141

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԴԵՀԻՐԱՆ (130,000) Պարսից շահը հոս կը նստի 1794էն ՚ի վեր . ամառուան օդը մնասակար է :

ՊԱԼՅՈՒՌ (230,000) Կասպից ծովուն մօտ , Պարսկաստանի ամենէն վաճառաշահ ու բազմամարդ քաղաքն է :

ԱՍՊԵՀԱՆ (200,000) Պարսից առաջին մայրաքաղաքը , արևելքի մեծ ու աղուոր քաղաքներէն մէկն է : Քոյն է նոր Զուլան՝ որ հին Զուլայէն քրուած հայերուն բնակած տեղն է :

ՇԻՐԱԶ (52,000) ասոր դինին ու վարդի Լողը

շատ աղնիւ է : Աս քաղաքիս մօտ են Ստահր կամ
Պերսեպոլիս քաղաքին աւերակները , որ հին ա-
տեն Պարսկաստանի մայրաքաղաքն էր :

ՀԱՄԱՏԱՆ (45,000) հին Եկբատան քաղաքին
տեղը շինած է • մորթի գործարաններ ունի :

ԳԱԶՊԻՆ (40,000) Պարսկաստանի մեծ քաղաք-
ներուն մէկն է , արուեստները շատ ծաղկած • աղ-
նիւ գինի , պիստակ (Քըսպըզ) , մետաքս ու կարպետ
ունի :

ԵԶՏ (35,000) վաճառաշահ քաղաք է • հոս կրա-
կապաշտ պարսիկներ կան :

ՊԷՆՏԷՐԱՊԱՍԻ (20,000) Պարսկային ծոցին
վրայ բանուկ նաւահանգիստ է :

ԱՅՂԱՆԻՍՏԱՆ

142

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՅՂԱՆՆԵՐԸ հին Ալուանք ազգն են, որ Թաթարները հայաստանէն հոս քշեր ու տաճկըցոցեր են: Ասոնք առենով Պարսից տակն էին, բայց 1747ին ինքնազուխ աէրութիւն ունեցան:

143

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Աֆղանիստանի սահմանը հիւսիսէն Պարսկաստանն է, արևելքէն Հնդկաստան, հարաւէն Հընդկաց ծովը, արևմուտքէն Պարսկային ծոցը:

Տարածութիւնն է 200,000 քառակուսի մղոն:

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է, բայց արևելեան կողմը աւազուտ:

Գլխաւոր լեռներն են Հիմալայա ըսուած բարձր քօտիները:

Հողը շատ բարեբեր է, և օդն աւտոջ:

Բերքն է ամէն տեսակ ստուղ ու կենդանի ու

նի նաև առիւծ, վագր, ընձառիւծ, բորենի, գայլ
և արջ:

Բնակիչն է 10,000,000, աֆղան, պարսիկ,
հնդիկ:

Կրօնքը մահմէտական:

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՔՆԱՊՒԼ կամ ՔԱՊՈՒԼ (80,000) գլխաւոր վա-
ճառքն է աղէկ ձի:

ՔԱՆՏԱՀԱՐ (100,000) ամուր բերդով բոլոր
երկրին հին մայրաքաղաքն է:

ՀԻՐԱԴ (100,000) խորասանի ամենէն մեծ քա-
ղաքն է:

ՔԵԼԱԴ (20,000) Պէլուճիստանի գլխաւոր քա-
ղաքն է:

ԹՈՒՐԻՔԱՍՏԱՆ

145

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐԻՔԱՍՏԱՆԻՆ յէջ ատենով այլևայլ ազատ
 ցեղեր կը տիրէին . ասոնցմէ ելան ատեն ատեն Օս-
 մանցիք , Հոնք , Թաթարները , և Ղէնկթխուրը՝
 որ մէկգիէն ինչուան Չինու պարիսպը , մէկալ գիէն
 ինչուան Միջերկրական ծովը տիրեց : Հիմակուան
 բնակիչներն են Իւզպէք , Պուխարայի , Թիւրք-
 մէն , և Խըրղըզ :

146

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Թուրքաստանի սահմանը հիւսիսէն Ասիոյ Ռու-
 սաստանն է , արևելքէն Չինու երկիրը , հարաւէն
 Պարսկաստանը , արևմուտքէն Վասպից ծովը :

Տարածութիւնն է 500,000 քառակուսի մղոն :

Թուրքաստան չորս գլխաւոր մաս կը բաժնուի .
 Խըրղըզ , Խիվա , Պուխարա , Խոքանա :

Երկիրը լեռնոտ ու խիստ բարեբեր է, բայց քիչ մշակած․ աղի լճեր ալ շատ ունի :

Օդը բարեխառն ու առողջարար է :

Գլխաւոր բերքն է ոսկի, արծաթ, յակինթ, մետաքս ու բամպակն ալ աղնիւ է :

Բնակիչն է 7,000,000 :

Կրօնքը մահմէտականն է :

Կառավարութիւնը չորս գլխաւոր աղատ խաներու ձեռքն է :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱԿՆԵՐԸ

ՊՈՒՍԲԱ (100,000) հին ու վաճառաշահ, թուրքաստանին ամենէն ծաղկած քաղաքն է :

ՍԵԸՐԱՆՏ (10,000) վաճառաշահ քաղաք է․ Լէնկթիմուրն իր աթոռը հոս դրեր էր, և ինչուան հիմա մէջը իր գերեզմանը կայ յասպիս քարէ :

ԽԻՎԱ (20,000) ասիկայ գերիներու վաճառք ունի :

ԽՈՔԱՆՏ (100,000) վաճառաշահ ու արուեստները ծաղկած քաղաք է :

ԲԱՀԼ կամ ՊԱԼՍ (2,000) հին ատենը Բակարիոյ թագաւորութեան մայրաքաղաքն էր, ուստի Ասիոյ ամենէն հին քաղաքներէն մէկն է :

Հ Ն Դ Կ Ա Ս Տ Ա Ն

148

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Հ Ն Դ Կ Ա Ս Տ Ա Ն Ի մէջ հին ատենը այլևայլ ինքնապշուխ տերութիւններ կային • 1100ին ատենները Աֆղանները տիրեցին հիւսիսային կողմերուն , ետքը Լէնկթիմուրը • ասոր թուներէն մէկը 1526ին Մողոլի տերութիւնը հաստատեց հոն • բայց 1739ին Պարսից Նաաըր շահը գնաց մէկ մասին տիրեց : Անկէ ետքը երբոր Մողոլներն ու Մահրադները իրարու դէմ կռուրտելու հետ էին , Եւրոպացիք սկսան տեղ տեղ ոտքերնին հաստատել : Իսկ 1700ին վերջերը անգղիացի վաճառականներն սկսան Հնդկաստանին Վալիադա ու Մատրաս քաղաքներուն տիրել • 1803ին Մողոլի տերութիւնը ջնջեցին , Մահրադները նուաճեցին • 1812ին ալ գրեթէ բոլոր արևելեան Հնդկաստանի տիրեցին : Անոր համար աս ընկերութիւնն որ Հնդկաստանի ընկերութիւն կ'ըսուէր , ինչուան մօտ տարիներս ինքնապշուխ հասարակապետութեան պէս կը տիրէր հոն անբաւ հարստութեամբ • միայն հարկատու էր Անգլ.

ղիոյ թագաւորին, ու երբեմն երբեմն համար կու-
տար երկրին կառավարութեանը վրայ: Բայց վեր-
ջերս այս ընկերութեան իշխանութիւնն անցաւ
բոլորովին Անգղիոյ թագաւորին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Հնդկաստանի սահմանը հիւսիսէն Չինու երկիրն
է, արևելքէն Չինու ծովը, հարաւէն Հնդկաց ու-
կիանոսը, արևմուտքէն Աֆղանիստանը:

Տարածութիւնն է գրեթէ 1,000,000 քառակու-
սի մղոն:

Հնդկաստան երկու գլխաւոր մաս կը բաժնուի.
մէյսը բուն Հնդկաստան կամ Գանգէսէն ասդիս
եղած երկիրները, մէյսըն ալ Հնդկա-Չին կամ
Գանգէսէն անդին եղածները:

Գլխաւոր լեռներն են Հիմալայա ըսուած բարձր
գօտիները, որոնց վրայ Տալալակիրի լեռը աշխար-
հիս ամենէն բարձր լեռն է. Կադ լեռները՝ որ ին-
չուան Գոմորին կ'երթան, և Մոկ լեռները որ ին-
չուան Մալագդային ծայրը կը հասնին:

Գլխաւոր գետերն են Ինդոս, Գանգէս, և Պրահ-
մաբուգրա:

Հողն ընդհանրապէս խիստ բարեբեր է:

Օգը չոր ու տաք. ձիւն գրեթէ ոչ երբեք կու-
գայ, անձրևներն ալ կանոնաւոր ժամանակ ունին,
որ ամիսներով կուգան:

Գլխաւոր բերքերն են առատ ոսկի և ադամանդ՝
Կոլգոնա գաւառին ու Պրոմանի տէրութեան մէջ:

Սէյլան կղզիին քովերէն աղնիւ մարգարիտ կ'ելլէ .
Մալաիլեան կղզիներուն քովերէն ալ տեսակ մը
ոսարէ կ'ելլէ որ Հնդկաստանցիք ստակի տեղ կը
բանեցրնեն : Բոյսերուն մէջ գլխաւորներն են բը-
րինձ , սլանան , շաքար , խնկեղէն , ափիոն , աղնիւ
բամպակ ու մետաքս , արմաւ , սլամպու ըսուած
եղէգը , թուղ , և աղնիւ փայտ : Աենդանիներէն
ալ շատ կը գտուին ուղտ , վայրի այծ , փիղ , ուն-
դեղջիւր , վագր , առիւծ , սլօա օձ , կապիկ , սիրա-
մարգ , և դրախտահաւ :

Բնակիչն է 200,000,000 , մեծ մասը Հնդիկ , մնա-
ցածը սլարսիկ , հրեայ , հայ ու եւրոպացի ազգեր :

Աեզունին Հնդկերէն , որուն գրաբար սանսքրիտ
կ'ըսուի , իսկ աշխարհաբար շատ տեսակ կը բաժ-
նուի :

Արուեստներն ու ձեռագործները շատ ծաղ-
կած են :

Արօնքը կուսալաշտութիւն է՝ Պրահմայի աղան-
դը . հոգեփոխութեան կը հաւտան , անոր համար
կենդանեաց սլատիւ կ'ընեն , ու անոնց միւսը չեն
ուտեր . մասնաւոր կերպով կով կը սլաշտեն իրենց
Քախպ ըսուած կուստուններուն մէջ :

ՀՆԴԿԱՍՏԱՆ ԳԱՆԳԷՍԻՆ ԱՍԴԻՍ

Գանդէսէն ասդիս եղած երկիրները չորս կաոր
կը բաժնուին . Անդղիացւոց Հնդկաստան , Անդ-
ղիացւոց հարկատու երկիրներ , Աղատ Հնդկաց
երկիրներ , ու Եւրոպայի այլեայլ ազգաց տե-
ղուանք :

ԱՆԳՂԻԱՅԻՈՅ ՀՆԴԿԱՍՏԱՆ

ԿԱԼՎԱԴԱ (1,000,000) Հնդկաստանի ամենէն ծաղկած քաղաքն է՝ թէ՛ դիտուածեան և թէ՛ արուեստից կողմանէ : Անդղիական կառավարութեան գլուխը հոս կը նստի • մեր ազգէն ալ չափաւոր բազմութիւն կայ :

ՏԸԼԷԻ (200,000) Մողոլի թագաւորութեան մայրաքաղաքն էր :

ԱԿՐԱ (100,000) ատենով զարգարուն քաղաք էր , բայց հիմա երեսէ ձգուած է :

ՊԷՆԱՐԷՍ (600,000) Գանգէսին վրայ Հնդկաստանցւոց ուսումնարանն ու մեծ ուխտատեղին է :

ՄՈՒՐՇԻՏԱՊԱՏ (146,000) շատ վաճառաշահ քաղաք :

ՏԱՐԲԱ (200,000) Գանգէսին վրայ ծաղկած քաղաք է :

ՔԱԴԴԱԲ (40,000) աս քաղաքիս մօտ է ճակրոնադ կուռքին մեծ կռատունը :

ԳԱԼԻԳՈՒԴ (24,000) Եւրոպացիք Հնդկաստանին մէջ առաջ աս քաղաքս ունեցան :

ՄԱՏՐԱՍ (502,000) Պէնկալայի ծոցին վրայ շատ վաճառաշահ քաղաք է • բամբակի ու ապակիի գործարաններ ունի • մեր ազգէն ալ երեւելի վաճառականներ ու ժողովուրդ կայ հոս , ինչպէս նաև Հնդկաստանի ուրիշ քաղաքները :

ՍԷՐԵՆԿԱԲԱԴԱՆ (32,000) ատենով Հնդկաստանցւոց մեծ ցեղի մը մայրաքաղաքն էր :

ՊՈՄՊԱՅԻ (253,000) պղտի կղզիի մը մէջ Անգլիացւոց վաճառականութեանը գլխաւոր քաղաքն է. հոս կրակապաշտ Պարսիկներ կան որ մեծ կրակատուն ալ ունին :

ԱՃՄԻՐ (25,000) ամուր քաղաք է . բնակիչները երկրագործութենէն զատ ուրիշ արուեստ չեն գիտեր :

ԳԱՄՊԱՅԱ (30,000) վաճառաշահ քաղաք է , բայց նաւահանգիստը շատ վտանգաւոր՝ ծանծաղուտ ըլլալուն համար :

ԱՀՄԷՏԱՊԱՏ (100,000) ատենով ծաղկած էր , հիմա կէսն աւերակ է :

ՍՈՒՐԱԴ (160,000) ամուր քաղաք է , և բանուկ ու վաճառաշահ նաւահանգիստ ունի :

ԲՈՒՆԱ (150,000) Հնդկաստանցւոց թագաւորութեան ետքի մայրաքաղաքն էր :

ՍԷՅԼԱՆ (1,500,000) կղզին ալ Անգլիացւոց ձեռքն է . գլխաւոր քաղաքն է Գոլումպոյ (40,000) :

ԱՆԳՂԻԱՅԻՈՅ ՀԱՐԿԱՏՈՒ

ԵՐԿԻՐՆԵՐ

ԼՈՒՔՆՈՎ (300,000) Մողոլի տէրութեան վերջուելէն ետքը Հնդկաստանին ծաղկած քաղաքն առ է :

ՈՒՃԵՆ (160,000) ուխտատեղի է Հնդկաց՝ բաղմաթիւ բակտաներուն համար :

ՀԱՅՏԷՐԱՊԱՏ (200,000) մեծ ու անուանի քաղաք է :

ԿՈՂԳՈՆՏ • ամրոց և երբեմն մայրաքաղաք համանուն տէրութեան • ադամանդի մեծ վաճառահանութիւն ունի :

ԱՐԷՆԿԱՊԱՏ (60,000) մեծ քաղաք է, բայց կէսը աւերակ :

ՊԵՃԱՐՈՒՐ • երբեմն անուանի քաղաք էր միլիոն մը բնակչօք, հիմա կիսաւեր է :

ՄԱՅՍՈՒՐ (50,000) համանուն տէրութեան մայրաքաղաքն է :

ԳՈՉԻՆ (30,000) Մալապարի ափանցը վրայ նաւահանգիստ :

ԿԱԿՐՈՒՐ (115,000) | ասոնք ալ մէյմէկ թաղա-
ՊԱՐՈՏԱ (100,000) | ւորութիւններու մայրաքաղաքներ են :

ԼԱԳԵՏՎԵՆ կղզիներն ալ Անգղիացւոց պաշտպանութեան տակն են, թէպէտ և տեղացի իշխան մը կը տիրէ հոն :

133

ԱԶԱՏ ՀԵՒԿԱՅ ԵՐԿԻՐՆԵՐ

ԼԱՀՈՒ (100,000) ատենով շատ անուանի էր • ասոր ոչխարներուն բուրդը բարակ ու աղնիւ է :

ՓԷՇԱԻԷՐ (70,000) ունի գործարան բամպակի, մետաքսի և պաշտաւ արքունի :

ԱՄՐԵԴՍԻՐ (100,000) ամուր ու վաճառաշահ քաղաք :

ՄՈՒԼԴԱՆ (60,000) արուեստից կողմանէ ծաղկած • անուանի է մահմէտական ուսումնարանը :

ՔԱԴՄԱՆՏՈՒ (20,000) Նէքալի թագաւորու
թեան մայրաքաղաքն է . շատ կուտուններ կան
մէջը :

ԳԱՇՄԻՐ (150,000) խիստ անուանի է աղնիւ
շաւերուն համար :

ՍՆԱՏԻՎԵԱՆ կղզիները , որ հազարաւոր մանր
ժայռերէ ձևացած են . և ասոնց մէջ 40 կամ 50
մը կայ որ աւելի մեծ են , բարեբեր ու բազմամարդ ,
և մէկ թագաւոր մը ունին որ Մալէ կղզին կը նստի :

ԵՒՐՈՊԱՅԻ ԱՅԼԵՒԱՅԼ ԱԶԳԵՐՈՒՆ
ՏԵՂՈՒԱՆԻԸ

ԲՈՆԻՒՇԵՐԻ (25,000) | Գաղղիացւոց ձեռքը՝
ՉԱՆՏԻՐՆԱԿՈՐ (30,000) | երկուքն ալ վաճա
ռաշահ քաղաքներ են :

ԿՈՍ (30,000) Բորդուգէզներուն ձեռքը՝ ամուր
քաղաք է , և ասպահով ու բանուկ նաւահանգիստ
ունի :

ՀԵՒԿԱՍՏԱՆ ԳԱՆԳԻՍԻՆ ԱՆԻՒՆ

Գանգէսէն անդին եղած երկիրը վեց մաս կը
բաժնուի . Պիրման , Սիամ , Մալապպա , Անամ ,
Անգղիացւոց երկիրները , և Կղզիները : Աս թա
գաւորութիւնները գրեթէ ամէնն ալ ազատ միա
պետական են ու կուսպաշտ :

Պ Ի Ր Մ Ա Ն

Պիրամնի տէրութիւնն առաջուց Բէկուի թագաւորութեան տակն էր, բայց հիմա ազատ է: Ասոր բնակիչները շատ պատիւ կ'ընեն ճերմակ փղի մը, որ թագաւորին պաշտօնն քովը մեծ պաշտոն մը ունի. կ'ըսեն թէ իրենց թագաւորին հողին ան փղին փորը պիտի մանէ: Աւերջերս Անգղիացիք այս երկիրը կոխեցին և բոլոր հարաւային մասին տիրեցին:

Պիրամնի բնակչաց թիւն է 4,000,000:

ԱՒԱ (40,000) մայրաքաղաքն է:

ԱՄԱՐԱՐՈՒՐԱ } Աւային այնչափ մօտ են աս
ՍԱՅՎԱՆ } երկու մեծամեծ քաղաքներն

որ անոր մասը կրնան սեպուիլ:

ԲԵՎՈՒ. ատենով զատ թագաւորութիւն էր. անուանի է ասոր բրգաձև կռատուեր 300 ունաչափ բարձր:

Ս Ի Ա Մ

Սիամի թագաւորութիւնը ատենով պղտիկ էր, բայց հիմա խիստ ընդարձակ է:

Բնակիչն է 5,000,000:

ՊԱՆՔՈՔ (160,000) Սիամի մայրաքաղաքն է:

աս քաղաքիս բնակիչներուն մեծ մասը Չինացի են .
բոլոր շէնքերուն մէջ անուանի է մեծ կուստունը ,
որ 1,500 կուսք կայ :

Մ Ա Լ Ա Գ Գ Ա

Աս թերակողին (1,000,000) արևելակողմը հի-
մա Սիամի տէրութեան ձեռքն անցած է . հարա-
ւակողման մասին բնակիչները վայրենի ու թափա-
ռական մարդիկ են , որ այլևայլ իշխաններ ունին
իրարմէ ազատ . իսկ հիւսիսային կողմը Անգղիա-
ցւոց ձեռքն է , ինչպէս նաև Մ Ա Լ Ա Գ Գ Ա (60,000)
քաղաքը :

Ա Ն Ն Ա Մ

Աննամին բնակիչները (12,000,000) Չինաց լե-
զուն և աղանդն ունին , և շատը դետերու վրայ կը
բնակին նաւակներով :

ՀՈՒԷ (100,000) գլխաւոր քաղաքն է , խիստ
ամուր ու վաճառաշահ :

ՔԱՉԱՈՅ (80,000) } մեծ մեծ քաղաքներ են :
ՍԱՅԿՈՆ (180,000) }

160

ԱՆԳՂԻԱՅԻՈՅ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Անգղիացւոց երկիրներուն բնակիչներէն ոմանք
խնայազուխ են, ոմանք հարկատու :

ԱՐԱԳԱՆ (100,000) | խիստ վաճառաշահ քա.

ՍԻԵԿԱԲՈՒՐ (24,000) | ղաքներ են :

161

ԿՂԶԻՆԵՐԸ

Գանդեսէն անդին եղած կղզիներն են ԱՆՏԱՄԱՆ
կղզիները, և ՆԻՐՈՊԱՐ կղզիները : Ասոնց բնակիչ-
ները քիչուոր ու խնայազուխ են :

Չ Ի Ն

162

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻՍ առաջին ծաղկած տէրութիւններուն մէկն է Չինը . բայց Չինացիք ուրիշ ամէն ազգերէն զատուած հենաշուէն համար՝ արուեստի ու գիտութեան մէջ շատ առաջ գնացած չեն :

Թաթարներուն յարձակմունքէն ազատ մնալու համար՝ իրենց երկրին հիւսիսային կողմը 1,100 մղոն երկայնութեամբ սլառ մը քաշած են . բայց եօթնևտասներորդ դարուն մէջ Մանչու թաթարները տիրեցին Չիներուն , և հիմակուան Չինութագաւորը անոնց ցեղէն է :

163

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Չինու սահմանը հիւսիսէն Ասիոյ Ռուսաստանն է , արևելքէն Մեծ ովկիանոս , հարաւէն Հընդկաստան , արևմուտքէն Թուրքաստան :

Տարածութիւնն է 4,000,000 քառակուսի մղոն : Տէրութիւնը հինգ գլխաւոր մաս կը բաժնուի .

բուն Չին, Չինու Թաթարստան, Քորէա, Չինաց
հարկատու երկիրներ ու Աղզիները :

Երկիրն ընդհանրապէս դաշտային ու աղէկ մշա-
կած է, բայց արևմտեան ու հիւսիսային կողմերը
լեռնոտ են :

Օդը բարեխառն, տեղ տեղ ալ շատ տաք է :

Հողը խիստ բարեբեր է :

Գլխաւոր բերքն է չայ, քափուր, մետաքս,
բամբակ, վերնիճ, յախճապակ, մուշկ, սյծու-
բուրդ, և Թանաք : Շերամի որդը, և ոսկեգոյն
կարմրախայտ ձուկը Չինէն Եւրոպա եկած են :

Եւրոպացիք ընդհանրապէս Գանդոնէն ներս
չեն կրնար երթալ վաճառականութեան համար .
միայն Անգղիացիք 1842ին Չինու տէրութեան հետ
դաշնադրութիւն ընելով՝ հրաման առին որ աս
հինգ քաղաքներու մէջ կարենան վաճառակա-
նութիւն ընել, Քանդոն, Սուչէու, Հիամէն,
Նինկթօ, և Շանհհաւ :

Բնակիչն է 415,000,000, որով աշխարհիս մէջ ա-
մենէն բազմամարդ տէրութիւնն է :

Արօհքը կուսպաշտութիւն . բայց կարդացողներն
ու մեծերը Աննիուէիոսի աղանդին կը հետևին,
հասարակ ժողովուրդը Փոյի աղանդին : Քանի մը
հազար հրէայ կայ տէրութեան մէջ՝ հին ատենէ
մտած . քանի մը հազար ալ ուղղափառ քրիստո-
նեայ՝ որ դրեթէ միշտ հալածանքի մէջ են :

Չորքն է 1,500,000 . նաւատորմիդը 826 կտոր
նաւ :

Կառավարութիւնն է ազատ միապետութիւն .
իշխանները Մանգալին կ'ըսուին :

9857

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԲԷՔԻՆ (1,700,000) աշխարհիս ամենէն մեծ քաղաքը կը սեպուի, ու երկու կտոր կը բաժնուի մէկուն մէջ Թաթարները կը բնակին, մէկալին մէջ Չինները • մեծագործ է Թագաւորական սալաւոր՝ որ գրեթէ վեց միլոն շրջապատ ունի :

ԳԱՆԴՈՆ (850,000) Եւրոպացի վաճառականներն աս քաղաքս կրնան գալ • մեծ վաճառքը չայ է :

ՆԱՆԻՆ կամ ԲԵՆԱՆԻՆ (800,000) ինչուան 1421 ասիկայ էր Չինու մայրաքաղաքը • անուանի է ասոր աշտարակն ինը յարկով ու 200 ոտք բարձրութեամբ, որ վերէն ՚ի վար յախճապակով դարդարած է :

ՄԱՔԱՈՅ (33,000) աս քաղաքիս մեծ մասը Բորդուգէղներուն ձեռքն է :

ԼԱՍՍԱ (80,000) Դիպէղի գլխաւոր քաղաքն է • ասոր մօտ կը բնակի Ֆոյի կրօնքին գլխաւորն որ Տալայի լամա կ'ըսուի :

ՍՈՒՉԷՈՒ (600,000) արուեստի ու վաճառականութեան կողմանէ ծաղկած քաղաք • շատ ուսումնական մարդիկ ալ կը բնակին մէջը :

ՀԻՅՄԷՆ կամ ԷՄՈՒՅ (250,000) շատ վաճառաշահ ու բանուկ նաւահանգիստ ունի :

ՆԻՆԿՐՕ (300,000) աս քաղաքը միայն արտօնութիւն ունի ճարտնի հետ վաճառականութիւն ընելու :

ՀԱՆԿՉԻՈՒ (700,000) հարաւային Չինու գլխաւոր քաղաքն է :

ՇԱՆԿՉԱՒ (500,000) ասոր նաւահանգիստը տարին 20,000 նաւ կը մտնէ կ'ըսեն :

ՆԱՆՉԱՆԿ (300,000) ասոր մեծ վաճառքն է յախճապակ' որ մօտերը կը շինուի :

ՔՈՐԷՆ քաղմամարդ երկիր մըն է որ ութը դաւառ կը բաժնուի . բայց Եւրոպացիք խիստ քիչ տեղեկութիւն ունին վրան :

ՀՈՆԿՔՈՆԿ (30,000) կղզեակ Գանդոն գետին բերանը , կալուած Անգղիացւոյ 1842էն ետև : Գլխաւոր քաղաքն է Վեկտորիա (13,000) :

Չինու կղզիներուն մէջ անուանիներն են ՀԱՅՆԱՆ , ՓՈՐՄՈՂԱ ու ԲԷՍԻՍՏՈՐԷՍ :

Ճ Ա Ք Ո Ն

165

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՃԱՔՈՆԻ երկիրը թէպէտ երեքստասաներորդ դարուն մէջ սկսաւ ծանօթ ըլլալ Եւրոպացւոց , բայց վրան աւելի տեղեկութիւն առնողներն եղան Բորդուգէզները 1542ին : Ճաբոնները Չիներուն մէկ ցեղը կը սեպուին , բայց հիմա անոնցմէ աւելի ծաղկած են թէ արուեստի և թէ սլատերազմի մէջ : Տէրութեան մէջ օտար ազգէ մարդ չկրնար մըտնել . երկրցիք ալ իրենց տէրութենէն դուրս չեն կրնար ելլել , չէ նէ սլատիժնին մահ է :

166

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Ճաբոնի տէրութիւնն աս չորս գլխաւոր կղզիներէս ձևացած է . Նիժոն , ՍիքոքՖ , Գիուսիու և Կսոյ : Ասոնց չորս դին սլատած է Արևելեան օվկիանոսը , որ մեծ թագաբարստանին արևելեան կողմն է :

Տարածութիւնն է 180,000 քառակուսի մղոն :

Երկիրը լեռնոտ է, և շատ հրաբուխներ ունի .
անոր համար գետնաշարժ ալ շատ կ'ըլլայ հոն :

Հողը բարեբեր ու աղէկ մշակած է :

Գլխաւոր բերքերն են ոսկի, արծաթ, պղինձ,
երկաթ, աղնիւ քարեր, քափուր, չայ, բամբակ,
մետաքս, և յախճապակ :

Բնակիչը 30,000,000, ամէնքը կուսապաշտ :

Կառավարութիւնն երկու հոգւոյ ձեռք է . մէկը
Տայբէ կ'ըսուի, որ հաւատոյ բաներուն կը խառ-
նուի . մէկալը Քուսայոյ, որ տէրութիւնը կը կառա-
վարէ :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԵՏՈՅ (1,500,000) Ասիոյ մեծ ու աղուոր քա-
ղաքներէն մէկն է . հոս կը նստի իրենց Քուսայոյ
կամ Սէնիան թագաւորը :

ՄԻԱՔՈՅ (600,000) ուսման կողմանէ ճարտ-
նին ամենէն ծաղկած քաղաքն է . Տայիրին հոս կը
նստի :

ՆԱՆԿԱՍԱՔԻ (50,000) օտար աղգերն աս քա-
ղաքս միայն տարին մէկ անգամ մը կրնան մանեւ
վաճառականութեան համար :

ՄԱՅՄԱՅ (50,000) Եսոյ կողին ծայրը վաճա-
ռաշահ քաղաք է :

ԼԻՈՒՔԻՈՒ կղզիներն ալ ճարտնի մաս կը սե-
պուին, բայց առանձին թագաւոր մը ունին Չինու
և ճարտնի հարկատու :

ԱՓՐԻԿԷ



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

168

ՍԱՏՄԱՆ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆ

ԱՓՐԻԿԷԻ սահմանը հիւսիսէն Միջերկրական ծովն է, արևելքէն Կարմիր ծովն ու Հնդկաց ովկիանոսը, հարաւէն Հարաւային ովկիանոսը, արևմուտքէն Ատլանտեան ովկիանոսը :

Տարածութիւնն է 8,500,000 քառակուսի մղոն :

169

ԲԱՃԱՆՈՒՄՆ

Ափրիկէն տասնուինը աշխարհք կը բաժնուի . ասոնցմէ իրեքը հիւսիսային կողմն են, եօթը միջտեղուանքը, ինը հարաւային կողմը :

Հիւսիսայիններն ասոնք են . Եգիպտոս, Պերպերիտան, Սահրա :

Միջիններն ասոնք են . Սենեկամպիա, հիւսի-

սային Կուինէա , Նիկրիտիա , Նուպիա , Եթովպիա , Ատէլ , Այան :

Հարաւայիններն ասոնք են . Հարաւային Կուինէա , Օգդենդացւոց երկիրը , Գլուխ բարեյուսոյ , Քաֆրաստան , Մոնոմոդաբա , Մոզամպիք , Չանկէպար , Անժանօթ երկիր , և Մատակասպար կղզին :

170

Ծ Ո Վ

Չորս սահմանակից ծով ունի Ափրիկէն . Միջերկրական ծովը , Ատլանտեան ովկիանոսը , Մեծ ովկիանոսը և Հնդկաց ծովը :

171

Ծ Ո Յ

Ափրիկէի գլխաւոր ծոցերն ասոնք են . Կուինէայի ծոց՝ Ատլանտեան ովկիանոսին մէջ . Արաբիոյ ծոց կամ Կարմիր ծով՝ Հնդկաց ծովուն մէջ .

Սիրդ և Գապէս՝ Միջերկրական ծովուն մէջ :

Կ Ղ Ձ Ի

Ափրիկէի գլխաւոր կղզիներն ասոնք են .
Ատրեան կղզիները, Մաաերա կղզին, Գանարեան
կղզիները, Գալարի գլխոյ կղզիները, Կուի-
նէայի ծոցին կղզիները, Սուրբ Մատթէոս,
Սուրբ Համբարձումն, Սուրբ Հեղինէ՝ Ատլան-
տեան ուկիսանոսին մէջ :
Մատակասգար, Սոգոդորա, Չանգիսար, Սէյ-
չեւ, Գոմարեան կղզիները, և Մասգարենեան
կղզիները, որոնցմէ գլխաւորներն են Պուրպոն
կղզին, Գաղղիոյ կամ Մաւրիտիոս կղզին, և
Ռոարիկ կղզին՝ Հնդկաց ծովուն մէջ :

Հ Ր Ո Ւ Ա Ն Դ Ա Ն

Ափրիկէի գլխաւոր հրուանդաններն են .
Պոն, Սեւգա՝ Պերպերիստանի մէջ .
Պլանգոյ կամ Սպիտակ՝ Սահրայի մէջ .
Դալարի կամ Կանաչ գլուխ, Ս . Մարիամ, Կարմիր
գլուխ՝ Սենեկամպիոյ մէջ . Բալմա, Երկն ծա-
գաց գլուխ՝ հիւսիսային Կուինէայի մէջ .
Լոբէզ, Նեկրոյ՝ հարաւային Կուինէայի մէջ .
Գլուխ Բարեյուսոյ, Ակուհաս՝ Բաֆրաստանի մէջ .
Տեղիատոյ՝ Մոզամպիլի հիւսիսային դին .
Կարտաֆուի՝ Ատելի արևելեան դին .
Նադալ՝ Մատակասգարի հիւսիսային դին :

174

Լ Ե Ռ

Լեռներու հինգ գլխաւոր դօտի կայ Ափրիկէի
մէջ .

Ատլաս՝ Պերպերիատանին մէջ .

Քոնկ՝ Նիկրիտիոյ ու Կուինէայի մէջ .

Լուանի լեռները՝ Եթովպիոյ հարաւային կողմը .

Լուբադա լեռները՝ Ափրիկէի հարաւային կողմը .

Մատակաադար՝ համանուն կղզիին մէջ :

175

Լ Ի Ծ

Ափրիկէի մէջ ծանօթ երկու գլխաւոր լիճ կայ .
Չաա՝ Նիկրիտիոյ մէջ .

Տեմպէա՝ Եթովպիոյ մէջ :

176

Ք Ե Տ

Ափրիկէի գլխաւոր գետերն ասոնք են .

Նեղոս՝ որ կը թափի Միջերկրական ծովը .

Սենեկալ, Կամպիա, Նիկեր, Չայիրէ, Օրանժ

Ատլանտեան օվկիանոսը .

Զամպէզ՝ հնդկաց ծովը :

ՕՒ, ՀՈՂ, ԲԵՐԻ

Ափրիկէն այրեցած գօտիին տակն ըլլալուն հա-
մար սաստիկ տաք է . մեծ մասը երկու եղանակ
ունի, մէկը չոր՝ մէկայն անձրեային, վասն զի վեց
ամիս գրեթէ միակերպ անձրև կուգայ :

Երկիրը դաշտային է, և շատ տեղ մեծամեծ ա-
ւազուտ անապատներ կան : Հողն ընդհանրապէս
անբեր է . բայց գետերուն քովերը քիչ մը պտղա-
բեր են . աւազի անապատներուն մէջ ալ տեղ տեղ
կղզիի պէս երկիրներ կան Ոստիս ըսուած՝ որ շատ
բարեբեր են :

Գլխաւոր բերքերն են արմաւ, թուզ, ժանտա-
թուզ, քոքօ, կասիա, խէթ, խնկեղէն, պսօպապ
ծառը՝ որ աշխարհիս մէջ ամենէն խոշոր ծառն է,
և ուրիշ աղնիւ փայտեր . տեղ տեղ ալ կը գտուի
բրինձ, շաքար, պղպեղ, բամբակ, կտաւ, լեղակ,
ոսկի, արծաթ, երկաթ ու քարեր :

Բարեյուսոյ գլխոյն գինին խիստ աղնիւ է : Անն-
դանիներուն մէջ գլխաւորներն են առիւծ, վագր,
ինձ, յովաղ, բորենի, անգեղջիւր, գոմէշ, փիղ,
ընձուղտ, վայրի էշ, կոկորդիլոս, ձիագետի, տե-
սակ տեսակ կապիկներ, մեծամեծ օձեր, ջայլամ,
թութակ և կուռնի :

ԲՆԱԿԻՉ , ԿՐՕՆՔ , ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ,
ԿԱՌԱՂԱՐ ՈՒԹԻՒՆ

Ափրիկէի բնակիչն է 90,000,000 , գոյներնին
սև , բնութեամբ ընդհանրապէս սպիտամիտ ,
տգէտ ու վայրենի :

Կրօնքը՝ Եգիպտոսին , Պէրպէրիստանին ու Նու-
պիայի մէջ մահմէտական է . Եթովպիայինը քրիս-
տոնեայ , մէկալ տեղերունը կուսապաշտ :

Քաղաքականութեան կողմանէ Ափրիկէի մեծ
մասը բարբարոսութեան մէջ մնացած է . ինչուան
հարկաւոր արուեստներն ալ հոն չեն գտուիր . իսկ
ուսմունք ու գիտութիւն ամենևին չկայ : Միայն
Եգիպտոս ու Միջերկրականին ծովեզերքը քիչ մը
քաղաքականութիւն սկսած է :

Կառավարութիւններն ազատ միապետական են
Ափրիկէի մեծ մասին մէջ :

Ն Պ Ի Պ Տ Ո Ս

179

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀՆՆ ատենը խիստ ծաղկած էր Եգիպտոս ամէն արուեստի ու գիտութեանց կողմանէ . մէջը շատ մեծաշէն քաղաքներ կային , և թագաւորութիւնը զօրաւոր ու անուանի էր . բայց երկու հազար տարիէն աւելի է որ քանի գնաց տկարացաւ , առջի մեծութիւնը գրեթէ ամենևին չմնաց : Եօթներորդ դարուն մէջ Արաբացիք տիրեցին Եգիպտոսի , և Աղէքսանդրիոյ հռչակաւոր գրատունը այրեցին . ետքը անցաւ Մէմլուք ըսուած Չէրքէզներուն , անոնցմէ ալ Օսմանցւոց ձեռքը . 1798ին Գաղղիացիք առին , բայց խիստ քիչ դիմացան . ետքէն Մէհէմէտ Ալի փաշան սկսաւ ծաղկեցընել Եգիպտոսի մէջ արուեստներն ու վաճառականութիւնը , ուր կը տիրէ հիմա իր ընտանիքը :

180

ԸՆԴՏԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՐ

Եգիպտոս Միջերկրականին ու Կարմիր ծովուն մէջտեղն է՝ Արաբիոյ հետ կալած :

Տարածութիւնն է 150,000 քառակուսի մղոն :

Օգը խիստ տաք • անոր համար և մանր աւաղի փոշիներէն՝ որով օգը շատ անգամ լեցուած կ'ըլլայ՝ հոն տեղի բնակիչներուն շատին աչքը ցաւոս է կ'ըսեն :

Երկիրն աւազուտ ըլլալուն համար շատ պտղաբեր չէ • միայն Նեղոսի մօտ տեղուանքը խիստ պրտաբեր կ'ըլլան , որովհետև աս գետը ամէն տարի կանոնաւոր կերպով կը բարձրանայ ու ամիսներով կը ծածկէ երկու կողմի դաշտերն ու արտերը :

Գլխաւոր բերքն է բրինձ , արմաւ , մարացորեն , բամբակ , շաքար ու պատկառուկ խոտը • կենդանիներուն մէջ ալ անուանի է հիլոս ըսուած մուկը , որ կոկորդիլոսին թշնամի է , ու քաջահաւ թռչունը՝ որ օձերը կը սպաննէ :

Բնակիչն է 5,125,000 , զիտի՝ որ հին Եգիպտոսացիքն են , տաճիկ , արաբացի , հայ , և հրեայ :

181

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԳԱՀԻՐԷ կամ ՄԸՍԸՐ (300,000) մեծ ու վաճառաշահ քաղաք է • ստոր մօտ են երեք անուանի բուրգերը , որոնց մեծին բարձրութիւնն է 428 ոտնաչափ , և մեծ գեանափոր գերեզմաննոցը՝ որուն մէջ 3000 տարուան մուսկաններ կան :

ԱՂԵՐՍՅԵԴԻՐԵ կամ ԻՍԲԷՆՏԵՐԻՅԷ (400,000) ասենով Եգիպտոսի թագաւորութեան մայրաքաղաքն էր , հիմա աշխարհիս վաճառաշահ քաղաքներէն մէկն է :

ԲԱԸԻՏ կամ ՌՕԶԵԴԻՐԵ (15,000) Նեղոսին բե-

րանը՝ Եգիպտոսի բանուկ նաւահանգիստներէն մէկն է :

ՏԱՄԻԱԴ (30,000) նաւահանգիստը բանուկ քաղաք է :

ՍԻՈՒԴ (15,000) Ափրիկէի ներսերը գնացող կարուանները ասկէ ճամբայ կ'ելլեն :

ՍԻՒՂԻՅԻՍ (1,000) համանուն սլաւոնացիներն վրայ պղտի քաղաք է :

ՃԻՁԷ (7,000) ասոր քովն են Մեմփիս քաղաքին աւերակները :

ԼՈՒՅՍՈՐ • հին Թեբէ քաղաքին աւերակներուն մէջ պղտի գեղ մըն է :

ՔՈՍԻՅՐ • Կարմիր ծովուն վրայ նաւահանգիստ է, և շտեմարան վաճառականութեան Արաբիոյ հետ :

ՍԻՆ կամ ԱՍՈՒՍ • մօտ է Եգիպտոսի հին սահմանին և հռովմէական կայսերութեան՝ Օգոստոսի ատեն :

ՍԻՈՒՍԷ • համանուն Ռասիսին մէջ, Եգիպտոսի արևմտեան կողմը : Կը կարծուի թէ աս ըլլայ Ամոնի հին Ռասիսը :

ՊԵՐՊԵՐԻՍՏԱՆ

181

182

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԵՐՊԵՐԻՍՏԱՆԸ, որ Բարբարոսաց աշխարհ ալ կ'ըսուի, հին ասուելը Կարբեղոնացոց ձեռքն էր. ետքը Հռովմայեցոց անցաւ, անկէց ալ ետքը Արաբացոց ձեռքը. հիմա մէկ մասը այլևայլ իշխանութեանց տակն է, մէկ մեծ մասն ալ Գաղղիացոց ձեռքն է :

183

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Պերպերիստան կ'ըսուի Ախրիկէի հիւսիսային ծովեզերքը՝ Եգիպտոսէն ինչուան Ատլանտեան ովկիանոս :

Օդը բարեխաան է, երկիրը բարեբեր :

Գլխաւոր բերքն է բրինձ, ցորեն, շաքար, ձի, ուղտ, առիւծ :

Բնակիչն է 20,000,000 պերպեր, մուղսի, տաճիկ, հրեայ, գաղղիացի :

Կրօնքը մահմէտական :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

184

ՃԵՉԱՅԻՐ

ԱՆՃԵՐԻ Կամ ՃԵՉԱՅԻՐ (52,000) նաւասանօրիստ Միջերկրական ծովուն վրայ, երկար ատեն Օսմանեաց հարկատու էր քովի երկիրներովը 1830էն ետքը Գաղղիացեաց ձեռքն անցաւ, ու ամէն կողմանէ սկսաւ հետզհետէ ծաղկիլ ու զարգարուիլ:

ՕՐԱՆ (25,000) նաւասանօրիստ Միջերկրական ծովուն վրայ, երկար ատեն Սպանիացեաց ձեռքն էր, որոնք 1792ին թողուցին:

ԿՈՍՏԱՆԴՆՆԱ (21,000) ամուր բերդ է, զոր Գաղղիացիք առին 1837ին: Ասիկայ հին Սիրդա քաղաքն է, ուր ծնան Մասինիսաա և Յուզուրթա:

ՊՈՆ (9,000) նաւասանօրիստ Միջերկրական ծովուն վրայ, մօտ հիսպանա քաղաքին աւերակացը, որուն եպիսկոպոս եղաւ մեծն Օդոսաինոս հինգերորդ դարուն մէջ:

ԿԻԼԻՄՍԻՆ Կամ ԳՐԵՄԷՍԻՆ (7,000) ժամանակաւ բազմամարդ քաղաք մըն էր:

ՄՈՍԿՎԱ (7,000) ունի ամուր և վաճառաւազ նաւասանօրիստ Միջերկրականին վրայ:

ԻՒԼԻՔԱԼԻ (6,000) զոր կանգնեցին Գաղղիացիք յանուն Լուդ. Փիլիպպոսի թագաւորին՝ Ռոսսիկադայ աւերակացը վրայ:

ՄԵՏԻՅԱ (5,000) Դիդերիի սէյը հոս կը նստէր 1830էն առաջ:

ՄԱՍԳԱՐԱ (4,000) Ապտ-իււ-Քատէր հոս կը նստէր • քանդեցին զայն Գաղղիացիք 1835ին :

ՇԻՐԱԿԼ (2,000) նաւահանգիստ Միջերկրական ծովուն վրայ , փոխանակ Վեսարիոյ՝ որ մայրաքաղաքեղաւ Վեսարական Մաւրիտանիոյ՝ հռովմայեցւոյ ժամանակ :

ՊՈՒՃՒՅ (600) նաւահանգիստ Միջերկրական ծովուն վրայ • ամրոցներ ունի :

185

Մ Ա Ր Ո Ք

ՖԷՍ (100,000) ատենով արուեստի ու գիտութեան կողմանէ ծաղկած քաղաք էր • և Մարոքի կամ Մէրաքէշի ինքնազուլիս կայսերութեան գլխաւոր քաղաքն է :

ՄԱՐՈՔ (70,000) Մարոքի կայսերութեան մայրաքաղաքը՝ շատ վաճառաշահ • կաշին աղնիւ է :

ՄԻՔԻՆԷՉ կամ ՄԸԳՆԱՍԱ (60,000) բարեբեր հովտի մը մէջ • Մարոքի կայսրը տարւոյն մէկ մասը հոս կը նստի :

ՄՈՎԱՏՈՐ (36,000) Ատլանտեան օվկիանոսին վրայ ամենէն վաճառաշահ քաղաքն է Մարոքի կայսերութեան :

ՆՈՐՆ-ՍԱԼԷ կամ ՌԱՊԱԴ (25,000) դէմ յանդիման Սալէի , որուն ելուզակները շատ վախ կուտային նաւարկուաց :

ԳԵԴՈՒԱՆ (16,000) նաւահանգիստ Միջերկրական ծովուն վրայ և առուտուրը շատ բանուկ :

ԳԱԼԷՆԴ • Մարոքի կայսերութեան հարաւակողմը՝ անկախ տէրութեան մը մայրաքաղաքն է :

186

ԴՈՒՆՈՒՋ

ԴՈՒՆՈՒՋ (100,000) Կարբէդոնի աւերակներուն մօտ մեծ քաղաք է, վաճառականութիւնն ու արուեստները ծաղկած. ասոր սկէյը կամ իշխանը Օսմանցոց հարկատու և հստատակ է :

ՔԱՐՎԱՆ (40,000) քաղաք վաճառաշահ, երկար ժամանակ արաբացի թագաւորութեան մը մայրաքաղաքն էր :

ԳԱՊԻՍ (20,000) վաճառաշահ նաւահանգիստունի Միջերկրական ծովուն վրայ :

ԴԱՐԱՊՈՒԼՈՒՍ կամ ԴՐԻՅՈՒԼԻ (25,000) համանուն փաշայութեան գլխաւոր քաղաքը Միջերկրական ծովուն քով. վաճառականութիւնն ու արուեստից ճարտարութիւնն ըստ կարի ծաղկած է :

Ս Ա Հ Ր Ս.

187

ԸՆԴՏԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՒՐ

Ս Երկերն ընդարձակ անապատ մըն է, որ
Պերպէրիստանի հարաւային կողմը կ'իյնայ :

Երեքհարիւր հազար մղոն տարածութեան մէջ
հազիւ թէ մէկ միլիոն բնակիչ ունի, բոլորն ալ
գրեթէ վայրենի մարդիկ :

Կրօնքնին մահմէտական ու կռապաշտ :

Գլխաւոր քաղաքներն են Հոտէն, Դակաղղէ,
Դապու, Անու, Ակապլի, և Պիլմա • բայց վրանին
խիստ քիչ տեղեկութիւն կայ :

ՍԵՆԵԿԱՄՊԻԱ.

188

ԸՆԴՏԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՍԵՆԵԿԱՄՊԻԱՆ Սահրային հարաւային կողմը կ'իյնայ • անուըը Սենեկալ ու Կամպիա գետերէն սուած է :

Երկիրն ընդհանրապէս աւաղուտ է :

Օդը խիստ տաք • յուլիսէն ինչուան հսկանքեր միակերպ անձրև կուգայ զարհուրելի փոթորիկներով :

Բերքն է առատ ոսկի , խնկեղէն , պղպեղ , ջայլամի փետուր , փղոսկր , և պասպասս ծառը՝ որ ինչուան 90 ոտնաչափ հաստութիւն կ'ունենայ : Կենդանիներէն ալ տաք երկրի գաղաններուն առէն տեսակէն ալ ունի :

Բնակիչն է գրեթէ 12,000,000 կռասպաշտ :

189

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՊԱՄԳՈՒՔ . մեծ ոսկիի հանք ունի :

ԴԻՄԳՈՒ . բոլոր երկրին աւելի կրթուած մարդիկն ասոր բնակիչներն են :

ՔԱՐԷՕ . Անգղիացւոյ ձեռքն է :

ՍՈՒՐԲ ԼՈՒՒՈՎԻԿՈՍ . Գաղղիացւոյ ձեռքն է պղտի կղզւոյ մը վրայ Սենեկալի բերանը :

ՍԷՆԴ ՃԵՅՄՍ . աս երկրին մէջ Անգղիացւոյ դՐԸ խաւոր քաղաքն է :

Գաղղիացւոյ ձեռքն է նաև Կորէա կղզին ալ Դաւարի գլխոյն մօտ (5,000) :

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՒԻՆԷՍ

190

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԿՈՒԻՆԷՍՆ Սենեկամպիոյ հարաւային կողմի
ծովեզերքն է :

Աս երկրիս մեծ մասին Ներոպացիք տիրած են :

Օգը տաք , թաց ու ինասահար է :

Գլխաւոր բերքերն են բամբակ , շաքար , լե-
ղակ , և ոսկիի աւազ . կենդանիներէն ալ փիղ ,
վագր , առիւծ , ոնգեղջիւր ու մեծամեծ օձեր :

Բնակիչն է 10,000,000 կապալաշտ , որ մարդա-
զոհ ալ կ'ընեն :

Գլխաւոր քաղաքներն են Գումասի , Ապուկյ ,
Գլուխ Գորս , Քրիսդիանապուրկ :

Ն Ի Կ Ը Ի Տ Ի Ս.



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

- Ն Ի Կ Ը Ի Տ Ի Ս Սահրային հարաւային կողմն է :
- Երկրին մեծ մասը աւազուտ անապատ :
- Բերքն է ոսկի, արծաթ, արմաւ, բրինձ, բամբակ ու վայրի դաղաններ :
- Բնակիչն է 20,000,000, բոլորն ալ սև ու բարբարոս մարդիկ :
- Կրօնքնին կապաշտ ու մահմէտական :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

- ՍԱՔՔԱԳՈՒ (80,000) մայրաքաղաք Ֆէլադա ըսուած կայսերութեան :
- ԷՆԿՈՌՆՈՒ (50,000) Երկրին գլխաւոր վաճառաշահ քաղաքն է :
- ՍԵԿՈՅ (30,000) հոս քիչ մը ժամանակ կեցաւ Մոնկոյ-Բարք :
- ԴՈՄՊՈՒՔՊՈՒ (12,000) Ախրիկէին երևելի քաղաքներէն մէկն է . ոսկիի, փղոսկրի ու խէժի մեծ առուտուր ունի :
- ՊՈՌՆՈՒ (10,000) և ՔՈՒՔՍ հիմակուան երկու մայրաքաղաքներն են Չատ գետին մօտ :
- Այլուանի են նաև Հին Պոսնու, Քոպպէ, Իւպէյիը :

Ն Ո Ւ Պ Ր Ի Ս.

192

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՆՈՒՊՐԱՆ Եղիպտոսի հարաւային կողմը կ'ըլլայ, ու հիմա Եղիպտոսի կուսակալին ձեռքն է :
 Երկիրն աւազուտ, քարոտ ու անրեր է :
 Բերքն է ոսկի, միզոսկր, երենոս ու արմաւ .
 կենդանիներէն ալ ամէն տեսակ վայրի դաղաններ :
 Բնակիչն 2,000,000 մահձտական, կուսպաշտ
 ու քրիստոնեայ :

193

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՍԵՆՆԱՐ (9,000) Նեղոսին վրայ վաճառաշահ քաղաք է :

ՆՈՐ ՏՈՆԿՈԼՍ կամ ՄԵՐԱՔԱ՝ Նեղոսի ճախակողմը, և ՀԻՆ ՏՈՆԿՈԼՍ՝ որ գրեթէ աւերակ է :

ՍՈՒԱՔԷՄ . Կարմիր ծովուն վրայ բանակ նաւահանուցիատ է Մէքքէ գնացող կարաւանայ :

Ե Թ Ո Վ Պ Ի Ս.

194

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ե Թ Ո Վ Պ Ա Յ Ի Ք որ հապէշ կամ խափշիկ ալ կ'ըսուին՝ հին ատենը Ափրիկէի ծաղկած ազգերէն մէկն եղած են, ու չորրորդ դարուն մէջ քրիստոնէութիւնը մտեր է մէջերնին. բայց հիմա տէրութիւննին շատ տկարացած է, ու գիտութիւն ամենեին չունին :

195

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Եթովպիան Նուպիոյ հարաւային կողմը ընդարձակ երկիր է՝ այլևայլ ինքնագլուխ տէրութիւններ բաժնուած :

Երկիրը լեռնոտ ու բարեբեր :

Բերքն է ցորեն, բրինձ, շաքար, խահուէ, բամբակ. եղները խիստ խոշոր են, ու Ափրիկէին հասարակ դազանները հոն ալ կը գտուին :

Բնակիչը 4,000,000 քրիստոնեայ եւտիքական :

Գլխաւոր քաղաքն է Կոնտար (50,000) որ Ամհարայի թագաւորութեան մայրաքաղաքն է :

Մէկալ տէրութիւններուն գլխաւոր քաղաքներն են Անքոպէր, Ա.քսում, Տոպարվա, Արբիքո :

Ս Տ Է Լ

196

ԸՆԴՆԱՆՈՒՄ ԳԻՏԵԼԻՔ

ՍՏԷԼԸ Եթովպիոյ արևելեան կողմը պղտի տէրութիւն մըն է :

Երկիրը թաց , օդը լնասակար :

Բերքն է ոսկի , կնդրուկ , խէժ , մամ ու փղոսկր :

Բնակիչն 200,000 մահմէտական :

Գլխաւոր քաղաքներն են .

ՉԻՅԼԱ . որ Պապիւլմանաէպի նեղուցին մէջ կղզի է :

ՊԱՐՊՈՐԱ . նաւահանուիտ է , և Արարիայի հետ առուտուր ունի :

ԱՌՍԱԿՈՒՐԷԼ . ատենով Ատէլի մայրաքաղաքն էր :

ՀՈՒՐՐՈՒՐ . պղտի տէրութեան մը մայրաքաղաքն է :

Ա Յ Ա Ն



197

ԸՆԴՏԱՆՈՒՐ ԴԻՏԵԼԻՔ

ԱՅՏԱՆ Ափրիկէի արևելեան ծովեզերքն է՝ սս
էրկրիա ներսի կողմը անբնակ անապատ է :

Երկիրն աւազուա , բայց պտղաբեր է :

Բերքն է ոսկի , դեղին սաթ , փղոսկր , խունկ ,
խէժ :

Բնակիչն է 150,000 մահմէտական ու կաապաշա :

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՒՒՆԷՍ.



198

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՒՆԷՍԻ լեռնոտ ու բարեբեր
երկիր է՝ Ափրիկէի հարաւային կողմը :

Ասոր վայրի գաղաններուն մէջ երևելի է սօսա
ըսուած ահագին օձը , և ուրիշ շատ մնասակար
ճճիներ . տեսակ մը մթեխ կայ որ խայթելուն պէս
կը մեռցնէ կ'ըսեն . տեսակ մը խոշոր մըջիւն՝ ին-
տնափ ըսուած , որ փղին պատիճը կը մանէ՝ կը
կատղեցնէ ու կըսպաննէ . տեսակ մըն ալ որդ ,
որ ինչ վաճառք կամ կարասիք ըլլայ՝ կը կրծէ ,
փոշի կը դարձնէ :

Բնակիչն է 5,000,000 կուսպաշտ ու վայրենի :

Գլխաւոր տեղուանքն են Լոանկոյ , Գոնկոյ ,
Անկոլա , Պէնկէլա :

ՕՂԴԵՆԴԱՑԻՈՑ ԵՐԿԻՐ



199

ԸՆԴՏԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՕՂԴԵՆԴԱՑԻՔ բնակութեան քաղաք չունին ,
հասցա գեղերու պէս տեղուանք խումբ խումբ բաժ-
նուած կը բնակին :

Բնութեամբ վայրենի են , աւազակաբարոյ , ա-
ղէկ վաղոյ , ու թունաւոր նեւ կը բանեցընեն :

Աձէքք մէկէն 200,000ի չափ են :

ԳԼՈՒԽ ԲԱՐԵՅՈՒՍՈՅ

200

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԲԱՐԵՅՈՒՍՈՅ գլուխն Ափրիկէի հարաւային
ծայրն է՝ Անգղիացւոց ձեռքը :

Օգը բարեխառն , երկիրը բարեբեր :

Ափրիկէի բոյսերուն գրեթէ ամէնն ալ կը բուս-
ցնէ , իսկ վայրի գազանները հիմա քիչցած են ,
ոչխարները խոշոր դմակ ունին , ծովեզերքէն ալ
շատ կէտ կամ պալէնա կ'երևէ :

Բնակիչն է 260,000 , կէսը ճերմակ՝ կէսը սև :

Գլխաւոր քաղաքն է ԳԼՈՒԽ ԲԱՐԵՅՈՒՍՈՅ կամ
ԳԱԲ , և կամ Գարօ-աի-սոնա-սրէւանցա (20,000)
Եւրոպայէն հնդկաստան գացող եկող նաւերը հոս
կը հանդէն , ուստի աշխարհիս խիստ երեւելի քա-
ղաքներէն մէկն է :

ՔԱՖՐԱՍՏԱՆ

201

ԸՆԴՀԱՆՈՒՄ ԳԻՏԵԼԻՔ

ՔԱՖՐԱՍՏԱՆԻ մեծ մասը լեռնոտ է, մնացածը
առաջուկ, բայց բարեբեր :

Բնակիչն է 2,000,000 սև, կարիճ, աղէկ վազող
ու վարպետ որսորդ :

ՄՈՆՈՄՈԳՐԱԲԱ.

202

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՄՈՆՈՄՈԳՐԱԲԱՆ աստեղով մեծ թաղաւորութիւն
էր, հիմա մանր տէրութիւններ բաժնուած, ու
ծովեզերքը Բորդուզէզներու ձեռքն է :

Օղը բարեխառն, հողը բարեբեր, ոսկին ու ար-
ծաթը շատ :

Բնակիչն է 1,400,000 :

ՄՈԶԱՄՊԻՔ

203

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՄՈԶԱՄՊԻՔԸ ԲՈՐԴՈՒԳԷՂՆԵՐՈՒՆ ձեռքն է,
բայց բնակիչները ինքնագլուխ են :

Գլխաւոր բերքն է ոսկի, արծաթ, բրինձ, փղ-
ղոսկր :

Բնակիչը 2,600,000 :

Գլխաւոր քաղաքն է Մոզամպիք (3,000) :

ԶԱՆԿԵՊԱՐ



204

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԶԱՆԿԵՊԱՐԸ Լուրադա լեռներուն արևելեան կողմը ծովեզերեայ ցած երկիր մըն է, ողն ալ անառողջ :

Բերքն է խէժ, փղոսկր, ծարիր ու կապոյտ արջասպ :

Բնակիչը 1,000,000, կէսը արաբացի, կէսը տեղացի կուսակաշա :

Գլխաւոր տեղուանքն են Մակաստոքսոյ, Պրափա, Բիլօա, Մոնկալոյ, Մոմպադա, Մէլինտա :

ԱՆԾԱՆՈԹ ԵՐԿԻՐ

205

205

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՆԻԿՐԻՏԻՈՅ և Օգոկենդացւոց երկրին մեջտեղը
ընդարձակ երկիր մը կայ, որ դեռ անձանօթ է :
Մէջը շատ վայրենի ու բարբարոս ժողովուրդ կայ,
որ ատեն ատեն արշաւանքներ ըրեր են իրենց քո-
վի երկիրներուն վրայ :

ԱՓՐԻԿԵՒ ԿՂԶԻՆԵՐԸ

206

ԱՆԳՂԻԱՅԻՈՅ ՁԵՌԻՔԸ

(218,000 բնակիչ)

ՖԵՐՆԱՆՏՈՅ ԲՈՅ (30,000) Կուլինէայի մէջ :
ՎԵՐԱՓՈՒՈՒԾՆ (7,000) ապառաժ ու անբեր
կողմ մըն է :

ՍՈՒՐԲ ՀԵՂԻՆԵ (7,000) հոս մեռաւ Նաբոլէոն Ա
1821ին :

ՄԵՐԻՏԻՈՍ կամ ԳՅՂՂԻՈՅ ԿՂԶԻ (168,000)
ասիկայ առաջ Գաղղիացոց ձեռքն էր • 1814ին
Անգղիոյ անցաւ :

ՌՈՏՐԻԿԵՁ • այս կողմն Գաղղիացիք ձգեցին
Անգղիացոց :

ՍԵՑԻԼԵԱՆ կողմները (6,000) որ շատ վաճառ
ուաշահ են :

207

ԳԱՂՂԻԱՅԻՈՅ ՁԵՌԻՔԸ

(112,000 բնակիչ)

ՊՈՒՐՊՈՆԻ ԿՂԶԻ (110,000) Հնդկաց ծովուն
մէջ, հոս տեղի խահուէն ու շաքարն աղնիւ է :

ՄԱՅՈՂԻՆ՝ Գոմորեանց մէջ, և ՆՈՍՍԻ-ՊԻՆ՝ ու Ս՝ ՄԱՐԻԱՍ Մատակատարի մօտ, Գաղղիացւոց ձեռքն են :

208

ԲՈՐԴՈՒԳԻՋՆԵՐՈՒՆ ՁԵՌՒԲԸ

(440,000 բնակիչ)

ԱՍՈՐԵԱՆ կղզիները (235,000) ասոնց մէջ գլխաւորներն են Դէրէյրա, Սուրբ Միքայէլ, Սուրբ Մարիամ, Բիգոյ, ու Փլորէս կղզին :

ՄԱՏԻՅԵՐԱ (120,000) ասոր գինին շատ անուանի է. ատենով բոլոր կղզին անստու է եղեր, Բորդուգէզները 1431ին կրակ տուին այրեցին, անկէ ետքը երկիրը բարեբեր եղաւ :

ԴԱԼԱՐԻ ԳԼՍՈՅ կղզիները (80,000) • ասոնց գլխաւորներն են Սուրբ Յակոբ, Սուրբ Անտոն, ու Ալի կղզին • շատին մէջն ալ հրաբուխ կայ :

ՍՍԻՐԲ ՄԱՏԹԻՈՍ • Ատլանտեան ովկիանոսին մէջ անբնակ կղզի է :

ՍՈՒՐԲ ԹՈՎՄԱՍ (20,000) և ԻՇԽԱՆԻ ԿՂԶԻ (4,000) Կուխնէայի ծոցին մէջ • շատ շքար կուտան :

209

ՍՊԱՆԻԱՅԻՈՅ ՁԵՌՒԲԸ

(257,000 բնակիչ)

ԳԱՆԱՐԵԱՆ կղզիները (200,000) ասոնց գլխաւորներն են Գանարիա, Իէնէրիֆֆա, Բալեա,

Երկաթի կղզին , և Ֆորդալենդուրա , որոնց գլխաւոր բերքն է աղնիւ գինի :

ԱՆՆԱ ՊՈՆԱ (1,200) Կուինէայի ծոցին մէջ :

210

ԵՒՐՈՊԱՅՒՈՅ ՉԵՌԻԲԸ ՉԵՂԱԾ

ԿՂԶԻՆԵՐԸ

(3,200,000 բնակիչ)

ՄԱՏԱԿԱՍԳԱՐ (3,000,000) Ափրիկէի կղզիներուն մեծն է . ասոր ծովեղերքը միայն ծանօթ է , ուր օդը թաց ու մնաստկար : Կ'ըսեն թէ ներսերը աղէկ մշակած է : Ծանօթ գլխաւոր քաղաքներն են Դանանարիպոյ , Մուչանկայէ , Պոմպեդոք , Ֆուլ-Բուէն , Դամադաւէ և Անտեվուրանդ :

ՍՈՒՈՒՈՐԱ (100,000) ասոր բնակիչներն արաբացի են :

ՉԱՆԶԻՊԱՐ . Չանկէպարին ծովեղերքն է . գլխաւոր վաճառքն է խէժ ու փղոսկր : Աւաջին քաղաքն է Չանղիպար՝ որ 10,000 բնակիչ ունի :

ՔՈՄՈՐԵԱՆ կղզիները (20,000) Արաբացւոց ձեռքն են :

Handwritten text at the top of the page, possibly a title or introductory paragraph.



Handwritten text below the emblem, likely a subtitle or section header.

Main body of handwritten text, consisting of several paragraphs of cursive script.

Handwritten text at the bottom of the page, possibly a conclusion or signature.

ԱՄԵՐԻԿԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

211

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ատենով անծանօթ երկիր էր . 1492ին Քրիստափոր Գոլումպոս ճենովացինաւորդը ան կողմերը գնաց Սպանիոյ թագաւորին կողմանէ , ու նախ Կուանահանի ըսուած կղզին գտաւ , որ Լուգայեան կղզիներուն մէկն է : Ետքը Ամերիկոս Աեսբուքքի իտալացին ան երկրին մէկ մասը պարտեցաւ , ու ստորագրութիւնն ընելուն համար երկիրն ալ իրեն անուանովը Ամերիկա ըսուեցաւ :

212

ՍԱՀՄԱՆ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆ

Ամերիկան Եւրոպայի արեւմտեան դին կ'իյնայ . հիւսիսային կողմէն սրտած է Սառուցեալ ծովը , արեւելքէն Ատլանտեան ովկիանոսը , արեւմուտքէն Հարաւային ովկիանոսը :

Տարածութիւնն է 3,000,000 քառակուսի մղոն :

ԲԱԺԱՆՈՒՄ

Ամերիկան երկու մեծ կտոր կը բաժնուի . Հիւսիսային ու Հարաւային . ասոնք իրարու կպած են Բանամայի պարանոցովը :

Ամերիկայի մէջ 16 աշխարհ կայ . ասոնցմէ վեցը Հիւսիսային կողմը կ'իյնայ , տասը Հարաւային :

Հիւսիսայիններն ասոնք են . Ռուսի Ամերիկա , Կրէնլանտիա , Կոր Բրիտանիա , Միացեալ Նահանգներ , Մէքսիկոյ , Կուադեմալա կամ միջին Ամերիկա :

Հարաւայիններն ասոնք են . Գոլուամպիա , Բէրու , Պոլիվիա , Քիլի , Կուլանա , Պրազիլ , Բարաիլոյի , Ուրուգուայի , Բլազա , Բաղաիոնիա :

Ծ Ո Վ

Ամերիկայի սահմանակից ծովերն են .

Սառուցեալ ովկիանոս և Պաքիֆիկի ծովն՝ Հիւսիսային կողմը .

Ատլանտեան ովկիանոսն ու Անդիլեան ծովն՝ արեւելեան զին .

Մեծ Ովկիանոսն ու Պէհրիֆիկայ ծով՝ արեւմտեան կողմը :

213

Ծ Ո Յ

Ամերիկայի գլխաւոր ծոցերն ասոնք են .
Հուտարնի ծոցը , Սուրբ Լաւրենտիոսի ծոցը , Մեք-
սիկոյի ծոցը , Հոնաուրաս ծոցը , Գալիֆոռ-
նիայի ծոցը :

216

Ն Ե Ղ Ո Ի Յ

Ամերիկայի գլխաւոր նեղուցներն ասոնք են .
Պէհրինկայ նեղուցը՝ Ամերիկայի և Ասիոյ մէջ-
տեղը .
Լէնքէսդը , Տէւիս , Գրամպըրլէնա , Հուտարն՝ Նոր
Բրիտանիոյ հիւսիսային կողմը .
Պէլ-Իլի նեղուցը՝ Նոր Բրիտանիոյ արևելեան կողմը .
Պահամայի ջրանցքը՝ Միացեալ Նահանգներուն
հարաւային կողմը .
Մակէյլանի նեղուցը , և Լըմէր՝ Բաղադոնիոյ հա-
րաւային գին :

217

Կ Ղ Զ Ի

Ամերիկայի գլխաւոր կղզիներն են .
Սաուուցեալ ծովուն մէջ՝ Կրէնլանտիա .
Պաֆֆինի ծովուն կղզիները .

Ատլանտեան ովկիանոսին մէջ՝ Ս. Լաւրենտիոսի
ծոցին կղզիները, Լոնկայէնա, Պերմուտեան
կղզիները, Լուգայեան կղզիները, Մեծ ու
Փոքր Անգիլեան կղզիները .

Մեծ ովկիանոսին մէջ դէպ 'ի հարաւ՝ Նոր Գեոր-
դիա, Մալուինեան կղզիները, Մակեյլանեան
կղզիները կամ Երկիր հրոյ, Աստուածամօր
կղզիները, Քիլոէ կամ Չիլոէ կղզին, Խուան
Ֆերնանտէզ, և Կալլաբալիոս .

Պեհրինկի ծովուն կղզիները :

218

ԹԵՐԱԿՂԶԻ

Ամերիկայի գլխաւոր Թերակղզիներն են .

Լապրաատր և Նոր Սկովտիա կամ Ագատիա՝ Նոր
Իրիտանիոյ մէջ .

Ֆլորիտա՝ Միացեալ Նահանգաց հարաւային կողմը .
հարաւային Գալիֆոունիա և Եուքադան՝ Մեքսի-
կոյի մէջ .

Ալապրա՝ Ռուսի Ամերիկային մէջ :

219

ՀՐՈՒԱՆԻԱՆ

Ամերիկայի գլխաւոր հրուանդաններն են .

Ֆերուէլ՝ Կրէնլանտի հարաւային կողմը .

Ուոսգէնհոլմ և Չերլս՝ Լապրաատրի մէջ .

Սասլ՝ Նոր Սկովտիոյ հարաւային կողմը .

Դանդա՝ Ֆլորիտայի հարաւային կողմը .

Գագոջ՝ Եուքադանի հիւսիսային արևելեան դին .

Ս . Ռոքոս՝ Պրազիլի արևելեան կողմը .

Ֆրովարա՝ Ամերիկայի հարաւային վերջի ծայրը .

Հոան՝ Մակեյլանի արջիպեղազտի հարաւային
դին .

Պլանոյոյ՝ Բերուի հիւսիսային կողմը .

Ս . Ղուկաս՝ Գալիֆոանիոյ հարաւային ծայրը .

Արևմտեան գլուխ՝ Ռուսի Ամերիկային արևմտեան
կողմը :

220

Լ Ե Ռ

Ամերիկայի մէջ լեռներու գլխաւոր դօսիններն
ասոնք են .

Ալէկենի՝ Միացեալ Նահանգներուն մէջ .

Ապաուաժուա լերինք՝ որ հիւսիսէն գէպ 'ի հարաւ
կը ձգուին :

Գորաիլեան լեռները , որոնց ամենէն բարձրը Չիմ-
պորասոյ կ'ըսուի . ու Պրազիլի լեռները :

221

Հ Ր Ա Բ Ո Ւ Խ

Ամերիկայի անուանի հրաբուխներն ասոնք են .

Սուրբ Եղիա՝ Ռուսաց Ամերիկային մէջ .

Բոքոգադէրէզը՝ Մեքսիկոյին մէջ .

Գոդորախի , և Բիչինոգա՝ Գոլուամպիոյ մէջ .

Արէքերա՝ Բերուին մէջ :

222

Լ Ի Ծ

Ամերիկայի գլխաւոր լճերն են .
Սարկաց և Ուիննեքեկ լճերը՝ Նոր Բրիտանիոյ
մէջ .
Վերին Լիճ, Միչիկան, Հուրոն, Էրիէ, Օնգա-
րիոյ՝ Միացեալ Նահանգաց հիւսիսային դին .
Նիգարահուա Լիճ՝ միջին Ամերիկայի մէջ .
Մարագախոյ՝ Գոլուամպիայի մէջ .
Դիդիգագա՝ Բերուէի մէջ .
Բադոս՝ Պրազիլի հարաւային կողմը :

223

Գ Ե Տ

Ամերիկայի գլխաւոր գետերն ասանք են .
Մաքենզի՝ գէտ ՚ի հիւսիս կը թափի .
Նելսըն, որ Հուտսընի ծոցը կը թափի .
Ս . Լաւրենտիոս՝ Ատլանտեան ովկիանոսը .
Միսիսիբի, և Ռիոյ Նորդէ՝ Մեքսիկոյի ծոցը .
Գոլուամպիա կամ Օրեկոն՝ Մեծ ովկիանոսը .
Գոլորատոյ՝ Գալիֆոանիոյ ծոցը .
Մակտալենա՝ Անդիլեանց ծովը .
Օրենդը, Ամազոնաց գետը, Գոգանդին, Ս . Ֆրան-
չիսկոյ, ու Բլադա՝ Ատլանտեան ովկիանոսը
կը վազեն :

ՕՂ, ՀՈՂ, ԲԵՐԲ

Ամերիկան հիւսիսային բևեռէն ինչուան հարաւայինը տարածուած ըլլալուն՝ աշխարհիս մեկալ մասերուն ամէն կլիմաներն ունի : Միայն թէ Ամերիկայի մեջ աւելի քիչ է մի և նոյն կլիմային տարութիւնը՝ քան թէ Ափրիկէի և Ասիոյ մեջ . պատճառն է Ամերիկայի լեռներուն շատութիւնը , որոնց վրայէն ամառ ձմեռ ձիւնը սլակաս չէ :

Հողը տեղ տեղ աւազուտ է , բայց ընդհանրապէս շատ բարեբեր , ու Եւրոպայէն հոն տարուած բոյսերուն ամէնն ալ աղէկ առաջ եկած են :

Բերքերուն մեջ Ամերիկայի հանքը շատ առատ է . ոսկիի և արծաթի մեծ հանքերը՝ Մեքսիկոյի , Գալիֆոռնիոյ ու Բերուի մեջ անսպառ են . յակինթը՝ Գոլուամպիոյ մեջ , ադամանդը՝ Պրազիլի մեջ : Առատ են նաև ուրիշ մետաղներն ու հանքերը , ինչպէս է երկաթ , մագնիս , սղինձ , անագ , կապար , սնդիկ , բլադին , ծծումբ , աղ և ածուխ :

Բոյսերուն մեջ՝ բուն Ամերիկայի բերքն է գետնախնձոր , մարացորեն , ու ծխախոտ . այրեցած գօտիին տակն ալ տաք երկրի ամէն բերքերը կը գտնուին :

Ամերիկան գտնուած ատենը մեր կողմերուն ընտանի կենդանիները հոն չէին տեսնուեր . բայց հիմա խիստ շատցած են : Այրի կենդանիներէն հիւսիսային կողմը կը գտնուի եղջերու , գայլ , արջ , ջրջուն . հարաւային կողմերն ալ վայրի խոզ , կապիկ , լամա , և այլն :

ԲՆԱԿԻՉ , ԿՐՕՆ , ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԿԱՌԱՂԱՐՈՒԹԻՒՆ

Ամերիկայի բնակիչն է 49,000,000 • ասոնց մէկ
մասը բուն եւրոպացի է , նոյնչափ մըն ալ բուն ա-
մերիկացի , մնացածը ամերիկեցի գերիներ :

Կրօնքը՝ հարաւային կողմը գրեթէ ամէն տեղ
ուղղափառ է , Միացեալ Նահանգներուն ու Արգ-
ղիացւոց երկիրներուն մէջ նորադանդ • իսկ տե-
ղացի վայրենիները կռատաշտ են :

Կառավարութիւնը շատ տեղ հասարակապե-
տութիւն է , Պրազիլն ալ սահմանադրական կայ-
սերութիւն է :

ՌՌՒՍԻ ԱՄԵՐԻԿԱ

226

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՌՌՒՍԻ Ամերիկան Ռուսաց կայսրը վաճառա-
կաններու ընկերութեան մը յանձնած է, բայց
ընտելաց մեծ մասը գեռ ինքնագլուխ են. ասոնց
մէկ ցեղին սուկուները երկուք ճեղքուած՝ անաս-
նաբարոյ մարդիկ են :

227

ԸՆԴՅԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Ռուսի Ամերիկային միայն ծովեզերքը յայտնի
է, ան ալ գրեթէ միշտ ձիւնով ծածկած . իսկ ներ-
սերն անձանօթ :

Գլխաւոր վաճառքն է տեսակ տեսակ մորթ ու
սպիւնա ձուկը :

Բնակիչը գրեթէ 50,000 կուսակաշա :

Գլխաւոր քաղաքն է Նոր Արքանիէլ (1,000)
Սիդքա կղզիին մէջ :

ԿՐԷՆԼԱՆՏԻԱ

228

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԿՐԷՆԼԱՆՏԻԱՆ Ամերիկայի հիւսիսային ծայրն է, բոլորովին սառնապատ, ու միայն ծովեզերքը ծանօթ :

Օդը ցուրտ • տարուան մէջ ատեն կ'ըլլայ որ իրեք ամիս միակերպ գիշեր, իրեք ամիս ալ ցորեկ կ'ուենենան :

Բերքն է ամիանդ, հանքային ածուխ, կրանիդ, և ուրիշ քարեր :

Բնակիչները Եսքիմացիք կ'ըսուին՝ որ հասակով պզտիկ մարդիկ են, ու որսորդութեամբ կապրին • ձմեռը գետնափոր տեղուանք կը բնակին, իսկ ամառը ծովու շան կաշիէ շինած վրանի տակ :

Աս երկիրը Տանիմարդացիք գտան 983ին • բայց հիմա կեսը Անգղիացւոց ձեռքն է :

Բնակիչն է 22,000, գրեթէ բոլորն ալ քրիստոնեայ :

ՆՈՐ ԲՐԻՏԱՆԻԱ

229

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՌՆՁ աս երկրին մեծ մասը Գաղղիացւոց ձեռքն էր • 1760ին Անգղիացիք առին , անունն ալ դրին Նոր Բրիտանիա :

230

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Նոր Բրիտանիոյ մեծ մասն անձանօթ է , հողը թաց , օդը ցուրտ • միայն հարաւային կողմը բարեբեր է :

Բնակիչը 2,002,000 , շատը եւրոպացի և ուղղափառ , մնացածը տեղացի կուսապաշտ :

Գլխաւոր քաղաքներն են •

ՔԻՊԻՔ (40,000) Գանատային մեջ ամուր ու վաճառաշահ քաղաք է :

ՄՈՆՐԵԱԼ (44,000) որ մօրթի վաճառք ունի :

ՀԻԼԻՖԻՔՍ (15,000) աղուոր նաւահանգիստ ունի :

Ուրիշ քաղաքներն են • Ֆրեսերիքդըն , Ս • Յովհաննէս , Սիտնէյ և Լուիզպուրկ :

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԻՔ

231

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ նահանգներն ատենով մեծ մասամբ Անդղիացւոց ձեռքն էին • ետքը կամաց կամաց անոնցմէ և ուրիշներէն զատուեցան ու առանձին տէրութիւն եղան իրարու դաշնակից • որոնք հիմա 33 նահանգ են և հինգ դաւառ , և մէկ գլխաւոր իշխան մը ունին՝ որ չորս ասորին մէյմը կը փոխուի :

232

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Աս ընդարձակ երկիրն Ատլանտեան օվկիանոսէն ինչուան Մեծ օվկիանոսը , Մեքսիկոյի նեղուցէն ալ ինչուան Սուրբ Լաւրենտիոս գետը կ'երթայ :

Օդը տեղ տեղ ցուրտ է , տեղ տեղ ալ տաք • խի հարաւային կողմի օդը թաց ու մնասակար :

Գլխաւոր բերքն է բամբակ , շաքար , ծխախոտ , քաքաոյ , լեղակ :

Բնակիչը 27,937,000 , շատը եւրոպացի նորա-
ղանդ , մնացածը տեղացի :

Զօրքը 12,923 ե նաւատորմիդը 80 կաոր նաւ :

Աս երկրիս մէջ քաղաքականութիւնը , արուեստ-
ներն ու գիտութիւնները քիչ ատենի մէջ շատ ա-
ռաջ գնացած են , ինչպէս նաև երկաթուղիները :

233

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՎՈՒՈՇԻՆԿԴԸՆ (40,000) գլխաւոր քաղաքն է :

ՆՈՐ ԵՕՐԻՔ (623,000) վաճառականութիւնը շատ
բանուկ է :

ՓԻԼՅԳԵԼՓԻՅ (410,000) աս քաղաքիս մէջ գի-
տութիւնները շատ ծաղկած են :

ՊԵԼԴԻՄՈՐ (170,000) ասոր նաւահանգիստը
2,000 նաւ կրնայ առնել :

ՆՈՐ ՕՌԼԷՅՆ (135,000) բնակիչներուն մեծ
մասը գաղղկացի են :

ՊՈՍԴԸՆ (140,000) հոս ծնած է ֆրանքլին բնա-
խօսը :

ՍԱՆ-ՓՐԱՆՉԻՍԿՈՅ (60,000) գեղեցիկ ծոցի մը
վրայ նոր շինուած քաղաք է , որուն բնակիչներն
օրէ օր կ'աճին :

Մ Ե Ք Ս Ի Կ Ո Յ

234

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մ Ե Ք Ս Ի Կ Ո Յ Ի Երկիրը 1521ին Սպանիացւոյ ձեռքն անցաւ . բայց 1820ին բոլոր բնակիչները դուռն քաշեցին ու զատ զատ հասարակապետութիւններ եղան՝ իրարու դաշնակից :

235

Ը Ն Դ Տ Ա Ն Ո Ւ Ր Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Մեքսիկոյի Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է , ու շատ հրաբուխներ ունի :

Գլխաւոր բերքն է արծաթ , ոսկի , բամբակ , շաքար , ծխախոտ , ցորեն , լեղակ , որդնուկ՝ որ ծիրանի ներկ կ'ըլլայ :

Օդը ներսերը բարեխաան իսկ ծովեզերքը տաք , թաց ու վնասակար :

Բնակիչն 8,000,000 ուղղափառ . զօրքը 90,000 :

236

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՄԵՔՍԻԿՈՅ (250,000) Ամերիկայի ամենէն մեծ ու ամենէն աղուոր քաղաքն է . մայր եկեղեցին մեծագործ ու հարուստ . փողերանոցը շատ երևելի : Մեքսիկոյին մօտ եղած լճերուն վրայ եղէգներով շինած շարժական պարտէզներ կան :

ԲՈՒԷՊԼԱ ՏԷ ԼՈՍ ԱՆՃԷԼԷՍ (68,000) վաճառաշահ քաղաք է :

ԿՈՒՅՆԱ ԽՈՒՅԴՈՅ (60,000) Մեքսիկոյին հարուստ արծաթահանքը հոս է :

ՔԷՐԷԴՅՐՈՅ (35,000) շատ գործարաններ ունի չուխայի , կաշի ու ծխախոտի :

ՈՒՆԻՍԿՍ (24,000) կը բերէ բամպակ , շաքար , մետաքս , որդնուկ :

Ս . ԼՈՒԻՍ ԲՈՒՈՍԻ (12,000) շատ հարուստ հանք ունի :

ԳԱՄԲԷՉԷ (20,000) Եռագագան թերակղզւոյն արևմտեան ափանցը վրայ մեծ վաճառականութիւն ունի մամի և դունաւոր փայտի մը որ իր անուամբը կը կոչուի :

ՉՈԼՈՒԼԱ (16,000) ամենով Մեքսիկայւոց կրօնքին գլխաւոր քաղաքն էր . հոս մեծ քառակուսի բուրդ մը կայ աւերակ :

ՎԷՐԱ ԳՐՈՒՍԷ (15,000) Եւրոպացւոց վաճառականութեան բանուկ տեղն է :

ԿՈՒՍԳԵՄԱԼԱ

Կ Ս Մ

Մ Ի Ս Յ Ե Ա Լ Ն Ս Հ Ա Ն Գ Բ Մ Ի Ջ Ի Ն

Ս Մ Ե Ր Ի Կ Ո Ց

237

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԿՈՒՍԳԵՄԱԼԱՆ Էրկար ատեն Սպանիացւոց ձեռքն էր • 1821ին զատ հասարակապետութիւն եղաւ , Տ անկախ տէրութիւններէ ձեացած • Կուադեմալա , Սան Սալվատոր , Հոնտուրաս , Կիպարակուա և Գոսպաուիդա :

238

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Կուադեմալային հասարակապետութիւնը Մեքսիկոյէն ինչուան Բանամայի պարանոցը կ'երթայ : Երկիրը լեռնոտ է , հողը բարեբեր , օդը բարեխառն՝ բայց վնասակար :

Շատ հրաբուխներ ունենալուն համար՝ գետնաշարժն անպակաս է :

Բերքն է մարացորեն , բամբակ , շաքար , լեղակ ու աղնիւ փայտեր :

Բնակիչն 2,000,000 ուղղափառ :

239

ԳԼԽԱԽՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԿՈՒԱԴԵՄԵԼԱ (60,000) ասոր տեղն ուրիշ քաղաք մը կար նոյն անունով որ 1777ին գետնաշարժով մը գետնին տակն անցաւ :

ՎԵՐԱԲԱԶ կամ ԳՈՐԱՆ (12,000) հոս տարին ինն ամիս միակերպ անձրև կուգայ :

ԳԱՐԴԱՎՈՅ (20,000) ասոր ծովեզերքէն տեսակ մը ոսարէ կ'ելլէ որ փորուն մէջ կարմիր ներկ ունի :

ԳՈԼՈՒՄՊԻՍ.

240

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Այ երկրիս բնակիչները 1811ին Սպանիացւոցմէ դուրս քաշեցին, և իրեք հասարակապետութիւն եղան իրարու դաշնակից. Նոր Կրանադա, Ալենեյ-հուէրա և Քիդոյ:

241

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Գողումախան Բանամայի պարանոցէն ինչուան Կուլանա ու Բէրու կ'երթայ:

Երկիրը լեռնոտ է ու շատ հրաբուխներ ունի:

Օդը բարեխառն, տեղ տեղ ալ ցուրտ, ծովէ- շէրքի օդը մնասահար:

Բերքն է ոսկի, արծաթ, փլադին, պղինձ, ազ- նիւ քարեր, քաքաոյ, ծխախոտ ու քինա:

Բնակիչը 3,600,000:

Կրօնքն ուղղափառ:

242

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՊՈԿՈՒՄ ԿԱՄ ՍԱՆԴԱ-ՖԷ ՏԷ ՊՈԿՈՒՄ (40,000)
ասոր դիրքը խիստ բարձր է, օդը բարեխառն մօ-
տերը մեծ ջրվեժ մը կայ որ 350 սանաչափ բարձ-
րութենէն վար կ'իյնայ :

ՔՈՒՒՐՈՅ ԿԱՄ ՔՒՐՈՅ (70,000) աշխարհիս մէջ
ամենէն բարձր դիրք ունեցող քաղաքն է, ծովուն
երեսէն 2885 մէրը բարձր գեղեցիկ ձորի մը մէջ
շինած, անոր համար օդը տաք չէ, թէպէտև դրե-
թէ հասարակածին տակը կ'իյնայ :

ԳԱՐԻՍՃԵՆԱ (55,000) ապահով ու բանուկ
նաւահանդիստ ունի. բայց չըջակայից օդն անա-
ւող է :

ԳԱՐՅԳՅՍ (30,000) այս քաղաքը շատ վնա-
սուեցաւ երկրաշարժներէ :

ԲԱՆՍՄԱ (10,000) հարաւային ու հիւսիսային
Ամերիկայի մէջտեղը շատ աղուօր դիրք ունի :

ՎԱՐՒՆԱՍ (8,000) ծխախոտն աղնիւ է :

ԿՈՒՅԱՆԱ

243

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԿՈՒՅԱՆԱՆ Օրենքը գետինն ու Ամազոնաց գե-
տինն մեջտեղը կ'ելնայ :

Ասոր ծովեղերքը շատ լճեր կան :

Օդը բարեխառն է . տարինն ութը ամիս միա-
կերպ անձրև գալէն ետքը , չորս ամիս անանկ . չոր
ու տաք կ'ըլլայ որ կենդանիներուն շատը անօթի
ծարաւ կը ջարդուին :

Բերքն է խահուէ , շաքար , խէժ , քոքոյ , բամ-
պակ ու սղակ :

Բնակիչն է 280,000 ուղղափառ :

Երկրին մեծ մասը Գոլուամպիոյ ու Պրազիլի
կառքը կը սեպուի . մնացածին մէկ կառքը Հոլան-
տացւոյ ձեռքն է , մէկը Արգոլիայւոյ , մէկն ալ
Գարդիայւոյ . ներսի կողմերը գեռ անձանօթ են :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԲԱՐԱՄԱՐԻՊՈՅ (20,000) Հողանտացւոց զլիաւոր քաղաքն է, շատ վաճառաշահ :

ՃՈՐՃԳՈՐԸՎՅ Կամ ՍԻԱՊՐՈՒՔ (20,000) Անդրկիացւոց ձեռքը վաճառաշահ քաղաք է :

ԳԱՅԷՆ (5,200) Գաղղկիացւոց ձեռքը համա՛նուն կղզիին մէջ առուտուրի քաղաք է :

ՊՐԱԶԻԼ

245

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊՐԱԶԻԼԻ երկիրն ինչուան 1822 Բորգուզէզ ներուն ձեռքն էր • անկէց ետքը Բորգուզալի Թափաւորին տղան ինքնագլուխ կայսր եղաւ հոն • Բայց 1835էն 'ի վեր միաստեատական կառավարութիւնը սահմանադրական եղաւ :

246

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Պրազիլը հարաւային Ամերիկայի արեւմտեան կողմը կ'իյնայ :

Այրեցած դօտինն տակն ըլլալուն համար խիստ տաք է , բայց ամիսներով ալ անձրև կուգայ :

Հողը շատ պտղաբեր :

Գլխաւոր բերքն է ոսկի , պղինձ , ադամանդ , և ուրիշ ազնիւ քարեր ու փայտեր • մանաւանդ Պրազիլի փայտ ըսուածը՝ որ աղէկ կարմիր ներկ կ'ըլլայ • անկէց զատ բրինձ , բամբակ , ծխախոտ , շա-

քար : Կենդանիներէն ալ կապիկ , կոկորդիլոս ,
ջայլամ , օձ ու այլուոր թիթեռնիկներ :

Բնակիչը 7,677,800 բոլորն ալ ուղղափառ :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՌԻՑ ԵԱՆԷՅՐՕ կամ ՌԻՈՅ ԺԱՆԷՅՐՈՅ կամ
ՍՈՒՐԲ ՍԵԲԱՍՏԻԱՆՈՍ (296,000) աշխարհիս ամե-
նէն ապահով ու մեծ նաւահանդիսաներէն մէկն է :

ՊԱՀԻՍ կամ ՍԱՆ-ՍԱԼՎԱՏՈՐ (120,000) ին-
չուան 1763 Պրազիլի մայրաքաղաքն էր . հիմա ալ
բոլոր երկրին արքեպիսկոպոսը հոս կը նստի :

ԲԵՌՆԱՄՊՈՒԳՈՅ կամ ՌԷՍԻՅԷ (60,000) խիստ
վաճառաշահ քաղաք է :

ՎԻԼԼԱՌՈՒԳԱ (20,000) արծաթահանքն առատ է :

ՍՈՒՐԲ ՊՕՂՈՍ (22,000) մեծ ոսկեհանք ունի :

Բ Է Ր Ո Ի

248

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Քանի որ Ամերիկան գտնուած չէր, Բէրուի Թագաւորութիւնը շատ զօրաւոր ու հարուստ էր զամ է. 1821ին Բէրուի բնակիչները դուրս քաշեցին Սպանիացւոցմէ ու զատ հասարակաստութիւն եղան :

249

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Բէրուն Գոլուամաիոյ հարաւային կողմը՝ Մեծ ուկիանոսին ծովեղերքն է :

Երկիրը շատ տեղ աւազոււտ է :

Մեծ ուկիանոսին ծովեղերքը ոչ անձրև կուգայ, ոչ որոտմունք կ'ըլլայ :

Բերքն է ոսկի, արծաթ, սնդիկ, զմբուխառնի նաև դինի, օղի, շաքար, քինա, բուրդ : Այլրի կենդանիներուն մէջ անուանի է լամա ըսուած ոչխարի նման կենդանին : Թաց տեղուանքը ահա-

դին օձեր ու անթիւ ճճիներ կը դանուին • տեսակ մը ճճի ալ կայ «սսիւ» ըսուած՝ որ թղթի նման բոյն կը շինէ :

Բնակիչն է 2,500,000 ուղղափառ , բայց կուսակազմ լեռնացիներ ալ կան :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԼԻՄԵ (70,000) աս քաղաքն Սպանիացիք շինեցին 1524ին՝ իրեք փարսախ ծովէն հեռու նաւահանդիսառ ունենալով Գալեայոյ քաղաքը :

ԳՈՒՍԳՈՅ (46,000) Բերուի հին թաղաւորութեան մայրաքաղաքն է :

ԱՐԻՔԻՓՍ (36,000) դիրքը գեղեցիկ , բայց մեծ հրարուխի մը մօտ ըլլալուն համար՝ շատ գեանաշարժ կ'ունենայ :

ԴՐՈՒԽԻՅԼՈՅ (14,000) Սպանիացիք շինեցին աս քաղաքը • մօտերը կան Բերուացի հին շինուածոց մնացորդներ :

ԿՈՒՍՆԳՎԵԼԻԴԵ (12,000) ունի առատ սնդկի հանք :

ՊՈԼԻՎԻՍ.



251

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՊՈԼԻՎԻՍ 1825էն ՚ի վեր ինքնադուլս հասարակապետութիւն մըն է :

Երկրին մէջտեղուանքը լեռնոտ, արևելեան կողմը բարեբեր, արևմուտքը անբնակ անապատ :

Բերքն է դինի, ձէթ ու աղնիւ փայտեր :

Բնակիչն է 1,300,000 ուղղափառ :

252

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԼՎ ԲԼԱԴՆ կամ ՉՈՒՔԻՍԱԳՆ (15,000) ասոր քովերը հարուստ արծաթաձանք կայ :

ԼՎ ՓԱՍԶ (40,000) ոսկեհանքն անուանի է :

ԲՈՒՈՍԻ (11,000) ասոր արծաթաձանքը աշխարհիս ամենէն մեծ հանքերէն մէկն է :

ԲԱՐԱԿՈՒՍՅ



253

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԲԱՐԱԿՈՒՍՅՆ ատենով Սպանիացւոց ձեռքն էր :
 Բնակիչներուն մէկ մասը Յիսուսեան կրօնաւոր-
 ներուն ձեռքովը շատ կը թուեցաւ 1767ին . երբոր
 անոնք հեռացան , ժողովուրդն ալ շատ պակսե-
 ցաւ : Հիմա ինքնազուխ հասարակաստեալութիւն է :

Երկիրը դաշտային ու խիտ բարեբեր :

Գլխաւոր բերքն է չայ , ծխախոտ , բամբակ ,
 շաքար :

Բնակիչն 300,000 ուղղափառ :

Գլխաւոր քաղաքն է ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ (12,000) :

[Faint handwritten notes and bleed-through from the reverse side of the page.]

ԼՍ. ԲԼՍԴԱ



254

ԸՆԴՏԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԼՍ ԲԼՍԴԱՆ 1515ին Սպանիացիք դտան .
1810ին բնակիչները գլուխ քաշեցին անոնցմէ , և
ինքնադլուխ հասարակապետութիւն մը եղան Դաշ
նակցութիւն արհենդինայ անուամբ :

Երկրին մեծ մասը թաց է , օդը տաք :

Բերքն է գինի , ձէթ , բամպակ , շաքար ու լա
մայի աղնիւ բուրդ :

Բնակիչն 2,000,000 ուղղափառ :

Գլխաւոր քաղաքն է ՊՈՒԿՆՈՍ ԱՅՐԷՍ (90,000)
Բլադա գետին վրայ , օդը շատ աղէկ . վաճառա
շահ քաղաք է :

ՄԵՆՏՈՋԱ (20,000) աղնիւ գինի ունի :

ԳՈՐՏՈՎԱ (16,000) մեծ վաճառականութիւն
ունի :

ՔԻՒԻ Կամ ՉԻՒԻ

255

ԸՆԴՏԱՆՈՒԲ ԳԻՏԵԼԻՔ

ՔԻՒԻՒՆ քնակիչները 1818ին զատուեցան Սպանիացւոցմէ ու ազատ հասարակապետութիւն եղան :

Քիւլին Բէրուի հարաւային կողմը՝ Գորաիլեան լեռներուն ու Խաղաղական ուկիանոսին մէջտեղը կ'իյնայ :

Երկիրը լեռնոտ ու ջրոտ է, օդը բարեխառն : Բերքն է պղինձ, ոսկի, արծաթ ու աղնիւ քարեր :

Բնակիչը 1,500,000 ուղղափառ :

Գլխաւոր քաղաքն է ՍԱՆԴ-ԻԱԿՈՅ (80,000) որուն նաւահանգիստն է Վալբարաիզոյ :

ՎԱԼԲԱՐԱԻԶՈՅ (37,000) գեղեցիկ նաւահանգիստ ունի, և Ամերիկայի արեւմտեան ափանցը ամենէն վաճառաշահ քաղաքն է :

ՎԱԼՏՐՎԻԱ (3,000) Ամերիկոյ գեղեցիկ նաւահանգիստներէն մէկն է :

ԲԱԴԱԿՈՆԻԱ

256

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԲԱԴԱԿՈՆԻԱՆ Ամերիկայի հարաւային ծայրն է, գրեթէ բոլորն ալ անձանօթ :

Արեւելեան ծովեզերքը տաք ու աւազուտ է, և անուշ ջուր չունի :

Բնակիչն է 200,000 բարձրահասակ ու հիւրասէր մարդիկ • ասոնք բնակութեան քաղաք չունին, հասպա խումբ խումբ դաշտերու մէջ կը բնակին :

ԱՆԴՈՒԼԵԱՆ ԿՂՁԻՔ

257

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՆԴՈՒԼԵԱՆ կղզիներն որ Արեմտեան Հնդկաստանն ալ կ'ըսուին, գտաւ Քրիստաւոսը Գոլումպոս 1492ին: Ետքը Սպանիացիք կամաց կամաց տիրեցին բոլոր առ կղզիներուն, ու տասը տարուան մէջ Մեծ Անդիլեաններուն բնակիչները ջնջեցին, որ վասկոն մարդիկ էին:

Փոքր Անդիլեան կղզիներուն բնակիչներն որ Գարայիտ կ'ըսուէին, կտրիճ ըլլալով Սպանիացւոց շատ դէմ դրին, ինչուան որ 1600ին ատենները Եւրոպայի ուրիշ ազգերը կամաց կամաց զանոնք ալ ջնջեցին:

258

ԸՆԴՏԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Անդիլեան կ'ըսուին ան կղզիներն որ Հիւսիսային ու հարաւային Ամերիկայի մէջտեղուանքը կ'իյնան: Աս կղզիներն իրեք գլխաւոր խումբ կը բաժ-

նուին . Մեծ Անդիլեանք , Փոքր Անդիլեանք , և
Լուգայեան կամ Պահամա կղզիները :

Մեծ Անդիլեան կ'ըսուին առ չորս կղզիները .
Գուպա , Ճամայիգա , Հայիդի կամ Սուրբ Գովի-
նիկոս ու Բողոյ Ռիգոյ :

Փոքր Անդիլեան կղզիներուն գլխաւորներն ա-
սոնք են . Սուրբ Խաչ , Սուրբ Բարթուղիմէոս ,
Սուրբ Լուչիա , Սուրբ Աինչենցիոս , Կրանատա ,
Կուատալուբա , Մարդինիկէ , Սուրբ Եւատա-
քէոս , և Գուրասաոյ :

Լուգայեան կղզիները մանր կղզիներ են Անդ-
ղիացւոյ ձեռքը . ասոնց մէջ անուանի է Կուանա-
հանի կամ Սան Սալվատոր կղզին , որ Գոլոմպոսի
առ կողմերն առջի դառձ տեղն է :

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է , ու շատ հրա-
բուխներ ունի :

Օդը տաք ու թաց է . հոկտեմբերէն ինչուան
ապրիլ չոր կ'ըլլայ , մնացած ամիսները միակերպ
անձրև կուգայ :

Սաստիկ մրրիկներ ալ շատ կ'ըլլան առ կղզիներ-
ըր , անանկ որ ինչուան շէնքերն ու տները կը փրւ-
ցրենն :

Հողը շատ պտղաբեր է . գլխաւոր բերքն է լե-
ղակ , բամպակ , շաքար , ծխախոտ , խնկեղէն , և
Ափրիկէի ու Ասիոյ ամէն բերքերը . միայն թէ Եւ-
րոպայի բոյսերն ու կենդանիները հոն երթան 'նէ'
քիչ ատենի մէջ ցեղերնին կը փոխուի :

Բնակիչն է 3,360,000 :

259

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՀԱՒԱՆԱ (112,000) Գուպա կղզիին գլխաւոր քաղաքն է, ամուր ու շատ վաճառաշահ :

ՔԻՆՎՍԻԸՆ (33,000) Ճամայիգային մէջ երևելի վաճառաշահ քաղաք է :

ԲՈՐԴ-Օ-ԲՐԷՆՍ (28,000) Հայիդի կայսերութեան մայրաքաղաքն էր, աղէկ նաւահանգիստ ունի և բանուկ վաճառականութիւն :

ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ (20,000) Մարդինիկէ կղզիին մէջ վաճառաշահ քաղաք է :

ՍՈՒՐԲ ԴՈՄԻՆԻԿՈՍ (12,000) ասենով Հայիդի Սպանիական մասին գլխաւոր քաղաքն էր, Հիմա ալ Դոմինիկեան հասարակապետութեան մայրաքաղաքն է. աս քաղաքը Գոլոմպոսի եղբայրը շինեց :

ԲՈՒԷՆԴ-Ա-ԲԻԴՐԸ (12,000) գեղեցկաշէն քաղաք է Կուատալուբայի մէջ, և նաւահանգիստ ու բանուկ վաճառականութիւն ունի : 1842ին սասանութենէն այս քաղաքին մեծ մասը կործանեցաւ :

ՖՈՐ-ՌՈՒԱՅԱԼ (10,000) Մարդինիկէի մայրաքաղաքն է :

The first part of the paper
 deals with the general theory
 of the subject. It is divided
 into three main sections.
 The first section discusses
 the basic principles of the
 theory. The second section
 deals with the applications
 of the theory. The third
 section discusses the
 historical development of
 the theory. The paper
 concludes with a summary
 of the main results.

ՈՎԿԻՍՆԻՍ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

260

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՈՎԿԻՍՆԻՍ Եւրոպացիք գրեթէ Ամերիկան գտած ատեննին գտան . անոնցմէ առաջ Արաբացիք ասոր Հարաւային Ասիա ըսուած կողմը գնացեր ու իրենց հաւատքը տարածեր էին 1100ին կամ 1200ին ատենները , բայց Բորգուգէզները զիրենք հալածեցին : Անկէ ետև Հոլանտացիք , Սպանիացիք և Անգղիացիք այլևայլ գաղթականութիւններ հաստատեցին հոն :

261

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Ուկրանիա կ'ըսուին հարաւային Ուկրանոսի մէջ ցրուած կղզիները , որ բոլորը մէկէն Եւրոպայէն շատ մեծ է :

Տարածութիւնը կը սեպուի 3,100,000 քառակուսի մղոն :

Օդն ընդհանրապէս տաք է , բայց ծովիզէրքը բարեխառն :

Երկրին մեծ մասը լեռնոտ է, ծովեզերքն ալ շատ տեղ ժայռերով լեցուն :

Գլխաւոր բերքն է հացի ծառ, քոքոյ, գեանա-
խնձոր ու ամէն տեսակ խնկեղէն :

Բնակիչը 28,000,000, շատը սև, վայրենի, ան-
կիրթ ու պակասամիտ • ինչուան գեանն բանիլն
ալ չեն գիտեր • հիւղերու մէջ կը բնակին, որսոր-
դութեամբ կ'ապրին, ոմանք ալ մարդակեր են :

Բոլոր Ավկիանիան իրեք գլխաւոր մաս կը բաժ-
նուի • Նոգազիա կամ Մալէզիա, Աւսդրալիա, և
Բոլինէզիա կամ Արևելեան Ավկիանիա :

ԳԼԽԱՒՈՐ ԿՂԶԻՆԵՐԸ

262

ԿԱԼՈՒԱԾՔ ՀՈԼԱՆՏԱՑՒՈՑ

ՃՄԻՅ (8,000,000) Ավկիանիոյ ամենէն բազմա-
մարդ ու ամենէն ծաղկած կղզին է, և գրեթէ
բոլոր հողանտացւոց իշխանութեան տակն է : Մայ-
րաքաղաք ունի Պադա-իա (53,000), որ Մալէզիայի
մէջ հողանտացւոց ամէն կալուածոցը գլխաւոր տե-
ղին է, և անոնց Չինու, Հնդկաց և Ճաբոնի հետ ը-
րած վաճառականութեան կեդրոնը • բայց օդը վնա-
սակար : Ուրիշ նշանաւոր քաղաքներն են • Չէրամ՝
Ճաւայի արևմտեան դին, Չէրիպոն (10,000), Սա-
մարանկ (35,000), և Սո-բո-պայա (50,900) հիւսի-
սային ծովեզերաց վրայ, Չո-փլո-ֆարդա (55,000) և
Սո-բո-փարդա (70,000) կղզւոյն ներսերը : Այս եր-
կու քաղաքները բնիկ սուլդաններու ձեռքն են,
բայց հարկատու հողանտացւոց, և Մադարամայ
հին կայսերացմէ կ'իջնին, որ ատենով ճաւա

կղզւոյն մեծ մասին կը տիրէին : Արօնքնին՝ ոմանցը մահմէտական է , ոմանցն ալ կուսապաշտ :

ՄՈՒՄԵՐՐԵ (5,000,000) Սուեանեան նեղուցով կը բաժնուի Ճաւայէն և երկու մաս ունի . մէջ մը անկախ՝ որ հիւսիսային կողմը կ'իյնայ և գլխաւոր քաղաքն է Աւէն (20,000) , և Սիւֆ (3,000) . մէյմըն ալ Հոլանտացւոց ձեռքը՝ որ հարաւային կողմը կ'իյնայ , և գլխաւոր քաղաքն է Բապանկ (10,000) , ուր կը նստի Հոլանտացի կուսակալը , և Բալաճայանկ (20,000) մայրաքաղաք համանուն պետութեան մը՝ զոր գրաւեցին Հոլանտացիք 1821ին :

Ճաւայի և Սումատրայի կղզիներուն շատը Հոլանտացւոց ձեռքն են . որոնց մէջ նշանաւոր են . Պանգա՝ անազի հարուստ հանք ունի , Պիլլիթոն , Սումալաւա , Ֆլորէս , և Գիմոր :

ՊՈՌՆԷՐՅ (4,000,000) կղզին կրկին մեծութիւնն ունի Գաղղիոյ , և մէկ մասին Հոլանտացիք կը տիրեն , մեծագոյն մասը դեռ անկախ է . նշանաւոր է Պոննէոյ (10,000) ուր սուլդան մը կը նստի , և ատենով կղզւոյն մեծագոյն մասին կը տիրէր :

ՉԻԼԵՊԷՍ (3,000,000) մեծ կղզին , որ գրեթէ բոլորովին Հոլանտացւոց իշխանութեան տակն է : Այլեայլ ցեղ բնակչաց մէջ նշանաւոր է Պոնի Ըսուած ժողովուրդը՝ որ ճարտար վաճառականք են և նաւարկուք : Հարաւային կողմն է Մախասարի տէրութիւնը , այս անուամբ կը կոչուէր երբեմն բոլոր Չիլէպէս կղզին , ինչպէս նաև այն նեղուցը որ կը բաժնէ զՊոննէոն :

ԴԻՌՆԱԴ . Փոքրիկ կղզի յարևմուտս Ճիլդոյի , ուր կը նստի Սուլդան մը հարկատու Հոլանտա

ցւոց, որուն իշխանութիւնը կը տարածուի Ճիլղոյ
և Չէլէպէս կղզիներուն մէկ մասին վրայ :

ՊԱՆՏԱ • պղտի կղզի մը, ուր հոլանտացիք հրնդ-
կաստանի ընկոյզ կը մշակեն :

ԱՄՊՈՅՆՆ (50,000) • հոս կը նստի Մոլուդդեան
կղզեաց հոլանտացի կուսակալը • մեխակի ծառ
ունի :

263

ԿԱԼՈՒԱԾԻ ՍՊԱՆԻԱՅԻՈՑ

ՓԻԼԻՊՊԵԱՆ կղզիք (4,500,000) ըստ մեծի մա-
սին Սպանիացւոց իշխանութեան տակն են, և կը
բաղկանան հազարաւոր մանր կղզիներէ, որոնցմէ
գլխաւորներն են •

ԼՈՒՍՆՈՆ (2,300,000) որուն մեծագոյն մասը
Սպանիացւոց ձեռքն է • նշանաւոր է Մանիլա
(100,000) մայրաքաղաքը բազմահարուստ և վա-
ճառաշահ :

ՄԻՆՏԱՆՆԱՍ (1,200,000) որուն գլխաւոր քա-
ղաքներն են • Սամպուանիամ (1,000) և Սալանիամ
(10,000) :

ԲԱԼԱԻԱՆ • քիչ ծանօթ մեծ կղզի մըն է • Սպա-
նիացիք միայն հիւսիսային արևելեան կողմը կը տի-
րեն :

Ասոնք ամէնն ալ աղէկ բարեբեր են • բայց շատ
գետնաշարժ ու փոթորիկ ունին :

ՄԱՐԻԱՆԵԱՆ կամ ԱԻՆՉԱԿԱՑ կղզիք (6,000)
Միգրոնեզիոյ մէջ՝ Սպանիացւոց իշխանութեան
տակն են : նշանաւորներն են • Կասահան (5,000)

հոս կը նստի այս արշիպէղագոսին կուսակալը, և
Գինիան :

Այս կղզիներուն հիւսիսային կողմը ահագին
ժայռ մը կայ բրգաձև, որ Ղուկաս կին կ'ըսուի :

264

ԿԱԼՈՒԱԾՔԻ ԳԱՂՂԻԱՅԻՈՅ

ԳԱՀԻԴԻ կղզիք (135,000), որոնց մէջ գլխա-
ւորն է Գահիդի :

ՄԱՐԻԲԻԶԵԱՆ կղզիք (40,000), որոնց մէջ գլ-
խաւորն է Նոսփահիլա :

ՆՈՐ-ԳԱԼԵՏՈՆԻԱ (40,000) Գաղղիացիք գրա-
ւեցին զայն 1853ին :

265

ԿԱԼՈՒԱԾՔԻ ԲՈՐԴՈՒԳԱԼԱՅ

Բորգուգէզներն որ ամէն Եւրոպացի ազգերէն
առաջ Ուկրաինիոյ մէջ հաստատուեցան, հիմա միայն
ԳԻՄՈՐ կղզւոյն մէկ մասն ունին, որուն գլխաւոր
տեղն է Տիււի (2,000), և Փլը կղզւոյն ալ մէկ մասը :

266

ԿԱԼՈՒԱԾՔԻ ԱՆԳՂԻԱՅԻՈՅ

ՆՈՐ-ՀՈԼԱՆՏԱ կամ ԱՒՍՏՐԱԼԻԱ (800,000)
այնչափ ընդարձակ է այս կղզին որ շատ աշխար-
հապիրք երրորդ ցամաք մը կը համարին. ներսերն

ըստ մեծի մասին դեռ անձանօթ են , ու ծովեղերաց վրայ այլևայլ դաղթահանութիւններ հաստատած են Անգղիացիք . ինչպէս են

Հարաւային Նոր Ուելս . գլխաւոր քաղաքն է Սիպ-նէյ (20,000) .

Վիկտորիա . գլխաւոր քաղաքն է Մելբուռն (25,000) .

Հարաւային Աստրալիա . գլխաւոր քաղաքն է Ապելայիփէ (15,000) .

Արեւմտեան Աստրալիա . գլխաւոր քաղաքն է Բէրփ :

Վիկտորիա գաւառը քան զամէնն աւելի ոսկեբեր է , բայց Նոր-Ուելլզի ու Հարաւային Աւստրալիոյ մէջ ալ ճոխ ոսկեհանքեր կան . վերջերս արեւմտեան Աւստրալիոյ մէջ ալ առատ ոսկի գտուեցաւ :

ՎԱՆ-ՏՐԵՄԵՆ կղզի (45,000) առատ երկաթի հանք ունի , գլխաւոր քաղաքն է Հոլարդ-Իւլէ (16,000) :

ՆՈՐՖՈՔ (1,300) , ուր յանցաւորները կ'աքսորուին :

ՆՈՐ-ՉԵԼԱՆՏՆ (250,000) . զոր ոմանք Դասմանիա կը կոչեն , երեք կղզի են՝ երկուքը շատ մեծ , որ Դոսփի նեղուցով մէկմէկէ կը բաժնուին . Իսաւնասաւլի , Դաւլայի-Բոանամմա :

ԼԱՊՈՒՅՆ . Պոանէոյի հիւսիսային արեւմտեան ափանցը մօտ սղտի կղզի մըն է , զոր վերջերս գրաւեցին Անգղիացիք :

ԱՆԿԱԽ ԿՂԶԻՔ

267

ՆՈՒԱԶԻԱ

ՍՈՒՆՈՒ կղզիք • ասոնց սուղգանը կ'իշխէ նաև Պոսնէոյ և Բալուան կղզեաց մէկ մասին, ու մօտաւոր քանի մը մանր կղզիներու :

268

ԱՒՍՏՐԱԼԻԱ

ՆՈՐ-ԿՈՒՐՆԵԱ կամ ԲԱԲՈՒԱԶԻԱ (500,000) խումբ կղզեաց, ուր կը գտուին բազմաթիւ գաղափար, քնարահաւ, սև կարապ և գրախտահաւ :

ՆՈՐ-ԲՐԻՏԱՆԻԱ և ՆՈՐ-ԻՌԼԱՆՏԱ (65,000), որոնց միայն քանի մը ծովեզերեաց տեղերը ծանօթ են :

ՍՈՂՈՄՈՆԵԱՆ կղզիք (100,000) որոնք կ'ըսուին նաև Իլլիթ Արշակունեաց և Նոր-Գեորգիա :

ՉԱՐԼՈՒԿ կամ ԼԱԲԵՐՈՒԶ կղզիք (50,000) որոնցմէ մէկուն մօտերը նաւաբեկեցաւ Լաբերուզ գաղղիացի նաւապետն 1788ին :

ՆՈՆ-ՆԵՐՐԻՏԻ կղզիք (150,000) ուր մարդակերներ ալ կան • ասոնցմէ ամենէն մեծը կ'ըսուի Իլլի Նոֆոյն սրբոյ :

269

ՄԻԳՐՈՆԵԷԶԻԱ

ԱՐԸԻՊԵՂԱԳՈՍ ՄԱԿԵՏԼԱՆԻ (1,000) բազմաթիւ կղզեաց խումբերէ կը բաղկանայ :

ԲԵԼԵՎ, կամ ԲԱԼԱՌՍ կղզիք (10,000) թաւ ան-
տառներով ծածկուած են :

ԳԱՐՈՒԻՆԵԱՆ կղզիք (50,000) բազմաթիւ կղզ-
զեաց խումբեր են :

ՄԻԻԼՎՐԱՎ, կղզիք (2,000), որ երկու խումբ կը
բաժնուին Ռաբաթ և Ռալի :

ՔԻՆՎՍՄԻԼ, մանր կղզիներ են :

270

ԲՈՒԼԻՆԵՉԻԱ

ՍԱՆՏՈՒԻՉ կամ ՆԱՎԱՅԻ կղզիք (150,000) ուր
քաղաքահանութիւնն ու քրիստոնէութիւնը ծաղ-
կած են և կանոնաւոր կառավարութիւն, դպրոց-
ներ ու ընդարձակ վաճառականութիւն ունին :

Այս կղզիներէն մէկուն մէջ սպաննուեցաւ Գուք
նաւապետը :

ՆԱՒՈՐԴԱՑ կղզիք (160,000), որ կ'ըսուին նաև
Համաա կամ Պո-կէն-Վիլ :

ՎԻԴԻ կամ ՓԻՃԻ կղզիք (85,000), երկու մե-
ծամեծ կղզիներ ունին :

ԳՈՆՎԱ կղզիք (200,000), քրիստոնէութիւնն
հոս ծաղկելու վրայ է : Գուք՝ զասոնք իշխի Բա-
րեկամաց կը կոչէ, բնակիչներէն գտած մարդասի-
րութեանն համար :

ՅԱԾՈՒՆ կղզիք կ'ըսուին հարաւային և Վրանգաւոր
կոչուած արշիպելագոսները, որոնց կղզիները
մանր են ու ցած, և ըստ մեծի մասին անբնակ :

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻՍ

ԳԼԽԱՒՈՐ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ

ԱՇԽԱՐՀԻՍ տէրութիւններուն տարածութեանէն, բնակիչներէն, զօրքէն ու պատերազմական նաւերէն կ'իմացուի ընդհանրապէս իրենց քաղաքական վիճակը • քայց իրարմէ որչափ մեծ կամ պզտիկ ըլլալին ալ որոշ հասկըցընելու համար՝ հոս քովէ քով կը դնենք գլխաւորները : Ա' աւելցընենք նաև ամէն մէկուն գլխաւոր քաղաքը, և անոնց լայնութեան ու երկայնութեան աստիճանները (Բարիզու միջօրէէն հաշուելով) • ասիկայ մեծ դիւրութիւն կրնայ տալ ուսանողներուն քաղաքացիութիւնը, ու մայրաքաղաքները գունտի կամ աշխարհացուցի վրայ շուտով գտնելու համար : Միայն թէ Եւրոպայէն զատ՝ աշխարհիս մէկալ մասերուն թէ մեծութիւնները և թէ բնակիչներուն թիւը անստոյգ ըլլալուն, մենք հոս անոնց միայն գլխաւոր աշխարհներն ու իրենց մեծութեան կամ բնակիչներուն հաւանական թիւերը դրինք • իսկ իրենց զօրքը ամենևին չդրինք :

Ե Ի Բ Ո Պ Ա

| ԱՇԽԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ | ՄԵԾՆՈՒԹՅՈՒՆ | ԲՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ | ԶՕՐՔ | ՆԱԽ | ՄԱՑՈՒՄ ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ | ԼՍՅՆ | ԵՐԿ |
|------------------------|-------------|-------------------------|---------|-----|------------------------------|---------|---------|
| ԲՐԻՏԱՆԻԱ | 110,846 | 29,000,000 | 230,000 | 626 | Լոնդոն | 51° 30' | 2 · 26 |
| ՏԱՆԻՄԻՐԳԱ | 16,500 | 2,500,000 | 30,800 | 25 | Քոբեհնահ | 55° 40' | 10 · 14 |
| ՇՈՒԷՏ | 220,000 | 4,973,000 | 144,000 | 240 | Սթոքհոլմ | 59° 20' | 15 · 43 |
| ՌՈՒՄԱՍՏԱՆ | 1,536,000 | 71,500,000 | 720,000 | 260 | Բեդլիմուրի | 59° 46' | 27 · 59 |
| ԳԱՂԱԽ | 150,000 | 36,206,000 | 800,000 | 460 | Բաթի | 48° 50' | 0 · 0 |
| ՊԵՂՃԻԱ | 8,200 | 4,623,000 | 45,000 | · · | Պիլուկ | 50° 51' | 2 · 1 |
| ՀՈՒԱՆՏԱ | 9,800 | 3,544,000 | 59,000 | 100 | Ալեքսանդրիա | 52° 22' | 2 · 32 |
| ԶՈՒՄԲԵԲԻ | 11,200 | 2,392,000 | · · · · | · · | Պեհլու | 47° 22' | 6 · 12 |
| ԱՐՄՏԻԱ | 200,000 | 37,340,000 | 800,000 | 140 | Ալեքս | 48° 12' | 14 · 2 |
| ԲՐՈՒՄԻԱ | 40,000 | 17,200,000 | 200,000 | 56 | Պեհլու | 52° 30' | 11 · 3 |

| | | | | | | | |
|------------|---------|------------|---------|-----|------------|---------|---------|
| ԳԵՐՄԱՆԻԱ | 180,000 | 44,000,000 | 600,000 | . | Ֆրանքֆորտ | 50 . 6 | 6 . 21 |
| ՊԵՐՏԵՐԱ | 22,120 | 4,542,000 | 200,000 | . | Մոնպարյ | 48 . 8 | 9 . 16 |
| ՍԱՔՍՈՆԻԱ | 4,340 | 2,039,000 | 30,000 | . | Տրեզուա | 51 . 3 | 11 . 23 |
| ՀԱՆՈՎԸ | 11,125 | 1,820,000 | 27,000 | . | Սինոլեր | 52 . 22 | 7 . 24 |
| ՍՆԻՐԴԵՄՊ . | 5,720 | 1,733,000 | 25,000 | . | Շգուդկարա | 48 . 46 | 6 . 50 |
| ԲՈՐՆՈՒԳԱԼ | 30,000 | 4,000,000 | 30,000 | 52 | Լիպոնա | 38 . 42 | 14 . 28 |
| ՍՊԱՆԻԱ | 130,000 | 16,000,000 | 200,000 | 100 | Մադրիս | 40 . 24 | 6 . 12 |
| ՍԱՐՏՆԻԱ | 21,000 | 5,200,000 | 150,000 | 60 | Դուբին | 45 . 4 | 5 . 21 |
| ԴՈՍՏՆԱ | 6,440 | 1,806,940 | 20,000 | . | Ֆիորենցա | 43 . 46 | 8 . 55 |
| ՀՈՐՄ | 13,000 | 3,126,263 | 15,000 | . | Հոմ | 41 . 53 | 10 . 8 |
| ԳԱՐՈՒԻ | 33,250 | 9,117,050 | 153,000 | 130 | Կարոլե | 40 . 51 | 10 . 55 |
| ԲԱՐՄԱ | 1,660 | 500,000 | 5,672 | . | Բարմա | 44 . 48 | 7 . 59 |
| ՄՈՏՆԱ | 1,570 | 605,000 | 14,658 | . | Մանենա | 44 . 38 | 8 . 35 |
| ՏԱՃԿԱՍՏՆԱ | 112,500 | 16,000,000 | 300,000 | 135 | Կոստանդն . | 41 . 0 | 26 . 38 |
| ՅՈՒՆԱՍՏՆԱ | 12,000 | 1,000,000 | 12,000 | 30 | Աթէնք | 37 . 58 | 21 . 23 |

Ա Մ Ի Ա

| ԱՇԽԱՏԱՆԻՔ | ՄԵՃՈՒԹ | ԲՆԱԿԻՉ | ԳԼՆ • ՔԱՂԱՔ | ԼՍՅՆ • | ԵՐԿ • |
|-------------|-----------|-------------|-------------|---------|---------|
| ԱՄՈՑ ՌՈՒՄ • | 4,000,000 | 5,000,000 | Բոսորլըք | 58° 12' | 65° 58' |
| ԱՄՈՑ ՏՆՃԿ • | 556,000 | 15,600,000 | Հալէսլ | 36° 11' | 34° 45' |
| ՀԱՏԱՍՏԱՆ | 120,000 | 5,000,000 | Կարին | 39° 0' | 39° 40' |
| ԱՐԱՐԻԱ | 800,000 | 12,000,000 | Մաշկադ | 23° 58' | 56° 20' |
| ՊԱՐՍՍԿԱՍՏԱՆ | 340,000 | 10,000,000 | Ասոքահան | 72° 39' | 49° 24' |
| ԱՓՂԱՆԻՍՏԱՆ | 200,000 | 10,000,000 | Քանտաշար | 33° 52' | 62° 9' |
| ԹՈՒՐԿԱՍՏԱՆ | 500,000 | 7,000,000 | Պուխարա | 39° 18' | 61° 0' |
| ՀՆԴԿԱՍՏԱՆ | 1,000,000 | 200,000,000 | Կալիարա | 22° 33' | 86° 0' |
| ՉԻՆ | 4,000,000 | 415,000,000 | Բեքին | 39° 54' | 114° 8' |
| ՃՍՐՈՆ | 180,000 | 30,000,000 | Եմո | 35° 20' | 36° 0' |

Ա Փ Ր Ի Կ Է

| ԱՇԽԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ | ՄԵՆՍՈՒԹՅՈՒՆ | ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ | ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ | ԼԱՅՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ | ԵՐԿՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ |
|----------------------------|-------------|------------------------|-----------------------|---------------------|-----------------------|
| ԵՐԿՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ | 150,000 | 5,125,000 | Գաճիկ | 30° - 28' - 55" | 28 - 55 |
| ՊԵՐՊԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ | 400,000 | 20,000,000 | Գունուղ | 36 - 47 | 7 - 51 |
| ՍԱՀՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ | 300,000 | 1,000,000 | Թուղթ | 23 - 30 | 2 - 15 |
| ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ | 150,000 | 12,000,000 | Պանդուր | 12 - 15 | 11 - 35 |
| ԿՈՒՐՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ | 300,000 | 10,000,000 | Պէնի | 6 - 0 | 2 - 30 |
| ՀՐԿՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ | 700,000 | 20,000,000 | Պանու | 21 - 0 | 19 - 25 |
| ՀՈՒՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ | 120,000 | 2,000,000 | Սեննաար | 13 - 20 | 31 - 30 |
| ԵՐԿՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ | 150,000 | 4,000,000 | Կոնսար | 13 - 10 | 35 - 20 |
| ՀԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ | 1,800,000 | 12,800,000 | Գլուխ Բարեխաղ | 33 - 56 | 13 - 5 |
| ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ | 100,000 | 5,000,000 | Երկաթի կղզի | 27 - 45 | 16 - 5 |

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

| ԱՇԽԱՏԱԿ | ՄԵԾՈՒԹ. | ԲՆԱԿԻՉ | ԳԼՈՒՑՆԵՐ | ԼՍՅՆ. | ԵՐԿ. |
|---------------|-----------|------------|---------------|---------|----------|
| ՀՈՐ ԲՐԻՏԱՆԻԱ | 1,500,000 | 2,002,000 | Ք.Կալէք | 46° 49' | 73° 36' |
| ՄԻՆԵՐՍԵԼ ԿԱԶ. | 1,500,000 | 27,937,000 | Վ.Ն.Նիկոլայև | 38° 53' | 79° 22' |
| ՄԵՔՍԻԿԱ | 1,300,000 | 8,000,000 | Մեքսիկոյ | 19° 25' | 101° 25' |
| ԳՈՒՆՆԻԱ | 350,000 | 3,600,000 | Քիոյ | 0° 14' | 81° 5' |
| ՊՐՍԻԱ | 2,250,000 | 7,677,800 | Ռիոյ ժանեյրոյ | 22° 54' | 45° 35' |
| ԲԵՐՈՒՆԻ | 370,000 | 1,700,000 | Լիմա | 12° 2' | 79° 27' |
| ՊՈՒՐՏՐԻԿԱ | 310,000 | 1,300,000 | Բարագա | 2° 23' | 78° 11' |
| ԲԱՆԴԱ | 800,000 | 2,000,000 | Պուէնոս Այրէս | 34° 36' | 60° 44' |
| ՔՐԻԼԻ | 130,000 | 1,500,000 | Սանդ Իաղոյ | 50° 42' | 77° 48' |
| ԱՆՏԻԼԵՍԵՍ | 50,000 | 3,360,000 | Հաւանա | 23° 9' | 84° 42' |
| ՈՒԿՐԱԿԱ | 3,100,000 | 28,000,000 | Կոր Զելանտա | 45° 54' | 164° 49' |

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

272

ԸՆԴՏԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ աշխարհագրութիւնը կը սորվեցընէ աշխարհիս դիրքն ու երկրիս ուրիշ երկնային մարմիններուն հետ ունեցած վերաբերութիւնները :

Երկնքին ու երկրիս դիրքը երկու դունասի վայկ'երկնայ . որոնց մէկը կ'ըսուի Երեւագոսնայ , մէկալը Երեւագոսնայ :

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Ան գիծն որ երկու կէտի մէջ քաշուած գծե-
րուն ամենէն կարճն է, կ'ըսուի Ուղիղ գիծ . մե-
կալները Կոր գիծ (Ձև 1) :

Ան գծերն որ իրարմէ միշտ նոյն հեռաւորու-
թիւնն ունին, կ'ըսուին Չափակէութեան (Ձև 2) :

Երբոր երկու գիծ մէկզմէկ կտրեն, Անի-ն կ'ը-
լայ (Ձև 3) :

Երբոր մէկ գիծ մը ուրիշ գծի վրայ անանկ իջ-
նայ, որ տակի գծին երկու կողմէն ալ հաւասար
հեռաւորութիւն ունի, ան գիծը Ուղղահայեաց կ'ը-
սուի . ու երկուքէն ձեացած անկիւնն ալ Ուղիղ
անի-ն կ'ըլլայ, որ իննսուն աստիճանի բացուածք
կ'ունենայ (Ձև 4) :

Թէ որ անկեան մը բացուածքը ուղիղ անկիւնէն
պակաս ըլլայ Սուր անի-ն կ'ըսուի (Ձև 5) . իսկ
թէ որ աւելի ըլլայ, Բութ անի-ն (Ձև 6) :

Բոլորակն ան կոր գիծն է, որ շարունակ իր շրա-
կութենէն ծռելով երկու ծայրերը իրարու կը
դպչին : Բոլորակին մէջտեղի կէտը կ'ըսուի Կէրբոն,
որ շրջապատին ամէն կողմէն հաւասար հեռու է
(Ձև 7) :

Ամէն բոլորակ, թէ մեծ ըլլայ թէ պզտիկ, 360
աստիճան կը բաժնուի . ամէն մէկ աստիճանը 60
մաս . ամէն մէկ մասն ալ 60 մանրամաս (Ձև 10) :

Աստիճանը սովորաբար այսպէս կը գրուի (^o),
մասը այսպէս ([']), մանրամասն այսպէս (^{''}) :

Հասարակ բոլորակի մը կեդրոնէն ինչուան շրջապատը քաշուած գիծն է (Ձև 7) :

Ան գիծն որ բոլորակին կեդրոնէն անցնելով երկու կողմանէ շրջապատին կը դաչի , ու բոլորակն երկու հաւասար կտոր կը բաժնէ , կ'ըսուի Տրամագիծ (Ձև 7) :

Առանցքն է գնտին մէջտեղէն անցած գիծը : Աս գծին ալ երկու ծայրերը Բևեռ կ'ըսուին :

Զոգահեռահան Բոլորակ կ'ըսուին մէկ կեդրոնի վրայ քաշուած այլևայլ բոլորակները (Ձև 8) :

Արտահեռոն Բոլորակն ան է որ երկու բոլորակ մէջ մէջ այլևայլ կեդրոնով կը քաշուին (Ձև 9) :

ԳՆՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՒՆՏ

274

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԵՐԿՐԱԳՈՒՆՏԸ երկրիս ձևին նման գործիք մըն է, որուն վրայ կ'երևնայ բոլոր երկրիս երեսը, չարժմունքն ու աշխարհագրական բաժանմունքները:

Երկրագնաին վրայ ութը շրջանակ կայ. չորսը մեծ, չորսը սղախիկ (Ձև 11):

275

ԳՆՏԻՆ ՄԵԾ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Գնաին մեծ շրջանակներն են, Հորիզոն, Միջօրեայ, Հասարակած, և Ծիւր Խաւարճան:

Ասանք թե՛ շրջանակ կ'ըսուին, վասն զի գունարը երկու հաւասար կտոր կը բաժնեն:

ՀՈՐԻՉՈՆ

Հորիզոնը մարդու մը կեցած տեղին չորս գին
երեցած կլոր գիծն է :

Երկու կերպ հորիզոն կայ , մէյմը Զգալի , մէյ-
մըն ալ Իմանալի :

Զգալի հորիզոնն ան կլոր գիծն է , որ մարդ մը
գաշտի կամ ծովու մէջ կեցած ատենը երկինքը
երկրիս հետ կըսկլոր կազմի պէս կը տեսնէ :

Իմանալի հորիզոնը մարդուս կեցած տեղին չորս
գիէն 90 աստիճան հեռու եղած շրջանակն է , որ
գունար երկու հաւասար կիսագունս կը բաժնէ :

Իմանալի հորիզոնով կ'իմացուի աստղերուն ել-
լելու և մանեղու ատեննին :

Գնալի վրայ իմանալի հորիզոնը լայն ու տափա-
րակ շրջանակ մըն է , որուն վրայ այլևայլ գծեր
նշանած են : Աս գծերուն մէկը կը ցցընէ տա-
սուերկու կենդանակերպները , ամէն մէկը 30 աս-
տիճան բաժնուած : Երկրորդ գծին վրայ նշանած
են կենդանակերպներուն անուններն ու ամսուն
օրերը : Երրորդ գիծը 32 հաւասար կտոր բաժ-
նած է , 32 հովերուն չափովը • ամէն մէկ կտորն է
11° 15' : Չորրորդն ալ 360 աստիճան բաժնուած
է , ու չորս կտոր ըրած՝ իննանական աստիճանով :

Իմանալի հորիզոնին երկու բևեռներն են Զէնիտ
կամ Գագաթնակէտ , և Նափիտ կամ Սաղակէտ :

Զէնիտը շխիտասակ մեր գլխուն վրայ եղած եր-
կրնքին մէջտեղի կէան է :

Նստիր կ'ըսուի զենիգին շտկութեամբ մեր ոտքին տակէն անցած՝ վարի կիսագնափն մէջտեղի կէտը :

ՄԻՋՕՐԵԱՅ

Միջօրեան է ան շրջանակը , որ բեւեռէ բեւեռ ձգուելով հասարակածը կը կտրէ , ու գունաւոր երկու հաւասար կտոր կը բաժնէ :

Անոր համար միջօրեայ կամ միջօրեական կ'ըսուի աս շրջանակը , որ արևը վրան հասնելուն պէս՝ աս շրջանակիս տակը եղած քաղաքներուն կէսօր կ'ըլլայ :

Կէս գիշեր ան ատենը կ'ըլլայ մեզի , երբոր արևը վարի կիսագնափն միջօրէին վրայ է :

Գնափն վրայ 24 հատ միջօրեական դժեր քաշուած են , ամէն մէկը իրարմէ 15 աստիճան հեռու , որ մէկ ժամ կ'ընէ :

ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ՈՒ ԼԱՅՆՈՒԹԵԱՆ

ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

Տեղ մը ուրիշ տեղէ որչափ հեռու ըլլալը իմանալու համար երկու տեսակ աստիճան կայ , մէկը Երկայնութեան աստիճան , մէկալը Լայնութեան աստիճան :

Երկայնութեան աստիճան կ'ըսուին բեւեռէ բեւեռ քաշուած միջօրեական դժերը :

Երկայնութեան աստիճաններով կ'իմացուի թէ

մէկ քաղաք մը մէկալ քաղաքէն որչափ հեռու է
արևելքէն դէպ 'ի արևմուտք :

Աս աստիճանները հասարակածին վրայ նշա-
նած են :

Երկայնութեան առաջին աստիճանը , որ Առա-
ջին Տիջօրեայ ալ կ'ըսուի , հին ատենը Գաղղիացիք
Երկաթի կղզիէն սկսան համրել . բայց հիմա ամէն
ազգ իր գլխաւոր դիտարանէն կը համրէ :

Լայնութեան աստիճան կ'ըսուին հասարակա-
ծին շտկութեամբ քաշուած զուգահեռական գը-
ծերը :

Աս աստիճանները գրած են միջօրեական շր-
ջանակին վրայ :

Լայնութեան առաջին աստիճանը հասարակածն
է , մէկալ աստիճաններն ալ անկէ կըսկսին համ-
րուիլ , ու կ'երթան ինչուան բևեռները , որ բոլորը
մէկէն 90 հատ կ'ըլլան :

Լայնութեան աստիճաններով կը չափուի թէ
մէկ քաղաք մը մէկալ քաղաքէն որչափ հեռաւո-
րութիւն ունի դէպ 'ի բևեռները . կամ թէ մէկ
քաղաք մը հասարակածէն որչափ հեռու է :

ՀԱՍԱՐԱԿԱԾ

Հասարակածը ան շրջանակն է որ երկու բևեռնե-
րէն իննանական աստիճան հեռու՝ արևելքէն դէպ
'ի արևմուտք ձգուած է , ու գունտը երկու հաւա-
սար կտոր կը բաժնէ , Հիւսիսային ու Հարաւային
կիսագունտ :

Անոր համար հասարակած կ'ըսուի սա շրջանակը,
վասն զի ասոր ասակի բնակիչներուն գիշերն ու ցոր-
նեկը գրեթէ միշտ հաւասար է :

Գիշերահասասար կ'ըսուին հասարակածին ան կէ-
տերը, որ ծիր խաւարմանը կը կարեն. վասն զի
արեւը սա կէտերուն վրայ համեմարուն պէս՝ բոլոր
աշխարհք գիշեր ու ցորեկ հաւասար կ'ըլլայ :

ԾԻՐ ԽԱՒԱՐՄԱՆ

Ծիր խաւարմանը ան գիծն է որ հասարակածին
վրայ քովրնտի ձգուած է ինչուան լայնութեան
 $23^{\circ} \frac{1}{2}$ ասիկայ կը ցուցնէ թէ արեւը իր ասրեկան
շրջանը որ ճամբով կ'ընէ երկնքին երեսը :

Ծիր խաւարման ըսուելուն պատճառն է, որ ար-
եւն ու լուսինը գիտացէ գիմաց ան գծին վրայ հան-
գիտելու ըլլան 'նէ' խաւարում կ'ըլլայ :

ԳՆՏԻՆ ՊԶՏԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Գնտին վրայի չորս սղտի շրջանակները ասոնք
են. Արեւարարչ խեցփեփնի, Արեւարարչ այծեղէր,
Արջային շրջանակ, հակարջային շրջանակ :

Արեւարարչ խեցփեփնի կ'ըսուի հիւսիսային լայ-
նութեան $23^{\circ} \frac{1}{2}$ աստիճանին վրայի շրջանակը.
վասն զի արեւը իր ասրեկան շրջանովը հոս հասա-
ծին պէս, կը սկսի գէտ 'ի հարաւ դառնալ :

Արեւադարձ այժեղքէ կ'ըսուի հարաւային լայնու-
թեան 23° 1/2 աստիճանին վրայի շրջանակը . վասն
զի արեւն ինչուան հոս հասնելէն ետքը՝ նորէն գեւ
'ի հիւսիս կը դառնայ :

Բեւեալային շրջանակ կ'ըսուին անոնք որ գիշերա-
հաւասարէն ետքը մէյմը մէկը՝ մէյմը մէկալը արեւ
չեն տեսներ : Աս շրջանակները կ'ըսուին նաև Ար-
ջային ու հակարջային շրջանակ , ու բևեռներէն 23° 1/2
աստիճան հեռու են :

ԳՆՏԻՆ ԲԵՒԵՌՆԵՐԸ

Երկրիս բևեռներն են առանցքին երկու ծայրե-
րը . մէկը կ'ըսուի հիւսիսային բևեռ , մէկալը հա-
րաւային :

Գնտին վրայ հիւսիսային բևեռին ծայրը պղնձէ
պզտի շրջանակ մը կայ , որ ժամական շրջանակ կ'ը-
սուի . ասոր վրայ գրած են օրուան 24 ժամերը ,
և կը գործածուի աստղերուն կամ քաղաքներուն
իրարմէ քանի ժամ հեռու ըլլալն իմանալու հա-
մար :

ԳՆՏԻՆ ՎՐԱՅԻ ԳՕՏԻՆԵՐԸ

Գնտին վրայ հինգ գօտի կայ . մէկը կ'ըսուի Ա-
րեջած գօտի , երկուքը Բարեխառն գօտիներ , երկուքն
ալ Յրբային գօտիներ :

Այրեցած գօտին է երկու արևադարձներուն միջոցը, ուր որ արևը ուղղահայեաց զարնելով սաստիկ կը տաքցընէ : Աս գօտինն լայնութիւնն է 47 աստիճան :

Այրեցած գօտինն բնակիչները Միսսսփու-էր կ'ըսուին . վասն զի արևը դէպ 'ի հիւսիս գնացած ատենը՝ շուքերնին հարաւային դին կը ձգեն, հարաւ գնացած ատենն ալ՝ դէպ 'ի հիւսիս : Հասարակածին տակի բնակիչներն ալ Միսսսփու-էր կ'ըսուին, վասն զի կէսօրն իրենց գլխուն վրայ արևը շիփշիտակ զարնելով ամենեին շուք չեն ունենար :

Բարեխառն գօտիներն են արևադարձներուն ու բևեռային շրջանակներուն մէջտեղի միջոցները . որովհետև հոնտեղն արևը քովընտի զարնելով օդին տաքութիւնը բարեխառն կ'ըլլայ : Աս գօտիներուն իւրաքանչիւրին լայնքն է 43 աստիճան :

Բարեխառն գօտիներուն բնակիչները Միսսսփու-էր կ'ըսուին, վասն զի շուքերնին միշտ դէպ 'ի բևեռ կը ձգեն :

Յրտային գօտիներն են բևեռային շրջանակներէն ինչուան բևեռ եղած միջոցները . և հոն տեղերը խիստ ցուրտ կ'ըլլայ : Աս գօտիներուն իւրաքանչիւրին լայնութիւնն է 23° 30' :

Յրտային գօտիներուն բնակիչները Շրջափու-էր կ'ըսուին . վասն զի արևը 23¹/₂ աստիճանէն աւելի հորիզոնէն վեր չբարձրանալուն համար՝ առանց մտնելու իրենց չորս դին կը պարտի, ասով շուքերնին ալ միշտ իրենց չորս դին դառնալով շրջատուեր կ'ըսուին :

ԿԼԻՄԱՅ

ԿԼԻՄԱՅ ըսելով կ'իմացուի հասարակածէն դէպ
'ի բեւեռ այնչափ միջոցը , որով կը վտխուիսն օրե-
րուն իրարմէ ունեցած երկայնութիւնն ու կար-
ճութիւնը :

Երկու տեսակ կլիմայ կայ , ժամական ու Ամսական :

ԺԱՄԱԿԱՆ ԿԼԻՄԱՆԵՐ

Ժամական կլիմաները 24 հատ են , որ հասա-
րակածէն կըսկսին ու ինչուան լայնութեան 66
աստիճանը կ'երթան :

Ամէն մէկ կլիմային երկայն օրը իրմէ առջև կլի-
մային երկայն օրէն կէս ժամ աւելի է :

Հասարակածէն ինչուան 8 աստիճան տեղ Ա
առջին կլիմայ կ'ըսուի , վասն զի հոնտեղի օրը հա-
սարակածին տակի օրէն կէս ժամ աւելի երկայն
կ'ըլլայ . 8^o էն ինչուան 16^o Երկուրտ կլիմայ . 16^o էն
ինչուան 24^o Երկուրտ կլիմայ , և այլն : Ասանկով ժա-
մական կլիմաներուն միջոցը քանի կ'երթայ՝ կը
սղտիկնայ : Ասկէց կը հեռուի որ , եթէ մէկ տեղի
մը երկայն օրը գիտնանք , հոնտեղի կլիման ալ
կրնանք իմանալ : Օրինակի համար՝ թէ որ Կոս-
տանդնուպոլսի երկայն օրը 15 ժամ է , ուրեմն
Կոստանդնուպոլսի վեցերորդ կլիմային տակն է :
Նոյնպէս երբոր գիտնանք թէ Կոստանդնուպոլսի
վեցերորդ կլիմային տակն է , կ'իմանանք որ հոն-
տեղի ամենէն երկայն օրը 15 ժամ է :

| ԿԼԻՄԱՅ | ՕՐՈՒՄՆ | | ԼԱՅՆՈՒԹԵԱՆ | |
|--------|--------------|-----|------------|----|
| | ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆ | | ԱՍՏԻՃԱՆ | |
| | ժՄ . | Ր . | | |
| 0 | 12 | 0 | 0° | 0' |
| 1 | 12 | 30 | 8 . | 34 |
| 2 | 13 | 0 | 16 . | 44 |
| 3 | 13 | 30 | 24 . | 12 |
| 4 | 14 | 0 | 30 . | 48 |
| 5 | 14 | 30 | 36 . | 31 |
| 6 | 15 | 0 | 41 . | 23 |
| 7 | 15 | 30 | 45 . | 32 |
| 8 | 16 | 0 | 49 . | 2 |
| 9 | 16 | 30 | 52 . | 0 |
| 10 | 17 | 0 | 54 . | 30 |
| 11 | 17 | 30 | 56 . | 38 |
| 12 | 18 | 0 | 58 . | 27 |
| 13 | 18 | 30 | 60 . | 0 |
| 14 | 19 | 0 | 61 . | 19 |
| 15 | 19 | 30 | 62 . | 26 |
| 16 | 20 | 0 | 63 . | 23 |
| 17 | 20 | 30 | 64 . | 10 |
| 18 | 21 | 0 | 64 . | 50 |
| 19 | 21 | 30 | 65 . | 22 |
| 20 | 22 | 0 | 65 . | 48 |
| 21 | 22 | 30 | 66 . | 7 |
| 22 | 23 | 0 | 66 . | 21 |
| 23 | 23 | 30 | 66 . | 29 |
| 24 | 24 | 0 | 66 . | 32 |

ԱՄՍԱԿԱՆ ԿԼԻՄԱՆԵՐ

Ամսական կլիմաները բևեռային շրջանակներէն
 ինչուան բևեռները կ'երթան • ասոնց առջի կլիման
 մէկ ամիս օր կ'ունենայ , և օրերնին իրարմէ մէյ-
 մէկ ամիս կ'աւելնան : Ամսական կլիմաներուն մի-
 ջոցը համեմատութեամբ քանի կ'երթայ կը լայն-
 նայ :

| ԿԼԻՄԱՆ | ՕՐՈՒՆ | | ԼԱՅՆՈՒԹԵԱՆ | |
|--------|--------------|------|------------|-----|
| | ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆ | | ԱՍՏԻՃԱՆ | |
| 1 | 1 | ամիս | 67° | 23' |
| 2 | 2 | ամիս | 69 | 50 |
| 3 | 3 | ամիս | 73 | 39 |
| 4 | 4 | ամիս | 78 | 31 |
| 5 | 5 | ամիս | 84 | 5 |
| 6 | 6 | ամիս | 90 | 0 |

ԴԻՐՔ ԳՆՏՈՅ

Արևը երկրիս ամէն դին հաւասար չի զարներ ,
հասցա տեղ տեղ շխտակ՝ տեղ տեղ ալ քովընտի .
անոր համար գունան ալ իրեք տեսակ դիրք կ'ու-
նենայ . Ուղիղ, Խոփոր ու Չուգահեռական :

Գնտին ուղիղ դիրքն ան է որ երկու բևեռները
ճիշդ հորիզոնին վրայ կ'ըլլան (Ձև 12) :

Հասարակածին տակի բնակիչներն ուղիղ դիրք
ունին . որով երկնքին ամէն աստղերը կը տեսնեն ,
ու բոլոր տարին իրենց գիշերն ու ցորեկը հաւա-
սար կ'ըլլայ :

Խոտոր դիրք գնտոյ կ'ըսուի՝ թէ որ բևեռնե-
րուն մէկը հորիզոնէն վեր բարձրանայ , մէկալը
հորիզոնէն վար մնայ (Ձև 13) :

Աս դիրքը կ'ունենան բարեխառն գօտիներուն
բնակիչները , և իրենց օրը գիշերահաւասարէն
զատ միշտ փոփոխելու հետ է . երբեմն կ'երկըն-
նայ , երբեմն ալ կը կարճընայ :

Չուգահեռական կ'ըսուի գնտին ան դիրքն որ
հասարակածը հորիզոնին հետ զուգահեռական է ,
բևեռներուն ալ մէկը դէպ 'ի զենիդ՝ մէկալը դէպ
'ի նաատիր շտկած է (Ձև 14) :

Աս դիրքը կ'ունենան երկու բևեռներուն բնա-
կիչները . որովհետև գիշերահաւասարէն ետքը ա-
րևն իրենց հորիզոնէն վեր չելլեր , անոր համար
վեց ամիս ցորեկ՝ վեց ամիս ալ գիշեր կ'ունենան :

Գնտին վրայի բնակիչներն իրարու համեմատու
թեամբ օրը հանդիպաբնակ կ'ըսուին , օրը Արջաբնակ ,
որն ալ հակոփնեայ :

ՀԱՆԴԻՊԱԲՆԱԿ , ՇՐՋԱԲՆԱԿ ,

ՀԱԿՈՏՆԵԱՅ

Հանդիպաբնակ կ'ըսուին անոնք , որ նոյն միջօրէին տակը կը բնակին , մէկը գէտ 'ի հիւսիս' մէկալը հարաւ , ու հասարակածէն նոյն հեռաւորութիւնն ունին . ուստի մի և նոյն օրուան ժամը կ'ունենան , բայց տարւոյն եղանակներն իրարու հակառակ են , մէկուն գարուն է մէկալին աշուն :

Շրջաբնակ են անոնք՝ որ հասարակածին մէկ կողմը նոյն լայնութեան աստիճանին վրայ կը բնակին իրարմէ 180 երկայնութեան աստիճանաւ հեռու , ուստի տարւոյն մի և նոյն եղանակներն ու օրուան ժամը կ'ունենան . միայն այս տարբերութեամբ որ մէկուն իրիկուան Գերորդ ժամն եղած ատենը , մէկալին աւաւօտեան Գերորդ ժամը կը լլայ :

Հակոտնեայ կ'ըսուին անոնք որ մի և նոյն լայնութեան աստիճանին տակը կը բնակին , մէկը հիւսիսային դին՝ մէկալը հարաւային . բայց անանկ որ նոյն երկայնութեան աստիճանին մէկը մէկ կողմը լինայ , մէկալը անոր ներհակ կողմը :

ԳՆՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ

Ս.

Գունալը շտկել կ'ըսուի մէկ գնալին զիբբը տեղեմը կամ քաղաքի մը հօրիզոնին յարմարցընելը :

Գրքի մասին և Գրքի մասին և Գրքի մասին
Գրքի մասին և Գրքի մասին և Գրքի մասին
Գրքի մասին և Գրքի մասին և Գրքի մասին

Գնախն վրայ տեղի մը լայնութիւնն ու երկայնութիւնը գտնելու համար պէտք է ան քաղաքը միջօրէական շրջանակին տակը բերել, ու նայելու է թէ նոյն միջօրէականին վրայ ինչ թիւ գրած է. ան թիւը քաղաքին լայնութեան աստիճանն է: Ետքը նոյն շտկութեամբ հասարակածին վրայ ինչ թիւ որ գրած կայ՝ անիկայ ալ երկայնութեան աստիճանն է:

Ձոր օրինակ թէ որ Կոստանդնուպոլիս քաղաքին լայնութիւնն ըսած իս պէս մինտրուեմ, կը գրուինեմ 41 աստիճան, երկայնութիւնն ալ 26 աստիճան, 38 մաս:

Գ

Քաղաքի մը լայնութեանը գիրքով գունար շտկելու համար՝ առաջ պէտք է ան քաղաքը միջօրէականին տակը ասնիլ, որ լայնութեան աստիճանը իմացուի. և բևեռը լայնութեան աստիճանին չափովը հորիզոնէն վեր վերցընելու է:

Դ

Թէ որ ուզենք իմանալ թէ այսչափ լայնութեան աստիճանները քանի միոն կ'ընեն, առաջ աս գիտնալու է որ լայնութեան մէկ աստիճանը 60 միոն է. ուստի ան քաղաքին աստիճաններն ալ վաթսուներորդ քաղմապատկելու է, որ քանի միոն ըլլալը իմացուի:

Օրինակի համար, դնենք թէ Չմուռնիոյ լայնութեան աստիճանն է 38° 25' . աս լայնութեան աստիճանները 60 ուլ բազմապատկելու ըլլամ նէ 2280 մղոն կ'ընէ . 25 մասին համար ալ աւելցընեմ քսանըհինգ մղոն, կ'ըլլայ 2305 . որ ըսել է թէ Չմուռնիան հասարակածէն 2305 մղոն հեռու է : Ասանկ կ'ընեմ մէկալ ամէն ուղած քաղաքներս ալ :

Ե

Լայնութեան աստիճաններով կ'իմացուի նաև թէ քաղաք մը մէկալ քաղաքէն որչափ հեռու է հիւսիսէն դէպ 'ի հարաւ, կամ հարաւէն դէպ 'ի հիւսիս :

Զ

Երկայնութեան աստիճաններով կ'իմացուի թէ մէկ քաղաք մը մէկալ քաղաքէն որչափ հեռու է արևելքէն դէպ 'ի արևմուտք :

Չոր օրինակ, թէ որ ուղեմ Բարիզին ու Բէքլինին իրարմէ ունեցած հեռաւորութիւնն իմանալ, կը նայիմ թէ Բարիզին ու Բէքլինին շակութեամբ հասարակածին վրայ ինչ աստիճան դրած է . անով կ'իմանամ թէ աս երկու քաղաքներն իրարմէ այսչափ աստիճան հեռու են :

Է

Երկայնութեան աստիճանները մղոն ընելու համար՝ բարձրութեան քառորդն ուղած լայնութեան

աստիճանին վրայ հաստատելու է՝ հասարակածին զուգահեռական . ետքը նայելու է թէ ան երկու տեղին երկայնութեան աստիճանները բարձրու-
թեան քառորդին որ աստիճաններուն վրայ կ'ըլ-
նան . առ աստիճանները թէ որ 60 ով բազմապատ-
կուին , ելածն այնչափ աշխարհագրական միտն
կ'ըլլայ :

Ը

Թէ որ հեռաւորութիւննին փնտռած տեղերնուս
երկայնութիւնն ու լայնութիւնն իրարմէ տարբեր
ըլլան , անոնց հեռաւորութեան չափը պէտք է
կարկինով ասնել , ու կարկինին սաքերը հասարա-
կածին վրայ դնելով նայելու է թէ քանի աստի-
ճան կայ մէջտեղը . ետքը աստիճանները 60ով
բազմապատկելով միտն ընելու է :

Դնենք թէ Չիլոսիան Առատանդնուպոլսէն 3՝
6՝ հեռու է . թէ որ 3 աստիճանը 60ով բազմա-
պատկեմ , 180 աշխարհագրական միտն կ'ընէ . 6
վայրկեանին համար ալ վեց միտն աւելցրնելու ըլ-
լամ նէ՝ 186 կ'ընէ . որ ըսել է թէ Առատանդնու-
պոլիս 186 միտն հեռու է Չիլոսիայէն :

Թ

Տեղի մը շրջաբնակները գտնելու համար պէտք
է նայն տեղը միջօրեական շրջանակին տակը բերել ,
և գունարդ ամբողջ դարձրնել . որ տեղերն որ ան
լայնութեան աստիճանին տակէն կ'անցնին՝ անոնք
են շրջաբնակները : Ինչպէս՝ Համպուրկի և Ա
լեուդեան կղզիներուն բնակիչներն իրարու շր-
ջաբնակ են :

Ժ

Տեղի մը հակաբնակաները գտնելու համար, պէտք է ան տեղին լայնութիւնը առնել, ու գունար հաստատաբանած՝ նոյնչափ աստիճան ալ համընդուն է հասարակածին մէկալ գին: Ինչպէս՝ Պելիքաստ քաղքին հակաբնակ է Գլուխ Բարեյոււոյ:

Հակաբնականերուն ալ փոխադարձ շրջաբնակաները իրարու հակոտնեայ կ'ըլլան:

ԺԱ

Արտէալ օր մը արեւը զողիակոսին ո՞ր աստիճանին վրայ ըլլալն իմանալու համար, պէտք է նախ ան օրը հորիզոնին վրայ գտնել. աս օրը ո՞ր կենդանակերպին ո՞ր աստիճանին գիմացն որ կ'ընայ, ան կենդանակերպին նոյն աստիճանը փնտաւելու է ծիր խաւարմանին վրան ալ. ծիր խաւարմանին վրայ գտնուած աստիճանը ուղամ օրուան արեւուն եղամ տեղն է:

Զոր օրինակ օգոստոսի 18ը Աբիւժ կենդանակերպին 25° 20' աստիճանին կը պատասխանէ. աս է օգոստոսի 18ին արեւուն եղամ տեղը:

ԺԲ

Տարուան ամէն մէկ օրն ուրիշ քաղաքին մէջ արեւը քանիին ելլելը կամ մանկը իմանալ ուղոյ՞ր՝ թէ որ իր քաղքին մէջ արեւուն ելլամ ու մտամ աներ գիտէ, պէտք է նայի թէ փնտած քաղաքը որչափ դէպ ՚ի արեւելք կամ արեւմուտք է. քանի աստիճանի տարբերութիւն որ գտնէ՝ ան աստի-

Ճաննեքը չորս վայրկեանով բազմապատկէ . եւ լա-
ծովը կ'իմանայ թէ որչափ առաջ որ կը ծագի ա-
րևը եթէ ան քաղաքը դէս 'ի արևելք է, նոյնչափ
վայրկեան ետքը կը ծագի արևը եթէ ան քաղաքը
նոյնչափ դէս 'ի արևմուտք ըլլայ :

Օրինակի համար հոս տեղս քանի մը քաղաքներու
Կոստանդնուպոլսէն դէս 'ի արևմուտք ունեցած հե-
ռաւորութիւնը, և արևուն ծագած ատենը դնենք .

| | | | | | |
|---------|-----------------|-----|-----------|-------|-----|
| Վենետիկ | 14 ^o | | 820 մղ . | 0 ժ . | 56' |
| Վեննա | 11 ^o | | 660 մղ . | 0 ժ . | 44' |
| Համբ | 12 ^o | 30' | 750 մղ . | 0 ժ . | 55' |
| Բարսել | 20 ^o | 20' | 1220 մղ . | 1 ժ . | 25' |
| Լոնտոն | 22 ^o | 18' | 1338 մղ . | 1 ժ . | 46' |

ԺԳ

Թէ որ մէկն առանց իր քաղաքինը դիտնալու՝
կ'ուզէ իմանալ թէ ուրիշ քաղաքի մը մէջ արևը ո՞ր
ատեն կ'ելլէ, առաջ ան ուզած քաղաքին լայնու-
թիւնը պէտք է որ գտնէ, ու քաղաքին յարմար
բևեռը բարձրացընէ : Ետքը պէտք է գտնէ թէ ան
օրը արևը ծիր խաւարմանին ո՞ր աստիճանին վրան
է . ան գտած աստիճանը միջօրէական շրջանակին
տակը բերելու է, ու ժամական շրջանակին լե-
զուակը կէսօրուան վրայ դնելէն ետքը՝ գունար
դարձընելու է դէս 'ի արևելք, ինչուան որ ծիր
խաւարմանին վրայ գտնուած աստիճանը հօրիզո-
նին հասնի . ան ատեն ժամացուցին ցուցակը կ'ի-
մացընէ՝ թէ ուզած օրը ժամը քանիին արևը կը
ծագի ան քաղաքը :

Օրինակի համար վերի դրած քաղաքներուն ա-
րևուն ելած ատենը գտիր .

| | | | | |
|----------|------|---|-----|-----|
| Յուևուար | 6 . | Ն | 16° | 0' |
| Մարտ | 26 . | Կ | 6° | 10' |
| Ապրիլ | 15 . | Ճ | 25° | 20' |
| Օգոստոս | 15 . | Ջ | 22° | 23' |
| Նոյեմբեր | 8 . | Ո | 16° | 0' |

ԺԴ

Թէ որ մէկն ուզէ աւ ալ իմանալ թէ արևը քանիին կը մտնէ, վերի գործողութիւնն ընելու է միայն թէ գունար փոխանակ դէպ 'ի արևելք դարձնելու՝ արևմուտք դարձնելու է, որ ծիր խաւարմանին վրայ գտնուած աստիճանը արևմտեան հորիզոնին վրայ իջնայ. ան ատեն ցուցակն ալ արևուն քանիին մտնելը կը ցուցնէ:

Զոր օրինակ, թէ որ ուզեմ իմանալ թէ յունիսի 10ին Ալէքսանդրիոյ մէջ արևը քանիին կ'ելլէ ու կը մտնէ, վերի գործողութեամբ կը գտնեմ որ 4 ժ. 30'ին կը ծագի, 7 ժ. 30' անցած կը մտնէ:

ԺԵ

Երբոր քաղաք մը կէսօր է, ինչպէս Աոստանդնուպօլիս, ուրիշ քաղաք մը՝ զոր օրինակ Ալենեաթիկ՝ ժամը քանի ըլլալը ասանկ կ'իմացուի: Աոստանդնուպօլիսը միջօրէական շրջանակին տակը բերելու է. ժամացուցին լեզուակն ալ կէսօրուան վրայ դնելով՝ գունար դարձնելու է դէպ 'ի արևելք ինչուան որ Ալենեաթիկ քաղաքը 'սոյն միջօրէին տակն իյնայ. ան ատեն ժամացոյցը կը ցուցնէ թէ Ալենեաթիկ ժամը քանի է:

ԺԶ

Թէ որ ուզէ մէկն իմանալ թէ Բարիզու մէջ
ժամը 6 եղած ատենը Բեդրպուրիկի մէջ ժամը
քանի՛ կ'ըլլայ, պէտք է Բարիզը միջօրէին տակը
բերել. ու բեւոր լայնութեան յարմար բարձրա-
ցրնելէն ետքը, ժամացուցին ցուցակը Սին վրայ
բերելու է, և դունտը դարձրնելու է՝ ինչուան որ
Բեդրպուրիկ քաղաքը միջօրէին տակն իյնայ. ան
ատեն ժամացոյցը որ ժամուն վրան որ ըլլայ, Բե-
դրպուրիկին ժամն ալ ան է. այս ինքն 7 ժ. 25':
Նոյնպէս Աոստանդուուպուրի մէջ ժամը 10 եղած
ատենը Բարիզ է 8 ժ. 25':

ԺԷ

Ամէն որ արևը մէկ տեղի մը հորիզոնին որ կէ-
տէն ելլէն իմանալու համար, պէտք է բեւուն ան
տեղին լայնութեան աստիճանին չափովը բարձրա-
ցրնել, ու դանել թէ նոյն օրն արևը ծիր խաւար-
մանին որ աստիճանին վրայ է: Ծիր խաւարմանին
աս աստիճանը ասնելու է ինչուան արևելեան ու
արևմտեան հորիզոնին վրայ, և որ կէտերով որ
հորիզոնին դաչի՝ ան կէտերն են նոյն օրուան մէջ
արևուն ելլելու ու մանելու կէտերը:

ԺԸ

Տեղւոյ մը կլիման կամ ամենէն երկայն օրը գրու-
նելու համար՝ պէտք է բեւոր բարձրացրնել, ու
թէ որ ան տեղը հիւսիսային կիսագնաին վրայ է՝

խեցգեանին առաջին աստիճանը միջօրէին տակը
ձգել. ժամացոյցը կէսօրուան վրայ հաստատելէն
ետքը՝ գունարդ դարձրնելու է, որ խեցգեանի ա-
ռաջին աստիճանն արևելեան ու արևմտեան հո-
րիզոնին հասնի, և նայելու է թէ նոյն օրը քանի
ժամ երկայնութիւն ունի. թէ որ 16 ժամ է, նայե-
լու է որ 12էն ինչուան 16 երթալու քանի կէս
ժամ կայ, և որչափ կէս ժամ որ գտնուի, այնչափ
է կլիման. ինչպէս 12էն ինչուան 16, կայ 8 կէս
ժամ, ուրեմն որ տեղւոյն որ երկայն օրը 16 ժամ
է՝ ութերորդ կլիմային վրան է: Նոյն գործողու-
թիւնը պէտք է ընել՝ թէ որ ուղած տեղդ հարա-
ւային կիսագնտին վրայ ըլլայ, միայն թէ ան ա-
տեն այժեղջիւրին առաջին աստիճանով ընելու է
գործողութիւնը:

ԺԹ

Թէ որ քաղաքի մը ամենէն կարճ գիշերն ու-
ղեմ գտնել, վերի գործողութիւնն ընելէս ետքը
քանի ժամ որ մնայ՝ ան է կարճ գիշերը:

Ի

Թէ որ մէկը քաղաքի մը ամենէն կարճ օրն ուղէ
դիտնալ, ան քաղաքը թէ որ հիւսիսային կիսա-
գնտին վրայ է՝ այժեղջիւրին առաջին աստիճանը
միջօրէին տակը բերելու է, ու ժամացոյցը կէս-
օրուան վրայ հաստատելէն ետքը՝ այժեղջիւրին ա-
ռաջին աստիճանն արևելեան հորիզոնէն ինչուան
արևմտեան հորիզոնը դարձրնելու է. ժամացոյցը
քանի ժամ որ ցուցնէ՝ ան է ամենէն կարճ օրը,
մնացածն ալ ամենէն երկայն գիշերն է:

ԻԱ.

Հարաւային կիսագնտին վրայ եղած քաղաքին ալ կարճ օրն ու երկայն գիշերը գանելու համար վերի գործողութիւնը խեցգեանի աւաջին աստիճանովն ընելու է :

ԻԲ.

Թէ որ մէկն իր տեղւոյն ամիսը՝ օրը՝ ժամը՝ գիտէ, ու կ'ուզէ իմանալ թէ նոյն ատեն արևը ո՞ր տեղերուն միջօրէականին վրայ է, բւեռը իր տեղւոյն լայնութեանը յարմար շակելէն ետքը՝ մեծ միջօրէականին տակը բերելու է, և ժամական շրջանակին ցուցակը կեցած տեղւոյն ժամուն վրայ դարձրնելով՝ գունարդ պտղացրնելու է, ինչուան որ ցուցակը կէսօրուան վրայ գայ : Ա՛ր քաղաքներն որ վերի կիսագնտին վրայ միջօրէին տակը կ'իյնան՝ անոնց կէսօր է :

ԻԳ.

Թէ որ մէկն ուզէ այրեցած դօտիին տակն եղած տեղուանքէն մէկուն ան օրը գանել՝ ո՞ր օրն որ արևը հոն ուղղահայեաց կ'ըլլայ, պէտք է ան տեղը մեծ միջօրէական շրջանակին տակը բերէ, և անոր վրայ եղած լայնութեան աստիճանը նշանէ . ետքը գունարդ դարձրնէ ու գիտէ թէ նոյն լայնութեան աստիճանին վրայէն անցնող ծիր խաւարմանին երկու կէտերը որո՞նք են . ետքը նայի թէ ծիր խա-

ւարմանին ան աստիճանը հորիզոնին վրայ ո՛ր ամ-
սուն՝ ո՛ր օրուան կը պատասխանէ, գտնուած օրն է
ան օրը՝ որ արևն ան տեղւոյն ուղղահայեաց կ'ըլլայ:

Ինչպէս Մատրաս քաղաքին լայնութիւնն է
13° 18' . աս աստիճանին վրայէն Առիւծ կենդա-
նակերպին 25° աստիճանը կ'անցնի . 25° աստի-
ճանն ալ հորիզոնին վրայ փնտռելով կը գտնեմ որ
օգոստոսի 18ին կը պատասխանէ . աս օրն է որ ա-
րևը Մատրաս քաղաքին վրայէն ուղղահայեաց
կ'անցնի:

ԻԴ

Տեղւոյ մը լայնութիւնը և ամսուն օրը գիտնա-
լէն ետքը, թէ որ մէկն ուզէ իմանալ թէ արշա-
լոյսն ու երեկոյեան լոյսը ո՛րչափ կը դիմանայ,
լայնութեան յարմար գունար շտկելէն ետքը՝ ծիր
խաւարմանին վրայ արևուն տեղը գտնէ, ու հորի-
զոնին վրայ բերէ: Ժամացոյցը շտկելէն ետքը,
գունար այնչափ պէտք է գարձընէ որ արևուն տե-
ղը հորիզոնէն 18° վար իջնայ . ժամացուցին ցու-
ցակը քանի ժամ որ ցուցընէ՝ այնչափ է արշալու-
սին միջոցը: Երեկոյեան լոյսին համար նոյն գոր-
ծողութիւնն ընելու է արևմտեան հորիզոնին վրայ:

Չոր օրինակ՝ յուլիսի 20ին Ալեքեաթիկ քաղաքին
արշալոյսը 1 ժ . 35' կը դիմանայ:

ԻԵ

Արտշ օր մը արշալոյսը ժամը քանիին սկսիլը
իմանալու համար՝ պէտք է ծիր խաւարմանին վրայ
նոյն օրուան արևուն տեղը գտնել, ետքը տեղւոյն

լայնութեանը յարմար գո՛ւնար շտկել . ժամացու-
ցին ցուցակն ալ կէսօրուան վրայ հաստատելով
գո՛ւնար դարձրնելու է , ինչուան որ ծիր խաւար-
մանին վրայ գտնուած աստիճանը արևելեան հո-
րիզոնէն 18° վար իջնայ . ան ատեն ժամացոյցը
կ'իմացրնէ թէ ժամը քանիին կրսկսի արշալոյսը :
Զոր օրինակ՝ յուլիսի 20ին Ա Էնեաիկ քաղաքին
արշալոյսը կէս դիշերն $2 \text{ ժ} . 45'$ անցած կրսկսի :

ԵՐԿՆԱԳՈՒՆՏ

290

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԵՐԿՆԱԳՈՒՆՏԸ գործիք մըն է, որուն վրայ քաշուած են աստղերն իրենց դիրքովը : Ասով կ'իմացուի աստղերուն իրարմէ հեռաւորութիւնը և իրենց ելլելու ու մտնելու ատենը :

Աստղերուն դիրքն ու շարժմունքներն իմանալու համար՝ երկրագնաին վրայ ինչ շրջանակ կամ գիծ որ դրինք՝ երկնագնաին վրայ ալ նոյն շրջանակներն ու գծերը կան : Ասոնցմէ զատ մէկ քանի շրջանակներ ու գծեր ալ կան . ինչպէս Զոդիակոս , Ալիմուդ , Բարձրա-Նեան քառորդ :

291

ԶՈՒԻԱԿՈՍ , ԱԶԻՄՈՒԴ , ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ ՔԱՌՈՐԴ

Զոդիակոսը լայն կամար մըն է , որ հասարակածին վրայէն քովընաի կ'անցնի , ու 12 ամիսներուն թուովը 12 կտոր բաժնուած է . ան կտոր

ներուն վրան ալ 12 կենդանակերպները գրած են :
Տասուերկու կենդանակերպներն ալ երեսնական
կտոր բաժնուած են՝ ամսուն օրերուն համբանքո-
վը . վասն զի արևն ամէն ամիս աս կենդանակերպ-
ներուն մէկուն վրայէն կ'անցնի :

Ազիմուդ կ'ըսուին ան շրջանակները , որ զե-
նիդէն ու նասիրէն անցնելով՝ հորիզոնն երկու
հաւասար կտոր կը կտրեն : Ասով կ'իմացուի թէ
աստղ մը միջօրէէն որչափ հեռու է :

Բարձրութեան քառորդն ան սղնձէ բարակ
շրջանակն է , որ զենիդէն ինչուան հորիզոն կ'ել-
նայ . ասով կը չափուի աստղերուն բարձրութիւնը :

292

ՄԻՋՕՐԷԱԿԱՆ ՈՒ ԶՈՒԳԱՏԵՌԱԿԱՆ
ԳԾԵՐ

Միջօրէական դժերով կ'իմացուի՝ թէ աստղերը
իրենց օրական շրջանին մէջ երկնքին ո՞ր կողմը կ'ել-
նան . ասիկայ կ'ըսուի Ուղիւ էս :

Զուգահեռականներով կ'իմացուի թէ աստղ մը
բևեռէն որչափ հեռու է . ասիկայ կ'ըսուի Խոսոր
էս :

293

ԱՍՏՂ

Աստղ կ'ըսուին երկինքն երեցած լուսաւոր
մարմինները , որ իրենց հեռաւորութեանը համար
մանր կ'երևնան : Իրեք տեսակ աստղ կայ . հասար-
գան , Մոլորակ ու Գիսասոր :

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԱՍՏՂ

Հաստատուն աստղ կ'ըսուին ան երկնային մար-
մինները՝ որ արևուն պէս իրենք իրենցմէ լոյս ու-
նին, և մեզի այնպէս կ'երևնայ թէ իրարմէ ամենևին
չեն հեռանար ու տեղերնին չեն փոխեր • թէպէտև
իրօք ամէն աստղերն ալ մէյմէկ քիչ տեղափոխու-
թիւն կ'երևցնեն :

Հաստատուն աստղերուն թիւը չգիտցուիր ,
վասն զի անբաւ բաղմուծիւն են • և աստղաբաշխ-
ները կարծիք կ'ընեն թէ լաւ գիտակներով 150
միլիոնէն աւելի աստղ պիտի կարենայ համրուիլ
երկնքին երեսը :

Աստղաբաշխներն երկու կերպով կը համրեն
աստղերը • մէյմը բոլոր աստղերը այլևայլ համաս-
տեղութիւն բաժնելով, մէյմըն ալ աստղերուն մե-
ծութեանը համեմատ՝ կարգ կարգ զառելով :

Բոլոր երկնքին աստղերը ճանչնալու և գիւրաւ
միտք պահելու համար աստղաբաշխները քանի մը
խոշոր աստղերը խումբ խումբ առած ու մարդ-
կանց և կենդանիներու անուններ դրած են անոնց •
աս խումբ խումբ բաժնուած աստղերը համարե-
ղաւթիան կ'ըսուին :

Երկնքին երեսը մեծ ու պզտիկ հարիւր ասանը-
եօթը համաստեղութիւն կայ • դիւսաւորները եօ-
թանասունը եօթը հատ են • 30 հիւսիսային կողմն
են, 12 զոգիակոսին վրայ, 33 ալ հարաւային դին :

Հասարակածին հիւսիսային կողմի 30 համաս-
տեղութիւններն ասոնք են •

- | | |
|--------------------------|---------------------|
| 1 Մեծ արջ, կամ Սայլ . | 16 Փոքր ձի . |
| 2 Փոքր արջ . | 17 Գլխին . |
| 3 Վիշապ . | 18 Կետ . |
| 4 Կեփէոս . | 19 Արծիւ . |
| 5 Եզոզ . | 20 Օձակալ . |
| 6 Պաակ հիւսիսային . | 21 Օձ . |
| 7 Վահագն կամ Հերակլ . | 22 Բերինիկեան դէս . |
| լէս . | 23 Ընձուղտ . |
| 8 Քնար . | 24 Աղուէս . |
| 9 Կարապ . | 25 Փոքր առիւծ . |
| 10 Կասիուպէ . | 26 Ճանձ . |
| 11 Պերսէոս . | 27 Մողէզ . |
| 12 Անդրոմէա . | 28 Վահան . |
| 13 Եռանկիւն հիւսիսային . | 29 Փոքր եռանկիւն . |
| 14 Կառավար . | 30 Կերբերոս : |
| 15 Պեդասոս , կամ Մեծ . | |
| խաչ . | |

Զողիակոսին 12 համաստեղութիւններն ասոնք են , որ կենդանակերպ ալ կ'ըսուին .

- | | |
|-------------|----------------|
| 1 Խոյ . | 7 Կշիռ . |
| 2 Յուլ . | 8 Կարիճ . |
| 3 Երկաւոր . | 9 Աղեղնաւոր . |
| 4 Խեցգետի . | 10 Այծեղջիւր . |
| 5 Առիւծ . | 11 Զրհոս . |
| 6 Կոյս . | 12 Չուկն : |

Հարաւային 35 համաստեղութիւններն ասոնք են .

- | | |
|--------------|--------------------|
| 1 Անտինոս . | 5 Հայկ կամ Արիոն . |
| 2 Կէտ . | 6 Մեծ շուն . |
| 3 Երիզանոս . | 7 Փոքր շուն . |
| 4 Նապաստակ . | 8 Նաւ արդիացւոյ . |

| | | | |
|----|----------------------|----|------------------|
| 9 | Հիդրա . | 23 | Ճանջիւն . |
| 10 | Ըմպանակ . | 24 | Գեանառիւծ . |
| 11 | Ազուա . | 25 | Չուկն թռչական . |
| 12 | Չիացուլ . | 26 | Տուքան կամ Սադ Ա |
| 13 | Գայլ . | | մերիկոյ . |
| 14 | Սեղան . | 27 | Արու Հիդրա . |
| 15 | Պսակ հարաւային . | 28 | Տորատ կամ Թրա |
| 16 | Չուկն հարաւային . | | ձուկն . |
| 17 | Փիւնիկ . | 29 | Մեծ ամս . |
| 18 | Կռուկն . | 30 | Փոքր ամս . |
| 19 | Սիրամարդ . | 31 | Նոյի աղաւնի . |
| 20 | Հնդիկ . | 32 | Միեղջերու . |
| 21 | Իրախտահաւ . | 33 | Տարանկիւն . |
| 22 | Եռանկիւն հարաւային . | 34 | Աքաղաղ . |
| | | 35 | Խաչ : |

295

ԿԱՐԳ ԱՍՏԵՂԱՅ

Աստղերն իրենց մեծ ու թեանը նայելով 16 կարգ կը բաժնուին , ու կ'ըսուին Առաջին կարգի աստղ , Երկրորդ կարգի աստղ , Երրորդ կարգի աստղ , և այլն :

Ինչուան վեցերորդ կարգի աստղերն աչքով կ'երևնան . վեցերորդ աստիճանէն վեր եղածները միայն դիտակով կ'երևնան , ու անթիւ են :

Առաջին կարգի աստղերը 23 հատ են . չորսը հիւսիսային գին , եօթը զոդիակոսին վրայ , աստուերկուքն ալ հարաւային գին :

Հիւսիսային չորս մեծ աստղերն ասոնք են .

Արքատորոս՝ Եղոյ Համաստեղութեան վրայ .

Էլզայիր՝ Արծիւ Համաստեղութեան վրայ .

Վեկա՝ Քնար Համաստեղութեան վրայ .

α ալֆա * գիրը Կարապի պոչին վրայ :

Զողիակոսին վրայի եօթը մեծ աստղերն ասոնք
են .

Ալտէպարան՝ Յուլին ճակտին վրայ .

Կասար ու Պողիակիս՝ Երկաւորին վրայ .

Հոեզուղոս՝ Ասիւծին վրայ .

β Բէա Ասիւծին պոչին վրայ .

Կուսին հասկը .

Անդարէս՝ Կարձին վրայ .

Ծումալհոս՝ Զքհասին վրայ :

Հարաւային 12 մեծ աստղերն են .

Տիճել կամ Հոխէլ՝ Հայկին ճախ ոտքին վրայ .

α ալֆա Հայկին ուսին վրայ .

Հիզրային սիրտը .

Սիրիոս՝ Մեծ շունին վրայ .

Պրոկիոն՝ Փոքր շունին վրայ .

Աքառնար՝ Երիզանոսին վրայ .

Կանովալոս՝ Արգիացւոց նաւուն վրայ .

β Բէա Արգիացւոց նաւուն վրայ .

Չիացուլին ոտքը .

Չիացուլին սրունքը .

Խաչին ոտքը .

Սիրամարգին աչքը :

* Պայէռ անունով գերմանացի մը Համաստեղութիւն-
ներուն ամէն մէկ աստղին վրայ Յունաց գրերը դրաւ՝
գիւրաւ գործածելու համար, որ ինչուան հիմա նոյնպէս
կը բանեցուին :

ՀԵՌԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՍՏԵՂԱՅ

Հաստատութեան աստղերն անբաւ հեռաւորութիւն ունին մեզմէ . անոր համար է որ անանկ խոշոր մարմինները մանր կ'երևնան : Օրինակի համար՝ դնելով թէ լոյսը մէկ ժամուն մէջ 594 միլիոն մղոն տեղ կը վազէ . առաջին կարգի աստղերէն մէկուն լոյսն իրեք տարիէն աւելի ասեն կուզէ մեզի հասնելու համար : Աստղեր ալ կան , որոնց լոյսը մեզի հասնելու համար հազարաւոր ու միլիոն տարի պէտք է . ըսել է թէ այս աստղերուն լոյսը խաւարէր ալնէ , մենք զիրենք դարձեալ նայնպէս կը տեսնէինք :

ՅԱՐԴԳՈՂ ԵՒ ՄԻԳԱՄԱԾ

Յարդգող կամ Ծիւր կառին ըսուածը որ հիւսիսէն դէպ 'ի հարաւ ձգուած է՝ աչքով միակերպ լուսի պէս բան մը կ'երևնայ . թէ որ դիտակով նայելու ըլլաս , կը տեսնես որ մանր մանր անթիւ աստղեր են իրարու մօտիկ :

Յարդգողի նման երկնքին վրայ ուրիշ տեղեր ալ կան ամպի պէս պայծառ , որ կ'ըսուին Միգամած : Հերշէլ աստղաբաշխը ինչուան 2400 միգամած համրեր է , բայց ամենէն երևելիներն են Հայկինը , Քնարինը , Անդրոմեդինն ու Վարձինը : Միգամածներուն վրայ ալ կարծիք կայ թէ ամենամանր աստղեր ըլլան :

ԲԱԶՄԱՍՏԵՂԻ

Կըհասափեղջ, Եռասափեղջ, Քասասափեղջ, և ընդհանրապէս Բաղճասափեղջ կ'ըսուին ան հաստատուն աստղերն որ իրարու խիստ մօտ կ'երևնան՝ Երկուքը կամ իրեքը և կամ շատը մէկտեղ, ու մէկը մէկալին վրայ կը պարտի: Ասոնցմէ ամենէն շուտը Երեսունումէկ տարուան մէջ հազիւ մէկ անգամ մը կը պարտի իրեն քովի աստղին վրայ • ոմանք ալ ինչուան 9500 տարուան մէջ կ'ընեն նոյն պտոյտը:

Ինչուան հիմա 3057 հատ և աւելի այսպիսի աստղեր տեսնուած են ըստ նոր դիտողութեանց:

ՆՈՐԱՆՇԱՆ ԵՒ ՓՈՓՈԽԱԿԱՆ ԱՍՏԵՂԻ

Հին պատմութիւններուն մէջ անանկ աստղեր յիշուած են, որ հիմա չկան: Առեն ատեն աստղեր երևցեր ու շուտ մը աներևոյթ եղեր են • ինչպէս Կասիոպէ համապատեղութեան ան երևելի աստղը որ 1572ին երևցեր է, և իրեք ամիսէն ետքը բոլորովին աներևոյթ եղեր է: Աստղեր ալ կան որ քանի մը օրուան մէջ լոյսերնին կը պայծառանայ ու նորէն կը պակսի: Աս փոփոխութիւններուն պատճառը չիմացուիր:

ԲԵՒԵՌԱՅԻՆ ԱՍՏԴ

Հիւսիսային կիսագնդին վրայ կէտ մը կայ որ մեզի անշարժ կ'երևնայ . աս բևեռին քովն եղած Փոքր արջ համաստեղութեան պոչին ծայրի աստղը անշարժ երևցած կէտին մօտ ըլլալէն՝ Բեւեռային աստղ կ'ըսուի , բևեռն ալ Հիւսիսային կամ Արջային Բեւեռ :

Հարաւային կիսագնդին վրան ալ Հիւսիսային բևեռին դիմացը ուրիշ աստղ մը կայ նոյնպէս անշարժ սեպուած , որ Հարաւային կամ Հակաբային Բեւեռ կ'ըսուի :

ԱՐԵՒ

Արեւը հաստատուն ըսուած աստղերուն մէկն է , և մեր արեւային դրից մոլորակներուն կեդրոնը . վասն զի ասոր վրայ կը պարտին մէկալ մեզի ծանօթ մոլորակ աստղերը :

Հիմակուան մեծանուն աստղաբաշխներուն կարծիքովը՝ արեւն ալ բոլոր իր քովն մոլորակներովը մէկտեղ՝ ուրիշ կեդրոնի մը վրայ ահագին պտոյտ կ'ընէ : Ոմանք կ'ըսեն թէ աս կեդրոնը Ահագն կամ Հերակլէս համաստեղութեան ρ γ δ ϵ λ աստղերուն մէջտեղուանքը կ'իյնայ . ոմանք ալ թէ Բոյլք ըսուած աստղերէն Ալկիոն աստղն է ան կեդրոնահան արեւը : Աս ալ կ'ըսեն թէ արեւն աս

իր մեծ շրջանը 18,200,000 տարուան մէջ հաղիւ-
կրնայ ընել, թէպէտ և իր ընթացքը երկրիս ըն-
թացքին կրկին արագութիւնն ունի :

Արևն երկրէս 1,400,000 անգամ մեծ է, բայց
խիստ հեռու ըլլալուն պատիկ կ'երևնայ. իր տրա-
մագիծը 770,107 աշխարհագրական մղոն է, և
մեզմէ 82,840,200 մղոն հեռաւորութիւնն ունի :

Արևը 25 օրուան ու 15 ժամուան մէջ իր ա-
ռանցքին վրայ մէյմը կը դառնայ, որ իր վրայի բը-
ծերէն կ'իմացուի :

Բիծ կ'ըսուին արևուն վրայի սև ու մութ տե-
ղուանքը, որ դիտակով որոշ կ'երևան (Ձև 28) : Աս
բծերը խիստ փոփոխական են. անանկ որ մի և
նոյն բիծը երբեմն կը մեծնայ՝ երբեմն ալ կը պրղ-
տիկնայ : Տարի կ'ըլլայ որ արևը շատ բծեր կ'ունե-
նայ. տարի ալ կ'ըլլայ որ ամենևին բիծ չմնար
վրան : Աս բծերուն այլևայլ մեկնութիւններ կու-
տան աստղաբաշխները, բայց ստոյգը չգիտցուիր :

302

ՄՈՒՆԻՏԵՐ

Մուլորակ կ'ըսուին ան աստղերն որ երկրիս պէս
են, ու իրենք իրենցմէ լոյս չունին, հապա արևուն
լոյսն անոնց վրայ զարնելով մեզի լուսաւոր կ'ե-
րևնան :

Երկինքն եղած մուլորակները ճանչնալու հա-
մար պէտք է գիտնալ, որ անոնց լոյսը հաստա-
տուն աստղերուն պէս չփալթիլիւր, հապա աղօտ՝
անշարժ ու միակերպ լոյս մը կ'երևնայ :

Մոլորակներուն շատին վրայ սև սև բծեր կ'ը-
րենան: Ա'երևնայ թէ աս սևութիւններն իրենց
վրայի լեռներուն ու ձորերուն դիրքէն է:

Հին ատենը հինգ մեծ մոլորակները միայն ճանչ-
ցուած էին • այսինքն՝ Փայլածու, Արուսեակ,
Հրատ, Լուսնթագ, Երևակ • Լուսինն ալ մոլորակ-
ներուն կարգը կը սեպուէր, ու Երկիրս հաստա-
տուն:

Հիմա մոլորակները վաթսուներկեց հատ են • և
երկու կարգ կը բաժնուին • Ձե՛ծ Տուրակի և ասպեղա-
պիպի • ոմանք պարզ աչքով ալ կը տեսնուին, ու
մանք միայն դիտակով, անոր համար ալ դիպակային
Տուրակի կ'ըսուին • և ամէնը մէկէն ասոնք են իրենց
արեւէն ունեցած հեռաւորութեան կարգովը •

| | |
|------------|------------|
| ♀ Փայլածու | Մասսաչիա |
| ♀ Արուսեակ | Իսիս |
| ♂ Երկիր | Նիւսա |
| ♂ Հրատ | Հէբէ |
| Փլորա | Լուսեաթիա |
| Արիագնէ | Փորտունա |
| Հարմոնիա | Պարթենոպէ |
| Մեղպոմէնէ | Թէաթիա |
| Վիկտորիա | Դափնէ |
| Եւաթրպէ | Հեսաթիա |
| Վեստա | Ամփիտորիսէ |
| Ուրանիա | Եգերիա |
| Նէմալոսա | Ասարէա |
| Իրիս | Անանուն |
| Մեղիս | Իրէնէ |
| Փոկէա | Պոմոնա |

| | |
|------------|-------------|
| Կալիբսէ | Պոլիւմնիա |
| Թալիա | Ազլայէ |
| Փիղէս | Լէւկոթէա |
| Եւնոմիա | Կալլիոսպէ |
| Ախրզինիա | Փսիքէ |
| Պրոսերպինէ | Պալէս |
| Հէրա | Եւրոպա |
| Կիրկէ | Տորիս |
| Ալէքսանդրա | Թէմիս |
| Լեզա | Հիւզիա |
| Եւզէնիա | Եւփրոսինէ |
| Ատալանտա | Մնեմոսինէ |
| Պանդորա | Կոնկորդիա |
| Դէմէարէ | Մ Լուսինթագ |
| Լէաիաիա | ի Երևակ |
| Պալլաս | Ք Ուրանոս |
| Պելլոնա | Յ Պոսիդոն |

Պարզ աչքով տեսնուածներն են . . Փայլածու ,
 Արուսեակ , Հրաս , Լուսնթագ ու Երևակ : Փայ-
 լածուն ու Արուսեակը ներքին խորակի կ'ըսուին ,
 որովհետեւ երկրի շրջանին մէջ արևուն վրայ կը
 պտըտին . մնացածներն ալ արգասիք խորակի կ'ը-
 սուին՝ երկրի շրջանէն դուրս արևուն վրայ պտը-
 տելնուն համար :

ԱՐԲԱՆԵԱԿԻ

Աթաբախը մուրազներէն զառ քսանուեր-
 կու հատ ալ երկրորդական մանր մուրազներ կան .

որ Արբանեակ կ'ըսուին, և մեկալ մոլորակներուն վրայ կը պարտին, մինչդեռ անոնք արևուն վրայ կը պարտին. բայց ասկէ թէ մոլորակները և թէ արբանեակներն իրենց վրայ ալ կը դառնան : Այս երկու տեսակ շարժմունքն ալ արևմուտքէ դէպ 'ի արևելք է :

Ասթուանըվեց մոլորակներէն հինգը միայն արբանեակ ունին. Երկիրս ունի մէկ հաս, որ է Ղուսինը. Ղուանթագը չորս արբանեակ ունի. Երևակը ութը հաս, Ուրանոսը ութը, Պոսիդոնը մէկ :

304

ՓԱՅԼԱԾՈՒ

Փայլածուն պղտի մոլորակ մըն է, որ արևուն շատ մօտ ըլլալէն՝ հազիւ սրարդ աչքով կ'երևնայ. իրեն տաքութիւնն ալ երկրէս դրեթէ եօթն անգամ աւելի սաստիկ է : Փայլածուն երբեմն արևուն գիմացն իյնալով անոր վրայ սե բծի պէս կ'երևնայ :

305

ԱՐՈՒՍԵԱԿ

Արուսեակն ամենէն պայծառ մոլորակն է, որ երբեմն առաւօտներն արևն ելլելէն առաջ կ'երևնայ, ու կ'ըսուի Ղուսաբէշը. երբեմն ալ արեւը մանեւէն ետքը կ'երևնայ, ու կ'ըսուի ԳիշերաՎար :

Արուսեակը երբոր երկրիս ու արևուն մէջտեղը կ'իյնայ, լուսնի պէս ազուոր երևոյթներ կ'ունենայ. դիտակով ալ լեռներ ու ձորեր կ'երևան վրան :

Արուսեակն իր վրայ սրտաւած մթնաշորտ ունի, որ երկրիս մթնաշորտէն շատ աւելի թանձր է :

Ե Ր Կ Ի Ր

Երկիրս ուրիշ մուտրակներուն պէս դիմահար մարմին է, և անոնց պէս կը ստորաի :

Երկրիս տրամագիծը 6850 մղոն է • շրջապատը 21,600 մղոն • մակերևոյթը 148,521,600 քառակուսի մղոն :

Երկիրս կըր գնատաձև է • երկու բևեռներուն կողմը քիչ մը տափակ, հասարակածին տակն ալ ուռած :

Երկրիս կըր ըլլալը կ'իմացուի մէյմը երկրիս վրայի՝ մէյմըն ալ երկնքի երևոյթներէն :

Երկրիս վրայ երկու գլխաւոր երևոյթ կայ որ երկրիս կըր ըլլալը կը ցուցնեն :

Ա. Թէ որ երկիրս կըր չըլլար, մեծ դաշտի կամ ծովու մէջ եղած բարձր շէնքերը հեռուանց ամբողջ կ'երևնային : Ուրեմն կըր ըլլալուն համար է որ հեռուանց ան շէնքերուն ծայրերը միայն կ'երևնան, ետքը քանի որ մարդ անոնց մօտիկնայ՝ կամայ կամայ ամբողջն ալ կը տեսնէ (Ձև 19) :

Բ. Շատ նաւորդներ մեծ ովկիանոսին մէջ մի և նոյն շտիւթիւնը բռնած երթալով, ներհակ կողմէն դարձան հասան ան տեղն՝ ուսկից որ ճամբայ ելեր էին :

Երկնքի երևոյթներն երկու կերպով կը ցուցնեն երկրիս կըր ըլլալը :

Ա. Երկրիս մէկ բևեռին կողմէն երեցած աստղերը՝ մեկալ բևեռին դիէն չեն երևնար :

Բ. Նրանի խաւարման ատենը երկրիս շուքը լուսնին վրայ կը որ ձևով կը զարնէ . ասով ալ կ'իմացուի որ երկիրս կը որ է :

Երկրիս բևեռներուն կողմը տափակ ըլլալն այլևայլ դիտողութիւններէ կ'իմացուի . անոնցմէ մէկն ալ աս է որ հասարակածին տակն եղած մարմիններն աւելի թեթեւ են՝ քան թէ բևեռայինները : Աս անկէց կ'իմացուի որ մի և նոյն երկայնութիւնն ունեցող ժամացուցի ճօճանակը հասարակածին տակը ծանր կը շարժի , քան թէ բևեռներուն կողմերը . անոր համար է որ մէկ ժամացոյց մ'որ բևեռներուն մօտ աւելի առաջ կ'երթայ , հասարակածին տակը ետ կը մնայ :

Երկրիս բևեռներուն տափակ ըլլալն իրեն կեդրոնաձիգ ու կեդրոնախոյս զօրութենէն է : Կեդրոնաձիգ զօրութեամբ երկիրս գէսլ 'ի իր կեդրոնը կը դիմէ . կեդրոնախոյս զօրութեամբն ալ կեդրոնէն կը հեռանայ :

Որովհետև աս կեդրոնախոյս զօրութիւնը հասարակածին տակն աւելի ու բևեռներուն տակը քիչ է , անոր համար բոլոր ջրերը գէսլ 'ի հասարակած կը վազեն . որով ան տեղը կը բարձրանայ , բևեռները տափակ կը մնան :

Երկու բևեռներուն տափակութիւնն է 24 մղոնի չափ , այս ինքն բևեռային տրամագիծը հասարակածի տրամագիծէն 24 մղոն կարճ է . կամ թէ ըսենք՝ երկրիս բևեռային շառաւիղը՝ հասարակածի շառաւիղին հետ բաղդատելով 299 մասին մէկ մասը կարճ է . ասոր համար գնտաձևութիւնը քիչ կ'աւրուի :

ԵՐԿՐԻՍ ՇԱՐԺԱՄՈՒՆԻՅԷ

Երկրիս շարժելուն պատճառները շատ հաւանա-
նափան են ու աստղաբաշխական հաշիւներով հաս-
տատուած • ասոնցմէ ամենէն պարզ ու յայտնի
պատճառներն աս երկուքս են •

Ա • Ամէն մոլորակները շարժմունք ունին • Եր-
կիրս ալ մոլորակներէն մէկն է, ուրեմն կը շարժի :

Բ • Շատ աւելի հաւանական է որ երկիրս 24
ժամուան մէջ մէյմը ինքիւր վրայ պտըտի, որ կ'ըլ-
լայ 21,600 մղոն տեղ, քան թէ արեւն ու բոլոր աստ-
ղերը մէկէն՝ մէկ մանրերկրորդի մէջ 600,000,000
մղոն տեղ պտըտին :

Մեզի անանկ կ'երեւնայ թէ երկիրս անշարժ կե-
ցած է, ու երկինքն է որ վրանիս կը պտըտի • Բայց
անանկ չէ • ինչպէս վաղուկ կառքով երթալու ա-
տեն՝ թէ որ ծառերուն ու շէնքերուն վերի ծայ-
րերը դիտենք, անանկ կ'երեւնայ թէ անոնք ետ կ'եր-
թան, բայց շարժող ու աւաջ գնացողը մենք ենք :

Թէ որ երկրիս հողագունտը միայն դառնար ու
վրայի մ'թնոլորտը հեար չպտըտէր, անդադար օդի
շարժմունք կամ սաստիկ հով կ'ունենայինք • Բայց
որովհետեւ օդն ալ երկրիս հետ կը պտըտի, անոր
համար մենք չենք իմանար : Ինչպէս նաևով ճամ-
բայ ընելու ատեն՝ մէջն եղողները երթալնին չեն
իմանար :

Երկիրս երկու տեսակ շարժմունք ունի • մէյմը
Օրական, մէյմըն ալ Տարեկան :

ԵՐԿՐԻՍ ՕՐԱԿԱՆ ՇԱՐԺՄՈՒՆԻԸ

Օրական շարժմունք կ'ըսուի անիկայ որ երկիրս 23 ժամուան, 36 վայրկենի ու 4 րոպէի մէջ մէկ անգամ առանցքին վրայ կը դառնայ • և սովորաբար 24 ժամ կը սեպուի :

Երկրիս օրական շարժմունքովը գիշեր ու ցորեկ կ'ըլլայ մեզի :

Որովհետև երկիրս մէկալ մոլորակներուն պէս՝ լոյսն արեւէն կ'առնէ, անոր համար երկրիս որ զին որ արև կը առնէ՝ ան կոչմը ցորեկ է • անոր ներհակ՝ արև չառած կոչին ալ գիշեր է (Ձև 20) :

ԵՐԿՐԻՍ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՐԺՄՈՒՆԻԸ

Տարեկան շարժմունքովն երկիրս արևուն վրայ կը պտըտի 365 օրուան, 5 ժամուան ու գրեթէ 49 րոպէի մէջ :

Ինչպէս մէկալ մոլորակներն՝ ասանկ ալ երկիրս իր տարեկան շրջանն արևուն վրայ կըսկըտը չընէր, հապա քիչ մը ձուածև (Ձև 21) : Աս շրջանը Ծիւր խաւարման կ'ըսուի • վասն զի ինչուան որ արևը՝ լուսինն ու երկիրս շիփշխտակ աս գծին վրայ չգան, խաւարում չըլլար :

Արևն երկրիս շրջանին մէջանգը չէ, հապա քովնտի՝ ամենէն մեծ տրամագծին վրայ • անոր հա-

մար երկիրս արևուն երբեմն մօտ կ'ըլլայ, երբեմն հեռու: Ասիկայ անկէց ալ կ'իմացուի որ մէկը դի-
տակով նայելու ըլլայ նէ, դեկտեմբեր ամսուն մէջ
արևուն սկուտաակը աւելի մեծ կը տեսնէ, յու-
նիսի մէջ ալ աւելի սղտիկ. ըսել է թէ երկիրս
դեկտեմբերի մէջ աւելի արևուն մօտ է քան թէ
յունիսի մէջ (Ձև 21):

Երկրիս արևէն հեռու եղած միջոցը հետախէս
կ'ըսուի, մօտ եղածը Մերձախէս:

Երկրիս արևուն հետ հեռախէս ու մերձախէս
եղած միջոցներուն տարբերութիւնը գրեթէ $2\frac{1}{2}$
միլիոն մղոն է. իսկ միջակ հեռաւորութիւնը 83
միլիոն մղոն է:

Երկիրս իր տարեկան շրջանովը գրեթէ 340 մի-
լիոն մղոն տեղ կը քալէ. բայց արագութիւնը բո-
լոր շրջանին մէջ հաւասար չէ:

Երկրիս արագութեանն անհաւասար ըլլալուն
պատճառն առ է որ, քանի որ երկիրս արևուն կը
մօտենայ՝ ձգողութիւնը կ'աւելնայ, անով աւելի
արագ կը պարտի. երբոր սկսի հեռանալ, ձգողու-
թիւնը պակսելով արագութիւնն ալ կը պակսի:
Միջին արագութիւնն է՝ մէկ վայրկեանի մէջ 960
մղոն տեղ քալելը:

Երկրիս տարեկան շրջանովն է որ մենք չորս ե-
ղանակները կ'ունենանք. այսինքն Գարուն, Ա-
ման, Աշուն, Չմեան: Ասկէց 'ի դատ անով օրեր-
նիս ալ կ'երկրնեան ու կը կարճընան:

Չորս եղանակաց փոփոխութեան պատճառն առ
է որ երկրիս առանցքը ծիր խաւարմանին ուղղա-
հայեաց չէ, հասլա գրեթէ $23\frac{1}{2}$ աստիճան քո-
վենտի ծագծ է. և միշտ առ ղերբը պահելով տա-

րուան մէջ երկու այլևայլ ատեն բեւեռներուն մէջ մը մէկը՝ մէյո՛ր մէկալը արևուն կը դառնայ . աս երկու ժամանակները Արեւադարձ կ'ըսուին : Ուրիշ երկու ժամանակ ալ կայ որ երկրիս բեւեռներուն և ոչ մէկը արևուն կը դառնայ . աս ժամանակներն ալ Գիշերահասար կ'ըսուին :

Մարտի 21ին երկրիս բեւեռներուն ոչ մէկը արևուն կը դառնայ՝ ոչ մէկալը . ասով երկու բեւեռին կողմն ալ հաւասար լոյս կը տեսնէ , և ամէն տեղ գիշերն ու ցորեկը հաւասար կ'ըլլայ : Աս է Գարնանային հասարակածը կամ Գարնանային Գիշերահասարը :

Մարտի 21էն ետքը երկիրս քանի որ առաջ երթայ՝ հիւսիսային բեւեռը վեց ամիս արև կը տեսնէ . ան միջոցին հարաւային բեւեռն ալ վեց ամիս մութ կը մնայ :

Իրեք ամիսը լմրննալուն պէս , յունիսի 22ին հիւսիսային բեւեռը արևուն կը դառնայ . անով բեւեռէն ինչուան 23¹/₂ աստիճան տեղ միակերպ ցորեկ կ'ըլլայ . ասոր ներհակ՝ հարաւային կողմն ալ իրեք ամիս նոյնչափ տեղը գիշեր : Ան ատեն հիւսիսային կիսագնդին վրայ ամառ է , իսկ հարաւային կիսագնդնոր ձմեռ . աս միջոցը կ'ըսուի Արեւադարձ ամառնային . և անկէց ետե երկիրս արևուն կըսկսի մօտենալ :

Ամառնային արեւադարձին ատենը՝ հիւսիսային կիսագնդին վրայ՝ հասարակածէն ինչուան բեւեռքանի կ'երթան օրերը կ'երկրննան . անոր ներհակ , հարաւային կողմը քանի որ հասարակածէն կը հեռանաս՝ օրերը կը կարճրնան :

Ամառնային արեւադարձէն իրեք ամիս ետքը ,

սեպտեմբերի 22ին, երկիրս մարտի 2ին ունեցած
դերքը կ'ստնէ . որ կ'ըսուի Գիշերահասաստը աշնա-
նային :

Աշնանային գիշերահասասարէն ետքը հիւսի-
սային բևեռը կամաց կամաց արև չտեսնէր ինչուան
վեց ամիս . ան միջոցին հարաւային բևեռը միշտ արև
կը տեսնէ :

Իրեք ամիս ետքը, դեկտեմբերի 22ին, երկրիս
հարաւային բևեռն արևուն կը դառնայ . իսկ հիւ-
սիսայինը մութ կը մնայ $23\frac{1}{2}$ աստիճան տեղ :
Ասոր համար հարաւային կիսագնահին վրայ ամառ
կ'ըլլայ, ու օրերն երկայն . իսկ հիւսիսային կողմը
ձմեռ . օրերն ալ կարճ : Աս միջոցը Չեւանային ա-
բևադարձ կ'ըսուի :

Չորս եղանակները գիշերահասասարներէն ու
արևադարձներէն կըսկսին . այս ինքն .

Գարունը կըսկսի գարնանային գիշերահասա-
սարէն, որ է մարտի 22 :

Ամառը՝ ամառնային արևադարձէն, որ է յու-
նիսի 22 :

Աշունը՝ աշնանային գիշերահասասարէն, որ է
սեպտեմբերի 22 :

Չմեռը՝ ձմեռնային արևադարձէն, որ է դեկ-
տեմբերի 22 :

310

Լ Ո Ւ Ս Ի Ն

Լուսինն երկրիս արբանեակն է . արբանեակ կ'ը-
սուի, վասն զի արևուն վրայ պարտելուն տեղը
երկրիս վրայ կը պարտի :

Ղուսինն երկրէս 49 անգամ պղտիկ է . բայց արևուն չափ մեծ երևնալուն պատճառը՝ մեզի արևէն աւելի մօտիկ ըլլալն է :

Ղուսինն երկրէս գրեթէ 208,000 մղոն հեռու է :

Կիտակով լուսնին վրայ լեռներ , ձորեր , ծովեր ու դաշտեր կ'երևնան . աստղաբաշխներն ալ ան լեռներուն , ծովերուն և այլն , մէյմէկ անուն գրեր են՝ գիրքը դիւրաւ ճանչնալու համար . ինչպէս Կեկտարի ծով , Ասատութեան ծով , Կոստանիկոսի լեռ , և այլն (Ձև 27) :

Ղուսինն երկու տեսակ շարժմունք ունի . մէյմը իր առանցքին վրայ կը պտտուի , մէյմըն ալ երկրիս վրայ :

Իր առանցքին վրայ կը դառնայ 27 օրուան , 7 ժամուան , 43 վայրկենի , ու 11 րոպէի կամ մանրերկրորդի մէջ :

Նոյնչափ ասեմի մէջ ալ կը պտտուի երկրիս վրայ . անոր համար է որ միշտ լուսնին նոյն երեսը կը տեսնենք :

Ղուսնին ամիսը արևուն ամսէն շուտ կը լմննայ , անոր համար մէկ տարուան մէջ տասուերկու անգամ նոր լուսին կ'ըլլայ ու 11 օր ալ կ'աւելնայ . ասով 19 տարուան մէջ 7 անգամ աւելի նոր լուսին կ'ըլլայ :

Արովհետեւ լուսնիւր ինքիրմէ լոյս չունի , հասլա լոյսն արևէն կ'առնէ , անոր համար այլևայլ ձևով կ'երևնայ մեզի . երբեմն եղջիւրի ձևով , երբեմն ալ կլոր : Բայց եղջիւրածն երեցած ասեմը , մալթ կողմն ալ տկար լոյս մը ունի . աս լոյսը երկրիս լոյսն է , որ արեւը մեր վրայ զօրնելով՝ մեզմէ ալ լուսնին վրայ կ'անդրադառնայ :

Երբոր լուսինն արևուն ու երկրիս մէջտեղը կը գտնուի, զինքը չենք կրնար տեսնել. վասն զի մեզի երեցած կողմը բոլորովին մութ է: Երկրորդ օրը արևուն լոյսը քիչ մը քովընտի զարնելուն՝ եղջիւրի ձևով լոյս մը կը տեսնենք, ծայրերը դէպ ՚ի արևելք դարձած. ասիկայ կ'ըսուի Ն^ր լուսին:

Ինչուան ութերորդ օրը մեզմէ ետ մնալով իրեն լուսաւոր կողմին կէսը կը տեսնենք. ասիկայ կ'ըսուի Ասաջին քառորդ (Ձև 24):

Տասներհինգերորդ օրը ամբողջ կիսագունար լուսաւորուած կը տեսնենք, որ կ'ըսուի Նրահ լուսին:

Քսանուերկուերորդ օրն ալ քովընտի նորէն կիսագնտին կէսը կը տեսնենք. ասիկայ կ'ըսուի Աերջին քառորդ: Ետքէն կամայ կամայ եղջիւրաձև լոյս մը միայն կ'երևնայ՝ երկու ծայրերը դէպ ՚ի արևմուտք դարձած:

Լուսինը թէպէտև 27 օրուան մէջ իր շրջանը կ'ընէ երկրիս վրայ, բայց նոր լուսինը մեզի 29 օրէն ու 12 ժամէն ետքը կ'երևնայ. վասն զի ան միջոցին երկիրս ծիր խաւարմանին մէջ առաջ գնացած ըլլալուն համար՝ գրեթէ 2 օր ու 4 ժամ ալ պէտք կ'ըլլայ որ լուսինը հասնի երկրիս ու արևուն գիմացը:

311

Հ Ր Ա Տ

Հրատը կարմրագոյն լուսով մոլորակ մըն է, որ երկրէս գրեթէ եօթն անգամ պզտիկ է: Աարմրութեանը պատճառը չգիտցուիր. կ'ըսեն թէ իրեն մթնոլորտին թանձրութենէն է:

Հրաան իր առանցքին վրայ կը դառնայ 24 ժա-

մուան , 37 վայրկենի ու 23 րոպէի մէջ . գրեթէ 686 օրուան մէջ ալ իր շրջանը կ'ընէ արևուն վրայ :

Հրատին վրայի բծերն ասդիս անդին անկանոն կերպով ցրուած են . երբեմն ալ կը փոխուին : Աս մոլորակիս բևեռին կողմը կտոր մը տեղ կայ , որ աստիկ լուսաւոր է . ու շատ անգամ մեծնալուն ու սղտիկնալուն համար՝ կ'ըսեն թէ սառոյց է և ան փայլունութիւնը ձիւն պիտի ըլլայ :

312

ԱՍՏԵՂԱՏԻՊԻ

Աստեղաբաշխները շատոնց դիտած էին որ մոլորակները մէկ համեմատական հեռաւորութիւն մը ունին արևէն . միայն Հրատին ու Ղուանթագին մէջտեղի միջոցը չափէ դուրս մեծ կերևնար , ուստի հեռագհեակ լաւ դիտակներով դիտեցին ու գտան որ իրաւցընէ ան միջոցները մոլորակներ կան : Իսկ գտնողներն իրենց ժամանակովն սստնք են կարգաւ .

| | | | | | |
|-----------|------|-------------|----|----------|------|
| Դեմէարէ | գտաւ | Բիացցի | 1 | յունուար | 1801 |
| Պալլաս | » | Օլպէրս | 28 | մարտ | 1802 |
| Հերա | » | Հարտինկ | 1 | սեպտ . | 1804 |
| Վեստա | » | Օլպէրս | 29 | մարտ | 1807 |
| Աստրէա | » | Հէնքէ | 8 | դեկտ . | 1845 |
| Հէրէ | » | Հէնքէ | 1 | յուլիս | 1847 |
| Իրիս | » | Հայնս | 13 | օգոստ . | 1847 |
| Փլորա | » | Հայնս | 18 | օգոստ . | 1847 |
| Մեգիս | » | Կրահամ | 25 | ապրիլ | 1848 |
| Հիւզիս | » | տէ Կասրարիս | 12 | ապրիլ | 1849 |
| Պարթենոպէ | » | տէ Կասրարիս | 11 | մայիս | 1850 |
| Վիկտորիս | » | Հայնս | 15 | սեպտ . | 1850 |

| | | | | |
|-------------|---|-------------|------------|------|
| Եգէրիա | » | տէ կասրարիս | 2 նոյեմբ. | 1850 |
| Իրէնէ | » | Հայնտ | 19 մայիս | 1851 |
| Եւնովիա | » | տէ կասրարիս | 29 յուլիս | 1851 |
| Փսիքէ | » | տէ կասրարիս | 17 մարտ | 1852 |
| Թէտիս | » | Լուտեր | 17 ապրիլ | 1852 |
| Մեղպոմէնէ | » | Հայնտ | 24 յունիս | 1852 |
| Փորտունա | » | Հայնտ | 22 օգոստ. | 1852 |
| Մասսաչիս | » | Շագոռնագ | 19 սեպ. | 1852 |
| Լուտետիս | » | կոլտշմիդ | 15 նոյեմբ. | 1852 |
| Կալչիոսէ | » | Հայնտ | 16 նոյեմբ. | 1852 |
| Թալիս | » | Հայնտ | 15 դեկտ. | 1852 |
| Փոկէա | » | Շագոռնագ | 6 ապրիլ | 1855 |
| Թէմիս | » | տէ կասրարիս | 6 ապրիլ | 1855 |
| Պրոսէրպիսնէ | » | Լուտեր | 5 մայիս | 1855 |
| Եւտերպէ | » | Հայնտ | 6 նոյեմբ. | 1855 |
| Պելլոնա | » | Մարթ | 1 մարտ | 1854 |
| Ամիլիարիտէ | » | Լուտեր | 1 մարտ | 1854 |
| Ուրանիս | » | Հայնտ | 22 յուլիս | 1854 |
| Եւփրոսիսնէ | » | Հայնտ | 1 սեպ. | 1854 |
| Պոմոնէ | » | կոլտշմիդ | 26 օգոստ. | 1854 |
| Պոլիւմնիս | » | Շագոռնագ | 28 հոկտ. | 1854 |
| Կիրիէ | » | Շագոռնագ | 6 ապրիլ | 1855 |
| Լեւոնթէա | » | Լուտեր | 19 ապրիլ | 1855 |
| Ստալանտա | » | կոլտշմիդ | 5 հոկտ. | 1855 |
| Փիդէս | » | Լուտեր | 5 հոկտ. | 1855 |
| Լէդա | » | Շագոռնագ | 12 յունու. | 1856 |
| Լեաիաիս | » | Շագոռնագ | 8 փետր. | 1856 |
| Հարմոնիս | » | կոլտշմիդ | 51 մարտ | 1856 |
| Դափնէ | » | կոլտշմիդ | 22 մայիս | 1856 |
| Իսիս | » | Բոկսըն | 25 մայիս | 1856 |
| Արիագնէ | » | Բոկսըն | 15 ապրիլ | 1857 |
| Նիւաա | » | կոլտշմիդ | 27 մայիս | 1857 |
| Եւգէնիս | » | կոլտշմիդ | 11 յուլիս | 1857 |
| Հեստիս | » | Բոկսըն | 16 օգոստ. | 1857 |

| | | | | |
|------------|---|----------|-------------|------|
| Անանուն | » | Կոլաշմիդ | 9 սեպտ . | 1857 |
| Ազլայէ | » | Լուտեր | 15 սեպտ . | 1857 |
| Դորիա | » | Կոլաշմիդ | 19 սեպտ . | 1857 |
| Պալէս | » | Կոլաշմիդ | 19 սեպտ . | 1857 |
| Վիրգինիա | » | Լուտեր | 19 հոկտ . | 1857 |
| Նէմաւսա | » | Լորան | 22 յունու . | 1858 |
| Երոպա | » | Կոլաշմիդ | 6 փետր . | 1858 |
| Կալիբոէ | » | Լուտեր | 4 ապրիլ | 1858 |
| Ալէքսանդրա | » | Կոլաշմիդ | 10 սեպ . | 1858 |
| Պանդորա | » | Սերլ | 10 սեպ . | 1858 |
| Մնէմոսինէ | » | Լուտեր | 22 սեպտ . | 1859 |
| Կոնկորդիա | » | Լուտեր | 24 մարտ | 1860 |

Աս մուրաակներն աղէկ դիտակով միայն կ'երևան : Ասոնց շրջանները իրարու խիստ մօտիկ են , ու դրեթէ չորս չորս տարուան մէջ՝ արևուն վրայ կը պտրախն : Իրենց մեծութիւնը դեռ յայտնի չեմացուիր :

313

ԼՈՒՍՆԹԱԳ

Լուսնթագն ամենէն մեծ մուրաակն է՝ երկրէս դրեթէ 1,114 անգամ մեծ , որ չորս արբանեակ ունի , աս չորս արբանեակները գտաւ Քալիլէոս 1610ին :

Լուսնթագին վրայ դօախի պէս սև բծեր կան իրեն հասարակածին զուգահեռական ձգուած :

Լուսնթագը 9 ժամուան , 55 վայրկենի ու 27 րոպէի մէջ իր առանցքին վրայ կը դառնայ . ուստի մարմնայն համեմատութեամբ՝ իր շարժմունքն երկրիս շարժմունքէն 25 անգամ սաստիկ է : Աս-

կէց կ'խմացուի որ իրեն կեդրոնախոյս զօրութիւնն
աւելի ըլլալով, բեռներուն տափահութիւնն ալ
աւելի պիտի ըլլայ, ինչպէս նաև կ'երևնայ : Առարն
Թագը գրեթէ 12 տարուան մէջ ալ արևուն վրայ
կը պարտի :

314

ԵՐԵՒԱԿ

Երևակն երկրէս գրեթէ 734 անգամ մեծ՝ մա-
նեկաւոր մոլորակ մըն է, որ ութը արբանեակ ու-
նի : Արբանեակներէն հինգ հաար միայն մեծ դի-
տակով կ'երևան . իսկ մեկաշնոնք խիստ պզտիկ են :

Մանէակ կ'ըսուի Երևակին վրայ եղած լուսաւոր
շրջանակը, որ մոլորակին գնակն հեռու կեցած է :
Աս մանեակը վեց հատ է կ'ըսեն՝ վրայէ վրայ ե-
կած համակեդրոն . մէկ հատէն աւելի ըլլալը ան-
կէց ալ կ'խմացուի՝ որ տակէն անցած հաստաաու-
թեան աստղերը մանեակներուն մէջտեղէն կ'ե-
րևնան :

Երևակը 10 Ժամուան, 29 վայրկենի ու 17 րո-
պէի մէջ իր առանցքին վրայ կը դառնայ . գրեթէ
29 տարուան մէջ ալ արևուն վրայ կը պարտի :

Երևակին գնաին վրան ալ գօտիի պէս բծեր կ'ե-
րևնան՝ իրարու զուգահեռական, և աս գօտիները
շատ անգամ կը փոփոխին :

Երևակին վրայի մանեակն ալ կը պարտի 10 Ժա-
մուան ու 32 վայրկենի մէջ, բայց աս մանեակը
Երևակին գնակն կամաց պարտելուն համար՝ մեզի
այլևայլ ձևով կ'երևնայ :

ՈՒՐԱՆՈՍ

Աս մոլորակը 1781ին մարտի 13ին գտաւ Գուլ-
լիւլմուս Հերշէլ երևելի աստղաբաշխը, որ կը կո-
չուի Ռւրանոս կամ Հերշէլ և երկրէս գրեթէ 82
անգամ մեծ է :

Ռւրանոսը 84 տարուան մէջ մէկ անգամ արևուն
վրայ կը պտըտի . իսկ իր առանցքին վրայի պտոյ-
տը դեռ չգիտցուիր :

Ռւրանոսն ութ արբանեակ ունի, որ Հերշէլ
քառասուն ոտնաչափ երկայնութիւն ունեցող դի-
տակովը տեսեր է, բայց չըջաննին չէ կրցած չա-
փել : Ասոնցմէ հինգն ուրիշ գիտականերով ալ կը
տեսնուին . իսկ միւս երեքը միայն Հերշէլ կրցեր է
տեսնել : Աս արբանեակներուն երկրորդը և չոր-
րորդը արևելքէն արևմուտք կը պտըտին՝ մէկաւ-
ներուն չըջաննին հակառակ :

ՊՈՍԻՒՈՆ կամ ԼԸՎԷՌԻԻԷ

Շատ ատենէ՛ի վեր աստղաբաշխները Ռւրանոս
մոլորակին տարեկան շրջանին վրայ այնպիսի այ-
լայլութիւններ կը գիտէին որ պատճառը չէին կրը-
նար իմանալ : Լըվէռիէ գաղղիացի քաջ տեսական
աստղաբաշխը տարի մը աշխատելով, հաշիւներ ը-
նելէն ետքը, հաստատեց թէ պէտք է որ Ռւրանո-
սէն ալ հեռու մոլորակ մը ըլլայ՝ անոր այլայլու-

Թեանցը պատճառ : Իրաւցրնէ 1846ին , սեպտեմբերի 23ին Պեռլինու Կալէ աստղաբաշխը անասան նոր մուրախը՝ Լըվէսիէին գուշակած տեղը . սա է Պոսիդոն կամ Լըվէսիէ մուրախը , որ երկրէս դրեթէ 110 անգամ մեծ է :

Պոսիդոնը 164 տարուան մէջ մէկ անգամ արևուն վրայ կը պարտի . իսկ իր առանցքին վրայ պարտիլը դեռ չգիտցուիր հեռաւորութեանը պատճառաւ :

Ոմանք կ'ըսեն թէ մէկ արբանեակ ու մէկ մանեակ մըն ալ ունի :

517 — ԴՐՈՒԹԻՒՆ ՄՈԼՈՐԱԿԱՅ ԱՐԵՒՈՒ

| ԱՆՈՒԱՆՔ | ՄԻՋԻՆ ՀԵՌԱԽՈՐՈՒԹԻՒՆ | ԺԱՄԱՆԱԿ ԱՍՏԵՂ. ՇՐՋԱՆԻ | ՏՐԱՄԱԳԻԾՐ | ՏԱՐԱՎՈՑ | ԹԱԽԱԼՈՒՄՆ |
|---------------------|---------------------|------------------------|--------------------|--------------------|-----------|
| Արև | 0.5874 | in op d 0 87 25 1/4 | 112.06 | 1407124.0 | 25 12 0 |
| Փայլածու | 0.7235 | 0 224 16 5/4 | 0.591 | 0.06 | 24 5 |
| Արուսեակ | 1.0000 | 1 համ 565 6 1/6 | 0.985 | 0.937 | 25 21 |
| Երկիր (1 Արբանյակ) | (Ջերկրէ 0.0025) | 1 27 7 5/4 | 1.000 | 1.000 | 25 56 |
| Հրատ | 1.5237 | 1 521 17 1/2 | 0.275 | 0.020 | 27 7 45 |
| 58 Ատանդապար | { 2.2017 | { 97 7 1/3 | 0.519 | 0.140 | 24 57 |
| Լուսնի թագ (4 Արբ.) | { 5.1597 | { 237 0 1/3 | Փոքր քան զՓայլածու | Փոքր քան զՓայլածու | |
| Երևակ (8 Արբ.) | 5.2028 | 11 514 20 | 11.225 | 1414.2 | 9 35 |
| Ուրանոս (8 Արբ.) | 9.5588 | 29 166 25 1/4 | 9.022 | 754.8 | 10 50 |
| Պոսիդոն (1 Արբ.) | 19.1827 | 84 5 19 5/4 | 4.544 | 82.0 | |
| | 50.04 | 164 225 17 | 4.719 | 110.6 | |

Ծան. Աս յուշակիս մէջինները մուտրակներուն
արևէն ունեցած միջին հեռաւորութիւններն են՝
երկրիս հեռաւորութիւնը 1 սեպտըմ: Տարածոցնե-
րուն մեծութիւնները տասնորդական կոտորակնե-
րու վրայ աւնուած են՝ երկրիս տարածոցը 1 սե-
պտըմ իսկ աստեղական շրջանները միջակ օրուան
վրայ համրուած են և ժամու ճշգուծեան համար,
ինչպէս նաև թաւալման կամ իւրաքանչիւր առան-
ցից վրայ դառնալու ժամանակը:

318

ՄԱՆՐԱՆԿԱՐ ԱՐԵՒԱՅՈՒՆ ԴՐՈՒԹԵԱՆ

Մուտրակներուն մեծութեանն ու հեռաւորու-
թեան կողմանէ իրարու հետ ունեցած համեմա-
տութիւնը կրնանք ընդհանրապէս այսպիսի նիւ-
թական օրինակներով ըմբռնել.

Արևն ենթադրենք գունա մը՝ 2 ոտնաչափ (կամ
65 հարիւրորդամէդր) տրամագծով.

Փայլածուն կ'ըլլայ Տանանխոյ հասիկ մը՝ 27 մէդր հե-
ռաւորութեամբ.

Արուսեակը ուր մը՝ 51 մէդր հեռու.

Երկիրս սիսեռ մը՝ 70 մէդր հեռու.

Հրատը Քծ Գնդասեղի Գլխի մը՝ 107 մէդր հեռու.

Աստեղատիպները մէյմէկ աւալի հասիկ՝ 154 ու
221 մէդր հեռու.

Լուսնի թաղը միջակ մեծութեամբ նաբինջ մը՝ 364
մէդր հեռու.

Երևակը սլզաիկ նաբինջ մը՝ 668 մէդր հեռու.

Ռւրանտը մեծ կեռաս մը՝ 1343 մէդր հեռու.

Պատիզոն, կամ Լըվէսիէ սաւոր մը՝ գրեթէ, 2103
մէզը հեռու :

319

ԽԱՒԱՐ ՈՒՄ

Երբոր երկիրս ու լուսինն իրենց շրջանին մէջ
անանկ գիմացէ գիմաց գան, որ մէկուն շուքը
մէկալին վրայ դարնէ, կամ արդեւք ըլլայ որ ա-
րևը չտեսնուի, ասիկայ Խաւարում կ'ըսուի :

Երկու կերպ խաւարում կ'ըլլայ • մէկը Մասնա-
կան, մէկալը Ամբողջական :

Մասնական կ'ըսուի խաւարումը, երբոր ա-
րևուն կամ լուսնին խաւարմունքն ամբողջ չըլլար,
հասցա մէկ կտորը միայն կը խաւարի : Ամբողջա-
կան կ'ըսուի, երբոր արևուն կամ լուսնին լոյսը
բոլորովին խաւարի :

Երբոր երկիրս լուսնին ու արևուն շիփշխտակ
մէջտեղը կ'ըլլայ, անանկ որ երկրիս շուքը լուսնին
վրայ դարնէ, լուսնի խաւարում կ'ըլլայ :

Երբոր լուսինը երկրիս ու արևուն մէջտեղը կու-
դայ, լուսնին շուքը մեր վրայ դարնելով արևուն
գիմացը լուսինը կը տեսնենք, ու արևուն լոյսը
չենք կրնար տեսնել • ասով արևը խաւարեր է կ'ը-
սենք :

320

ԳԻՍԱԻ ՈՐ

Գիսաւոր կ'ըսուին ան աստղերն որ իրենց չորս
դին կամ ետևնին մազի պէս երկնցած լոյս մը ու-
նին : Ասոնք ալ մէկալ մոլորակներուն պէս՝ իրենք

իրենցմէ լոյս չունին, հասա արեւն կը լուսաւորուին :

Ըստ գիտաւորներ ալ կան որ գիտակով միայն տեսնուելնուն համար՝ գիտակային գիտաւոր կ'ըսուին, և ընդհանրապէս գէս կամ մազ չերևար վրանին : Ասոնք վեցհարիւրի չափ կը համրուին ինչուան հիմա :

Գիտաւորներուն պոչը ինչ բան ըլլալը ստոյգ չգիտցուիր • ոմանք կ'ըսեն թէ անոնց գունափն վրայի լուսաւոր մթնոլորան է, որ սասաիկ արագութեամբ վազելու տաննին ետև կը մնայ, ու պոչի պէս կ'երևնայ : Ոմանք ալ կ'ըսեն թէ գիտաւորին գունար ապակիի պէս թափանցիկ մարմին ըլլալով, արևուն լոյսը մէջէն կը զարնէ՝ մէկալ գին կ'անցնի • անոր համար է որ միշտ պոչերնին արևուն հակառակ կողմն է :

Գիտաւորներուն պոչն իրենց մարմնոյն համեմատութեամբ խիստ երկայն է • ինչուան 40,000,000 մզոն երկայնութեամբ պոչ ունեցող գիտաւոր տեսնուեր է : 1747ին գիտաւոր մը երևցեր է, որուն պոչը հովանոցի ձևով է եղեր (Ձև 17) : 1811ին երևցած գիտաւորին ալ պոչը երկու բաժնուած էր (Ձև 18) :

Գիտաւորներն երկու տեսակ շարժմունք ունին • մէկը իրենց ստանցքին վրայ, մէկալն արևուն վրայ • բայց արևուն վրայ ունեցած շրջաննին սասաիկ արտակեգրոն է (Ձև 26) : Ասկէ զատ՝ ոմանք արևելքէն, ոմանք ալ արևմուտքէն դէպ 'ի արև կը մօտենան :

Գիտաւորներուն շրջանն ու իրենց դառնալու ատենը յայտնի չէ • միայն մէկ քանի գիտաւորներ

կան , որ երևելի աստղաբաշխները ասոնց շրջանը չափեր են . ինչպէս Հալլէյ աստղաբաշխը դիտաւորի մը շրջանը գուշակեց , որ գրեթէ 76 տարուան մէջ կը դառնայ արևուն վրայ . վերջին անգամ տեսնուեցաւ 1835ին : Հենքէ աստղաբաշխին գտածն ալ 3 տարուան մէջ կը լմնցընէ իր շրջանը :

Մեծ շրջան ունեցողներուն մէջ անուանի է Արկէլանտերի դիտաւորը որ 1811ին երևցաւ , ու 3,000 տարուան մէջ կ'ընէ շրջանը . 1680ին երևցած դիտաւորը 8,817 տարուան մէջ իր շրջանը կ'ընէ : Հումպոլդ կ'ըսէ թէ աս դիտաւորն արևուն մերձակէտ եղած ատենը մէկ ըտպէի մէջ 212 մղոն տեղ կ'երթայ . իսկ հեռակէտ եղած ատենը մէկ ըտպէի մէջ 9 օտնաչափ միայն :

Գիտաւորներուն համրանքը չգիտցուիր , վասն զի շրջանինն յայտնի չէ . բայց ինչուան հիմա պատմութիւններու մէջ 800 հասի չափ յիշուած կան :

321

ՁԳՈՂՈՒԹԻՒՆ

ԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՑ

Երկնային մարմիններուն դիրքն ու շրջանները հիմակուան աստղաբաշխները ձգողութեամբ պայծառ կը բացատրեն :

Ձգողութիւն կ'ըսուի ան զօրութիւնը , որով ամէն մարմին մէկզմէկ կը քաշեն :

Աս ձգողութիւնն երկու տեսակ է . մէկը կ'ըսուի կենդրոնայի գ զօրութիւն , մէկալը կենդրոնախոյս զօրութիւն :

Երկնային մարմիններուն շարժմունքն երկու
տեսակ ձգողութիւնն ալ ունի . որ կենդրոնաձիգ
զօրութեամբ բոլոր մոլորակները մէկզմէկ կը քա-
շեն , ու ամէնը մէկէն դէպ 'ի արեւը կը վազեն որ
իրենց կենդրոնն է . կենդրոնախոյս զօրութեամբ
ալ միշտ արեւէն կը հեռանան . ասանկով ոչ իրարու
բոլորովին կրնան մօտենալ , և ոչ իրենց շրջանը կը
փոխեն . և իրարմէ միշտ միակերպ քաշուելնուն
կամ վանուելնուն համար՝ շարժմունքնին ալ միշտ
անփոփոխ կը մնայ :

Կենդրոնաձիգ ու կենդրոնախոյս զօրութիւնը
յայտնի կ'երևնայ աս օրինակիս վրայ , որ մէկը թէ
որ դերձանին ծայրը գնտակ մը կապէ ու մէկ
ձեռքով ստորացրնէ , գնտակը ոչ կրնայ բոլորովին
հեռանալ , և ոչ ձեռքին մօտենալ . դերձանին ու-
ժը կենդրոնաձիգ զօրութիւնն է , որով գնտակը
ձեռքէն չբաժնուիր . ստորտելուն ուժն ալ կեն-
դրոնախոյս զօրութիւնն է , որով գնտակը միշտ հե-
ռանալ կ'ուզէ :

322

ՄԱԿԸՆԹԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԵՂԱՏՈՒԹԻՒՆ
ԾՈՎՈՒ

Երկնային մարմնոց ձգողութիւն ունենալուն
յայտնի նշանն է ծովու ջրերուն մակընթացու-
թիւնն ու տեղատուութիւնը :

Մակընթացութիւնն է ջրերուն կանոնաւոր կեր-
պով բարձրանալը . իսկ տեղատուութիւն՝ անոնց
ցածնալը :

Երկնային մարմինները որչափ աւելի իրարու մօտ ըլլան՝ ձգողութիւնն ալ այնչափ սաստիկ կ'ըլլայ : Արովհետեւ ամէն աստղէն աւելի լուսինը երկրիս մօտ է , անոր համար ծովուն մակընթացութեան ու տեղատուութեան գլխաւոր պատճառն ալ լուսինն է . վասն զի լուսինը երկրիս որ կողմն որ ըլլայ՝ ջրերն ալ դէպ 'ի ան կողմը կը վազեն . որովհետեւ տեղի ջրերն աւելի լեցուն ու բարձր կ'ըլլան , քան թէ լուսին չեղած կողմը (Ձև 2Յ) :

Ա'երկնայ թէ արեւն ալ մեծ ազդեցութիւն ունի ծովու ջրերուն վրայ . վասն զի երբոր արեւն ու լուսինը երկրիս մէկ կողմը իյնան , մակընթացութիւնն ալ սաստիկ կ'ըլլայ (Ձև 2Ծ) . իրարմէ հեռու եղած ասե՛ննին ալ մակընթացութիւնը տկար է . իսկ երկու բևեռներուն կողմը խիստ քիչ մակընթացութիւն կ'ըլլայ :

Մակընթացութիւնն ու տեղատուութիւնը մէկ օրուան մէջ երկու անգամ կ'ըլլայ : Առաջ վեց ժամի չափ ջրերը կը բարձրանան , ու մէկ քառորդ մը անանկ բարձր կենտրէն ետքը՝ վեց ժամ ալ կը քաշուին ու կը ցածնան , և կէս ժամի չափ անանկ ցած կը մնան՝ ինչուան որ սկսին նորէն բարձրանալ :

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԲՆԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

323

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԲՆԱԿԱՆ աշխարհագրութիւնը կը սորվեցընէ երկրիս վրայի բնական բաժանմունքները, երևոյթներն ու անոնց ընդհանուր յատկութիւնները:

Երկիրս կամ հողագունան իրեք դիւաւոր մաս կը բաժնուի • Զամաք, Զուր, և Օդ:

324

ՅԱՄԱՔ

Բոլոր հողագունաիս մակերևութին իրեք մասը Զուր ու մէկ մասը ցամաք երկիր է • ցամաքին այլևայլ կտորները կ'ըսուին Ղեռ, Դաշտ, և այլն:

325

Կ Ե Ռ

Երկրիս վրայի բնական բարձր կոնաձև անդ-
ուանքը Լեռնային Կրասնին . աս լեռներն ալ իրարու
կապած ըլլան նէ՛ լեռներու Գօթի :

Մեծամեծ գօտիներուն դիրքը ընդհանրապէս
հարաւէն դէպ 'ի հիւսիս է . ինչպէս Ամերիկայի
մէջ՝ Քորաիլեան լեռները , Ասիոյ մէջ՝ Ուրալ ու
Հիմալայա լեռները , Եւրոպայի մէջ՝ Ալպեան ու
Քէօլէն լեռները :

Աշխարհիս ինչուան հիմա չափուած լեռներուն
ամենէն բարձրերը ասոնք են .

Ասիոյ Հիմալայա լեռներուն մէջ Տալաշակիրի , որ
8588 մէդր բարձր է .

Հայաստանի մէջ Արարատ կամ Մասիս 5,216 մէդր
բարձրութիւն ունի .

Ամերիկայի Անտեան լեռանց մէջ Նէվադոյ աէ Սո-
րադա 6,488 մէդր .

Եւրոպայի Ալպեան լեռանց մէջ Սպիտակ լեռը
4,813 մէդր :

Աֆրիկէի մէջ Մուրիա լեռը 3,000 մէդր .

Ովկիանիա , Սումատրա կղզիին մէջ , Կունտն Բո-
սումայրա լեռը 4,570 մէդր :

ՀՐԱՒՈՒԽ, ԳԵՏՆԱՇԱՐԺ

Հրաբուխ կ'ըսուին կրակ ցատքեցրնող լեռները , որ ընդհանրապէս ծովեզերեայ տեղուանք կ'ըլլան :

Հրաբուխին պատճառը գեանին տակը եղած հրային նիւթերն են , որ յանկարծակի կը բարնկին ու սասափկ ուժով հողը պատրուակելով դուրս կ'ելլեն :

Հրաբուխները միշտ չեն բարնկիր , հապա ատեն ատեն : Շատ հրաբուխներ ալ կան որ երկայն ատեն վառելով մարեր հատեր են . ինչպէս է նաև Մասիս լեռան մարած հրաբուխը :

Ծովային հրաբուխ կ'ըսուի ան հրաբուխն որ ծովուն տակէն կը բարնկի , որով նոր նոր կղզիներ դուրս կ'ելլեն . ինչպէս է բաց յայլոց Սանգուրին կղզին և քովի սղախ կղզիները , որ 1707ին հրաբուխէն ելեր են :

Մարած հրաբուխներէն զատ հիմա աշխարհիս վրայ 500 հրաբուխէն աւելի կայ , կ'երեւնայ թէ ատենք գեանին տակէն իրարու հետ հաղորդակցութիւն ունին :

Գեանաշարժ կ'ըսուի երկրի մէկ կտորին դողդողալը :

Գեանաշարժը շատ անգամ հրաբուխէն կ'ըլլայ , որ կրակն ուժով գեանէն դուրս ելլելու ատեն գեաներ կը թօթովէ . շատ անգամ ալ գեանին տակի

կազերէն * կ'ըլլայ, որ հողը պատրուակով դուրս
ելլելու ատեննին հոնտեղի գեախնը կը շարժեն : Աս
անասկ գեանաշարժներ շատ եղած են նաև Փոքր
Ասիոյ, հայաստանի ու Պարսկաստանի կողմերը :

ԴԱՐՏ, ԱՆԱՊԱՏ

Դաշտ կ'ըսուին երկրիս շխտակ ու տափարակ
տեղուանքը :

Մեծութեան կողմանէ անուանի են Աուխնէայի
դաշտերը, որոնց մէջ ինչուան տասը ոտնաչափէն
բարձր խոտ կը բուսնի : Անոնցմէ ալ մեծ են Ամե-
րիկայի մէջ Ամազոնեայ գեախն քովի դաշտերը
որ հազար միոնի չափ տարածութիւն ունին ու
մէջէրնին ամենևին քար չգտնուիր :

Ան դաշտերն որ անբեր կամ աւազուտ են՝ Ա-
նապատ կ'ըսուին • ասոնց մէջ ամենէն մեծն է Սահ-
րա անապատը, որ գրեթէ երկու իրեք ամսուան
ճամբայ միակերպ դաշտ է :

Մեծամեծ անապատներուն մէջ տեղ տեղ բարե-
բեր երկիրներ կը գտուին կղզիի պէս • ասոնք Ու-
լասիս կ'ըսուին :

* Ասղը օդի նման մարմին է, որ գոլորշիի պէս՝ տա-
քութեամբ կ'ընդարձակի, բայց առանց քիմիական բա-
ղադրութեան ոչ ջուր կը դառնայ անոր պէս, և ոչ ջրի
պէս կը սնդանայ :

Ա Յ Ր

Այս կ'ըսուին երկրիս խորունկը կամ լեռներուն տակը եղած մեծամեծ ծակերը :

Աշխարհիս ամենէն խորունկ այրն է Արգոյի մէջ էլտէն այրը, որ 9,600 ոտնաչափ խորութիւն ունի :

Ընդարձակութեան կողմանէ անուանի է Աւստրիոյ մէջ Դրեստի մօտ Ատէլսպէրկ այրը, որ 6 մղոնի չափ մեծութիւն ունի :

Դուրինի քով Եւոզոս ըսուած լեռան վրայ այր մը կայ, որուն մէջէն ամառը տաք ատեն պաղ հով մը կը փչէ :

Հատ ատեղ այրեր կան՝ որոնց վրայէն կրային ջուր մը կը վազէ • վազելու ատենը կամաց կամաց զտուելով պարզ ջուրը կը վազէ, և մէջի կիւրը կը քարանայ ու սառի ձևով կը կախուի : Ասանկ այրեր շատ տեղ կը գտնուին, մանաւանդ Սկովտիա, Իտալիա, և Յունաստանի Անախարոս կղզիին անուանի այրը :

Նաբոլի մօտ այր մը կայ որ կ'ըսուի Հան այր • թէ որ հոն շուն կամ ուրիշ մանր կենդանիք մանելու ըլլան, շուտ մը կը մեռնին • վասն զի գեանէն ածխական կազ ելլելով՝ գեանին երեսը կը մնայ երկուք ու կէս ոտնաչափ բարձրութեամբ • որովհետեւ ածխական կազը մահացու կազ է, անոր համար ան վնասակար օդին մէջ եղող կենդանիները շուտ մը կը մեռնին :

Անուանի է նաև Սկովախոյ մէջ Ֆինկալի այլը որ հովի ասեն խիստ սաստիկ արձագանդ կ'ընէ և ահաւոր ձայներ կը հանէ :

329

Զ Ո Ւ Ր

Զորը վաղուկ ու թափանցիկ մարմին է, որ սաստիկ տաքութեամբ գոլորշի կը դառնայ, իսկ սաստիկ սղաղութեամբ կը սառի կը սնդանայ * :

Իրեք տեսակ ջուր կայ . հասարակ, հանքային ու Ծովային :

330

ՀԱՍԱՐԱԿ ԶՈՒՐ

Հասարակ կամ Անուշ կ'ըսուի ան ջուրն որ ամենեկին աղի չէ կամ հանքային համ չունի . ասանկ էն ընդհանրապէս Աղբիւրները, Գետերը, Աճերը :

* Չրին տաքութիւնը ջերմաչափ գործիքով կրնայ չափուիլ . սովորական ջերմաչափը հարիւր աստիճան բաժնուած է . մէջի սնդիկը Չրին տաքութենէն ընդարձակուելով թէ որ 100 աստիճան բարձրանայ, ջուրը եփ կ'ելլէ . իսկ սղաղելով ինչուան 0 աստիճան իջնէ նէ՛ ջուրը կը սառի :

ԳԵՏ, ԶԲՎԷԺ

Գէ+ կ'ըսուին լեռներու վրայէն վաղած ջրերը,
որ դարվար իջնալով ինչուան ծով կը թափին:

Աշխարհիս ամենէն մեծ գետերը Ամերիկայի
մէջն են:

Միսիսիբիին 3,560 միլոն երկայնութիւն ունի.

Ամազոնեաց գետը 3,080 միլոն.

Օպի գետը 2,320.

Վոլիա գետը 2,040.

Դանուբ գետը 1,496.

Եփրատ գետը 1,492.

Հաւնոս գետը 600. և այլն:

Գետեր կան որ վաղելու ատեննին գետնին տակը
կ'անցնին, և ուրիշ տեղէ մը գուրս կ'ելլեն. ինչ-
պէս Հաւնոս գետին մէկ ճիւղը՝ Նէյտա քաղքին
քովերը, և Նուարէ գետը: Ասան զի ինչպէս գեա-
նին երեսն անհաւասար է, ասանկ ալ գետնին
տակն այրեր՝ ծակեր ու աւաղուտ տեղուանք կը
գանաւին. երբոր գետի ընթացքը աս աւաղուտ
տեղուանքը կամ ծակերուն կը հասնի, բնական
կերպով գետնին տակը կ'անցնի:

Գետեր կան որ ոսկիի հանքին մէջէն անցնելով,
իրենց բերած աւաղն ալ ոսկիի հետ խառն է. ինչ-
պէս Զայիրէ ու Վամպիա գետերը:

Գետեր կան որ բարձր լեռնէն վաղելու ատեն-
նին ժայռի մը հանդիպելով վերէն յանկարծ վար

կ'իյնան . աս վար ընկած ջուրը Զւլէթ կամ Սա-
հանդ կ'ըսուի :

Աշխարհիս մէջ ամենէն լայնը Նիաղարայի ջըր-
վէժն է Ամերիկայի մէջ , որ սուրբ Լաւրենտիոս
դեանին մէկ մեծ ճիւղն է , 1,200 ոտնաչափ լայնու-
թիւն ունի և 160 ոտք բարձրութիւն :

Ամենէն բարձր ջրվէժն ալ Վալարմայի ջրվէժն
է Պիրենեան լեռներուն վրայ , որ 1,266 ոտնաչափ
բարձրութենէ վար կ'իյնայ :

332

Լ Ի Ժ

ԼԻՃ կ'ըսուի մէկ տեղ մը ժողուած ջուրը , ո-
րուն չորս դին ցամաքով սլատած է :

Աշխարհիս ամենէն մեծ լիճը Վասալից ծովն է ,
որուն երկայնութիւնը՝ հիւսիսէն հարաւ 800 մղո-
նի չափ է , իսկ լայնքը 120 մղոնէն ինչուան 300
մղոնի չափ . խիստ մեծ է նաև Արալ լիճը :

Աշխարհիս երեսն ամենէն բարձր դիրք ունեցող
լիճը Հնդկաստանի Մանասարովար լիճն է՝ ծո-
վուն երեսէն 5,400 մէդր բարձր :

333

ՀԱՆԻԱՅԻՆ ԶՈՒՐ

Հանդային ջրերը գեանին տակի հանքերուն մէջէն
անցնելով , անոնց համն ու գոյնը կ'աւնենն . անոր
համար սմանք երկաթի համ ունին , սմանք սպաղ-

լիցի, ոմանք ծծումբի կամ օծուխի և ուրիշ հանքերու :

Հատ կերպով փորձուած է որ գեանիկն որչափ խորունկն երթաա՝ տաքութիւնն ալ աւելի է : Աս բանս յայանի կ'իմացուի նաև Ջերմահներէն, որ գեանէն բխած բնական տաք ջրեր են :

Հանքային տաք ջրերը խիստ շատ տեղ կը գրանուին, մանաւանդ Իսլանաայի մէջ, որոնցմէ մէկը Աէյզէր անունով գեանէն 150 ոտնաչափ բարձրութեամբ վեր կը ցափէ :

Տեսակ մը հանքային ջրեր կան որ թէպէտ տաք չեն, բայց իրենց մէջ դիւրավառ կազ գանուելով յանկարծ յանկարծ իրենք իրենցմէ կը բռննկին : Աս ջրերէն շատ կը գանուի նաև Պաքուին քովերը, ան պատճառաւ ան տեղը կրակապաշտ Պարսիկներու ուխտատեղի է :

ԾՈՎԱՅԻՆ ԶՈՒՐ

Ծով կամ Ուլիանոս կ'ըսուի աշխարհիս մեծ մասը պատող աղի ջուրը : Սովորաբար Ուլիանոս կ'ըսուին մեծամեծ ցամաքներուն դրսի կողմն եղած ընդարձակ ջրերը, իսկ Ծով կ'ըսուին ներս մտած մեծամեծ կտորները :

Ծովուն տակն ալ ցամաք երկրի պէս լեռներ, ձորեր ու դաշտեր կան :

Ծովուն ամենէն խորունկ տեղը չափեր են ու ինչուան 1,680 գրկաչափ գտեր են՝ առանց յատակին հասնելու : Այսն ղի չափելու ծովը խիստ

խորունկ ըլլայ նէ, չափեւո՛ւ համար երկնցած
չուանը այնչափ կը թէթևնայ՝ որ ծայրը կախուած
ծանրոցը վեր կը վերցընէ քանի որ սակը չէ հա-
սած . և կը կարծուի թէ ծովուն խորութիւնը հա-
մեմատ սխաի ըլլայ ամենէն բարձր շեմերու . և
թէ որ անոնց չափ ալ չըլլայ խորութիւննին, գոնէ
քիչ պակաս :

Ծովու ջրին աղիութեան պատճառն որոշ չգիտ-
ցուիր . ոմանք կ'ըսեն թէ ծովուն տակի աղի հան-
քերէն է . ոմանք ալ կ'ըսեն թէ Աստուած բոլոր
ջրերն աղի ստեղծած է, որ ետքէն արևուն տաքու-
թեամբը դոլորչի դառնալով զտուեր ու անուշ-
ցեր են :

Ծովուն աղիութիւնն ամէն տեղ միակերպ չէ,
հասրա աւելի աղի է հասարակածին մօտերը՝ քան
թէ բևեռներուն կողմերը :

Երբեմն գիշերը նաւուն անցած ճամբան, կամ
թիակներուն ամէն մէկ զարնուածքին՝ մանր մանր
ասաղի սէս ըլլա կ'երևնայ ջրին մէջ : Աս լուսոյն
բուն պատճառն ինչուան հիմա չէ գիտցուած .
ըսող կայ թէ ջրին մէջ եղած լուսաւոր օրդերէն
է . ըսող ալ կայ թէ ծովուն մէջի փառութիւններէն
է . ոմանք ալ կ'ըսեն թէ փոսփորեան * կաղերէն է :
Բայց ասոնցմէ մէկն ալ հաւանական պատճառներ
չեն :

Երկու արևադարձներուն մէջտեղի ովկիանոսին

* Փոսփոր կ'ըսուին ան կաղերէն նիւթերը . որ ինչ և
իցէ մարմնոյ հետ շիտելով լուսաւոր արտաշնչութիւն
կ'ընեն առանց տաքութեան . աս ըլլաք աւելի մութ ատեն
կ'երևնայ :

Յուրն արևելքէն արեմուտք կը վազէ . բեւոներուն
ջրերն ալ գէտ 'ի հասարակած :

Ծովուն բնական ընթացքին պատճառն երկրիս
արեմուտքէն արևելք արագութեամբ սլաքախն է .
որովհետև աս շարժմունքը հասարակածին տակն
աւելի ուժով է . Յուրն ալ չկրնար նոյն արագու-
թեամբ երկրիս հետ սլաքախլ , անոր համար աս
ընթացքը կ'ունենայ :

Երբեմն ջրի երկու ընթացք դիմացէ դիմաց դա-
լով մեծ սրտոյտ կ'ընեն . աս սրտոյտը կ'ըսուի Յոյ-
ձանք :

Իրեք անուանի յորձանք կայ . Մալազրէմ '
Լոֆֆոտէն կղզիներուն քովը , որ ինչուան մեծ
նաւեր ալ կ'ընկղմէ . Քարիբդիս՝ Սիկիլիայի նե-
ղուցը . Եւրիպոս՝ Եյրիպոզ կղզիին քովերը :

333

Օ Դ

Օդ կամ Մեթուրոս կ'ըսուի երկրիս չորս դին սա-
տած թոյլ ու թափանցիկ մարմինը , որուն մէջ
օդերևոյթներ կ'ըլլան :

Մթնոլորտին բարձրութիւնն ընդհանրապէս
46,164 մէրը է :

Օդին խտութիւնն ամէն տեղ միակերպ չէ . մէյ-
մը որ մթնոլորտին վարերը՝ այս ինքն երկրիս մօտ
եղած տեղուանքն աւելի թանձր է քան թէ վերե-
րը , վասն զի վրայի օդին ծանրութենէն տակի օդը
կը ճնշուի . անոր համար բարձր տեղուանք մարդս
դժուարաւ շունչ կ'առնէ : Երկրորդ՝ տեղ տեղ օդը

ցրտէն կը խառնայ, տեղ տեղ ալ տաքէն կ'ուռի
կ'անդայտանայ. աս է հովերուն գլխաւոր պատ-
ճառը:

336

ՕՒԵՐԵՒՆՅԻՒՆ

Օտերեայի կամ Մեքեոբայ կ'ըսուին օդուն մէջ
տեսնուած երևոյթները:

Աս երևոյթները չորս տեսակ կ'ըլլան. Օդեղէն,
Զրեղէն, Ղուսեղէն ու Հրեղէն:

337

ՕՒԵՂԵՆ ՄԵՏԻՈՐԱՅԻ

Օդեղէն Մեքեոբայ կ'ըսուին օդին այլևայլ շարժ-
մունքերը. ինչպէս հով, Մըրիկ, Թաթառ, և
այլն:

338

Հ Ո Վ

Օդին տեղէ տեղ փոխուելը հոյ՛ կամ հո՛ւ կ'ը-
սուի, որ երկու կերպով կ'ըլլայ. մէյմը տաքութե-
նէն, որով օդը սուսելով քովի օդերը մեկդի կը
հրէ. երկրորդ՝ ցրտութենէն, որով նոյն օդը կը
խառնայ, ու չորս դին եղած օդը դէպ 'ի խտացած
տեղը կը վազէ:

Հովերն ընդհանրապէս կանոնաւոր են, և իրենց

փչելու ատեննին յայտնի է • այսինքն առաւօտն
արեւելքէն կը փչեն , կէսօրը հարաւէն , իրիկունը
արեւմուտքէն , կէս գիշերուն հիւսիսէն : Բայց աս
կարգն ամէն տեղ միակերպ չէ՝ երկրիս այլևայլ
բարձր ու ցած գիրքերուն համար • հասարակածին
տակն ամէն օր աս կարգը կը սլահուի • որչափ որ
մէկը գէալ 'ի բլեռները մօտենայ՝ աս կարգն ալ
կը փոխուի :

Վողմնացոյցներուն վրայ նշանած երեսունուերկու տեսակ հով կայ • ասոնց գլխաւորներն ութը հաս են , որ աշխարհիս չորս կողմէն և անոնց մէջտեղուանքէն կը փչեն :

Հովին ընթացքն ամէն տեղ ու ամէն ատեն միակերպ չէ • ընդհանրապէս հասարակածին տակը հովերը խիստ սաստիկ կ'ըլլան :

Խիստ հանդարտ հովն որ հազու թէ կ'իմացուի , մէկ ժամուան մէջ 3,400 ոտնաչափ տեղ կը վազէ • միջակ հովը 20,000 • սաստիկ հովը 200,000 • փոթորիկը 300,000 • սաստիկ մըրիկը 480,000 :

Երբոր երկու գիէն երկու հակառակ հով գիմացէ գիմաց ելլեն ու իրարու սրլուռելով ամպերն երկնքէն վար իջեցընեն՝ Թափառ կ'ըսուի :

Թափառն երկու տեսակ է • ծովային ու ցամաքային : Ծովային թափառն ինչուան 80 ոտնաչափ հաստութիւն կ'ունենայ • ասիկայ ծովուն ջուրը տակնու վրայ կ'ընէ ահագին ձայնով , ու քիչ մը ատեն ծովու ջրին հետ կապած անշարժ կենալէն ետքը յանկարծակի կը ցրուի : Իսկ ցամաքայինն երկայն բարակ կ'ըլլայ , ու գետնի վրայ ասգիս անդին քաշելով գիմացն ելածը կ'աւրէ , կը կոտրէ ու կը փլցընէ :

Նորանշան անձրև կ'ըսուին երկնքէն թափթփած
խիճ, աւազ, գորտ, ծծումբ, ցորեն, դարի, և
այլն, որ թաթառով վեր կ'ելլեն ու այլևայլ տե-
ղուանք կ'իյնան :

Մտե՛իւ յանկարծական սաստիկ հովէ • ասիկայ
այրեցած դժտիին տակն այնչափ ուժով կ'ըլլայ՝ որ
ինչուան ծառերն իրենց արմատէն կը հանէ ու
շէնքերը կը փլցնէ : Յանկարծական մրրկին սաս-
ճառը՝ կաղերուն յանկարծ իրարու հետ խառ-
նուիլն է կ'ըսեն :

Խորշի կ'ըսուի ան մնասակար հովը, որ սպա-
կանեալ լճերու կամ տաք անապատներու վրայէն
փչելով, թէ մարդկան և թէ կենդանեաց կը մնասէ :

ՋՐԵՂԷՆ ՄԵՏԷՈՐԱՅՔ

Ջրեղէն Ռեհորաները բոլորն ալ կ'ըլլան գեանէն
եղած գոլորշիներէ, ու եօթը տեսակ են • Մէգ,
Ամպ, Յող, Եղեամ, Անձրև, Ձիւն ու Կարկուտ :

Գեանէն ելած ջրային գոլորշիքը երբոր գիշե-
րուան օդին սաղութենէն վեր ճկարենան ելել
ու երկրիս երեսը մնան, վերի գոլորշիքներն ալ
վար իջնան ինչուան գետին, Մէգ կամ Մասախուղ
կ'ըսուի :

Ա Ս Պ

Արևուն տաքութենէն վեր ելած ջրին գոլորշիքն օդին մէջ կը ցրուին, որ թափանցիկ են և աչքի չեն երևնար. երբոր օդին տաքութիւնը սրաղ հովէն կը ցրաի, վեր ելած գոլորշիքն ալ կամաց կամաց վար իջնալով ու իրարու մօտենալով կը թանձրանան, թափանցիկութիւննին կը կորսընցընեն ու օդուն մէջ կը շարժին կամ կը կենան, Աճա կ'ըսուին:

Աս բանս յայտնի կ'երևնայ անկէց որ ամառ ատեն շատ անդամ իրիկուններն երկինքն ամպ չեղած ատենը կը տեսնենք որ բոլոր երկնքին երեսը յանկարծակի ամպով լեցուեր է:

Ամպերն երկրէս ինչուան 18,000 տաք բարձր կրնան ելլել. անկէց վեր սաստիկ ցուրտ ըլլալուն՝ կը ծանրանան ու ալ վեր չեն կրնար ելլել:

Յ Օ Ղ

Յօն է գիշեր ատեն դաշտերու վրայ իջած անձրևի պէս թացութիւնը:

Գիշերուան ցրտութենէն երկրիս վրայի մարմինները կը սղաղին. բայց ամէնն ալ հաւասար չեն սղաղիր, հասրա ոմանք շատ՝ ոմանք քիչ, թէ իրենց կազմուածքին և թէ իրենց դիրքին համար: Բնութեամբ շատ սղաղող մարմիններուն վրայ շատ գոլորշի կը նսաի. իսկ անոնք որ քիչ կը սղաղին կամ

ամենևին չեն պաղեր, վրանին ալ քիչ գողորշի կ'իջնայ կամ ամենևին չիջնար ու չոր կը մնան :

Յօղն աւելի առաւօտուան դէմ կ'ըլլայ՝ քան թէ իրիկունը կամ կէս գիշերուն, վասն զի ինչուան առաւօտ երկրիս վրայի մարմիններն երթալով աւելի կը պաղին :

Յօղը միայն երկինքը պարզ եղած գիշերները կըլլայ, և ամպոտ եղածին պէս ցօղ չիջնար, վասն զի ամպոտ եղած գիշերը շատ աւելի տաք կ'ըլլայ՝ քան թէ պարզ եղած գիշերը :

342

ԵՂԵԱՄ

Եղեամբ գեանի վրայ կ'իջնայ ճերմակ սառի պէս գարնան ու աշնան ատեն : Ասիկայ գիշերուան իջած ցօղն է, որ գարնան սկիզբներն ու աշնան վերջերը սաստիկ ցրտութենէն կը սառի :

343

ԱՆՁՐԵԻ

Անջեւ կ'ըսուի՝ երբոր երկինք ելած գողորշիները ցրտէն կը միանան ու ծանրանալով կաթիլ կաթիլ վար կը թափթրփին :

Աշխարհիս ամէն կողմը միակերպ անձրև չըլլար : Ընդհանրապէս հասարակածին կողմերն աւելի շատ անձրև կուգայ, թէպէտև շատ անգամ ալ չորութիւն կ'ըլլայ, իսկ բևեռներուն մօտ թէպէտ ստէպ անձրև կուգայ, բայց քիչ :

Անձրևն աւելի լեռներու վրայ կուգայ՝ քան
թէ դաշտերու • վասն զի լեռներուն օդը շատ ան-
գամ պաղէն տաք՝ տաքէն ալ պաղ կը փոխուի • աս
փոփոխութեան ատենը թէ որ հոն տեղուանքն
ամալ գտնուի, մէկէն անձրև կ'ըլլայ :

Արևադարձներուն մէջտեղը միշտ կանոնաւոր
անձրևներ կուգան • վասն զի անտեղուանքի հո-
վերն ալ կանոնաւոր կերպով կը փչեն ամիսներով :

Կարծիք անշեւը կամ Յիւնը շատ անգամ Ալպեան
լեռներուն վրայ կուգայ տեղ տեղ ու քիչ քիչ •
ոմանք կ'ըսեն թէ աս կարմրութիւնը հոնտեղի
մանր ճճիներէն ու բոյսերէն է • բայց ստոյգը չի-
մացուիր :

Ձ Ի Ի Ն

Երբոր ջրային գոլորշիքներն օդուն մէջ յանկար-
ծական պաղութենէ վեցանկիւնի կամ ուրիշ բաղ-
մանկիւնի ձևով մը կը սառնին ու վար կ'իյնան,
Ձիւն կ'ըսուի :

Հով չեղած ատենը ձեան հատիկներն ալ խոշոր
կ'ըլլան • վասն զի ձիւնը վար իյնալու ատեն՝ մէկ
դիէն ուրիշ գոլորշիքներ ալ անոր դպչելով կը սա-
ռնին ու կը խոշորնան :

ԿԱՐԿՈՒՏ

Կարկուսն է ձիւն կամ ձիւնասխառն անձրև , որ օդուն մէջ երկու հակառակ ելեքարականութեամբ՝ մէկդիւն մէկալ գին նետուելով՝ վար իյնալը կ'ուշանայ , պաղէն կը սառի , ու քանի կ'երթայ խոշորնալով՝ ուժով վար կը թափթրփի : Կնչուան մէկ ու կէս լիպրէ ծանրութեամբ կարկուտ եկած է :

Տեսակ մը կուտու ու մանր ձիւն կայ որ դաւառական բառով «չիճի կ'ըսուին , և տաճկերէն Քիֆի • ասիկայ ամառն ու ձմեռը կ'ըլլայ • ամառը կարկուտի հետ խառն՝ ձմեռը ձեան հետ • կարկուտի կը նմանի , բայց անոր պէս կարծր ու թափանցիկ չէ : Չխնայուիր թէ ասիկայ օդուն մէջ ինչպէս կը ձևանայ :

ԼՈՒՍԵՂԷՆ ՄԵՏԷՈՐԱՅԻ

Լոսեղէն մետեորաներն անոնք են՝ որ արևուն ճառագայթներուն այլևայլ կերպով զարնուածքէն կը

* Ելեքարականութիւնը հոսանուտ անկշռելի մարմին է որ բոլոր մթնոլորտին ու մէկալ մարմնոց մէջ տարածուած է , ու սովորաբար շփուելով զգալի կ'ըլլայ , ինչպէս փայլակն ու կայծակը : Ասիկայ երկու գլխաւոր յատկութիւն ունի , մէյմը ուրիշ մարմիններն իրեն կը քաշէ , մէյմըն ալ կը վանէ :

ձեանան, ու վեց տեսակ են . Ծիածան, Արշա-
լոյս, Արեանմանութիւն, Բակ, Զողխակոսի լոյս,
Արկներկայթ :

Ծ Ի Ա Ծ Ա Ն

Արևու լուսոյն մէջ եօթը գոյն ճառագայթներ
կան, որ եռանկիւնի ասպակիին մէջէն անցնելու
ատեն կ'երևնան . այսինքն կարմիր, նարնջի գոյն,
դեղին, կանանչ, բաց կապուտ, մուծ կապուտ,
մանուշակագոյն : Անձրևի ատեն երբոր արևը քո-
վընտի անձրևին կաթիլներուն վրայ կը զարնէ, աս
եօթը գոյները զատ զատ կ'երևնան երկինքը՝ կա-
մարածև . աս է Ծիածան կամ Ծիւանի գօփի ըսուա-
ծը : Ասոր ալ նմանը երբեմն քովի ամպերուն վրայ
ձեանալով երկու ծիրանի գօփի կ'երևնայ :

Երբեմն մեծ ծովերու և դաշտերու վրայ ալ
երբոր գոլորշիքը խիստ թանձր է՝ սղտի ծիածան
մը կ'երևնայ :

Ա Շ Ա Ղ Յ Ս

Առաւօտները քանի որ արևը հորիզոնէն 18°
աստիճան ցած է, իր լուսոյն կարմրագոյն շառա-
ւիղները մեր մթնոլորտին վրայ կը զարնեն՝ ին-
չուան որ արևը հորիզոնէն վեր բարձրանայ . աս
կարմրագոյն լոյսը Արշալոյս կ'ըսուի, որ արևը ել-
լէլէն մէկ ժամէն աւելի առաջ կըրակսի :

Նոյնպէս ալ իրիկուններն արեւը մտնելուն պէս քոլոր արեւմտեան եզերքը կը կարմրի • աս կարմրութիւնն ալ Աւերջապա կ'ըսուի , որ ամառը ինչուան երկու ժամ ու կէս կը դիմանայ :

Մթնոլորտը սրչափ թանձր ըլլայ , արշալոյսն ու վերջալոյսն ալ այնչափ մեծ ու տարածուած կ'ըլլայ :

349

ԱՐԵՒԱՆՄԱՆՈՒԹԻՒՆ

Արեւանմանութիւն է ան երևոյթը , որ երբեմն արևուն լոյսը իր դիմացի ամպերուն վրայ անանկ կը զարնէ , որ ան ամպերուն վրայ ուրիշ արևներ ալ կ'երևնան :

350

Բ Ա Կ

Բակ արևու կ'ըսուի ծիածանի պէս գոյնզգոյն կլոր շրջանակը , որ ամառ ատեն երբեմն արևուն չորս դին կ'երևնայ : Ա'ըսեն թէ աս գոյնզգոյն երևնալը օդուն մէջի ձիւներէն է որ արևուն լոյսը վրան զարնելով անանկ կ'երևցընէ :

Երբեմն արևուն վրայի բակը երկու հաս կ'ըլլայ վրայէ վրայ համակերօն , բայց դրսի կողմը եղածին գոյները այնչափ փայլուն չեն ըլլար :

Լուսինն ալ երբեմն բակ կ'ունենայ , բայց արևուն բակէն աս տարբերութիւնն ունի որ անոր պէս գունաւոր չերևնար , հասլա ճերմակ կ'ըլլայ , մէկ կողմն ալ քիչ մը կարմրագոյն :

351

ԶՈՒԻԱԿՈՍԻ ԼՈՅՍ

Զորիակոսի լոյս կ'ըսուի ան տկար լոյսը, որ մարտ
ամսուն սկիզբներն արևը մտնելէն ետև երկնքին
երեսը բուրդի ձևով կ'երևնայ • չիմացուիր թէ աս
երևոյթն ինչպէս կը ձևանայ • ոմանք կ'ըսեն թէ
մեր մթնոլորտին մէջի մանր մարմիններուն ըն-
թացքէն է :

352

ԿՐԿՆԵՐԵՒՈՅԹ

Ամառը տաք ատեն դաշտերու մէջ եղած շէնքը
կամ ծովուն մէջի նաւը վրայէ վրայ երկու հաս
կ'երևնայ, մէկը շիտակ՝ մէկալը գլխիվար, ինչպէս
որ ջրի մէջ կ'երևնան • աս երևոյթը կ'ըսուի Կրկնե-
րեոյթ :

Ասոր պատճառը լուսոյ ճառագայթներուն զար-
նուածքէն է, որ թանձր ու տաք օդուն մէջէն
անցնելու ատեն՝ շէնքերը երկերկու հաս կ'երև-
ցընէ :

353

ՀՐԵՂԷՆ ՄԵՏԷՈՐԱՅԻ

Հրեղէն Ռեպեօրայ կ'ըսուին օդուն մէջ երևցած
կրակէ երևոյթները, որ վեց տեսակ են • Փայլակ,
Կայծակ, Հիւսիսայգ, Արջմուկի հուր, Ասուս
ու Երկնաքար :

354

ՓԱՅԼԱԿ, ԿԱՅԾԱԿ

Երբոր ամսերու մէջ լեցուած էրկու տեսակ է-
լեքտրականութիւնը մէկմէկու հաղորդութիւն, ձայն՝
կրակ ու լոյս կը հանեն • ձայնը կ'ըսուի Որոտոս,
լոյսը՝ Փայլակ, կրակը՝ Կայծակ :

Երբեմն առանց որոտումի, երբեմն ալ ամպ
ջեղած ատեն էրկիները փայլակ կ'ըլլայ, ասոր պատ-
ճառը դեռ չգիտցուիր :

Որոտումիին ձայնը 30 մղոն տեղէն աւելի հե-
ռու չերթար :

355

ՀԻՒՍԻՍԱՅԳ

Հիւսիսայգը կամ Հիւսիսային արշալոյսը լուսաւոր
ամպի կը նմանի, դոյնը կրակի պէս կարմիր, տեղ
տեղ փայլուն գօտիներով • ասիկայ երբեմն հիւսի-
սային կողմը հորիզոնին վրայ կ'երևնայ՝ արեւը մանե-
լէն իրեք չորս ժամ ետքը : Ասոր պատճառը մագ-
նիսական էլեքտրականութիւնն է կ'ըսեն :

356

ՇՐՋՄՈՒԿ ՀՈՒՐ

Շրջակի կարն է բոցի պէս լոյս մը, որ ատեն
ատեն գիշերները գերեզմաննոցներու մէջ կամ
թաց տեղուանք կ'երևնայ :

Ռամիկները շատ աւելորդասպաշտական կարծեք-
ներով աս կրակէն կը վախնան . բայց վախնալու-
բան չէ . վասն զի ասոր բուն սլաաճառն է փոս-
փորեան ջրածին կազը , որ օդին հետ հաղորդուե-
լուն պէս կը բռնկի , և ինչուան որ հասնի՝ կը
վառի :

357

ԱՍՈՒՊ

Ասոպ կ'ըսուի ան աստղի պէս թռչող լոյսը ,
որ ամառ գիշերները երկինքը կ'երևնայ :

Հիմակուան բնաբաններուն կարծեքովը՝ ասուա-
ները մեր մ'թնոլորտէն վեր երկրիս վրայ ստորաող
մանր մարմիններ են , որ աչքով չեն երևնար . ա-
սոնք երբոր մեր մ'թնոլորտին հետ սասաիկ կը
շփուին՝ լոյս կը հանեն կ'ըսեն :

358

ԵՐԿՆԱԲԱՐ

Երբոր ասուա մը երկրիս ձգողութեամբը գե-
տին իյնայ ահագին որոտմունքով ու լուսով Երկա-
թար կամ Շանթաթար կ'ըսուի :

Վերջի յիսուն տարուանս մէջ վաթսուն հատէն
աւելի երկնաքար ընկած է Եւրոպայի և Ամերի-
կայի մէջ . ամենէն մեծն Անգղիա ընկած է , որ 80
լիպրէէն աւելի կը կշռէ :

Ամէն երկնաքարերուն բողաղբութիւնն ալ գրե-
թէ նոյնպէս է . այսինքն՝ երկաթ , գայլախաղ ,
ծծումբ , նիքել , մանկանէղ : Ասոնց գրսի գոյնը
հանքածուխի պէս սև է , բայց մէջը երկաթի պէս
փայլուն :

ՅՍ.ԻԵՂՈՒԱԾ

ՕԴԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ

359

ԵՂԱՆԱԿ

Փորձուած բան է որ երբոր աշունն անձրևոտ կ'ըլլայ, ձմեռը սովորաբար քիչ անձրև կուգայ, դարունն ալ ցուրտ կ'ըլլայ. ան պատճառաւ բոյսերը ետ կը մնան:

Թէ որ ամառը շատ անձրևոտ ըլլայ, ձմեռուան ցուրտն ալ սաստիկ կ'ըլլայ:

Թէ որ կռունկներն աշնան կանուխիկէ դէս 'ի տաք երկիրներն երթան, ըսել է թէ ձմեռուան ցուրտը սաստիկ պիտի ըլլայ. վասն զի իրենց կանուխ դառնալէն կ'իմացուի որ հիւսիսային կողմերը ցուրտն սկսեր է:

Երբոր ձմեռը անձրևոտ է, ամառը չոր կ'ըլլայ: Աշունն ալ թէ որ չոր ընելու ըլլայ, ձմեռը շատ հով կը փչէ:

360

ՀՈՎ, ՓՈԹՈՐԻԿ

Առաւօտանց արևն ելլելու ատեն թէ որ չափէ դուրս կարմրութիւն մը ունենայ և արևուն

սկաւառակը խոշորիկէկ երևնայ, նշան է թէ նոյն օրը հով պիտի ելլէ :

Երբոր արևը բակ կ'ուռնենայ ու արևանմանու թիւն կ'երևնայ, յայտնի նշան է որ հով ու անձրև պիտի ըլլայ :

Երբոր լուսինը խոշոր ու կարծիր է, չորս դին ալ բակ ունի, հով կ'ելլէ. թէ որ բակը երկու հաս է, նշան է թէ փոթորիկ պիտի ելլէ :

Ո՛ր օրն որ առաւօտանց ծովու թռչուններն իրարու քով ջրին երեսը թռչալու կը կանչվրտանն, ան օրը հով կ'ելլէ :

361

ԱՆՁՐԵԻ

Իրիկունն արևը մտնելէն ետքը հիւսիսային կողմը թանձր լեռան պէս դիզուած ամպեր ըլլան նէ, ան դիշերն անձրև կուգայ :

Արևն ելլելու ատեն թէ որ բոլոր երկնքին երեսը բարակ ամպով մը ծածկած է ու հով չկայ, ան օրը քիչ մը անձրև կուգայ :

Արևն ելլելէն իրեք չորս ժամ առաջ թէ որ անձրև սկսելու ըլլայ, ինչուան կէսօր օդը կը բացուի :

Թէ որ յանկարծ հարաւային սասաիկ հով ելլէ, ու երկու իրեք ժամ միակերպ անձրևէ, ան անձրևն ինչուան տասնըհինգ ու տասնըվեց ժամ կը քշէ :

Թէ որ բոլոր ցորեկն անձրևէ, և իրիկունը արևը մտնելու ատեն արևմուտքը բաց ըլլայ,

կամ արևը կարմիր ամպերուն մէջէն վար իջնայ ,
երկրորդ օրը օդը կը բացուի :

Թէ որ լուսինը քակ ունենայ արևմտեան քա-
միով , երկրորդ օրն անձրև կուգայ :

Օգոստոս ամսուն մէջ լուսնի ծննդեան ու լրման
օրերը դրեթէ միշտ անձրև կուգայ :

Ամառ գիշերները թէ որ արևելեան հովքայ ,
և աստղերը սովորականէն աւելի խոշոր ու փայ-
լուն երևնան , քանի մը ժամէն ետքը անձրև կու-
գայ :

ԿԱՐԿՈՒՏ

Ամառը կէսօրէն ետքը դեղին ու ճերմակ ամ-
պեր վրայէ վրայ լեռան պէս դիզուին , ու սաստիկ
հովէ ծանր ծանր շարժելով հորիզոնէն վեր բարձ-
րանան նէ , կարկուտի նշան է . բայց ձմեռն ու
գիշերը խիստ քիչ անգամ կարկուտ կու գայ :

Թէ որ ամառուան ամպերու նման ամպ ըլլայ
ձմեռը , կարկուտի տեղ ձիւն կու գայ :

ԾԱՆՐԱԶԱՓ ԳՈՐԾԻ

Ծանրաչափ ըսուած գործիքը 30 բթաչափ եր-
կայնութեամբ աղակիւ խողովակ մըն է , մէջը 28
բթաչափ սնդիկով լեցուն . որ օդին ամէն տեսակ
փոփոխութիւնները ժամերով առաջ կը ցուցնէ .
զոր օրինակ .

Թէ որ խողովակին մէջն սնդիկը կամաց կամաց
վեր բարձրանայ, նշան է թէ օդը պիտի շակուի .
Թէ որ ձմեռ ատեն բարձրանայ, ցուրար կը սաս-
կանայ :

Թէ որ ծանրաչափին սնդիկը շուտով ցածնայ
կամ բարձրանայ, օդն ալ շուտ մը կը փոխուի . Թէ
որ խիստ շուտ ցածնալու ըլլայ, փոթորկի նշան է :

Թէ որ արեւմտեան հովի ատեն ծանրաչափը
բարձրանայ, օդը կը բացուի, ու հովը արեւելեան
կը դառնայ . Թէ որ հարաւային քամիով ցածնայ,
ձմեռ է նէ՛ սառը կը հալի, ամառ է նէ՛ փոթորիկ
կ'ելլէ . իսկ թէ որ արեւմտեան հովի ատեն ցածնայ,
անձրև կու գայ :

Ընդհանրապէս ծանրաչափին նշանները դիշե-
րահաւասարներէն 15 օր առաջ՝ 15 օր ալ ետքը
սազահով չեն . վասն զի օդը ան միջոցին շատ փո-
փոխական է :

Յ Ա Ն Կ



Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Զ Ի Ն

ՔԱՂԱՔԱԿԱՆ

| | |
|------------------------------------|----|
| ԵՒՐՈՊԱ | 5 |
| Բրիտանիա | 14 |
| Տանիմարգա | 21 |
| Շուեա եւ Նորվեկիա | 24 |
| Ռուսաստան | 28 |
| Գաղղիա | 36 |
| Պելճիա | 43 |
| Հոլանտա | 45 |
| Զուիցերի | 48 |
| Աւստրիա | 51 |
| Բրուսիա | 59 |
| Գերմանական Գաշնակցութիւն | 62 |
| Բորգուդալ | 69 |
| Սպանիա | 72 |
| Իտալիա | 77 |
| Տաճկաստան | 86 |
| Յունաստան | 92 |

| | |
|-------------------------------|-----|
| ԱՍԻԱ | 97 |
| Ռուսաստանի Ասիոյ | 106 |
| Տաճկաստանի Ասիոյ | 110 |
| Հայաստան | 117 |
| Արաբիա | 124 |
| Պարսկաստան | 127 |
| Աֆղանիստան | 130 |
| Թուրքաստան | 132 |
| Հնդկաստան | 134 |
| Չին | 144 |
| Ճաբոն | 148 |
| ԱՓՐԻԿԷ | 151 |
| Եգիպտոս | 157 |
| Պերսիկաստան | 160 |
| Սահրա | 164 |
| Սենեկամալիա | 165 |
| Հիւսիսային Աուսինէա | 167 |
| Նիկրիտիա | 168 |
| Նուպիա | 169 |
| Եթովպիա | 170 |
| Աօկչ | 171 |
| Այան | 172 |
| Հարաւային Աուսինէա | 173 |
| Օդենդաղւոյ երկիր | 174 |
| Գլուխ Բարեյոււոյ | 175 |
| Քաֆրաստան | 176 |
| Մոնոմոդաբա | 177 |
| Մոզամպիք | 178 |
| Չանկէպար | 179 |
| Անձանօթ երկիր | 180 |
| Ափրիկէի կղզիք | 181 |

| | |
|--------------------------------|-----|
| ԱՄԵՐԻԿԱ | 185 |
| Ռուսի Ամերիկա | 193 |
| Կրէնլանտիա | 194 |
| Նոր Բրիտանիա | 195 |
| Միացեալ Նահանգք | 196 |
| Մէքսիկոյ | 198 |
| Կուադէմալա | 200 |
| Գուլուամիա | 202 |
| Կուլանա | 204 |
| Պրագլի | 206 |
| Բէրսե | 208 |
| Պոլիվիա | 210 |
| Բարահուայ | 211 |
| Լա Բլադա | 212 |
| Բիլի | 213 |
| Բարահոնիա | 214 |
| Անգլիեան կղզիք | 215 |
| ՈՎԿԻԱՆԻԱ | 219 |
| ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻՍ ԳԼԽԱԻՈՐ | |
| ՏԵՐՈՒԹԵԱՆՑ | 227 |

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Գ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

| | |
|---------------------------------|-----|
| Նախագիտելիք | 234 |
| ԳՆՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ | 236 |
| ԵՐԿՐԱԳՈՒՆՑ | » |
| Գնտին մեծ շրջանակները | » |

| | |
|--|-----|
| Հորիզոն | 237 |
| Միջօրեայ | 238 |
| Երկայնութեան ու լայնութեան աստի- ճաններ | » |
| Հասարակած | 239 |
| Ծիր խաւարման | 240 |
| Գնաին սղախի շրջանակները | » |
| Գնաին բևեռները | 241 |
| Գնաին վրայի դօտինները | » |
| Կլիմայ | 243 |
| Ժամական կլիմայ | » |
| Ամսական կլիմայ | 245 |
| Դիրք գնաց | 246 |
| Հանդիսաբնակ, շրջաբնակ, հակոսնեայ | 247 |
| Գնախ դործածութիւն | » |
| ԵՐԿՆԱԳՈՒՆՏ | 259 |
| Զողիակոս, Ազիմուդ, Բարձրութեան քառորդ | » |
| Միջօրեական ու զուգահեռական գծեր | 260 |
| Աստղ | » |
| Հաստատուն աստղ | 261 |
| Կարգ աստեղաց | 263 |
| Հեռաւորութիւն աստեղաց | 265 |
| Յարդգող և Միդամած | » |
| Բաղմաստեղք | 266 |
| Նորանշան և Փոխիսական աստեղք | » |
| Բևեռային աստղ | 267 |
| Արև | » |
| Մոլորակք | 268 |
| Արբանեակք | 270 |
| Փայլածու | 271 |








| | |
|---|-----|
| Արուսեակ | 271 |
| Երկիր | 272 |
| Երկրիս շարժմունքը | 274 |
| Երկրիս օրական շարժմունքը | 275 |
| Երկրիս տարեկան շարժմունքը | » |
| Լուսին | 278 |
| Հրատ | 280 |
| Աստեղափայլք | 281 |
| Լուսնթագ | 283 |
| Երևակ | 284 |
| Ուրանոս | 285 |
| Պասիդոն | » |
| Դրուժիւն մոլորակաց արևու | 287 |
| Մանրանկար արևային դրուժեան | 288 |
| Խաւարում | 289 |
| Գիսաւոր | » |
| ՉԳՈՂՈՒԹԻՒՆ | 291 |
| ՄԱԿԸՆԹԱՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԵՂԱՏՈՒԹԻՒՆ | 292 |

Մ Ա Ս Ն Ե Ր Ր Ո Ր Դ

ԲՆԱԿԱՆ


| | |
|------------------------------|-----|
| ՅԱՄԱԲ | 295 |
| Լեռ | 296 |
| Հրաբուխ, Գեանաշարժ | 297 |
| Գաշտ, Անապատ | 298 |
| Այր | 299 |
| ԶՈՒՐ | 300 |

| | |
|--|-----|
| ՀԱՍՄԱՐԱՍ ԶՈՒՐ | 300 |
| Գեա , Ղովթ | 301 |
| Լիճ | 302 |
| ՀԱՆՔԱՅԻՆ ԶՈՒՐ | » |
| ԾՈՎԱՅԻՆ ԶՈՒՐ | 303 |
| ՕԳ | 305 |
| ՕՐԵՐԵՒՈՅԹԻ | 306 |
| ՕՐԵՂԷՆ ՄԵՏԷՈՐԱՅԻ | » |
| Հով | » |
| ԶՐԵՂԷՆ ՄԵՏԷՈՐԱՅԻ | 308 |
| Մէդ | » |
| Ամոլ | 309 |
| Յօղ | » |
| Եղեամ | 310 |
| Անձրև | » |
| Ձիւն | 311 |
| Կարկուտ | 312 |
| ԼՈՒՍԵՂԷՆ ՄԵՏԷՈՐԱՅԻ | » |
| Ծիածան | 313 |
| Արշալոյս | » |
| Արևանանու թիւն | 314 |
| Բակ | » |
| Զողիակոսի լոյս | 315 |
| Կրկնեկոյթ | » |
| ՀՐԵՂԷՆ ՄԵՏԷՈՐԱՅԻ | » |
| Փայլակ , Կայծակ | 316 |
| Հիւսիսայգ | » |
| Շրջմոլիկ հուր | » |
| Մուռ | 317 |
| Երկնայգար | » |
| ՅԱՒԵԼՈՒԱԾ . ՕՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ | 318 |






Չև. 12.




Չագանիտի գրանիտ

Չև. 13.




Խոտուրի գրանիտ

Չև. 14.



Ռոսիի գրանիտ


Չև. 16.




Չև. 17.




Չև. 18.





Չև. 15.











26

29

32

26

27

30

31

